

ԱՐԴԻՇՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 9 1893

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1893 № 9

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԱՐԻ

Երիս

1 Ա.Պ.ԱՅԵԱՆՑ, ՊԱԶԱՐՈՍ.	1299	Խմ կեանքի զլխաւոր դէպքերը.
2 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎ.ՀԱՆՆԵԼԻՄ	1329	Պօէտին (բանաստեղծութիւն),
3 ՍԵՆԿԵԻԹ, ՀԵՆՐԻԿ	1330	Առանց Դաւանանքի:
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎ.ՀԱՆՆԵԼԻՄ	1348	Ավաղաղսկմու պատկ. առաջ (բան.),
5 ՊԱՐԱԶԵՆԱՆ, ԳԵՈՐԳ.	1349	Քաղաքակրթ. դարդացմ. ընթացքը,
6 ԲԱԼԱԴԵԱՆՑ, ՍԱՄՈՒԵԼ.	1363	Բոյերի բեղմնաւորութիւնը,
7 ԱՐԳՈՒԹԵԱՆ, ՍՈՅԻՄ.	1379	Ընտանիքը և գլորոցը, II.
8 ԱԹԱՆԱՍԵԱՆՑ, Ա.	1393	Դիւղատնանութեան ուսումը,
9 Ա. Թ.	1406	«Ա.հատահանութիւն» Լէօն.
10 ԿԵՍԻԱՍՈՐԴԵԱՆՑ, ՄԱՐՏԻԶ	1409	«Էլզուջա» Մոչխուբարիձէի,
11 ԼՈՒՍԻՆԻ.	1414	Օձման հանդէսից,
12 ՄԱՐԿՈՍԵԱՆՑ, Ի.	1420	Կաթողիկոսը և բողոքակ. հակերը,
13 ՄՈՒՐԱԴԵԱՆՑ, Յ.	1425	Մեծ ծովի ափերից II.
14 Ա. Թ.	1434	Մուսաստանից,
15 Ֆ.	1439	Արտասահմանեան Քրոնիկ.
16 Z.	1453	Ռուս-Ֆրանսիակ. բարեկամութիւնը,
17 ԽՄԲ.	1455	Զանազան լուրեր,

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.




Թ. Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻՒՆԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротеніанца, Гол. пр., д. №41.

1893



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՋ ԳԻՐ

№ 9 1893

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1893 № 9

ՀԻՆգԵՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1893

# СИРИУС

СОВРЕМЕННОЕ ИСКУССТВО

## ЧИСЛЫ

СОВРЕМЕННОЕ

ИСКУССТВО

СОВРЕМЕННОЕ

Дозволено цензурою. Тифлисъ, 16 Сентября, 1893 г.

# ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՀՈՐ ԴԵՊՔԵՐԸ

Պ.ԱԶԱՐՅԱՆ ԱՂԱՅԵԱՆՑԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

Միւս շաբաթ օրը ես առաջին անգամ՝ գնացի. հայոց եկեղեցին; Եկեղեցի չգնալուս պատճառներից մեկն էլ ահա ինչ էր: Մոսկվա նոր եկած ժամանակս մի օր գնացի ժամ: Խրեւ յաջողակ ձայն ունեցող և շարական դաս առաջ մարդ, ուղղակի գնացի հոգեորականների զամբ և առաջարկեցի աւագ քահանացին, որ թոյլ առաջ ինձ շապիկ հագնել և երգել, որ հայ եկեղեցու սովորութեամբ ոչ ոքի չի մերժում: Բայց հայ քահանան կոպառութեամբ վրնդեց ինձ, ասելով.— ինչ հարկանոր է, զու նվես, գնա, գնա... Ես հեռացաց, բայց ժամումն էլ չկանգնեցի և այնուհետև էլ ժամ չգնացի, ասելով մաքումն՝ «Այսուղի ժամն էլ չէ ժամ եղել, հայն էլ նրանեղից հայ կը լինի...»

Պետերբուրգի եկեղեցում Մոսկվացի հակառակ լնդունելութիւն գտաց: Երեխի բախտիս մնիւը շուռ էր եկել և ամեն ինչ պտտում՝ էր գէպի աջ: Այսուղի աւագ քահանան տէր-Գրիգորն էր: Սա նոյնպէս ներկայ էր նախընթաց գրական ժողովին: Ամենքը գովում էին իմ գրւածքը, իսկ սա՝ իմ հասակը, մօրուքը, և ասում էր.— «Մեր Տիգրան Հայկազնին կը նմանի», կարծես Տիգրանին տեսած լինէր: Սա մի պարթե հասակով մարդ էր և շատ բարի, զօրհղ էլ

1) Տես «Մուլք» № 4, 5, 6 և 7-8.

ձայն ունէր: Ինձ սիրով լընդունեց, շապիկ հազգը եց: Երևելի ձայնաւոր Սուքիասեանցին խնդրեց, որ նոյն օրը գպրութիւնը ես անեմ, ինքը միայն ձայն պահի, դիբքն էլ ես կարգամ: Նոյն օրը ժողովուրդ չը կար, բայց մէկը կար իր ամուսնու հետ, որ ամբողջ ժողովուրդ պահմէր իմ նսպատակի յաջողութեան համար: Դա էր ինքը և ազարեանը, իր տոհմի վերջին ծերուհի շառաւիղը:

Ժամերդութիւնս հիանալի էր. կարօտել էի, շատ ժամանակ էր ժամ չէի ասել, բոլորի վրէժը այսօր լուծեցի, փափագս առաջ: Գիրքը կարգացի սքանչելի առողանութեամբ: Երբոր պատարագը վերջացաւ, գնալապետ երեցփոխը մօտեցաւ ինձ և շատ քաղաքավարութեամբ, ժայիտը բերնին՝ ասաց. —Վեհազնը կամենում է տեսնել ձեզ. հրամայեցէք վերև գնանք:

Վեր բարձրացանք փառաւոր սանդուղքներով և հասանք մինչեւ ընդունարան: Այսուեզ դիմաւորեց ինձ բարեսիրտ ծերունին, որին խոր գլուխ տւի, մի հինգ րոպէ խօսեց հետս, ասելով, որ ինձ շատ հաւանել է, և խնդրում է որ շաբաթ կիրակի ժամումը երգեմ: —Դուք ուոճիկ կըստանաք, ասաց, և բնակարան, իսկ այս առէք ձեզ, առ ժամանակ: Այս տաելով տւաւ ինձ մի նամակի ծրար: Ես առաջ, գլուխ վեր բերի, և գուրս եկաց լուռ ու մունջ: Խոսսէի, ինձ բան չը հարցրեց որ պատասխան տամ: Երևի, ասացի մոտքումն, գեներալ Սուլթանշահը, ալ. Եզեանցի առաջարկութեամբ, ինչ որ ասելու է, ասել էր: Եւ ացլպէս էլ էր, ինչպէս սառւգեցի յետոյ:

Երբոր հեռացայ, ծրարը բաց արի, միջին քսանը հինգ մանէթ գտայ: Կեանքիս մէջ առաջին անգամն էի ծրարով փող ստանում, այն էլ ընծայ:

Ասած է՝ «աղան որ ձէթ տայ, փէշդ դէմ արայ», իսկ քսանը հինգ մանէթը ձէթ չէր և ինձ շատ հարկաւոր էր: Նոյն օրը ինձ սենեակ տիին, և ես իմ հրէական անկիւնից տեղափոխւեցայ հայկական եկեղեցու գաւիթը:

Միւս օրը Մ. Սիմեոնեանցը, որ Ներսիսեան դպրոցում իմ դասընկերն է եղել և դրացի, բերաւ մի ձեռք հազուստ, ինձ համար շատ թանկագին, ասելով որ ալ. Մովսէս . Բուզաղեանցն է ուղարկել քեզ ընծայ: Ես չէի ու զում վերցնել, բայց Մարտիրոսն ինձ

յանդիմանեց ընկերաբար, թէ այն մարդը իբրև ողորմութիւն չի ուղարկել, նոր հագուստ է առել քեզ համար, նա քեզ շատ սիրեց, ինքն էլ է բանասաեղծ, եթէ չընդունես, նրան վիրաւորած կը լինես:—Նատ լաւ, ասացի, կլնդունեմ, բայց երեսս չի պատիլ, որ գամ նրան շնորհակալութիւն անեմ, ես կամաչեմ:

—Այդ հարկաւոր չէ, ասաց, ես քո փոխանակ շնորհակալութիւն կանեմ:

Այսպէս՝ ահա ամսական նշանակեցին երեսուն մանէթ. քիչ յետոյ շինեցին քառասուն, մինչդեռ իմ պաշտօնակից երկու ուսանողներից մէկն ստանում էր 10 մանէթ, միւսը՝ 15: Հոգեոր կոչում ունեցողները լաւ ոռնիկ ունեին:

Եկեղեցում ընդունելուս լուրը հաղորդեցի պ. Եղեանին, պատմելով, որ ինձ շատ հաւանեց վեհազնը:

—Այն, պատասխանեց Եղեանցը, —ես գիտէի, որ նրանք շատ կը հաւանեն... ձեր փառաւոր մօրուքին...

Պարոն Եղեանցի նկատողութիւնը շատ ուղիղ էր, թէև երգիծական: Նրանք գնահատեցին իմ արտօաքին հանգամանքները և ոչ ներքին: Արտաքին բարեցաջող հանգամանքներով աւելի դիւրին է մեծամեծների շրջանը մտնել քան թէ ներքին: Ես ունէի այդ բարեցաջող հանգամանքը, բայց բնածին բարյական հակումներիս շնորհիւ գայթակղեցուցիչ ոգուն գլուխ չըտւի: Բեսարաբիացի թեմի ժամանակաւոր կառավարիչ Եղիազար եպիսկոպոսը երբոր եկաւ. Պետերբուրգ, այնպէս սիրահարւեց իմ արտօաքինով, որ իսկոցն մի ուրար ձգեց ուսիս:—Ձեմ ուզում, ասացի, սրբազն հայր, ես հոգեւոր կոչում չունեմ:—Նատ մի՛ խօսիր, ասաց, չոքիր առաջիս. ինձ խնդրում են, որ ես այս քօռ ու քաջաներին տէրտէր շինեմ: Ասուծուն հաճելի են միայն քեզ պէսները:

Զընդդիմացայ, ընդունեցի ուրարը: Այս բանը շատ դիւր եկաւ վեհազնին:—Մենք ձեզ քահանաց չենք շինիլ, ասաց, այլ վարդապետ և յետոց էլ եպիսկոպոս...

Իմ պաշտօնակից Մ. Տէր-Դրիգորեանը (Կոմբի թարգմանիչը), որի յանդգնութիւնը մինչև ծացրացեղութեանն էր համառմ, իսկոցն միջ ամուսնութեանը ասաց:

—Յետոց էլ կաթողիկոս, վեհազն տէր...

Վեհազնը Եկեղեցու պաշտօնեաներիս ստէպ-ստէպ ճաշի էր հրաւիրում, ուր զբսի հայերից ներկայ էր լինում միայն գեներալ Սուլթանշահը: Այդ զերպատանական ճաշերին ես աջնպէս էի լինում, ինչպէս ասեղների վրայ նստած, ինձ կոմղեմենուներ էին անում և ես շատ ամաչում էի պատասխանել, դանակ ու պատաքազը ստէպ-ստէպ ձեռքից թոշկոտում էին այս ու այն կողմ: Նատուշ ընտելացայ այդ բանին: Ասրբ ուր Մոսկայի ամսական երեք մանէթանոց ճաշը և ուր պալատական լակեների ձեռքով ընդունածը:

Այդ ճաշերն ինձ գուր չեն զալիս, որովհետեւ այդ մի պատիւ չէր, այլ ողորմութիւն, բայց չեի կարող մերժել: Դուրս գալիս սովորաբար ստանում էինք և ընծաներ մի-մի ծրարով: Իմ ստացածը միշտ աւելի էր լինում, քան Տէր-Դրիգորեանինը. նրա ծրարից դուրս էր գալիս առառաւելն 10 մանէթ, իսկ իմից երեսուն էր, բայց միասին էինք ուտում, թատրոն գնում և այն:

Որովհետեւ այս բոլորը եղաւ «Արութիւն և Մանւէլ» վէպիս շնորհիւ, հարկաւոր եմ համարում՝ մի երկու խօսք էլ այդ վէպի ուղղութեան մասին գրել:

Ոմանք այն միաքը տարածեցին ընթերցող հասարակութեան մէջ, որ իբր թէ իմ աշխատութիւնը մի հետևութիւն է անմահ Արովեանցի վէպի: Այդպէս չէ: Նրա «Վէրք Հայատանին» մի ողբ է, ողբ հայրենիքի թշւառութեան վրայ, ողբ հայրենասիրի, բղխած մի զգայուն սրտից, զարդացած ուղեղից: «Արութիւն և Մանւէլ» բերում է մի բոլորովին նոր ուղղութիւն, բոլորովին ինքնուրոցն: Սա մի ստառերազմ է յայտնում հին գաղափարների, հին գաստիարակութեան դէմ, որնց վրայ չի ողբում, այլ յարձակւում է անխնայ և նրանց տեղը տարածում նորը և լաւագոցնը: Լեզւի կողմից էլ այս վէպն նոյն նորութիւնն է բերում, որ հեղինակին խօսեցնում է մաքուր գրական լեզով, միայն գործող անձերին է թոյլ տալիս, որ մօտաւորապէս իրանց խօսելու ոճով ու բարբառով հանդէս գան, ինչպէս այդ թոյլ են տալիս ռուս գրողներն եւս: «Վէրք Հայատանիի» մէջ ստոյգն և անսոոյզը ռէալական և իդէալականը խճողւած են իրար հետ, մինչդեռ «Արութիւն և Մանւէլ», իրականի նկարչական պատկերն է

պնում ընթերցողի առջև։ Գեղարւեստական տեսակէտից «Վէրք Հայաստանին» սրտի խորքից բղխած մի բնական ժայթքումն է, հեղինակը միտք չի ունեցել իր շէնքի գեղեցկութեան վրայ ուշ դարձնելու։ Իսկ «Արութիւն և Մանուէլի» մէջ ամեն մի գլուխը մի նկարչական ամբողջութիւն է. բոլոր գլուխներն ի միասին կազմում են պատկերների մի կարգ։ Հերոսն այսուեղ զարգացման ճանապարհի վրայ է դրւած, սրա համար այս վէպը կարող է շարունակւել հեղինակի զարգացման հետ և դառնալ մի կենսագրութիւն՝ ժամանակակից անցքերի հետ կապւած։ Իմ «Մի երես նորագոյն պատմութիւնից» յօդւածը, որ տպւեց «Գրական Հանդէսի» մէջ, որից արտասպւելով ձրի բաժանւեց իմ գրքի բաժանորդներին, պէտք է մտնէր «Արութիւն և Մանուէլի» մէջ, բայց ինչ-ինչ պատճառներով այդ չըաջողւեց և ես ստիպւեցայ զանազան փոփոխութիւններով տպել առանձին։ «Արութիւն և Մանուէլի» վէպ անւանել անգամ կարելի չէ, բայց որ մեզանում ասում է, դրա պատճառն այն է, որ մենք վիպական գրւածների ամեն ձեւի համար ջոկ բառ չունենք։ Իմ առաջին նկարչական ամբողջութեամբ գրած վէպը «Երկու Քոյրն» է։ «Արութիւն և Մանուէլն» այդ ամբողջութիւնը չունի, և կարող չէ ունենալ, որովհետեւ դա մի պատկեր չէ, այլ թանգարան պատկերների։ Դրա նախագիծն այնպէս է կազմած, որ ժամանակով այս աշխատառութեան բովանդակութիւնն ևս պէտք է մտնէր նրա մէջ։ Եթու անգամ մի բան ուզեցել եմ տեսնել կամ անել, ասելով. «Մրանով Արութիւնիս մէջ մի գլուխ ևս կաւելանայ». Փորձը ցոյց տւառ սակայն որ այս նախագիծն անիրազործելի է գեղարւեստական տեսակէտից. Յայտնի անցքերի մէջ գործող անձը անցայտ մնալ կարող չէ, մինչեւ հեղինակը չըշեղւի բնականից ու իրականից և չըստեղծէ տիպերի և անցքերի մի խառնուրդ. իսկ ես չուզեցայ անել, աղգային սոոյզ պատմութեան օգնելու նպատակով։

Կրթական տեսակէտից՝ իմ վէպն ունեցաւ իր սքանչելի ազգեցութիւնը նոր սերնդի վրայ, թէև ամենից շատ շահւողները հաւի նման կտուցները գետին քսեցին, իբր ոչինչ չըկերած։ Այդ վէպով ժողովուրդը ծանօթացաւ նոր սերնդի յառաջադէմ մոքերի հետ, իսկ նոր սերունդը ժողովրդի մտաւոր ու բարոյական կողմերի հետ։ Մրանից աւելին թող դատէ կրիտիկոսը, որ անշուշտ ի նկատի

կունենայ և մեր վիպագրութեան զարգացման պատմութիւնը, սկըսած Թաղիատեանից, ցոյց տալով, թէ ով ինչ նորութիւն է ներս բերում, որն է հետևողութիւն և որը՝ ինքնուրոյն:

#### XIV

1864 թւականի վերջին և 1865 թւականի սկզբի ամիսները Պետերբուրգի մտաւոր կեանքի վերածնութեան ամենաթունդ ժամանակն էր:

Ինչպէս գարնանամուտը աւելի քնքոյց ծաղիկներ է բուսցնում, իսկ ամառնամուտը սար ու ձոր լցնում է ամեն տեսակ՝ լաւ ու վատ, կոշտ ու քնքոյց, հոտաւէտ և անհոտ բոյսերով, այնպիսի մի ամառն էր ներկայացնում Պետերբուրգի այդ ժամանակւայ մտաւոր կեանքը: Հնութիւնն ու նորութիւնը պատերազմ էին յայտնել իրար զէմ, սրանք էլ՝ դարձեալ բաժանւած զանազան ճիւղերի՝ անխայ յարձակում էին միմեանց վրայ, ամեն ինչ քննադատում, ամեն խաւար վարագոյր յետ քաշում: Արևմտեան Եւրոպի լուսաւոր մտքերի առջև դրած թումբը քննադատուելով՝ այդ քաղաքը հեղեղւեց նորանոր զաղափարներով: Դա էր առաւելապէս թարգմանական գրականութիւնը, որ իւրաքանչիւր օր տասնեակ հասորներով էր դուրս գալիս: Մարդ շշկում էր, չգիտէր որը կարդայ և որը թողնի, քանի որ մէկը միւսից զարգացուցիչ էր, մէկը միւսից զրաւիչ: Դուրս եկաւ Բոքլը և ահազին յեղափոխութիւն ձգեց, ոչ միայն իր գրքովը, այլ և իր անձնովը: Այդ մարդը համալսարանի երես չէր տեսել, ուրեմն կարելի է եղել երևելի հանդիսանալ և առանց համալսարանի: Այդ համոզմունքը հաստատեց Սմայլսի «ինքնօգնութիւնը»: Սա հազարաւոր կինսագրական փաստերով ցոյց տեց, թէ մարդս ինքը կարող է միայն զարգացնել իրան, թէ ուրիշի օգնութիւնը պակասեցնում է ինքնօգնութեան ուժը: Այս օրինակները ծայրացեղ էին և միակողմանի, բայց շատ գայթակղական էին:

Ինքնակրթութեան ախտով ես արգէն փարակւած էի քնականից, հարկաւոր չէր, որ այդ բանը սովորցնէր ինձ Բոքլը կամ Սմայլսը, բայց դրանցով ես աւելի ոգի առայց, չկորցնելով իմ ինքնուրոյնութիւնը: Մեր կեանքի տեսակէտից ես համաձայն չէի Սմայլսին: Եւ ահա ինչու: Ոչինչ չի զարգանում առանց սնունդի. ինչ-

պէս բոյսն իր մեռնդն է պահանջում, նոյնպէս պահանջում է և միտքը: Ես ի՞նչպէս ինքնակրթւեմ հայկական շոր անապատում, ի՞նչ մնունդով: Մնունդ եղած տեղը զարգացումն ինքն իրան կը լինի: Անգլիայի մտաւոր առատ և ճոխ մնունդը կարող է բոքներ յառաջացնել, իսկ հայկականը...

Մեզանում մի առած կայ. ասում են՝ «կճուճը թօլ էլաւ, խուփը գոտաւ»: Թօլ էլած կճուճը կարող է և կոտրւել կամ չգտնել իր խուփը: Եթէ թօլ անես մի մագնիտ, նա, որտեղ երկաթի փլշրանքներ կան, իրանից կը կացնէ կամ ինքը կը կպչի իրանից զօրեղ երկաթի: Բայց կարող է պատահել, որ փշրանքներ չգտնի. բաւական չէ ուրեմն, որ մարդ մեղւի նման զանազան ծաղիկներից հիւթ ժողովելու և քաղցր մեղր շինելու յատկութիւն ունենայ, հարկաւոր են և ծաղիկները: Բնութիւնը կենդանուն չի ստեղծում նախքան նրա մնունդը, ընդհակառակը՝ մնունդն ինքը իրանից արտադրում է կենդանի:

Ասած է՝ «Զորին Հաջ գնալով՝ հաջի չի դառնալ»: Պաշտպանելով սնունդի անհրաժեշտութիւնը, կարելի չէ ուրանալ և անհատի սննդառութեան գործադրանների առողջութիւնը, նրա աճելու ընդունակութիւնը և բեղմնաւորութիւնը: Այդպէս որ չինէր՝ սնունդի ասատ տեղում հանձարները բանջարի պէս կը բուսնէին, կրթւելու համար եւրոպա գնացողները բոլորն էլ կը վերադառնային մի մի կանո ու կոնո դառած, ընդհակառակը շատերն ստամոքսն են խանգարում և այնպէս վերադառնում, շատերն էլ իրանց ուղեղը. գնում են ուշով և վերադառնում ապուշ. հեղինակի գիտութիւնը բերելու տեղը, նրա սոսկ անունն են բերում:

Չեմ կարող ուրանալ և թաքցնել մեղքս: Ես վարակւեցայ իմ շրջանի ընդհանուր ախտով, որով և ընկայ ալ. Եզեանցի աշքից: Ինձ գուր չէին գալիս նրա կրօնական գաղափարները, նրա կղերական ձգտութիւրը: Ինձ առաջարկում էր, որ ես թարգմանեմ ներսէ Շնորհալու Ընդհանրականը: Ես չը համաձայնեցի, առարկելով՝ որ մեր ժողովուրդն այդ տեսակ գրքերի կարօտութիւն չունի, նրա մէջ պէտք է տարածել բնական դիտութիւնների տարերքը, որ նա բացարել կարողանայ բնութիւնների և ազատւի իր դարաւոր նախապաշարմունքներից: Մրանից պ. Եզեանցը եղրակացրեց,

որ իբր թէ ես ևնթարկւել եմ զանազան իզմէրի, և իստերի կարգն եմ ընկել: Պր. Եղեանցը նկատեց նաև, որ համալսարան մոնելուս փափազը թուլացել է իմ մէջ, և այս աւելի ես դուք չեկաւ նրան: Համալսարանի արևելեան բաժինը մոնելու ես մեծ դիւրութիւն ունէի, հանդամանքներն էլ շատ յաջող էին: Մի քանի անդամ մասնաւոր կերպով գնացի դասեր լսեցի, բայց դասի ժամանակ քունս տանում էր ոչ թէ նրա համար, որ դասի նիւթն ինձ համար բարձր էր, այլ ընդհակառակը շատ ստոր: Համալսարանի միւս մասերը հեշտութեամբ կարող չէի մոնել. պրոֆեսորներն ինձ անծանօթ էին, սէր էլ չունէի դէպի որ և է մասնագիտութիւն: Այս պատճառով ահա իմ համալսարանս դարձաւ Պետերբուրգի հասարակաց գրադարանը, որի մշտական ընթերցողը դարձաց: Այդ ժամանակ սունկի պէս բանում էին և շատ էժանագին և մինչեւ անդամ ձրի գրադարաններ, որոնցից նոյնպէս օգուտ էի քաղում, ուղած դրբերս զննելով տանը: Այժմ չկան այլ ևս այդ գրադարանները:

Այդպէս ահա իմ ինքնակրթութեան համար մենակ իմ ընդունակութեանը չեմ պարտական, այլ Պետերբուրգի մոաւոր վերածնութեան շրջանին, այն բորբոքող և եռանդու կեանքին, որի մէջ չէի կարող չեփուել: Շատերն ականատեսներից ինձ յանդիմանում էին, երբ տեսնում էին կարդալիս բարձր բովանդակութիւն ունեցող մի գիրք, և ասում էին ընկերաբար՝ «Այդ Բնչ քո խելքի բան է, որ գրա վրայ ժամանակ ես կորցնում»: Բայց սիսալում էին իրանց ընդունակութեան չափով. իրանք որ չէին հասկանում, ենթադրում էին, որ ես էլ չպիտի հասկանամ: «Ես հօ գիտեմ, որ հասկանում եմ, ասում էի ես, բայց չզիտէի», որ այս հասարակ բանը հասկանոլու չափ սրանք չէն զարգացրել իրանց ինքնօգնութեան ոյժը, զուրկ են բազմակողմանի հետաքրքրութիւնից. զարգացած չեն դրանց զգացումները, և այս բոլորը միացն նրա համար, որ նւազ է կեանքից ստացած դրանց պաշարը, աղքատ է իրանց փորձառութիւնը, միակողմանի և մեքենայական է դրանց մոտաւոր զարդացումը, ամուլ է դրանց ուղեղը:

Ես իմ միտքը չէի բռնադատում, չէի յոգնեցնում, այլ միայն բաւականութիւն էի տալիս նրա ձգտումներին, բաւականութիւն

էի տալիս իմ հետաքրքրութեանը, այն պատճառով էլ ամենադժւար թւացող գիրքը ես կարգում էի այնպէս, ինչպէս շատերը մի գրաւիչ ոռման:

Տիեզերքն ինձ հետաքրքրում էր, ի՞նչպէս չկարգացի տիեզերագիտութեան վերաբերեալ գրքեր: Մարդկացին կեանքն ինձ հետաքրքրում էր, ի՞նչպէս չկարգացի նրա կեանքին վերաբերեալ գրքեր, և այն: Եւ քանի որ այդ բոլորը գրւում է պարզից սկսելով և աստիճան առ աստիճան բարձրանալով գէպի բարդը, ի՞նչ գժւարութիւն կայ այդ բանը հասկանալու համար, եթէ առ այդ ունեսքնական պահանջ, մի տեսակ քաղց և ծարաւ և անզուսպ հետաքրքրութիւն: Դժւարը նոր բան ասելն է, նոր գիւտ անելն է, իսկ արած պլծածը չհասկանալու համար բաւական բժամտութիւն ունենալու է: Փորագրութեան և ձեշման տակ ձգելու համար ամեն փոցո պէտք չի գալիս: Ես չեմ ասում, որ ամեն ոք կարող է ամեն ինչ անել, բացց ով որ իր մէջ կարողութիւն է զգում, թող սկսէ գործել, աշխատել, և կը տեսնէ, թէ ինչպէս սկզբում դժւար և անմատչելի թւացող գործը—իր ձեռքին դառնում է մի խաղալիկ: Ես մէկ անգամ մի հասակաւոր վարդապետի ոռուսերէն էի սովորեցնում: (Ինչու թաքցնենք, այդ վարդապետը այժմ Սուքիաս եպիսկոպոսն է): Սկզբումը դա դժւարանում էր: Գործն սկսել էի մի հաստ բումանից, որ հետաքրքրէ իրան: Մի վախենաք, ասացի, միայն սրա ասաներորդ մասը պիտի սովորէք:—Հապա մնացածը, հարցրեց:—Մնացածն արդէն կը գիտենաք, որովհետեւ ամեն մի հեղինակ գործ է ածում յայտնի չափով բառեր և դարձւածներ: Գիրքը գլխէ ի գլուխ նորանոր բառեր և դարձւածներ չի պարունակում: Սրա բոլոր հարատութիւնը տասներորդ մասումն արդէն վերջացած կը լինի: Եւ այդպէս էլ եղաւ: Մինչև գրքի կէսը որ հասանք, հայր սուրբն սկսեց ամեն ինչ թարգմանել առանց իմ օգնութեան:

Մաքի զարգացման համար ֆիզիքական պարապմունքը անհրաժեշտ պայման պէտք է համարել: Մեզանում ոչ միայն այս չկայ, այլ որ ամենից վատն է՝ ուսանող ասւած երիտասարդները իրանց ուսումն աւարտած են համարում այն հասակում, երբ նոր պիտի սկսէին ուսում առնել: Գոնէ շարունակէին իրանց ինքնակրթութիւնը մի նոր բան սովորելով, կամ սովորածը լաւ իւրաց-

նելու համար։ Վերջապէս ինքնազարգացումը պէտք է շարունակել անընդհատ, ինչպէս գիտութիւնն ինքը զարգանում է անընդհատ։ Մի կէտի վրայ կանգ առնել՝ կը նշանակէ լճանալ, նեխել, կամ ընդգիմանալ և քարանալ։ Սակայն մարդիկ կան, որ պարծենում են շարունակ միեւնոյն զուրնուն փչելով։ Նոր սերնդին խորհուրդ կը տայի դրանց օրինակով չվարակւել. այլ ս.վորել, սովորել, շարունակ սովորել և սովորացնել միեւնոյն ժամանակ, շատից շատ, քշից՝ քիչ։

## XV

Պետերբուրգի մտաւոր կեանքի վերածնութիւնը, ինչպէս ասացի, նման էր մի հեղեղի։ Դրա առաջը սկսեցին առնել 65 թւականի վերջերից և սկսւեց մի յետաշարժ ուղղութիւն։ Այնուամենայնիւ ծանօթացայ ևս Միքայէլ Նալբանդեանցին, որ ազատութիւն առացաւ գեներալ Սուլթանշահի երաշխաւորութեամբ։ Այս մարդուն առաջին անգամ ևս տեսել էի Թիֆլիս, ուր եկել էր Էջմիածին գնալու համար։ Այդ ժամանակ մենք յափշտակւեցանք նրա ճարտար հայախօսութեան վրայ։ Դրական լեզով մենք զեռ ևս թոթովում էինք. այդպէս չէր Նալբանդեանցը, նրա լեզուն արդէն կազմակերպւել էր և խօսում էր այնպէս, ինչպէս որ գրւում էր։ Իսկ հիմա նրան խօսել արգելել էին բժիշկները. թոքախար մաշել էր նրան և առաջւայ Նալբանդեանի սուերագիծն էր մնացել։ Բայց որբան զարգացել էր մտաւորապէս և որբան յետ թողել իրանից Ա. Նալբարեանցին։ Համակիր չէր այլ ևս ոչ նրա լեզուին և ոչ նրա ուղղութեանը, համարելով յետամիսաց և սրահապանողական։ Նալբանդեանցը աշխարհից կտրւելով՝ չէր կտրւել ժամանակակից գրականութիւնից, շարունակ կարդացել էր միայնութեան մէջ և շատ էր մտածել։ Նրա գրածների մի մասը Ա. Տէր-Գրիգորեանցի ձեռքն ընկաւ, բայց թէ ում մօտ մնաց յետոյ՝ ևս չիմացայ։ Գրւածներից նշանաւոր էր «Արկարծք Ագամայ» պօէման, գրւած ընտիր գրաբառով։ Այդ բանաստեղծութիւնը զլիսէ ի գլուխ բերան էր արել Ա. Խուդաղեանցը և ասում էր շատ տեղ։ Դա մի շատ հրաշալի բանաստեղծութիւն էր, նկարագրում է բնականի կոխւմ անբնականի գէմ, Ագամը վիճում է հրեշտակի հետ, որ թոյ

Հի առավել նրան սիրելու Եւային։ Հասշալի էր մանաւանդ սիրահարւած Ապամի և Եւայի գեղեցկութեան նկարագիրը։ Նալբանդեանցի տաղանդը, մասւոր զարդացումը, լեզւի հարստութիւնը անհամեմատ բարձր էր Ու. Պատկանեանից, իսկ բնաւորութեամբ շատ շիտակ էր Նալբանդեանցը, ինչպէս ուղիղ վեր բարձրացող մի բուրգ, մինչդեռ Պատկանեանը մի տատասկ էր փուլած գետնի երեսին, որի մօտով անցնել չէր կարելի անպատճեւ։

Պետերբուրգում ացտ միջոցին գլուխ բարձրացրեց Միքայէլ Միանսարեանցը, թարգմանել տալով կոմը և Լաբուլէի գասախօսութիւնը։ Կոմը կէսը թարգմանեց Մ. Տէր-Գրիգորեանցը, իսկ միւսը կէսը Եղիս Բաստամեանցը Մոսկայում (յետոյ Վահան վարդապետ)։ Սրա թարգմանածը մի փոքր անհարժ էր, սրբագրեցինք ես ու Տէր-Գրիգորեանցը, բայց սա բոլորն իր անւան սեփականեց և զրկեց խեղճին, առարկելով, որ նրա թարգմանածը պէտք չեկաւ։ Իսկ Լաբուլէն համարեա բոլորն էլ ես թարգմանեցի, բայց որովհետեւ իրան էր յանձնւած թարգմանութիւնը, խնդրեց որ ես բաժին շպահանցեմ։ Միանսարեանցը ժողովում էր և ազգային երգերը, որ յետոյ տպագրեց Քնար Հայկական վերնագրով։ Սրա ձեռնարկութեան համար տառեր էին հարկաւոր։ Ես յանձն առաջ ձուլել տալ Լիմանին և ձուլել տւի։ Երբ ամեն ինչ պատրաստ էր արդէն Եակշատի տպարանում, ես շարեցի մի երես բան և տպել տւի, որ ցոյց տամ Միանսարեանցին և ուրախացնեմ։ Եւ իրաւ շատ ուրախացաւ և սկսեց օդային ամրոցներ կազմել, թէ ինչ և ինչ է մտադիր տպագրելու։ Բաւական հարստութիւն ունէր, բայց ասում էր՝ «մեծ գործերիս այն ժամանակ կը ձեռնարկեմ, երբ բախտ ունենամ արժանանալու վիճակախաղի երկու հարիւր հազարին»... Հասարակութեան մէջ սա այնպիսի մի զիրք էր բռնել, որ ուզում էր սուերով ծածկել Սանաւարեանցին և Եղեանցին, որոնք գեռ մի նշանաւոր ազգային գործ չէին կատարել։ Ես չգիտէի, որ մի ներքին լուռ նախանձ կայ սրանց մէջ։ Աւզենալով ուրախացնել և Սանաւարեանցին և Եղեանցին, նրանց ևս ցոյց տւի տառերի օրինակը, պատմելով գործի հանգամանքը և գովելով Միանսարեանցին։ Նրանք նայեցին և դտան, որ տառերը շատ անպէսպ են և անձունի, որ նրանցով կարելի չէ

օրինաւոր բան տպելի: Ես շատ վիրաւորւած զգացի ինձ, բայց ձայն չհանեցի: Վիրաւորանքս չծածկեցի Միանսարեանցից, և նա ինձ միսիթարեց, ասելով՝ նրանք քեզ չեն վիրաւորել, այլ ինձ. դրանք չեն ուզում, որ ես մի բան արած լինեմ, բայց ես պիտի անեմ դրանց ջգրու: Մտքումս ասացի, «Միայն լաւ բան արեք, թէկուզ միմեանց ջգրու լինի»:

Աւսանողութեան սէրն ու յարգանքը Սանասարեանցն էր վայելում և ոչ Միանսարեանցը, որովհետեւ նա էր պէտք գալիս մի դրամական օգնութեան պահանջ եղած ժամանակի, բացի այն մշտական տուրքից, որ վճարում էր ամսէ ամիս չքաւոր ուսանողաց օգտին: Այդ մարդը շատ առատաձեռն էր և տւածը տալիս էր առանց զգացնել տալու ստացողին, որ նրան մի բան տւաւ: Տալիս էր իրութէ պարտ լինէր ուզողին: Եւ հարստահարուում էր անխնայ: Նրա համար չկային ոչ բախտախնդիրներ, ոչ խաչաղողներ, զիմողին չէր մերժում: Իր ողորմածութիւնը տարածում էր և օտարների վրայ: Եթէ իմ բնաւորութեան մէջ շահւելու տրամադրութիւնը լինէր, ես կարող էի ացդ ազնիւ հայրենասէրի հաշով ապրել: «Աշխատանք և վարձատրութիւն, և ոչ ձրիակերութիւն», այն է եղել իմ նշանաբանը: Իմ այդ իբր ապահոված միջոցին ես վերջին չքաւորութեան մէջ լնկայ: Պատճառը ոչ ոքի յայտնի չէր: Եստ անդամ օրերով քաղցած էի մնում, աւելորդ հագուստս ծախում էի: Միքայէլս ձուլարանումը իր արեւոնն աւարտեց, բայց շատ մաշւեց խեղճը, բոլոր միսը հալւեց և մնաց չոր կմախքը: Նրա վրայ աւելցաւ և մեր ընկեր Եաշան: Դա ես եկաւ Պետերբուրգ և հիւանդացաւ թոքախտով: Եկեղեցու դաւթում թոյլ չէին տալիս ընկերներիս մօսս պահել, հարկադրւած առանձին սենեակ էի վարձել նրանց համար, ստացածս չէր բաւականանում երեքիս և երեքեանքս էլ մնում էինք քաղցած: Ճար չկար, սկզբ է զիմէի արտաքին օգնութեան: Այս բանը յայտնեցի Ա. Բաբայեանցին, որ Ռուբէն Զալալեանցի գնալուց յետոյ իմ մտերիմ բարեկամն էր: Ես հաւաքեց մասնաւոր օժանդակութիւն կարող ուսանողներից, բայց քիչ էր, զիմեցի պ. Սանասարեանցին, և նա ասաց. «Այդ մասին բնաւ հոդ մի անեք, ես ինքս կուղարկեմ նրան հայրենիք իմքրոջ որդու հետ (Աւոնի) և ուղարկեց:

իմ այդ նեղութեան ժամանակս Պետերբուրգ էր Աղեքսանդրի նրիցեանը։ Դա Թիֆլիսումը գրավաճառի խանութ էր բացել Տէր-Միքայէլեանի հետ, եկել էր զբքեր գնելու, ուրեմն հարուստ էր։ Արութիւն և Մանուկի ձեռագիրը տարաց մօտը, և ասացի՝ «զբքեր էք տպում», այս բանն էլ առէք և տպեցէք, թանգ չեմ գնահատիլ, յիսուն մանէթով կը տամ։ Աղեքսանդրը պատասխանեց։ Նատ էժան ես գնահատում, դա աւելի թանգ արժէ, բայց ես պիտի նայեմ իբրև վաճառական, թէ արդեօք այդ զիրքը որ տպագրեմ, կը վաճառւի և կը կարողանամ տպագրութեան ծախքը հանել։ Դու գիտես որ մեզանում կարդացողների թիւը շատ նւազ է։ Իմ կարծիքով պէտք է գտնել մի բարերար, որ իր հաշով տպէ։ Ես չեմ կարող բարերար գտնել, ասացի, բայց ուրախութեամբ կը վաճառեմ նոյն իսկ 25 մանէթով։ Կը տպւի և ձրի, բայց փող շատ է պէտք։

**Զգնեց անիրաւը.** գոնէ ասէք՝ «Փողի կարօւութիւն ունես, առքեզ 25 մանէթ պարագ»։

Միքայէլի գնալուց յետոյ էլ չթեթևացաւ իմ նեղութիւնը։ Եաշան մնաց և տկարութիւն շատ քաշեց խեղճը։ Միքայէլն ու ես տնտեսապէս և բարոյապէս անբաժան ընկեր էինք, իսկ Եաշային օգնում էինք իբրև ազնիւ ընկերոջ, նա ինքը ոչինչ ինայած չէր մեզանից երբէք։ Բայց ես ինչպէս ասէի մէկին, թէ այնպիսի մի ընկեր ունիմ և օգնում եմ նրան։ Այդ կը համարէի մի տեսակ մեծամութիւն և սնափառութիւն իմ կողմից։ պիտի ասէին՝ իր գլուխը չի կարողանում պահել, ուրիշների հոգսն էլ է քաշում, այն էլ մի օտարի։ Մէկ անդամ հարկադրւած էի նոյն իսկ պ. Եղեանին երթալ մի հինգ մանէթ ձեռքափոխ ուզելու կամ պարագ։ Պարոն Եղեանցը տւառ ինձ հինգ մանէթը, միենոյն ժամանակ հաշուց իր էլքն ու մուտքը և ասաց, որ հազիւ ծայր ծայրի է բերում, ինձ էլ պատիրեց, որ հաշով ապրեմ, եղած ժամանակ չշռայլել և յետոյ քաղցած նստել։ Այս անդամ ներեցէք, ասացի, միւս անդամ այդպէս կանեմ։

Չնայած իմ նեղ վիճակին, ինձանից աւելի ևս նեղացած ուսանողներ կային։ դրանք էլ ինձ էին զիմում օգնութեան, տնտեսական թշւառութիւնը մի սովորական երեսյթ էր մեզ համար, չէինք յուսահատում։ Մէկ անդամ մէկին փող չունէի որ տայի,

ժամացոյցս տւի, որ գոնէ գրաւ դնէ: Վերջը թափել չկարողացանք, այնպէս էլ կորաւ: Ես գերւիշի պէս մէկից առնում և միւսին էի տալիս, բայց ոչ ոք չգիտէր այդ բանը: 67 թւականի սկզբում Եաշային տարայ իր ծնողաց մօտ Մուկւայ: Նատ ցուրտ էր, սարսափելի ցուրտ: Տաք վերարկուս և թաղիքի ոտնամաններս հագցրի Եաշային որ չմրսի, բայց ես մրսեցի այնպէս, ինչպէս ցրտահար եղած վարգենի: Վերադարձայ Պետերբուրգ ձայնս իսպառ կտրւած, գոյնս թռած, առոյգութիւնս կորցրած: Այլ ևս երգել չէի կարողանում և ռոճիկս ստանում էի ողորմութեան պէս: Միքայէլի դնալուց յետոյ ես ինձ մի տեսակ որբացած զգացի, սկսեցի հայրենիքիս կարօտը քաշել և մաշւել: Չմեռը մօտենում էր և ես յոյս չունէի, որ գարունքին կարժանանամ, այնքան սաստիկ էր կարօտս: Վեհազնը իր բժիշկներին ուղարկեց ինձ տեսնելու: Եկան՝ զննեցին և միաձայն վճռեցին, որ վերադառնամ հայրենիք: «Եթէ մնաք, չեք ապրիլ, ասացին. ձեր տկարութիւնը և ֆիզիքական է և հոգեկան»:

Վճռեցի եկեղեցուց երեք հարիւր մանէթ ճաշի ծախք ստանալ և ուղարկել հայրենիք: Հէնց այս միջոցին Պետերբուրգ հասաւ նորընտիր Գէորգ կաթողիկոսը և իջաւ Լազարեանի բնակարանումը: Հետը բերել էր և Պետրոս եպիսկոպոսին ու Խորէն Գալֆայեանին և իր թարգման Նիկողայոս Տէր-Յովհաննիսեանին: Մանկունուն թողել էր Մոսկվայումը: Բերել էր և շաթիրներին, որոնք գորգի վրայ գրւած խաչի գլխների էին նմանում: Ինքը Լազարեանը դուրս էր եկել իր բնակարանից և տեղաւորւել իր գտներ մօտ: Դադեցկին (պալատապետ) փնտինթում և կատաղում էր, տեսնելով, որ պատւաւոր հիւրերը փչացնում են թանգստին կահկարասիքը, չիմանալով ոչ նրանց պատիւը և ոչ զինը: Հասարակ մահկանացուների համար անմատչելի պալատը դարձել էր մի հասարակաց պանդոկ, ուր անխոտիր ներս ու դուրս էին անում ամեն կարգի մարդիկ:

Կաթողիկոսն ասել է՝ թէ ինձ ինչ է մտադիր անելու. Կջմիածնումը, թէ մտադիր է վերանորոգելու և տպարանը և մի ամսագիր հրատարակելու: Այն գէպքից օգուտ քաղելով՝ Սանասարեան և Ֆզեանը մատնացոյց են լինում ինձ և իմ Միքայէլի վրայ, վկայելով, որ մենք այդ գործին շատ յարմար ենք:

—Եթէ այդ երիտասարդներին առնէք այնոեղ, ասել էր

աղ. Սանասարեանցը, ևս էլ իմ կողմից, ինչ որ հարկաւոր լինի թէ ձուլարանի և թէ տպարանի համար, կը հոգամ Մայրեր ունեմ մօտս, այն էլ կը տամ:

Այստեղ ուշադրութեան արժանի է աղ. Սանասարեանցի հեռատեսութիւնը, որով իր տալիք օգնութիւնը կատում է մեր այնտեղ լինելու հետ, շատ լաւ իմանալով, որ ամեն օգնութիւն ապարդիւն կանցնի եթէ այնտեղ չլինեն գործին հմտա մարդիկ:

Սրա վրայ Վեհափառը ինձ կանչեց մօտը, պատեիրեց, որ երթամ Թիֆլիս սպասեմ մինչև իր վերադարձը, խոստանալով, որ այնտեղից ինձ կը տանէ Էջմիածին լաւ սոճիկով: «Դէ, ապրես, տղայ ասաց և աջը մեկնեց, ևս համբուրեցի և գուրս եկայ լուռ ու մոհջ:

## XVI

Պետերբուրգից գուրս եկայ 1867 թւականի վերջերին: Երկաթուղին Պետերբուրգից մինչև Մոսկա և ացտեղից մինչև Կողլով էր: Այտեղից պէտք է փոստով գնայինք: Ընկերս մի օֆիցեր էր, Վինդեկւիստ ազգանունով, որ բաւական կարդացած և զարգացած մարդ էր: Ճանապարհորդում էինք սանկայով, արթուն մնալու համար՝ ընկերս պատմում էր իր կարդացած հեղինակներից զանազան բոմաններ: Զարմանալի յիշողութիւն ունէր. Նեքսպիրի բոլոր գրամանները բերան գիտէր: Մեզ հետ կային և կարադացիք, որոնք նոյնալիս Պետերբուրգից էին գալիս, այստեղի կայսերական թիկնապահ գնդի ձիաւորներից էին: Նովչերքասկից որ գուրս եկանք, ճանապարհին մեր առջև գնացող կաբարդացիք կանգնեցրին իրանց սանկան և սկսեցին իրանց լեզով հարայ-հրոց բարձրացնել և գդակները գնդակի պէտ վեր վեր նետել: Խօսեցանք և հարցրինք պատճառը: Հարա չէք տեսնում, ասացին, նայեցէք, հրէն հորիցնի ծալրում մեր նըլքուսը:

Տեսնելով հայրենի լեռան գագաթը, ուրախութիւնից չըգիտէ-ին թէ ինչ անեն: Երկար ժամանակ լեռներից զուրկ մնալով՝ շատ էին կարօտել խեղճերը: «Ուրիմն մինակ ես չեմ կարօտ քաշել, ասացի ես մոքումն, սրանք էլ են իմ օրում»: Այստեղ պատկերացան իմ երեակայութեանս մէջ հայրենիքիս ծաղկապատ լեռները, որոնց

տեսութեանը շուտով պիտի արժանանացի և փափագս առնելի՝ առատա-  
առատ ծծելով նրանց կենսատու օդը:

Նատ մարդիկ կան, որոնք իրանց վրայ չեն փորձել, թէ ինչ  
է քաղցը, ծարաւը, փափագը, կարօտը, սէրը և ուրիշ շատ զգա-  
ցումները: Ուրիշի զաւակի մահւան վրայ աւելի նրանք են լաց լի-  
նում; որոնք փորձով գիտեն, թէ ինչ է ծնողական կսկիծը. միտն  
են բերում իրանց զաւակը և լալիս աղի արտասունքով: Ընկերս  
ծիծաղեց չէրքէզների ոգեորութեան վրայ, իսկ ես նրանց հետ վեր-  
վեր կըթաշէի, եթէ չամաշէի...

Ուղեկիցս առ ժամանակ մնաց Ստաւրոսով, իսկ ես չէրքէզների  
հետ գնացի մինչև Ալաղիկաւկազ, և այսուղ էլ մնացի մինչև եօթն  
օր, որովհետեւ ճանապահն կապւած էր «ՀաՅալի»-ների սպատճառով: Այս-  
տեղ ճանապահ ծախսը հատաւ, մնաց հինգ մանէթ միացն: Էլ սպա-  
սել կարելի չէր. մոտածեցի ուղտով գնալ: Գնացի ուղտասպահների  
մօտ, սակարկեցի մինչև Թիֆլիս երեք մանէթ: Նստեցի մի ուղտի  
վրայ իմ եւրոպական շորերովս և քաղաքի միջով լանգու-լանգու-  
անելով անցայ մինչև միւս ծայրը: Ամենքն էլ ապշած նայում էին  
և հարցնում միմեանց, թէ ով է արդեօք այս դիմք: Ացտեղ իմ  
ուղտասպահներն իջան ուրիշ քարաւանի մօտ, որոնց բեռները զեռ  
պատրաստ չէին: Ես մնացի դրանց մօտ կանգնած մոլորւածի պէս:  
Մէկ մանէթ կանխիկ էի վճարել. «Եթէ այսօր գնալու չէիք, ասա-  
ցի, ինչու բէհ առաք ինձանից...»

Այս միջոցին, չըգիտեմ, Աստած ուղարկեց, թէ իրանք եկան,  
մօտեցան ինձ երեք հոգի Ազլարցի վաճառականներ, և միտքս իմա-  
նալով՝ առացին, ուղտով անցնել անհնարին է, դուք բոլորովին  
կը սառչիք: Մենք էլ պէտքէ գնանք Թիֆլիս, սպասեցէք միասին  
երթանք. ինչ ունիք շտապելու: Ես յամառեցայ, իսկ նրանք աշ-  
խառեցին համոզել ինձ և իբրև մի իսենթի խելքի բերել: Տեսայ  
որ ինձ անխելքի տեղ են դնում, պատճառը յայտնեցի, խոստովա-  
նելով, որ սպասել չեմ կարող, որովհետեւ ճանպու. ծախիքը հատել  
է: Ազլարցիք ինողացին:

—Գնանք, գնանք, ասացին, մեզ մօտ: Մենք կարող ենք ձեզ  
մինչև Թիֆլիս տանել, իսկ այնուղ դուք կը վճարէք ձեր բաժին  
ծախիքը:

— Եթէ ալիքան բարի կը լինէք, ասացի, — ես ուրախութեամբ  
կը վճարեմ թէկուզ պարտքիս կրկնապատիկը:

Կանիսիկ վճարած մանէթս այլ ևս չըսպահանջեցի ուղառական։  
Ներից: — Զանս, ինչու չառնես, ասացին տղայքը: — Ոչ, ասացի, ևս  
արդէն նստեցի ուղարի վրայ, այն էլ կեանքիս մէջ առաջին անգամ,  
այդ ինձ համար աւելի արժէ քան թէ մի մանէթ:

Թիֆլիսում պարտքս վճարելու յոյսս մեծ էր: Աէսու տպել էր  
արդէն Միքայէլը, ուրեմն դրավաճառի մօտ ստանալիք կունենալի:

Հասանք Թիֆլիս և իջանք Զուբալովի քարւանսարայումը։  
Միւս օրը գնացի դրավաճառի խանութը, որ ծախւած զբքերիս  
փողն ստանամ և բերեմ վճարեմ պարտքս, որ 19' մանէթ էր: Եա-  
նից դուրս եկաւ, որ իմ անդրանիկ մոտաւոր ծնունդն ևս իմ պա-  
տանեկութեան օրն է ընկել: Այսոեղ միտս լնկաւ Պետերբուրդի  
գրաքննիկ ծերունի բերոյեանցի մարգարէութիւնը: Երբ որ վէսու  
տարայ նրա մօտ, որ գրաքննէ, նա իր ձեռագիր հարուստ բառա-  
րանի թերթերը փոել էր դահլիճի մէջ, և չըգիտեմ ինչ էր ջոկ-  
ջըկում:

— Այդ ինչ ևս դրել, ասաց:

— Ինչ, ասացի, ազգացին կեանքից մի վէս է:

— Ազգացին կեանքից... ասաց ծերունին ցաւած սրտով: — Ու-  
րեմն ազգացին թշւառութիւն կը լինի անշուշտ: Այն, թշւառ է մեր  
ազգի կեանքը, շատ թշւառ: Տեսնում էք ահա այս թերթերը.  
Ժիտուն տարւայ աշխատութիւններ են. Ժիտուն տարի շարունակ աշ-  
խատել եմ ես սրանց վրայ, բայց գնահատող չըկայ, ոչ տպող կայ,  
ոչ առնող, այսքան ամուլացած է մեր ազգի մէջ ուսումնասիրու-  
թիւնը, գրասիրութիւնը, չնայած, որ միլիոնատէր հայեր ունենք:  
Այս աշխատութեան դին չըգնողները ինչ դին պիտի դնենքո վէ-  
պին: Բեր, բեր ստորագրեմ:

Եւ ստորագրեց առանց կարդալու:

Ընկերս տպագրում է դրքերը թղթի վողը հաւաքելով բաժա-  
նորդագրութեամբ, շարում է ինքը, իսկ տպագրութեան վարձը  
վճարելու համար գտնում է մի ազգասէր մարդ, որ էր Երևանցի  
Աղաջան Թաղիանոսեանցը, նրանից վող է առնում մօտ մի հարիւր  
մանէթ և հազարի շափ դրքեր յանձնում իրան, թէ վաճառեցէք,

ձեր փողը վերցրէք, իսկ մնացած գրքերը և աւելցած փողը յանձնեցէք հեղինակին: Այս յանձնաբարութիւնն անելուց յետոյ ինքը գնում է հայրենիք: Մեր ազդատէր վաճառականը Աւետարանի քանքարաթաքոյցի նման գրքերը փակում է իր սենեակում, իսկ ինքը գնում է Երևան: Գնացի մօար: Մի ուրիշ մարդ էլ կար մօտը՝ և ինչպէս երևաց՝ իր ընկերն էր: Սովորական բարեներից յետոյ ասացի: — Ենորհակալ եմ, որ ապարանից հանել էք գրքերս, բայց շատ դժոն եմ, որ գրավաճառներին չէք յանձնել: Գիրքը տպւած է կարգալու համար և ոչ բանաբարկելու: Գոնէ, հիմա լինի, այլպէս արէք, յանձնեցէք գրավաճառներին:

— Մենք ոչինչ չենք կարող անել, պատասխանեցին, — մենք ձեր գործակառարը չենք, մեր փողը կը բերէք, ձեր գրքերը կը տանեք:

— Նատ լաւ էք ասում, ասացի, և իրաւունք էլ ունիք, բայց որ փող չունեմ, որաեղից բերեմ, կամ ի՞նչ շահ ունիք գրքերը պահելով:

— Եթէ գրքերն ազատելու փող չունիք, ուրեմն ձեռք վերցրէք գրքերից, այնուհետեւ մենք կը վաճառենք և մեր փողը կտանանք. միայն դուք մեզ մի սառագրութիւն պիտի տաք, որ գըրքերը մեզ էք տեել, ստանալով լիովին բաւականութիւն:

— Եթէ այդպիսի մի թուղթ տամ, միթէ դուք կտանեք, չէք զգալ, որ այդ մի անիրաւութիւն է, զբկողութիւն է, մի անգթութիւն է, ծայրայեղ հարստահարութիւն է, դա մի թալանութիւն է, ախր ի՞նչպէս կարելի է հարիւր մանէթի տեղ՝ հազար մանէթի գիրք տալ:

— Կը մեզ անսպառում, պարոն, բարկացան հայոց գրականութեան կատաղի թշնամիները. կամքի բան չէ, մեր փողերը բերէք, ձեր գրքերը տարէք: Ուզում էք որ ծախւի, մեզ մի թուղթ տւէք, որ դուք ձեռք էք վերցնում: Այդ էլ չէք ուզնում, գրքերը կը մնան մի անիինում թափած:

— Նատ լաւ, ասացի, տւէք ինձ թուղթ և գրիչ, ես կըտամ ձեր ուզած թուղթը, նրա հետ և իմ խորին զգացմունքը, որ կարելի է տածել միայն դէպի նէլոկի նման մարդիկը:

Այս ասածիցս բան չըհասկացան. Նէլոկի մասին գաղափար չունէին: Թուղթ և գրիչ տւին և ես իրանց ուզած սառագրութիւնը

տւի և դուրս եկայ: Յետոյ սրանք զրքերս տարել էին Երևան և այնտեղ ցրւել հատը 10 - 20 կոպէկով, որով հաւատացրել էին, որ ազգասիրութիւն են անում ժողովրդի մշջ էժան գնով զրքեր տարածելով: Ես ինչս փողով գնեցի իմ զրքերից մի քանի օրինակ՝ բարեկամներիս ընծայելու համար:

Աշխարհում վատ մարդիկ որ չըլինին, էլ ի՞նչ զին կարող են ունենալ լսուերը: Այս բանը գեռ շատ վազուց վրացոց հոչակառոր բանասաեղծ Շոթա Ռուսթաւէլին ոտանաւորով է ասել, թէ՝ «Գեղեցկութիւնն երբ էժանանայ, էլ մէկ չիր էլ չի արժենայ»....:

Պարտքս չըվճարած, միոք չունէի ծանօթներիս երևալ, բայց հիմա հարկադրւեցայ գնալ ուղղակի պ. Էնֆիամեանցի մօտ և խոստովանել զլիխա անցքը: Նախկին բարերարս շատ ուրախացաւ ինձ տեսնելով և իսկոյն տւաւ փոխանակ 12 մանէթի՝ երեսուն մանէթ, պատվիրելով՝ որ եթէ նեղութիւն ունենամ, չըծածկեմ իրանից:

Պարտքս վճարելուց յետոյ հիւրասիրւեցայ պ. Մովսէս Վարդանեանցի տանը: Մովսէսը, որ իմ նախկին աշակերտակիցս էր ձուլարանում, հիմա զլիխաւոր գրաշար էր պ. Էնֆիամեանցի տպարանում և միշտ նամակակցութիւն ունէր հետո. ձրի ուղարկում էր ինձ և «Մեղուն»: Զուլարանումը մի ոռոս վարպետ ունէինք մենք, որ այն ժամանակ միակն էր ամբողջ Թիֆլիսում: Սա բոլոր աշակերտներին ուստա էր ասում, իսկ Մովսէսին՝ պոլտորա ուստա, այսինքն՝ մէկ ու կէս ուստա կամ ուստա ու կէս: Պետք բուրգից Մովսէսին ուղարկած լուսանկարի վրայ մի ոտանաւոր էի գրել, որ նրան անւանել եմ ուստա և կէս»: Շատերը բերան են արել այդ ոտանաւորը, բայց չըգիտեն ուստա և կէս ասելուս պատճառը:

## XVII

Մոտ եօթը տարի էր, ինչ որ չէի տեսել ծնողացս: Հիմա գնացի աղքատ գրապանով, բայց հարուստ տարազով և զլիխով: Այսպէս ճոխ հագուստ, որ նրան տեսնող զիւղացին երբէք չէր կարող երեակայել, որ նրա գրապաները կարող են դատարկ լինել:

Լսել եմ, որ մի արևելցի բանաստեղծ ասել է՝ «Երկնքի արքայութիւնը ոչ թէ այն նիւթականն ունի, ինչպէս դուք էք երեւակայում, այլ ունի այն բոպէի քաղցրութիւնը, երբ մի մայր գրկում է եօթը տարով տարագրւած որդուն»:

Տունը հասայ թէ չէ, թէև առաջուց իմաց էի տւել գալս և նախապատրաստել, շափից դուրս ցուզւեցան ամենքը: Հայրս, որ նոյն իսկ իր գաւակներին չըհամբուրելու մի նախապաշարմունք ունէր, որովհետեւ Յուղան համբուրելով էր մատնել Քրիստոսին, այս նախապաշարմունքը ծնողական ծովացած կարօտի առջև ջարդ ու փշուր եղաւ: Խնձ առաւ իր հսկայական բազուկների մէջ և սկսեց հեկեկալ երեխայի նման և համբոյցների հեղեղ թափել: Մօրս հերթ չէր տալիս: Խեղճ մայրս ժպիտը բերանին և արտասուքն աչքերին՝ կանչում էր.—Այ մարդ, երեխիս կըսպանես, թող մէկ էրեսին մտիկ տամ: «Վայ, ես քըմատաղ ինսեմ, իս, անուշ բալաս, անջաղ մին եկար»... Հայրս բաց թողեց թէ չէ ես «ազի ջան» գոչելով՝ ընկայ մօրս զիրկը և երեսս թաղեցի երկու հսկայական ծծերի արանքում: Ամբողջ զիւղը հաւաքւեց, որը ժպառմ և որը լաց էր լինում ուրախութիւնից:

Մի զարմանալի զիւղ է մեր զիւղը: իր բնակիչներին սիրագորով մօր պէս դրկած է պահում, չթողնելով ոչ ոքի պանդխուութեան երթալ: Ես առաջին և վերջին պանդխուութիւն քաշողն եմ մեր զիւղում: Նոյն իսկ Թիֆլիսումը չի կարողանում մնալ մեր զիւղացին, չունինք ոչ մի վաճառական և ոչ արհեստաւոր քաղաքիս մէջ: Նրանք նւիրւած են իրանց զիւղի բերրի և արդիւնաւելու հողին ու ջրին. զուրս երթալու կարօտութիւն չունին: Ինքը զիւղը Գուգարքի ակն ու մարգարիտն է: Այլուեզ է եղել հին Գուգարքի բգէշտութեան մայրաքաղաքը: Ամեն անգամ երբ զնում եմ մեր զիւղը, սրտիցս չի տալիս քաղաք գալ և չէի գալ, եթէ սոխալողական պահանջ չունենայի: Ամեն մարդ կը սիրէ իր ծննդավայրը, բայց այլ է սիրել, և այլ՝ հաւանել, հիանալ և զմայլել: Մեր զիւղն զմայլելի է և հիանալի իր զեղեցիկ զիրքով և տեսարաններով: Նախքան Խուսաստան գնալս, ես այդ զեղեցկութիւնը չէի զգացել, որովհետեւ չունէի զեղեցիկ ճաշակը, մանաւանդ բնութեան վերաբերեալ:

Խնչպէս հին հէքիաթներում հարսանիքն անում են եօթն օր և եօթը զիշեր, այնպիսի մի հարսանիք զարձաւ մեր տունը ամբողջ եօթն օր և եօթը զիշեր: Կեր ու խումին էլ հաշիւ չկար: Այնպէս էի սովորել ձրի հաց չուտելուն, որ հիմա շատ

թւալի էր ինձ, որ կարող եմ կուշտ փորով հաց ուտել առանց մի բան վճարելու, և մինչև անգամ ուրիշներին էլ հիւրասիրել ամենայն առաւտութեամբ։ Գիւզում սովորութիւն չկար որոշւած ժամերում ճաշել կամ ընթերել։ Մեր սուփրեն առաւտուանից գցած էր մինչև կէս զիշեր, մէկը նստում և միւսը վեր էր կենում շարունակ։ Ով ասե՞՝ գալիս էր աչքալոյս, մինչև հեռաւոր գիւղերից անգամ, և ոչ միայն հայեր, այլ և վրացիք և թուրքեր։ Հայրս յայտնի էր իբրև շատ հացով մարդ և շատ հիւրասէր, նրա եկող-գնացողներին թիւ չկար։ Մայրս չափաւորութիւն էր սիրում, որով հետեւ նա էր եփողն ու թխողը։ Հայրս մէջը ուտում էր, զրադ ման գալիս։ Ամենի հետ ուտում և խմում էր հիւրերին օրինակ տալու համար։ Այսպիսի մարդ մէկ էլ Ալեքսանդրապոլ տեսաց։ Դա բժշկապետ Աւետիք Բաբայեանցի հայրն էր։

Իմ բացակայութեան ժամանակ բաւական կոտրւել էին թէ հայրս և թէ մայրս։ Հայրս մէջքից կուացել էր և գաւազան էր առել ձեռքը, կորցրել էր իր առաջւան ուրախութիւնն ու աշխոյժը։ Բայց երբ աեսաւ ինձ, երբ իմացաւ, որ առաջիս մեծ ասպարէզ է բացւում յառաջ գնալու, երբ տեսաւ, որ ես էլ այն չեմ, ինչ որ տպարանումն էի, հիմա կաթողիկոսներն են հրաւիրում գործի և բարձր պաշտօնի—մէջքը շտկեց, դաւազանը դէն ձգեց, վերանորոգւեց վաթսունը եօթը տարեկան հասակում և առաջւայ պէս սկսեց իր Քեօրօղլին երգել։

Թող ոչ ոք չզարմանաց, աչքովս տեսած բանն եմ ասում։ Այս-տեղ պէտք է մի հանգամանք ևս աւելացնեմ, որ ի նկատի ունենան բարի զաւակ լինելու փափագ ունեցողները, մանաւանդ նրանք, որոնք ուամիկ դասակարգից ինտելիգենտ դառնալով մի առանձին արհամարանքով են նայում իրանց արիւնակիցների վրայ։ Ես իմ հօրս պատում էի չափից դուրս։ այս հանգամանքն անուշադիր չէի թողնում, գործով էի ցոյց տալիս առանց զանցառութեան։ Նրա համար նոր հագուստ էի առնում և զարդարում։ Հայրս ասում էր.—որդի, ինչու ես նեղութիւն քաշում, ինչու ես զուր ծախքի տակ լնինում, այս բոլորը տէրտէրը պիտի տանի։—Ինչիս է պէտք, ասում էի. յետոյ ով ուզում է թող տանի, բայց հիմա ես իմ պարտականութիւնս պէտք է կատարեմ։ երեխի ու ծերի

սիրու պէտք է շահած պահել, մանաւանդ հագուստի կողմից։ Ապրիս, որդի, զօրանաս, որ քո հօրն այդպէս պատիւ ես տալիս։ Թողութիշներն օրինակ առնեն քեզանից, Ասուած էլ քո անունը բարձրացնի, ինչպէս դու բարձրացնում ես իմ անունը... Ատէպ ատէպ բաղնիք էի տանում և ինքս իմ ձեռքովն էի լւանում ոտներն և գլուխը և լողացնում խշչալի։ Ես այս անում էի ատիպւած ներքին զրդումից, բայց նկատում էի նաև, որ տեսնողների վրաց խորտպաւորութիւն է գործում և լաւ օրինակ գառնում։ «Առաւել լաւ, ասում էի մոքումն, սա մի ցուցամոլութիւն չէ, այլ մի սրբազն պարտականութիւն, որ պէտք չէ թաքցնել նորագոյն փշացած մերլնդից, այլ պէտք է նրա աչքը կոխել։»

Ալէքսանդրապոլ եղած ժամանակս տեսնում էր ժողովուրդը, թէ ինչպէս եմ վերաբերում ես դէպի իմ հայրը և ինչպէս մի ուրիշը դէպի իր հայրը, և այս գառել էր խօսակցութեան առարկայ։ Այդ ուրիշը Լազարեան ձեմարանում աւարտած մի կոկարդաւոր վարժապետ էր պետական ուսումնարանում։

Սրա համար պատմում էին, թէ երբ որ հայրը մօտն է զալիս, ամեն կերպ աշխատում է ցոյց տալ, որ նա իր հայրը չէ, այլ իրանց գիւղացի մի ռամիկ, կամ եթէ խոսովանում էր, չէր ասում իմ հայրն է, այլ ասում էր «համարեա թէ»։ Ես համարում էի այս մի զրախօսութիւն և չափազանցութիւն։ Մէկ օր ինքս ականատես եղայ այս բանին։ Գնացել էի մօտը, հայրը հեռու մի անկիւնում նստած էր իբրև մի օտարական։ Հանօթացրեց ինձ, բայց ես մօտեցայ նրան, ձեռք տւի և գառնալով վարժապետին՝ կիսահարց առաջարկեցի, «կարծեմ, ասացի, սա քո հայրը պէտք է լինիր Վարժապետը նմնացրեց և ասաց կըմկըմացնելով—Հը՛մմմ... ինչպէս ասեմ... համմանամարեա թէ»։ Սրա վրաց, ես գարձայ իրան և յանդիմանեցի ռուսերէն։ Յիմար ասացի, ինչպէս «համարեա թէ», ինչ մեղք կը լինի, որ սա քո հայրը լինի։ դու կարծում ես, որ սրանից շատ լաւ մարդ ես. սա գոնէ մի բնական մարդ է, իսկ դու մի շինովի արարած...»։

Ահա այսպիսի որդիք էլ կան, որոնցից վատթարները նոյնպէս կան։ Այսպիսի ծնողքը վերակենդանանալ կարող չեն, նոյն իսկ ունեցած կենդանութիւնն էլ կը կորցնեն։

Հայրս մէկ անգամ ասաց.—Ես ինձ շատ մեղաւոր եմ զգում, որ քու ուսման համար ոչ մի կոպէկ ծախք չեմ արել:

—Իսկ ես կարծում եմ, պատասխանեց՛, որ քեզանից ահագին դրամական օգնութիւն եմ ստացել:

—Այդ երբ, մրտեղից, ի՞նչպէս:

—Քեզանից, քո հոգուց, քո մարմնից: Զէ որ ես քո ծնունդն եմ: Եթէ իմ հայրս դու չըլինէիր, քո բոյ ու բուսաթով, քո առողջ կազմւածքով, քո բնական ձիրքերով և շնորհքով, այլ լինէիր մի անշնորհք մարդ, մի ապուշ և թոյլ արարած, ի՞նչ ես կարծում, ես այնուհեաւ մի՞թէ կարող կը լինէի բանի նման մի բան դառնալ, թէկուզ միլիոններ ծախսէիր վրաս: Ա՛չ, հայր, դու շատ բան ես տւել ինձ, ի՞նչ որ դու տւել ես, մանէթներից շատ և շատ թանգ է...

—Ապրիս, որդի, որ այդքանը հասկանում ես, սկատասխանեց հայրս, տեսնելով որ ես ժառանգական յատկութիւններին մեծ նշանակութիւն եմ տալիս:

Ուշադրութեան արժանի է, վիւալի, որ ժառանգական յատկութիւնների մասին մեր բոլոր գիւղացիք ամենայն տեղ պարզ գաղափար ունին, թէև զրանից շահւելու գիտակցութիւնը նւազ է և համարեա թէ չունին:

### XXIII

Գիւղումը երկար մնալով՝ ես մեր տանը մի օգուտ տալ չէի կարող, բայի վեասից: Պէտք է շուտ վերադառնալի քաղաք: Մտադրութիւնս յայտնեցի հօրս:

—Գնա, որդի, ասաց հայրս, բայց մենակ մի մնար, դռնէ դուռը մի ընկնիր, աղջիկ ուզիր, քեզ համար տուն ու տեղ զիր: Խեղճ աղջիկս քանի ողջ էր (Օսանան՝ Արութիւնի քոյրը) քաղաքումը մեզ համար տուն ունէինք, հիմա գնում ենք թաւլումն ենք վէր գալիս: Մի վախենար, ապրելուդ հոգը շատ մի քաշիր, Աստւածը ողորմած է, քո տարեկան հացն ու զինին այստեղից կուղարկեմ, մնացածն էլ դու կարող ես հոգալ:

Հայրս իմ սրտիցն էր ջուր խմում: Ես արդէն այդպիսի մոտադրութիւն ունէի. Պեսերբուրդի ազատ կեանքը Թիվլիսում վարել

կարող չէի: Դժւարն այն էր, որ գեռ ևս պաշտօն չունեի, եջմիածնից չէին պահանջում: Մեր Մովսէսի (Վարդանեանց) մօտ էի բնակում: Նա էր պահում ինձ իր բոլոր ծախքով, իմն միայն հօրս ուղարկած հացն ու գինին էր, բայց աւելի ծախքի մէջ էր ձգում մեզ: Զրի գինի ունենալով՝ շուտ-շուտ հրաւէրներ էինք սարքում: Ուզում էի գրաշարութիւն անել, բայց Մովսէսը չէր թողնում: Նա իմ պատիւս ինձանից աւելի էր ուզում պահել—Գրաշարութիւն որ սկսես, ասում էր, էլ ոչ մի օրինաւոր պաշտօն չեն տալ: —Վնաս չունի, ասացի, թող չտան, ևս պարապ կենալ կարող չեմ: Մասյ տպարան, և մի և նոյն ժամանակ խնդիր տակ ներսիսեան գովրոցի հոգաբարձութեանը, որ ինձ ուսուցչութեան պաշտօն տան: Մարտիրոս Սիմէօն-եանցն արդէն վարժապետ էր այդ տեղ, ինրիրս էլ նրա թելազրութեամբ գրեցի: Պ. Էնֆիամեանցն ուզում էր ինձ մոցնել «Մեղւի» խմբագրատունը, իբրև օգնական Սիմէօնեանցի, բայց յաջողութիւն չունեցաւ: Խմբագիրը ըլնդունեց: Գրեցի Պետերբուրգ իմ անյաջողութիւնների մասին և այն էլ յիշեցի, թէ ինչպէս երեւում է, Վեհափառն իր խոստումը կատարելու մասպրութիւն չունի: Պետերբուրգից բազմաթիւ նամակներ գրւեցին թէ Թիվլիս և թէ ջմիածին, որով շատերի ուշադրութիւնը դարձրին ինձ վրայ:

Մի և նոյն ժամանակ աղջիկ ուզելու միտքս չեմ հեռացնում ինձանից, և արդէն զանազան տեղերից միջնորդներ են գալիս մօտս մեծ-մեծ խոստումներով:

—Ես միջնորդով աղջիկ չեմ կարող ուզել, ասացի, իմ միջնորդը ես ինքս պիտի լինեմ: Եւ այլպէս էլ եղաւ:

Մէկ իրկնապահի ո. Սարգսի զառիվելը բարձրանալիս դէմ ելան մի պառաւ կին և մի սիրուն աղջիկ: Փողոցի անհարթութեան պատճառով բանն այնպէս պատահեց, որ ես ու աղջիկը դէմ առ դէմ եկանք, և ես նրանից յափշտակելով՝ քարի պէս արձանացայ: Աղջիկը նոյնպէս արձանացաւ մի րոպէի չափ և շառագունելով՝ շուտ թեքւեց և արագացնելով քայլերը հասաւ մօր ետեից, որ գնում էր գլուխը քաշ գցած և ով գիտէ ինչ մոտածմունքի մէջ ընկած: Ես մնացի նրանց ետեից նայելիս: Մայր ու աղջիկ յետ մարիկ տւին և ինձ նկառելով՝ իսկոյն շրջեցին երեսները: Ես մի քիչ ամաչեցի և շարունակեցի ճանապարհս: Մեր հանդիպած տեղից մօտիկ ինձ ծա-

նօթ խանութպան կար դուրսը կանգնած, և հեռաից նկատել էր մեր հանդիպումը: Սրան հարցրի, թէ ովքեր էին այն կին ու աղջիկը: Նու ասաց՝ այստեղից հեռու չէ նրանց տունը և այս ինչ կինն է: յետոյ աւելացրեց.—Հպ՛, կուլի բան ունիս մոքումդ, թէ վուր աշքումդ դուր եկաւ, գնա ու գնա, չիս փոշմնի. Էն զադար ինձ օր աւելնաց: Քու արևեն եմ ասում, էս թահրն ախճիկ միր քաղքումը մէ հաս չիս դթնի...

Ես ժպտեցի և արագացրի քայլերս: Գնացի իմ քեռակնոջ մօտ, որ հէսց նոյն թաղումն էր կենում: Սա մի շատ բարեկաշտ և հին հաւատի պառաւ էր: Մեծ-Պասին չամչով էր չաց խմում և խսախւ պահպանում բոլոր պառաւական կամաւոր ծուերն ու սկասերը: Ոի և նոյն ժամանակ մի շատ ժրաշան և աշխատասէր առնատիկին էր Ափսոս որ բուն հայկական այս տիպերն անյայտացան մեր միջից և այդ տնարարների տեղը բռնեցին տնաքանդերը: Ամեն անգամ երբ սրա մօտ էի գնում, ինձ ստիպում էր, թէ աղջիկ ուզի: Այս անգամ էլ մի նոյնը կրկնեց:—Հիմա պիտի ուզեմ, ասացի, թէ որ ինձ կոդնէք այս բանումը: Պատմեցի թէ ում եմ տեսել ու հաւանել:—Աղջիկ շատ եմ տեսել, ասացի, բայց ոչ ով սէր չի զցել սրոխս մէջ, ի: սիրտը կպաւ էդ աղջկանը, էլ չի զջււիլ:

Պառաւը ճանաչեց, թէ ով էր և ասաց.

—Հա, ասլրի աշքի, շատ լաւ աղջիկ է, հալալ ծծկեր, նամուսով, զայրաթով, տանու աղջիկ է, լաւ մօր պահած. շատ էլ շնորհքով է, ամեն բան ձեռիցը գալիս է, կար, ձև, քարգահ, ինչ չեքիլք, ինչ ճակատի աղջուխներ, էնքան էլ լաւ բնութիւն ունի, որ սաղ թաղաւորը նրա արեսմն է խնդում:

Ուսման մասին խօսք չէր կարող լինել, այդ ժամանակ հայ դպրոցները չըկացին աղջկանց համար:

—Բայց գիտես ինչ կայ, աւելացրեց գեղէն, —նրանք փող չունին, լսել եմքեզ հազարներ են առաջարկում: Մէկ էլ ինձ մօտ եկաւ անցեալ օրը. երեք հարիւր թուման կըտանք, ասում է:— Զէ, ասացի, աղջիկը նրա մօր հասակն ունի, նա չի ուզիլ: Մեծ փողով լաւ աղջիկ չեն տալ քեզ, էս լաւ դիտենաս:

—Ինձ փող չի հարկաւոր, ասացի, դու գնայ էդ աղջիկն ինձ համար ուզիլ: Աւելի լաւ, որ փող չունին. ան իող ինձ նման աղին

չեն կարող տալ. ուրեմն պէտք է որ համաձայնին:

Երբ մութն ընկաւ, դեղէն գնաց խնամախօս: Քիչ անցած՝ վերադարձաւ աղջկայ մօր հետ, որ մի տարած տրորած խեղճ կսիկ էր: Սա եկել էր, որ իր ապագայ փեսացւին տեսնի: Ծանօթացաւ և սկսեց կողմնակի բաների վրայ խօսիլ, որպէս թէ ինձ համար չէր եկել: Բայց ես միջահատեցի նրա խօսակցութիւնը և սկսեցի բուն գործից խօսել: —Դեզի, ասացի, քո աղջկան ես հաւնեցի, թէ որ դու էլ, քո աղջիկն էլ ինձ կը հաւնէք, մեր բանը վերջացնենք:

—Քեզ Ասուած է հաւանել, որդի, ասաց, լաւ տղայ ես երեւում աչքումս, ի՞նչ թաքցնեմ: Ես քեզ տեսել եմ երեխայ ժամանակդ, հիմա, Ասուած պահի, մեծ մարդ ես դառել: Իմ աղջիկն էլ պլակաս աղջիկ չէ, էղ թող սրանք ասեն, ինձ խօսք չի հասնիլ, ոչ ով իրա թանին թթու չի ասիլ, թէ որ զամաթ կը լինի, կը տեսնես: Բայց պէտք է գիտենաս, որ մենք պատրաստութիւն չունինք, հասկանում ես, փողը չըկայ մեջ տեղը: Շատերն են տալացուք, լուսահոգի մարդուս շատերն են պարտ, բայց էսօր էգուցն են զցում, ոչինչ չեն տալիս:

—Այդ վեսաս չունի, ասացի, դուք լաւ է, գոնէ մի տուն ունիք, քրեհ չեք տալիս, իսկ ես ամենեւին ոչինչ չունեմ: Լաւ հագուստիս մարդկ մի տար, ջիբս գարտակ է. էգուց էլօր չասես, որ ես քեզ թախկէք տւի, խարեցի: Հէնց էս եմ որ կամ, ոչինչ չունեմ:

—Էս ի՞նչ է ասում, քա՞, բացականչեց պառաւը, հանաք է անում, թէ լրուստ է խօսում: Որ քու բանը էղակն է, որդի, էլ ի՞նչու ես իմ աղջկայ մեղքի տակն ընկնում, նրա աչքը քեզ վրայ զցում:

—Ի՞նչ վեսաս ունի, ես նրա մեղքի տակը կընկնեմ, նա էլ իմ, էսպէս եօլա կը գնանք:

—Չէ, ախալէր, ես զաբուլ չեմ, զու ուրիշ հանգի ես խօսում, էրեսդ շատ է բաց. ես աղջիկ չունիմ զէն զցելու: Քո ատրեսն էլ տուր մէկ հարցնեմ իմ բարեկամներին, տեսնեմ նրանք ի՞նչ են ասում:

Անունս գրեցի տւի իրան և ասացի՝ վաճառականներ ինձ չեն ճանաչիլ, միայն վարժապետներ կը ճանաչեն, եթէ բարեկամ վարժապետ ունիք, տարեք նրան ցոյց տւէք:

Տոմսակս ցոյց էր տւել իր մօտիկ աղքական մի վարժապետի:

նա էլ խորհուրդ էր տւել, որ առանց խօսելու աղջիկը տայ ինձ։ Ասել էր՝ ուզիղ է ասել, նա հիմա պաշտօն չունի, բայց շուտով կունենայ։ Նրա պէս ուսում առածներին տասը հազար են գալիս, բայց նա ուրիշ բնութեան տէր է, փողով աղջիկ չի ուզեցել և ոչ էլ հարուստների ետևից կընկնի։

Երեք օրւաց մէջ ամեն բան պատրաստ էր։ Ես ու Մովսէսը մի ժամացոյց և մի մատանի առանք և գնացինք նշանդրէք։ Նոյն երեկոյին ես այլ ևս չէի ուզում հեռանալ նշանածից։ բայց ինձ զօռով դուրս արին։ Միւս երեկոյին գնացի, գուռը վրաս փակեցին, ինձ թողեցին ցրառումք։ Ես թաք կացայ դուրսը։ քառորդ ժամ անցած՝ զօքանչս ուսուը բաց արաւ և գնաց խոհանոց, ացդ միջոցին ես ինձ ներս գցեցի և ընկայ նշանածիս ուզերը և ինդրեցի նրա պաշտպանութիւնը։ Զօքանչս այդ աղջիկն ունէր միայն, երկու տղայ էլ ունէր, բայց երկուսն էլ կորած էին՝ մէկը նուսաստանում և միւսը հէնց քաղաքի մէջ։ Երբ որ ներս եկաւ զօքանչս և ինձ տեսաւ, սաստիկ բարկացաւ։ —Առ, ասաց, քո նշանը, դուրս կորիր իմ տանից, ես քեզ նման երեսրաց փեսայ չեմ ուզիլ...

—Ինչու եմ նշանս առնում, ասացի, հազիր նշանածս կառնեմ ու հայգա, կը փախչենք քեզանից...

Այսուղ նշանածս պաշտպանից ինձ, ասելով, —դէգա, ես երեխա հօ չեմ, ուրեմն հաւատ չունեմ դու ինձ վրա։ Դու աւելի լաւ կանես, որ ընթրիքի պատրաստութիւն տեսնես, կարելի է քաղցած է (անունս չի տալիս)։

—Ո՛... շատ քաղցած եմ, շատ, էսօր թիքայ չեմ դրել բերանում, բացականչեցի ես։

—Ա՛յ, սատանայ, նկատեց զօքանչս և գնաց խոհանոց։

Նշանածիս ձայնն ու խօսելը առաջին անգամ լսեցի։ Մայրը որ դուրս գնաց, սա այլ ևս չխօսեց հետս։ Միւս ընկաւ, որ խօսելն էլ մի առանձին ընծայ արժէ։ —Ես գիտեմ, ասացի, որ քեզ մի ընծայ պիտի տամ, որ խօսես ինձ հետ, բայց ի՞նչ ընծայ կարող եմ տալ, որ թանգ լինի ինձանից, ահա ես ոտով գլխով, հոգով մարմնով քեզ ընծայ, և սկսեցի համբոցներ ցողալ հրեշտակային քնքշութեամբ։

—Դու փոխանակ այդքան չարութիւն անելու, խօսեց նշա-

նածս, աւելի լաւ կանես, որ ինձ գիր սովորեցնես, թող այդ լինի քո ընծան: Դու իմն ես ու իմը, քեզ ով կը խլի ինձանից, դու պէտք և քեզանից դուրս մի բան տաս ինձ: Ինձ գիր սովորեցրու, որ քո դրածները կարդամ: Ես դիտեմ վրացերէն գրել կարդալ, բայց հայերէն մէկ ացբբեն դիտեմ միայն:

— Եատ ուրախ եմ, հոգիս, չափից դուրս ուրախ, որ այդպէս սէր ունես կարդալու: Ես մէկ շաբաթում քեզ կը սովորեցնեմ օրինաւոր գրել և կարդալ, միայն մէկ պայմանով, որ ինձ դուրս չանէ հայրդ:

— Եթէ խելօք կը կենաս, մայրս բան չի ասիլ:

— Սզնիւ խօսք եմ տալիս քեզ. բայց չեմ կարող չփափաչել, չգուրզուրել քեզ, այդ մի յանցանք չէ:

Միւս օրը տեղափոխեցի զօքանչիս մօս: Ակսեցի գիշեր ցերեկ աշխատել տպարանումը, որ հարսանիքի համար փող պատրաստեմ: Նշանածս էլ իր աշխատութիւնը կրկնապատկեց, միևնոյն ժամանակ պատրաստում էր և տեած դասերս: Անուարբեր չէր և զօքանչս, սա էլ իր հանգուցեալ ամուսնու թողած ապառիկների ետևից ընկաւ: Մի օր մի ահազին կատրոց թղթեր ձգեց առաջս, որ նրանցում փող գտնեմ: Բոլորն էլ մուրհակներ էին, բայց որի ժամանակն էր անցած, որի պարտականն էր մեռած կամ սնանկացած. միայն մէկը գոնեւց յուսալի, որի մէջ երկու հարիւր մանէթի գումար կար: Այդ թուղթը տւի իրան. տարաւ և բերաւ բոլորն էլ տւաւ ինձ, որ հարսնիքի պատրաստութիւն տեսնեմ: Շաբաթ չքաշեց, առեն ինչ պատրաստեցի, մնաց որ պսակի հրամանն ստանամ: Ազդ ժամանակ կոնսիստորիայի նախանդամը Սուքիաս վարդապետն էր: Երբ քահաննայիս թուղթը տարաց, Սուքիասն ինձանից 10 մանէթ ուզեց հրաման տալու համար:

— Ես միայն երեք մանէթ կը տամ, ասացի, այդքան փող չունեմ:

— Եթէ չունես, ասաց, ինչու ես ամուսնանում:

— Աւրեմն՝ որովհետև չունեմ և այսու ամենայնիւ ամուսնանում եմ, դրա համար պէտք է ձեզ տուգանք վճարեմ, և այնուհետև կարող կը լինեմ պահելու ամուսինս առանց փողի էլ: Դուք չգիտեք, հայր սուրբ, թէ ում հետ էք խօսում: Ես չեմ եկել ձեզ

խորհուրդ հարցնելու, թէ ամուսնանամ արդեօք թէ ոչ, դուք ի՞նչ իրաւոնք ունիք ինձ ասելու, թէ ինչու էք ամուսնանում, ով է տւել ձեզ իմ ցանկութեան վրայ իշխանութիւն։

— Դուք շատ յանդուզն էք երևում, պարոն, ասաց Սուքիասը, եղակի ձեռով խօսելը փոխելով յոգնակիի։

Ես ձայն չանեցի և դուրս եկայ բարկացած։

Ետևից վազեց բարեկարգիչ Յ. Ք. Արարատեանը, որ ինձ լաւ էր ճանաչում մանկութիւնից սկսած, կանգնեցրեց ինձ ու ասաց, դու միամիտ գնա բանդ տես, ես հրամանը կուղարկեմ քո ծխական քահանային, և ես ինքս էլ կը գամ, թէկե ինձ չես հրաւիրել։ Դու բեր երեք մանէթ տուր, աւելի տալ հարկաւոր չե։

— Տէր հայր, ասացի, ես աւելի էլ կը տայի, բայց աւելին այդպէս անքաղաքալարութեամբ չեն առնիլ, վիրաւորելով չեն պահանջիլ, այլ հայրական սէրով յորդորելով։ Դա որ ինձ հետ այդպէս է վարւում, ինչպէս կը վարւի խեղճ հայերի հետ։

Ապապրեցի հայրս եկաւ հետը բերելով բոլ գինի և սկսւեց Խարբուխի թաղումը չտեսնեւած մի նոր հարսանիք։ Նորութիւնը նրանումն էր, որ առանց զուռնայի էր, գրա տեղը բռնել էին աղգային երգերն և տաղերը։ Հաւաքւած էր ժամանակակից աղղային ինտելիգենցիան, որը հրաւէրով և որն էլ առանց հրաւէրի անկեղծ բարեկամութիւնից թելադրւած։ Խաչեղբայրս իմ սիրելի Մոլսէն էր։ Կեանքիս մէջ այնպիսի առիթներում աստիճանով ինձանից բարձր մարդկանց դիմած չեմ նրանց հովանաւորութիւնը բարեկամական կասով ասպահովելու համար։ Հարսանիքս դուրս եկաւ իմ սպասածից շատ փառաւոր։ Եւ այդպէս ահա ես ամուսնացայ 1868 թւի հոկտեմբերի 22-ին օրիորդ Եփէմիա (նոյնը և Փէփէլ) Մոլսէստան Տէր-Յարութիւնեանցի հետ։

Այս անցքից յետոց իմ խնդիրս յաջողեց Ներսիսեան դպրոցում; բայց էջմիածնից էլ եկաւ մի հրաման, որով պահանջում էին, որ ես անյապաղ երթամ, քանի որ խօսք եմ տւել Վեհափառին և նրանից երեք հարիւր մանէթ ճանապարհածախք սուացել։

Սրբազան Մակար առաջնորդը կանչեց ինձ և ասաց.

— Վարժապետ ամեն ոք կարող է լինել, բայց ինչու համար

որ գուշ կանչւած էք էջմիածին, այդ բանին յարսար և ընդունակ՝ բացի ձեզանից ոչ ոք չըկայ։ Երբ որ գուք կը վերջացնէք այդ գործը, կը պայծառացնէք էջմիածնի տպարանը, ձեր տեղը բռնող աշակերտներ կը հացնէք, այնուհետև գուք կը վերադառնաք, այն ժամանակ իմ պարտականութիւնս լինի, որ ես ձեզ ոչ միայն վարժապետութիւն տամ, այլ և ձեռնազրեմ և ուղղակի աւագ քահանայութիւն տամ քաղաքի ամենարդիւնաբեր մի եկեղեցում։

— Ենորհակալ եմ, ասացի, սրբազն հայր, որ այդքան բարի տրամադրութիւն ունէք գէպի ինձ, բայց ներեցէք, որ մի թէթւ նկատողութիւն անեմ էջմիածնից ստացած հրամանի առիթով։ Այդ թուղթը մի քաղաքավարի հրաւէր չէ, այլ հրաման։ Դրանից երեւում է, որ եթէ գնալու ըլլինեմ, ինձանից պէտք է յետ պահանջւի իմ ստացած երեք հարիւր մանեթը, թէպէտ այդ չէ ասւած ներկայ հրամանում։ Վեհափառը գեռ Պետերբուրգ չէր եկել, որ արդէն որոշել էին այդ գումարը տալու ինձ։ Ես կամովին մնացի նրա գալստեանը։

— Ինչիդ պէտք է, որդի, թող իրանց վրայ առնեն այն, ինչ ուրիշներն են արել Ես այդ մասին աւելի շատ բան գիտեմ գուցէ։ Բայց քո ոռօնիկդ որոշել են արդէն տարեկան վեց հարիւր մանեթ, բնակարան, ուտելիք և վառելիք և այսուեղից էլ ճ անապարհածախք յիսուն մանեթ։ Քո ընկերն էլ ահա երեք ամիս է, որ այնտեղ է և քո գնալուն է սպասում։ Պետերբուրգից նոյնակս ձեր գնալուն են սպասում, ոչինչ չեն ուղարկում այնտեղից և չեն ուղարկել մինչև դուք չըգնաք։ տեսնում էք, ուրեմն ես էլ գիտեմ մի քանի բան։

Ես համաձայնութիւն տւի և խոստացայ մի շաբաթւայ վրայ ճանապարհ ընկնել։ Ես կատարեցի իմ խոստումն, կատարեցի այն բոլորը՝ տամնապատիկ առաւելութեամբ՝ ինչ պայման որ դրաւ Մ. սրբազնը ինձ ձեռնազրելու համար։ բայց նա, որ առասպեկտական յիշողութիւն ունէր, մոռացաւ իր խոստումը և չըկատարեց իր պայմանը շնորհիւ միջանկեալ չարախօս աղւէսների։

(Վերջ առաջին մասի)

## Պ Օ Ե Տ Ի Ն

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Մեր ուշքն ինչու ես կախարդում  
Սիրոյ անհոգ երգերով,  
Մեր աչքն ինչու ես դու խարում  
Յնորական պատկերով։

Այս օրերում հարկաւոր չեն  
Չբօսանքներ հոգեկան,  
Նայիր կեանքին, մեզ կանչում են  
Մեր եղբայրներն օգնութեան։

Իսկ զու, անփոյթ մեր տանջանքին,  
Հարւածներին մեր բաղտի,  
Արբեցնում ես արթուն հոգին  
Քաղցըր թոյնով հեշտախոի։

Քո սիրային երգերի հետ,  
Նայիր, սուդ ենք մենք անում։  
Բաւական էր, կանգնիր սլոհտ,  
Կեանքի կուի սահմանում։

Եւ տարածիր աջըդ անդէնք  
Ընդէմ չարին մահաբեր,  
Մենք եւ այնժամ քեզ հետ կասենք  
«Մնաք բարեաւ, կոյս և սէր»։

## ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վեպ Հէնրիկ Սենկեիչի

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

16 էռլիսի.

Առաւտուեան նոր էի հագնւել, որ հօրաքոյլու եկաւ մօսս և ասաց առանց որ և է նախաբանի.

—Գիտես, քո բացակայութեան ժամանակ Կրոմիցին առաջարկեց ինձ իւր հետ ընկերանահ:

—Իսկ դուք ինչ պատասխանեցիք նրան:

—Մերժեցի առանց երկար մտածելու: Այսպէս ասացի նրան:

—«Սիրելիս, իմ ունեցածը ինձ, փառք Աստուծոյ, բաւական է, իսկ Լէօնը իմ մահից յետոյ մեր երկրի ամենահարուստ մարդկանցից մէկը կը լինի: Ինչու գլուխս բախտախնդրութիւնների մէջ քցեմ ու նախախնամութիւնը փորձեմ: Եթէ քո ձեռնարկութիւններից միլիոններ ես գատկելու, քեզ համար գատի, իսկ եթէ ունեցածդ էլ պէտք է կորցնես, ինչու մենք էլ քեզ հետ կորցնենք: Ես այդ տեսակ գործերից ոչինչ չեմ հասկանում, իսկ խառնւել այսպիսի բանի մէջ, որ ինձ անձանօթ է, իմ կանոններից դուրս է»:

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1898 թ. № 1, 2 և 6

— Եաա ուզիղ է:

— Ահա զրա մասին էր, որ ուզում էի քեզ հետ խօսեմ և շատ ուրախ եմ, որ դու էլ ես այդպէս նայում գործի վրայ: Նա, զիտես, մի քիչ նեղացաւ, որ ես նրա գործերը բախտակինդրութիւն անւանեցի, սկսեց առաջս զնել իւր յոյսերը ապագայի վրայ և ամեն բան մանրաման բացառքել: Եթէ այդ բոլորը ճիշդ է, նա յիրաւի միլիոններ կը դատի, և ես ցանկանում եմ, որ նա գատի: Բայց իսկոցն հարցրեցի նրանից. Եթէ գործերդ ացդպէս լաւ են գնում, էլ նրա ինչի՞ պէտքն են ընկերները... Պատասխանեց թէ քանի շատ փող վեր դնեի, այնքան մեծ կը լինի օգուտը, թէ այնտեղ ամեն բանի առաջ տանողն ոյժն է և թէ նա աւելի գերադասում է իրան ընկերացնել մօտ մարդկանց, քան օտարներին: Ես շնորհակալութիւն յայտնեցի նրա բարեկամութեան համար, բայց կրկնեցի իմ մերժումը: Այդ նրան սկի դուր չեկաւ: Նու ցաւ յայտնեց, որ ոչ ոք մեզանում գործից բան չի հասկանում և բոլորը վասնում են միայն իրանց ժառանգութիւնը, և աւելացրեց առանց որ և է նախաբացարութեան, թէ այդ յանցանք է հասարակութեան վերաբերմամբ: Նրա խօսքերը բարկութիւնս բերեցին. «Սիրելի պան Կրոմիցկի, — ասացի ես, — ես կնիկ՝ աեղովս կառավարելով իմ գործերը, ինչ թէ ոչ մի գոօշ չեմ վատնել, այլ և մեծացրել եմ իմ կարողութիւնը, իսկ հասարակութեան վերաբերմամբ յանցանք գործելու մասին ով խօսում է խօսի, միայն թէ նա չխօսի, որ Գլուխովը ծախել է: Ճշմարտութիւն էիր ուզում, — այ քեզ ճըշմարտութիւն: Եթէ Գլուխովը ծախած չլինէր, ես ի հարկէ քեզ աւելի կը հաւատացի: Քո գործերի մասին ինչ թէ միայն ես ոչինչ չգիտեմ, այլ և բոլորին էլ նրանք մութն են. մի բան միայն պարզ է, որ եթէ գործերդ յիրաւի անողէս լաւ գնացին, ինչպէս դու ես նկարագրում, այն ժամանակ դու ընկերներ որոնելու կարիք չեիր ունենայ և իմ մերժումը սրտիդ այլպէս մօտ չեիր ընդունի: Ընկեր նրա համար ես վնասում, որ փողի կարիք ունես, բայց ոչ մի ըստէ ինձ հետ, ինչպէս հարկն է, անկեղծ չխօսեցիր, իսկ այդ ինձ սկի դուր չի գալիս:

— Յետո՞յ, նա ինչ պատասխանեց:

— Նա պատասխանեց, թէ նախ և առաջ չի հասկանում, ին-

շնւ Գլուխովը ծախելու պատասխանառու ութիւնը միան իւր վրայ է ընկնում: Գլուխովը ձեռքից թողնողը ութէ ինքն է, այլ նրանք, որոնք իրանց անխելքութեան, ծուլութեան, թեթևամոռութեան ու շոազլութեան պատճառով նրա ծախելը անխուսափելի էին դարձրել: Անելկան մարդի գնալիս բայցի պարտքից ոչինչ չունէր: Ինքը ազատել է այնքանը, որքան որ ուրիշը ազատել չէր կարող, և զրահամար նա այժմ շնորհակալութեան փոխարէն լսում է նախատինքներ և... ապասիր, ինչպէս նա ասաց... հոգեցող ոգումներ (Ճշկամաց):

— Առաջ է, — ասացի ես, — Գլուխովը կարելի էր փրկել:

— Ես էլ նոյնն ասացի և աւելացրի, որ Գլուխովի համար փող կը տացի: «Դու կարող էիր, — ասացի ես, — ծախելուց առաջ մի-երկու տող նամակ զրել Անելկացին, որ նա ինձ հետ խօսի զրա մասին, և յայտնի է Աստծուն, որ ոչ մի բոսէ չէի տառանի... Բայց այդ քո սիսումն է, որ ոչ ոք ոչինչ չիմանայ. Մենք բոլորս հաւատում էինք քո միլիոններին, զրա համար էլ օդնութիւն չէինք առաջարկումն: Նա սկսեց հեգնաբար ծիծաղել: «Ինչպէս կարող է, — ասում էր նա, — Անելկացի պէս երեւելի տիկինն ու իդէալսկան էակը զիջանել այնպիսի ստոր բաներով զբազւելու, ինչպէս են դրամական գործերը կամ իւր մարդու համար մէկի հետ մի բան խօսելը: Երկու անգամ ինզրել եմ նրանից, որ ձեզ հետ խօսի ինձ հետ ընկերանալու մասին, և երկու անգամն էլ նա ինձ վճռական կերպով մերժել է: Ինչ վերաբերում է Գլուխովին, հիմա ճիշդ է խօսելը, երբ նրան ազատելու այլ ևս ոչ մի հնար չի մնացել: Ի նկատի առնելով այժմեան մերժումը, իրաւունք ունեմ կասկածելու արդիօք թէ նոյնը չէր լինի և Գլուխովի վերաբերմամբ:

Ես սկսեցի մեծ հետաքրքրութեամբ լսել, ացժմ հասկացայ կրոմիցկու և Անելկացի մէջ եղած տարածայնութեան պատճառը, — հօրաքոյրս շարունակեց.

— Այդ որ լսեցի, ուղղակի ասացի. «Տեսնում ես, սիրելի պան Կրոմիցկի, ինչքան քիչ անկեղծութիւն կայ քո մէջ. առաջ ասում էիր, թէ նրա համար ես առաջարկում ինձ ընկերանալ, որ ուզում ես աւելի շահւած լինեն բարեկամներդ, քան օտարները, իսկ հիմա բանից երեսում է, որ այդ ամենից շատ քեզ համար է անհրաժեշտութէ նա, — շատ ձարպիկն է, — պատասխաննեց, թէ այդպիսի գոր-

ծերի մէջ օգուտը պէտք է երկու կողմանի լինի և իւր ցանկութիւնը՝ ձեռքի տակ աւելի մեծ դրամագլուխ ունենալ՝ շատ բնական է. — Քանի շատ միջոցներ ունենայ մի ձեռնարկութիւն, այնքան նա հաստատ կը լինի» «Փ Վերջոյ, —աւելացրեց նա, —պատկելով Անել-կայի վրայ առանց բաժինքի, յոյս ունէի, որ կարող եմ գիմել նրա ազգականների օգնութեանը գոնէ այն գէպքում, երբ այդ օգնութիւնը կարող է օգտաւէտ լինել և նրանց համար»: Ասատիկ կատաղած էր, մանաւանդ աւելի բարկացաւ, երբ ասացի նրան, թէ Անելկային առանց բաժինքի չի առնիլ, որովհետու ևս նրան ցմահ եկամուտ կը կորեմ:

—Այդ ասացիք դուք:

—Այո, ինչ որ սրատում կար բոլորն ասացի: Անելկային, — ասացի, —սիրում եմ ինչպէս իմ հարազատ աղջկան, և յատկապէս նրան ապահովացրած լինելու համար նրան դրամագլուխ չեմ կոտակի, այլ միայն եկամուտ կը կտակիմ: Կրամագլուխն, — ասացի, —կարող է կորչել քո ձեռնարկութիւնների մէջ (Աստած գիտէ նրանք ինչ վերջ կունենան), իսկ եկամուտը Անելկային այնքան կապահովացնի, որ գոնէ անկարիք կեանք կունենայ: Իսկ եթէ դուք երեխաններ ունենաք, նրանց կը հասնի դրամագլուխը Անելկայի մահից յետոյ: Ահա այս է իմ օգնութիւնը, գոնէ գլխաւոր օգնութիւնը, որովհետեւ միշտ պատրաստ եմ նրաննա և փոքր բաներում օգնելու:

—Դորանով էլ խօսակցութիւնը վերջացմաւ:

—Համարեա դրանով: Տեսնում էի, որ սաստիկ դրգուած է: Կարծում եմ նրա ջիզրն ամենից շատ բերում էր և այն, որ Անելկային կտակում եմ ոչ թէ դրամագլուխ, այլ միայն տոկոս. — Դրանից նու կը դուշակէր, ինչքան քիչ հաւատ եմ ընծայում նրա գործերին: Գնալիս ասաց, թէ կաշխատի ընկերներ դանել օտարների մէջ և յոյս ունի, որ ուրիշները իրան աւելի համակրութեամբ կը վերաբերւեն և գործի մասին աւելի պարզ հասկացողութիւն կունենան: Համբերութեամբ լսեցի նրան մինչև վերջը: Երէկ գնաց բելգիացիների հետ զբոսնելու, բայց նրանցից էլ անբաւական է մնացել: Գուշակում եմ, որ նրանց էլ կամեցած կը լինի իրան ընկեր դարձնիլ, բայց դարձեալ սխալւած կը լինի իւր հաշխների

մէջ։ Գիտես, Լէօն, ինչ եմ մտածում այժմ։ Այն, որ նրա գործերը երեխ վաս են, որ նա այդպէս տեսդացին կերպով աշխատում է ընկերներ զանել։ Եւ պէտք է քեզ ասեմ, որ այդ միաբը մաշում է ինձ... Եթէ ճիշտ որ այդպէս է, այն ժամանակ հասարակ զգուշութիւնը ողաճանշում է նրա հետ ոչ մի գործ չբռնել, բայց աւելի հասարակ ազգականականութիւնը պահանջում է օգնել նրան, սկի չլինի զոնէ Անելկալի խաթեր համար։ Ահա այս էր, որ ուղում էի քեզ ասեմ։

—Նրա գործերը ամենեին այդպէս յուսահատ լըրութեան մէջ չեն, ինչպէս գուք էք կարծում, —ասացի ես ու սկսեցի պատմել բժիշկ Խւասովսկուց իմացածս։ Աւելացրի, որ արդէն վազուց նոյն Կրոմիցիու վարմունքից գուշակում էի, որ նա փող է միտուում, փողի կարիք ունի, և յատկապէս զրա համար զնացի Վիէննա։ Հօրաքոյրս այն ասովիճան հիացած էր իմ ուշիմութեան ու տակահկացի վրայ, որ սենետկի մէջ ման զալով սկսեց ինքն իրան խօսել ու յաճախակի կրկնել՝ «ամեն բանում հանձարեղ է»։ Ի վերջոյ գուց ասելով, թէ գործը ամրողջապէս թողնում է ինձ վրայ և առաջուց տալիս է իւր համաձայնութիւնը այն ամեն բանին, ինչ որ ես կանեմ։

Աչքի անցրի երեկւայ դրածս յիշատակարանում և կէս ժամից յետոյ նոյնպէս իջայ ներքեւ։ Տերոնք բոլորը նստած էին թէցի սեղանի շուրջը, բայց նստած էին բանազբօսիկ լիբրքով։ Պանի Յելինան կարծես հիւանդ լինէր, Անելկան կարծես մի բանից վախեցած լինէր, իսկ հօրաքրոջս բարի կերպարանքը բարկութիւնից բոլորովին կարմրել էր։ Միայն Կրոմիցկին էր ձեւանում, թէ հանդիսալ լրագիր է կարդում, բայց նա էլ էր թթւած և այնպիսի տեսք ունէր, կարծես ծանր հիւանդութիւնից նոր է վեր կացել։

—Գիտես, —ասաց հօրաքրոջս, զլիսով անելով դէպի Անելկան, —ինչ ուրախալի լուր է հաղորդել ինձ։

—Զէ, չգիտեմ, —ասացի ես ու նստեցի սեղանի մօտ։

—Բա, ինչպէս չէ, այն, որ երկու շաբթից յետոյ, եթէ Յելինայի առողջութիւնը ների, պէտք է գնայ Յղեսա կամ մի աւելի հեռու տեղ։

Եթէ այդ ըոսէին կայծակը լսիեր սեղանի մէջոեղին, ես

աւելի քիչ կապշէի ու կը զարմանայի: Աներկբայ զգում էի, որ սիրտս դադարում է բարախելուց:

Նոյեցի Անելկային,—նա կարմրեց, կարծես նրան բռնեցին մի վառ բան անելիս,—և հազիւ հազ կարողացայ հարցնել.

—Ինչո՞ւ, ինչի համար:

—«Ինձ շատ նեղութիւն են պատճառում՝ Պլոշովումն, հասկանում ես,—ծազրում էր հօրաքոյրս Անելկային,—«չեն ուզում ինձ վրայ բեռը դառնան», տեսնում ես ինչքան բարի են: Երեխ կարծում են, որ ինձ համար օգտակար է միայնութիւնը, իսկ եթէ ծերութեան հասակումն մէն մենակ մնամ՝ Պլոշովի տան չորս պատերի մէջ, այդ ինձ համար համ դուրեկան կը լինի, համ էլ առողջարար... Ինչպէս չէ, ամբողջ պիշերը փոխանակ քնելու նստել, այդ հարցի մասին են մտածել:

Հօրաքոյրս աւելի բարկացաւ և գլուխը դարձրեց դէպի Կրոմիցկին.

—Զլինի՞ դու ես նախագահել այդ ժողովին:

—Ամենեին ոչ, —պատասխանեց Կրոմիցկին, —ինձ սկի չեն էլ հրաւիրել. բայց ենթադրելով, որ ամուսինս նրա համար վճռած կը լինի գնալ, որ աւելի մօտ լինի ինձ, ես պէտք է ուրեմն շնորհակալ լինեմ նրա այդ վճախ համար:

—Այդ միայն ծրագիր է, —ասաց Անելկան:

Նայում էի Անելկային առանց աչքերս վայր թողնելու, մոռանալով ամեն նախազգուշութիւն, իսկ նա չէր համարձակում ինձ նայել, և այդ աւելի ու աւելի էր ապացուցանում ինձ, որ նրա զիտաւորութիւնների մէջ զլիսաւոր դեր խաղացողը իմ անձն է եղել: Խօսք չեմ գտնում նկարագրելու, թէ ինչ էի զդում ես այդ ժամանակ և ինչպիսի մահացու գառնութեամբ էր լցւած սիրտս: Անելկան լաւ գիտէր, որ ես միայն նրա համար եմ ապրում, նրանով գոյութիւն ունեմ, որ նրան են պատկանում բոլոր մտածմունքներս, ինչ անում եմ չեմ անում, միայն նրան ունեմ ինկատի, որ նա ինձ համար կեանքի ու մահու հարց է, և այդ բոլորը իմանալով հանդերձ նա բոլորովին հանգիստ սրառվ վճռում է զնալ հեռանալ: Իսկ թէ ինչ կը լինեմ ես, կը կորչեմ թէ գլուխս պատովը կը տամ կը ջախջախեմ, —դրա մասին դա սկի ոչ մտածել է և ոչ

Էլ ինկատի է առել հետևանքները: Ինքն աւելի հանգիստ կապրի, ոչ ոք չի կծկւի նրա աշքերի առաջ, ինչպէս քորոցի վրայ խրածքէզ, ոչ ոք չի համբուրի նրա ոսները ու վրդովի նրա առաքինի խիղճը, իսկ նրա բոլոր ուղածն էլ հէնց այդ է: Ել ինչ տատանելու բան կայ, երբ կարելի է լիսկատար հանգստութիւնն ձեռք բերել այնպիսի չնչին գնով, ինչպէս է մի մարդու կարւած կոկորդը:

Այդպիսի հազարաւոր մոքերով լիքն էր գլուխս, թոյն էր զգում բերանումն: «Դու առաքինի ես ու առաքինի էլ կը մնաս, — ասում էի մաքումն Անելկային, բայց այդ նրա համար, որ դու անսիրտ ես: Եթէ մի շուն անգամ քեզ այնպէս սիրէր, ինչպէս ես եմ սիրում քեզ, էլի նրա համար պէտք է մի բան անէիր: Դու ինձ չես արել ամենաչնչին զիջումն անգամ, չես ցոյց տւել կարեկցութեան և ոչ մի կայծ, ոչինչ չես տւել ինձ, իսկ խլել ես ամեն բան, ինչ որ միայն կարող էիր խլել: Եթէ դու կարողանացիր, կը խլէիր ինձնից մինչև անգամ քեզ նայելու հնարաւորութիւնս, թէպէտե հաստատ հաւատացած լինէիր, որ առանց քեզ իմ աշքերս կը հանգէին յաւիտեան: Այժմ վերջապէս հասկացայ քեզ, այժմ գիտեմ, քո անսասանութիւնը նրա համար է այլքան մեծ, որ սիրուգ շատ փոքր է: Դու չոր ու սառը կին ես, իսկ քո առաքինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամենամեծ եսականութիւն, որ ամենից առաջ իւր հանգստութիւնն է փնտում և պատրաստ է իւր հանգստութեան համար ամեն բան զոհել:

Ամբողջ նախաձաշի ժամանակ բերնիցս ոչ մի խօսք գուրս չեկաւ, իսկ յետոյ գնացի վերե, գլուխս բռնեցի և իմ ցաւագար ու տանջւած ուղեղով սկսեցի մտածել պատահածի մասին: Բոլոր ժամանակ դառնութիւնը մտածմոնքներից չէր հետանում: Նեղ սրտի տէր կանաչք յաճախ անյողլիողդ են մտում շնորհիւ մի տեսակ ֆիլիսոփրական առաքինութեան: Նրանք, ինչպէս և ամեն մի մանրավաճառ, ամենից առաջ ուղում են, որ իրանց հաշւեմատեանները կանոնաւոր լինեն: Այդպիսի կանաչք այնպէս են վախենում սիրուց, ինչպէս բուրժուան վախենում է փողոցային անկարգութիւններից, պատերազմից, վեհ խօսքերից, տաք-գլուխս մարդկանցից, համարձակ մոքերից ու վիտաւորութիւններից: Նախ և առաջ հանգստութիւն, որովհետև միայն հանգիստ ժամանակ իսկական ու զրական գործերը

կարգին կը զնան: Ինչ որ սովորական, խոհական ու միևնոցն ժամանակ գուհեկացած կեանքի սահմաններից դուրս է, — չարիք է և արժանի է խելքը գլուխն մարդկանց կատարեալ արհամարհանքին: Առաքինութիւնն էլ ունի իւր սարերն ու ձորերը, բայց ունի և իւր տափաստները: Մեծ մտատանջութեան մէջ էի այժմ մի վերին աստիճանի հոգեմաշ հարցի վերաբերմամբ, թէ արեազ Անելկան էլ այն տափակ-առաքինի կանանցից չէ, որոնք խելք վաճառականի ոլէս են ուղում վարեն իրանց հաշիւները և նրա համար սիրոցն անձնատուր չեն լինում, որ այդ զգացմունքը նրանց սրտից ու զլխից բարձր է: Մաքում աչքի էի անցնում ամբողջ տեցեալը և ապացոյցներ էի որոնում անցեալում: Ո՞վ գիտի, — ասում էի ինձ ու ինձ, — նրա այդ ալարզ օրէսազիքը, որով նա ինձ տանջում ու զինաթափ է անում, չի հիմնած արդիօք բոլորովին նոյն հիմքի վրայ: Ինձ յաճախ թւացել է, որ Անելկան ցիրաւի մի հաղագիւտ բնաւորութիւնն է, միւս կանանց նման չէ, անմատչելի է, ինչպէս Ալպերի ձիւնապատ դագաթը, որովհետև նրա մէջ թէք գծեր չկան և նա ո-ղաւհացեաց կերպով դէպի երկինք է բարձրանում: Բայց նոյն այդ հագւագիւտ բնաւորութիւնը շատ բնական է համարում, որ իւր մարդու հողաթափները կոխուում են այդ մաքուր ձիւնը: Այս ի՞նչ բան է: Հենց որ ընկնում եմ ացդպիսի մտածմունքների մէջ, զգում եմ, որ խելագարւելու մօտ եմ, զգում եմ անկարողութեան նշաններ, և եթէ կարողանայի մի հարւածով տապալել, յետոյ ոտնատակ տալ կեանքի այդ գարշելի կարգ ու կանոնները, թքել նրանց վրայ, ես անպատճառ կը տապալէի, ոտնակոխ կանէի, թքի կը հաւասարեցնէի ու քառս կը դարձնէի ամբողջ աշխարհնը և կը ջնջէի երկրիս երեսից ամեն արարած: Վիէննայից վերադառնալիս գերերկրացին տաճար էի կառուցանում, որի մէջ Անելկային պէտք է սիրէի այն սիրով, ինչ սիրով Դանար սիրում էր Բէատրիչէին. ես կառուցեցի այդ տաճարը տանջանքներից, որոնց մէջ, ինչպէս կրակի մէջ, մաքրւել է իմ սէրը, անձնուրացութիւններից, զոհաբերութիւններից, որ և է կերպով, թէկուզ հրեշտակային, գերերկրացին կերպով սպատկանած լինեմ նրան և զգամ, որ նա էլ պատկանում է ինձ: Խսկ այժմ մտածեցի, որ չարժէ անդամ նրան ացդպիսի բան ասել, որ նա ոչինչ չի հասկանաց, չար-

Ժէ նրան այդ քան վեր բարձրացնել, որովհետեւ այդքան բարձրութիւնն վրաց օդը նրան քչութիւն կանի: Նա սրտի խորքում գուցէ և համաձայնի, որ ես սիրեմ իրան, տանջւեմ իւր համար (այդ միշտ շոյում է մարդու անձնասիրութիւնը), բայց ոչ մի պայմանի, ոչ մի կապակցութեան, թէ կուզ զուտ հոգեկան կապակցութեան նա չի համաձայնի, որովհետեւ նա ինձ չի հասկանաց, որովհետեւ նա միայն մի կախումն ու մի իրաւունք է հասկանում, այն իրաւունքը, որ տալիս է մարդու խորաթը, և նրա հոգին անկարող է տափակ ու սովորական ամուսնական հաշւալահութիւնից վեր բարձրանալ:

Սաստիկ, շատ սասաթիկ ափսոսում էի, որ ես այն գնացքում չեմ եղել, որ հողաթմբից ցած է գլորեկ: Այդ ափսոսանքս նոյնքան իմ զայրոյթիցն էր զէսի Անելկացի խառասրութիւնը, որքան և ֆիզիկապէս ու հոգեսէս կատարելապէս ուժասպառ լինելուց: Մահն ինձ երեւում էր այնպէս, ինչպէս քունը այն մարդուն, որը մի քանի անքուն գիշերներ է անց կացրել իւր սիրած հիւանդի կողքին: Միւնոյն ժամանակ մտածում էի, որ եթէ ինձ բերէին Գաշտէյն խեղաթիւրւած, արիւնաշաղախ, այն ժամանակ դուցէ այդ կնոջ սիրու մի քիչ փափէկր: Խսկ ներկացումն ինձ այդ աւելի է հարկաւոր, քան որ և է ուրիշ բան: Եւ յանկարծ միտքս եկաւ երեկւայ Անելկան, որ հօրաքրոջս հետ միասին եկել էր ինձ զիմաւորելու, յիշեցի նրա երկիւզը, նրա ուրախութիւնը, նրա՝ լաց լինելու պատրաստ աչքերը, նրա զզզուած մազերը, և ինձ տիրեց մի անսահման սէր, որ հարիւր անգամ աւելի իրական էր, քար բոլոր մտածմունքներս ու դաստորոշիւններս: Այդ՝ բովէական, յանկարծական ցուզումն էր սրտի, որ – աւաղ – իսկոյն և եթ վերսուին սկսեց լցւել կասկածութեան թոյնով: Երեկւայ բոլոր տեսածս կարելի էր բոլորովին ուրիշ կիրակ բացառքել:

Ո՞վ զիտէ, ես էի այդ գէսկում զլխառոր գեր խաղացողը թէ հօրաքրոյրս: Ի վերջոյ գիւրազգաց կանայք միշտ կարեկցութեան մեծ պաշար են ունենում մինչև անգամ գէսլի օտարները, ուր մնաց թէ գէսի ազգականները, մանաւանդ երբ մի աղէտ նրանց յանկարծ է վրայ համառւմ: Խնչու չպէտք է Անելկան էլ խոր ազգւէր իմ մահւան լուրը լսելիս և ուրախանար՝ ինձ կենդանի տեսնելիս: Եթէ

նրա փոխարէն հօրաքրոջս մօտ հիւր եկած լրնէր պանի Մնեառինս-կին, նա էլ ի հարկէ առաջ կը վախենար, իսկ յետոց կուրախանար իւկ և իսկ նոցն ձեռվ, նրան էլ կը տեսնէի առանց ձեռնոցների, առանց գլխարկի, զզզզւած մազերով: Խնձ թւում էր, որ այդտեղ մոլորւելու բան չկայ: Անելիան լաւ զիսէր, որ իւր գնալը ինձ համար աւելի մեծ ազետ կը լինի, քան գնացքի խորառակւելը, աւելի մեծ կորուսս կը լինի, քան ձեռքս կամ ոռքս կորցնելը, սակայն չի տատանւել և ոչ մի բոպէ: Պարզ զգում էի, որ այդ միոքը նրանն է: Նա ուզեցել է մօտ լինել իւր մարդուն, իսկ թէ ինչ կըգայ իւր գլխին, դրա մասին սկի չի էլ մտածել:

Ես կրկին զգացի, որ գունատում եմ բարկութիւնից, նաև խանձից ու զայրոյթից, և որ մի քայլ է մնում միայն, որ խելագարւեմ: «Ապասիր,—ասում էի ինքս ինձ, երկու ձեռքով սեղմելով քունքերս,—ապասիր... Կարելի է նա նրա համար է գնում: Որ սիրում է քեզ և զգում է, որ այլ ևս զիմազրել չի կարող: Կարելի է ճիշդ որ այդպէս է: Եւ այդպիսի մոքեր էին ծագում մէջս. բայց համապատասխան հող չդանելով կորչում էին, ինչպէս ասպառաժի վրայ ընկած սերմեր, և միայն դառը հեգնութիւն էին զարթեցնում մէջս: Ու զում էի ինքս ինձ տանջեմ մինչեւ վերջին ծացը: «Այս,—ասում էի ես,—այդ տեսակ սէրը նման է այն կարեկցութեանը: Որից դրդւած հիւանդի գլխառակից բարձը հանում են, որպէսզի հիւանդը քիչ խոխոացնի ու շատ տանջւի: Ես աւելի քիչ կը տանջւեմ, բայց զրա փոխարէն կրոմիցկու համար աւելի հեշտ կը լինի նրան առատ-առատ մխիթարանքներ տալ, որ այդ իդէալական էակը շատ սովորել է ստանալ իւր մարդուց:

Եւ Անելիան առելի-դարձաւ ինձ այդ բոպէին: Առաջին անգամ կեանքում զգացի, որ աւելի կուզէի, որ յիրաւի Անելիան կրոմիցկուն սիրէր,—այն ժամանակ նա աւելի քիչ զզւելի կը լինէր ինձ համար: Բարկութիւնից ու զայրութից խելքս կորցրել էի, ոլարզ տեսնում էի միայն, որ եթէ որ և է բանի չձեռնարկեմ, եթէ նրան վրէժինդիր չլինեմ, զլիսիս մի մեծ փորձանք կը դայ: Այդ մոքի ազգեցութեան տակ տեղիցս վեր թռայ, ինչպէս հրաշէկ երկաթի հարւածից, վեր առայ գլխարկս և վազեցի Արոմիցկուն փնոռելու.

Նա ոչ տանն էր, ոչ պարտէզումը: Գնացի Վինդէլ հանի մօսց  
աշք ածեցի ընթերցարանը, —այնտեղ էլ հկար: Մի ըովէ կանգ  
առայ ջրվէժի մօսի կամուրջի վրայ: Բուռն քամին ուղղակի երե-  
սովս էր խփում փոշիացած՝ ջրի քուլաները: Այդ զարմանալի կեր-  
պով թարմացրեց ինձ: Գլխարկս վերցրի, զլուսս առաջ բռնեցի, և  
բոլոր մազերս թրջւեցին: Մի տեսակ անասնական բաւակիանութիւն  
էի զգում այդ զովութիւնից: Աւշքս տեղն եկաւ: Մէջս մնացել էր  
միայն պարզ ու վճռական ցանկութիւն խանգարել Անելկայի մոտ-  
դրութեանը: Մաքումս ասում էի նրան, «Եմացիր. որ դու չես գնացյ  
իսկ յետոյ ես քեզ հետ կը վարւեմ այնպէս, ինչպէս քեզ համար  
վճարող մարդ»: Այժմ պարզ տեսնում էի այն միջոցները, որ ինձ  
կարող էին հասցնել այդ նոպատակին, և չեի վախենում կրոմիցկու-  
հետ խօսելիս յանկարծ բերնիցս մի յիմար բան թռցնեմ: Այդ բո-  
լորը ինձ բոլորովին սթափեցրին:

Կրոմիցկուն դառայ Շարառւն բինգերի հիւրանոցի մօս լրագիր  
կարդալիս: Ինձ որ տեսաւ, մօնոկլը աչքիցը վայր թողեց ու ասաց.

—Ես էլ հէնց ուղում էի քո մօտ զամ:

—Գնանիք Կազգերվէդ:

Գնացինք:

Առանց սպասելու որ կրոմիցկին սկսի, ես առաջինը խօսք  
բաց արեցի:

—Հօրաքոյրս ինձ ասաց, —ասացի ես, —ձեր երեկուայ խօսակ-  
ցութեան մասին:

—Յաւում եմ, որ խօսեցի նրա հետ:

—Որովհեառև դուք երկուքդ էլ այնպէս հանգիստ չեք խօսել  
ինչպէս պէտք է խօսել գործի մասին: Սիրելիս, թոյլ կը տաս ինձ  
քեզ հետ բոլորովին անկեղծ լինեմ: Հօրաքրոջս պէտք է ճանաչել:  
Նա աշխարհումն ամենաարժանաւոր կինն է, բայց մի թոլութիւն  
ունի, այդ՝ այդ նրա աւելորդ անձնավատահութիւնն է: Նա առողջ  
դատողութիւն շատ ունի և սիրում է միշտ բոլորին ցոյց տալ, թէ  
ինքը առողջ դատողութեան տէր է, այդ պատճառով իրան պատա-  
հած ամեն բանի վրայ սիրում է նայել թերահաւատութեամբ, որ  
ի հարկէ չափազանցնում է: Դրանից է, որ նա մեծ մասամբ միշտ  
բացասական պատասխան է տալիս: Ծերունի Խւառովսկին դրա մա-

սին քեզ շատ բան կարող էր սլատմել: Պէտք է նրան ժամանակ տալ մտածելու, և որ զլխաւորն է, չպէտք է նրան գրգռել, թէ չէ կը յամանի... իսկ դու չես կարողացել խուսափել այդ բանից:

—Բայց ինչո՞վ կարող էի ես նրան գրգռել... Եթէ մէկը այս-  
տեղ կարող է զործի մասին խօսել, այդ ես եմ:

—Դու լաւ չես արել, որ յիշեցրել ես, թէ Անելկային առանց  
բաժինքի ես առել: Հօրաքոյրս մինչև այժմ բարկացած է այդ բա-  
նի վրայ:

—Ես այդ այն ժամանակ ասացի, երբ նա սկսեց երեսովս տալ  
Գլուխովի ծախսելը: Ե վերջոյ ես ուղիղն եմ ասել: Գլուխովի վրայ  
այնքան պարտք կար, որ Անելկային նրանից ոչինչ չէր հասնի:

—Խսկաղէս ասած ախտր ինչո՞ւ ծախսեցիր այդ թշւառ Գլու-  
խովը:

—Պէտք էր հաճելի բան անել այն մարդուն, որից կախւած  
էր իմ ամբողջ ապագան, այսինքն իմ ամբողջ վիճակը: Երբ ու-  
րիշ ճար չկայ, պէտք է անել այն, ինչ որ հարկաւոր է, չէ՞ Բացի  
այդ ինձ լաւ գին տւեցին:

—Այդ ես միայն այնպէս հարցրեցի... Մանաւանդ հօրաքոյրս  
վիրաւորել է քո խօսքերից այն պատճառով, որ նա մնածում է  
Անելկայի մասին:

—Մտածում է նրան եկամուտ կտակել:

—Քեզ իբրև գաղտնիք կասեմ, որ չէ: Գիտեմ, նա քեզ երեկ  
այլպէս է ասել, որովհետեւ դու նրան բարկացրել ես: Նա ուղեցել  
է քեզ զրանով ցոյց տալ, թէ չի հաւատառում քո գործնական ըն-  
դունակութիւններին: Բայց խսկաղէս այդպէս բան չկայ: Ինձ հետ  
նա շատ անգամ է խօսել այդ բանի մասին, և ես, իբրև նրա  
ապագայ ժառանգը, աւելի լաւ կարող եմ իմանալ նրա միտքը...

Կրոմիցկին խոր-խոր նայեց երեսիս:

—Եւ մանաւանդ որ այդ քեզ, իբրև ապագայ ժառանգի,  
վեաս է:

—Ճշմարիտ է,—ասացի ես,—բայց ես սկի իմ եկամուտներս  
չեմ կարողանում ծախսել, այդ պատճառով դրա մասին կարող  
եմ սառնասիրով կերպով խօսել: Քեզ, իբրև զործի մարդու, այդ  
կարող է զարմանք պատճառել, բայց եթէ դու չես կարողանում

այդ ուրիշ կերպ բացադրել, նաևիր ինձ վրայ, իրրեւ տարօրինակ մարդու վրայ: Այդպիսի մարդիկ եւ կան աշխարհիս երեսին: Եւ ահա քեզ ասում եմ, որ առաջինը՝ մոքովս եւ չի անցնում սահմանափակել հօրաքրոջս առատաձեռնութիւնը, երկրորդը՝ հաստատ զիտեմ, որ նա կուակել է Անելկացին ոչ թէ եկամուտ, այլ դրամագլուխ: Բնական է որ իմ ազգեցութիւնը այդ դէպքում կարող է մեծ դեր կաւարել, բայց ես հաւատացնում եմ քեզ, կուզես հաւատա, կուզես մի հաւատա, ինչպէս քո կամքն է, որ իմ ազգեցութիւնը գործ կը դնեմ աւելի յօգուտ քո, քան ի վնաս քո:

Կրոմիցկին ձեռքս ամուր նեղմեց: Նրա ուսերը շարժւում էին մանէկէնի ուսերի պէս: Նա չափից դուրս անսանելի էր ացլ բոպէին: Երեխ նա ինձ աւելի յիմարի տեղ էր զնում, քան տարօրինակ մարդու տեղ, բայց հաւատում էր ինձ (իսկ ինձ ամենից շատ այդ էր հարկաւոր), և եթէ հաւատում էր, չէր սխալում, որովհետեւ ես իմ մէջ վճռել էի, որ Անելկան իսկապէս դրամազլուխ կը ստանայ և ոչ լոկ եկամուտ:

Չգում էի նոյնապէս, որ Կրոմիցկու սիրալ շատ է ուզում՝ հարցնել՝ «ինչքան, ե՞րբ», բայց հասկանում էր, որ հարցնելը անքաղաքավարութիւն կը լինէր, և լուսմ էր, կարծես զապելով սրտի յուզումը, իսկ ես շարունակեցի.

Իայց դուք չպէտք է մոռանաք, որ հօրաքրոջս հետ պէտք է իմանալ վարւել: Թէև նա միտք ունի պարգևազրել Անելկացին, դրա համար կարող եմ երաշխաւոր լինել. բայց մինչեւ նա փող չանի ու դնի սեղանի վրայ, իսկ դու չդնես իմ գրպանը, ամեն բան կախած կը լինի նրա կամքից ու մինչեւ անգամ նրա քմահաճութիւնից: Մինչդեռ ինչ է ձեր արածը: Երեխ դու ես նրան բարկացրել այսօր՝ Անելկան, և այն էլ այլքան սաստիկ: Եթեև նրա ազագայ ժառանգ ես պէտք է ուրախանացի և ձեզ չզգուշացնէի, իսկ ես, ինչպէս տեսնում ես, հակառակն եմ անում: Հօրաքրոջս սաստիկ դուր չի եկել Անելկացի գրութիւնը, նա զարձաւ դէպի քեզ արտաքուստ բարկացած ձևանալով, բայց ներքուստ յուսալով, որ նրա կողմը կը պահես, իսկ դու կարծես ինքդ էլ հաւանութիւն տւիր կնոջդ ու զռքանիդ ծրագրինը

—Թանկապին բարեկամ (Կրոմիցկին կրկին պինդ սեղմեց ձեռ-

քլս), անկեղծ եմ ասում քեզ, որ այդպէս վարւելու սպատճառն այն էր, որ չարացած էի հօրաքրոջս վրայ: Խակապէս այդ ծրագիրը անմիտ ծրագիր է: Իմ ամենաշատ չփրած բանը տաք-գլխութիւնն է, որ իմ տիկիններս չափից զուրս ունեն: Նրանց գլխիցը երբէք դուրս չի գալիս, որ չպէտք է ի չարը գրծ դնեն ձեր հիւրասիրութիւնը, որ չպէտք է մինչև վերջը Պլոշովում նստեն, եւ սերա: Այդ այնքան ասել են, որ մինչև կոկորդս են հասցրել... Մինչդեռ գործերը այնպիսի դրութեան մէջ են: Ես հօ չեմ կարող ամբողջ ընտանիքս Թուրքեատան տանել, իսկ մի բան որ ես այնտեղ եմ ապրելու, —ինձ համար միւնոյն է, Անելկան Օգեսսայում կապրի թէ Վարշաւայում: Երբոր ես այդ հետու երկրներից կազմաւեմ, և ինչպէս յոյս ունեմ, նշանաւոր կարողութեան տեղ գարձած, այն ժամանակ պարզ բան է ինչպէս հարկն է տուն տեղ կը գնեմ: Պէտք է սպասել ամենաշատը մի տարի ևս: Եթէ գործերս ուրիշին յանձնելու լինեմ, փոխարէնը վճար կը ստանամ... Աներեւ է, որ եթէ Պլոշովը չը լինէր, ես պէտք է մի ժամանակաւոր բնակարանի հոգս քաշէի տիկիններիս համար. բայց մի բան որ հօրաքոյը առաջարկում է իւր տունը և հէնց ինքը ցանկանում է, որ նրանք իւր մօտ ապրեն, —իմ կողմից յիմարութիւն կը լինէր ուրիշ տեղ վնասել: Զոքանչս նոր է ոսքի կանգնել: Ո՞վ զիսի, ինչպէս կը լինի վերջը. իսկ եթէ վատ լինի, ամեն բան կը լինի Անելկացի վղին, որ զեռ ջանել է ու անփորձ: Իսկ ես այժմ ոչ մի կերպ չեմ կարող նրանց մօտ մնալ: Ես առանց այն էլ այստեղ կարծես ասեղների վրայ նստած լինեմ, որ քեզ հօրաքրոջը լնկերացնելու յոյսա է միայն ինձ այստեղ այսքան երկար պահողը: Ինչ որ սրտումն կար, բոլորն ասացի քեզ, այժմ դու ասա ինձ, Երբ և ինչպէս կարող եմ յոյս ունենալ ձեր օգնութեան վրայ:

Ես ազատ շունչ քաշեցի:

Անելկացի ծրագիրները խորտակւած էին:

Հոգիս ուրախութիւնից փառաւորւեց, որովհետեւ ուզածս արեցի: Բացի այդ թէ իմ սէրը դկապի Անելկան այդ բոպէին նմանում էր խորին ատելութեան, բայց այդ ատելութիւնը, որ այժմ կազմում էր իմ գոյութեան գլխաւոր հիմքը, ինչպէս և սէրը, կերակուր էր պահանջում: Այդպիսի կերակուր ատելութեանս հա-

մար կարող էր լինել միայն Անելկացի ներկայութիւնը; Ի վերջոյ Կրոմիցկու խօսքերից եզրակացրեցի, որ ես առանց մեծ դժւարութեան կարող եմ իրագործել սրտիս ամենամեծ փափառը, այսինքն հեռացնել թշնամուս համարեա անորոշ ժամանակով; Բայց յետոյ ցոյց չուեցի ամենաչնչին ցուզումն անդամ, որովհետեւ կարծում էի, որ աւելի լաւ կը լինի, եթէ Կրոմիցկին շատ հեշտութեամբ շտանաց մեր հաւանութիւնը, այլ սախպւած լինի մի քիչ խնդրել: Այդ նպատակով ասացի.

— Առաջուց քեզ ոչինչ չեմ կարող ասել: Ամենից առաջ ինձ մանրամասն բացադրիր քո գործերի գրութիւնը:

Կրոմիցկին խօսեց այնպէս տաք-տաք, ինչողէս խօսում են մարդիկ իրանց սիրած առարկացի մասին: Նա ամեն բոպէ կանգ էր առնում, բռնում էր կոճակիցս կամ տանում ժայռին էր զէմ անում, իսկ երբ հարկ էր լինում մի համոզեցուցիչ ապացոյց բերել, կայծակի արագութեամբ մննոկլը աչքին էր խցկում և ուղիղ երեսիս նացում, ցանկալով իմանալ, ինչ ազգեցութիւն կը գործեն իւր խօսքերը ինձ վրաց: Այդ բոլորը նրա փայտէ, թիւթիւկան ձայնի հետ միասին ինձ համար անտանելի էր, բայց պէտք է խոստովանւեմ, որ նա սուս չէր խօսում: Իմացայ նոյնը, ինչ որ զիտէի կրտսեր Խւասովվակու նամակից: Գործը հետևեալ գրութեան մէջ էր: — Սրգէն ահագին փող էր վեր զրած զանազան նիւթեր մատակարարելու համար, օգուալը կարող էր մեծ լինել, որովհետեւ մի քանի բաների վերաբերմամբ Կրոմիցկին մենավաճառութիւն ունէր: Իսկ երկիւղը նրանումն էր, որ այն փողը, որ պէտք էր անչապաղ ծախսել, չետ էր ստացւում երկար ու բարակ դիւանական գործավարութիւնից յետոյ, և երկրորդը՝ Կրոմիցկին ինքը գործ ունէր երկրորդական մատակարարողների հետ, որոնց շահը սպահանջում էր վատ նիւթ մատակարարել, մինչդեռ ամբողջ պատասխանատութիւնը միայն նրա վրայ էր ընկենում: Այդ վերջին հետը նրան որոշ աստիճան կախման մէջ էր գնում զինուորական անտեսական վարչութիւնից, որ ասենք իրաւունք ուներ միայն ամենալաւ նիւթերն ընդունելու: Աստւած դիտէ ինչ վտանգ կարող էր սպառնալ Կրոմիցկուն այդ կողմից:

Նրա երկար պատմութիւնը լսելուց յետոյ պատասխանեցի.

—Սիրելիս, այն բոլորից յետոց, ինչ որ գու ասացիր, ոչ ես,  
ոչ հօրաքոյրս չենք կարող քեզ հետ ընկերանալ:

Կրոմիցկու երեսը մի բովում դեղնեց:

—Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Զնացելով քո բոլոր նախազուշութիւններին, մի օր յանկարծ  
քննութեան տակ կ'ընկնես, իսկ մենք ցանկութիւն չունենք դատի  
ենթարկւելու:

—Այդպէս որ մոտածելու լինենք, ոչ մի գործի չպէտք է ձեռ-  
նարկենք:

—Մենք սկի կարիք էլ չունենք որ և է բանի ձեռնարկելու:  
Դու ուզում էիր, որ մենք քեզ հետ ընկերանանք. իսկ դրա հա-  
մար ինչքան փող է հարկաւոր:

—Էլ ինչ խօսենք դրա մասին... Բայց եթէ դուք կարողանա-  
յիք գործի մէջ դնել գոնէ եօթանասուն հինգ հազար ռուբլի...

—Զէ, չենք կարող և պարուական չենք համարում մեզ; Իսկ  
որովհետեւ դու մեր ազգականն ես, կամ աւելի ձիշոը մեզ ազգա-  
կան ես դարձել, դրա համար կամենում եմ քեզ օգնել: Կարծ' ես  
քեզ կը տամ եօթանասուն հինգ հազար ռուբլի հասարակ մուր-  
հակով:

Կրոմիցկին կանգ առաւ և աչքերը կուչ ածելով նայեց ինձ,  
ինչպէս քնատեղից նոր վեր կացած մարդ: Բայց այդ երկար չտեսեց:  
Ակներեւ է նա մոտածեց, որ սաստիկ ուրախութիւն արտայայտելը  
իւր կողմից անքաղաքագիտութիւն կը լինի: Վաճառականական նա-  
խազուշութիւնը (որ այդ դէպքում բոլորովին աւելորդ էր) նրա  
մէջ յաղթող հանդիսացաւ: Նա ձեռքս սեղմեց ու ասաց.

—Նորհակալ եմ քեզնից: Ի՞նչ տոկոսով:

Դրա մասին տանը կը խօսենք: Այժմ ինձ ժամանակ է վերա-  
դառնալու: Պէտք է խօսեմ հօրաքրոջս հետ:

Տուն վերադառնալիս մոտածում էի, արդեօք իմ վարմունքը  
կրոմիցկուն չափից գուրս կասկածելի չի երևաց, արդեօք զլսի չի  
ընկնի, թէկուզ մասամբ, թէ ինչումն է բանը: Բայց իմ  
երկիւղը զուր էր: Տղամարդկանց յաճախ կուրացնում է ոչ  
թէ սերը դէպի կինը, այլ դէպի իրանց անձը ունեցած  
սէրը: Միւս կողմից կրոմիցկին նայելով մեզ վրայ իւր դրական ու

վաճառականական բարձրութիւնից, թէ ինձ թէ հօրաքրոջս ֆանտազէօրի տեղ է գնում, որոնք գործի մասին ոչ մի հասկացողութիւն չունեն, և, բացի այդ, ուից մինչև գլուխ լիքն են զանազան հասցած նախապաշարութմերով, ի թիւս որոց և այն հասկացողութեամբ, թէ պէտք է համերաշխ լինել ազգականների հետ: Նա համարեա ամեն կողմից այնպիսի տիպ է, որ ոչնչով նման չէ մեզ, այդ պատճառով էլ մենք, թէև ակամայ, նրան ինքնակոչի պէս մի բան ենք համարում: Մեր պարտէզում, ամարանոցի մօտ, Անելիան մի գեղջկուհուց պատող էր առնում: Խօսից անցնելիս կոպիտ կերպով ասացի նրան.

—Դու չես գնայ, որովհետեւ ես չեմ կամենում:

Ճաշին նորից խօսք բացւեց տիկինների գնալու մասին: Այժմ Կրոմիցկին էլ խօսակցութեան մէջ խառնւեց և Անելիայի ծրագիրը երեխացութիւն անւանւեց, որի վրայ խելքը գլուխն մարդը կարող է միայն ծիծաղել: Նա, ի հարկէ, չկարողացաւ քաղաքավարի լինել ոչ իւր կնոջ, ոչ էլ պանի Յելինայի վերաբերմամբ, որովհետեւ նրա բնաւորութիւնը առհասարակ նուրբ ու գիրգ բնաւորութիւն չէ: Ես համարեա բոլոր ժամանակ լուռ էի, ինչպէս այնպիսի մարդ, որ գործովը քիչ է հետաքրքրում: Անելիան, — ես այդ պարզ տեսնում էի, — շատ լաւ հասկանում էր, որ Կրոմիցկին երգեհոնի պէս նւազում է իմ ուզած եղանակը: Նկատում էի, որ Անելիան ամաչում էր նրա փոխարէն և իրան սաստիկ ստորացած էր զգում: Բայց սիրոս լիքն էր բարկութեամբ, և նրա ստորացումը ինձ բականութիւն էր ողատճառում:

Բայց և այնպէս ես էլ առանց վնասի չպրծայ: Մինչև այժմ չե՞ կարողանում հանգստանալ և չեմ կարողանում Անելիային ներել: Եթէ որ ես, Վիէննայից վերադառնալիս, կազմած չլինէի մեր դաշնագրութեան ծրագիրը, եթէ իմ այնքան ցանկութիւններս, իղձերս ու յոյսերս զոհած չլինէի, այն ժամանակ այսքան խորը յուսախարեած չէի լինի: Բայց անբախտութիւնը ընկաւ գլուխ հէնց այն բոսէին, երբ ես Անելիայի սիրուց ուզում էի հիմքից վերածնել, պատրաստում էի այնքան վեր բարձրանալ, որքան մինչև այժմ երբէք չէի բարձրացել, որպէս զի նրա հետ հաւասար ու նրան մօտ լինեմ, և հէնց այդ ժամանակ նա առանց որ և

է յարգելի պատճառի անգութ կերպով կամեցաւ ինձ յուսահատութեան անդունդը գլորել։ Նա իրան նեղութիւն անգամ չի տւել մոտածելու թէ այդ ինչ ազգեցութիւն կունենայ ինձ վրաց, իմ զլիխո հօ մի փորձանք չի բերի... Այդ մոտածմունքները թունաւորում են իմ ուրախութիւնը, որ Կրոմիցին գնում է, իսկ Անելկան մնում։ Ազագան մի լուծում կը տայ այս բոլորին, բայց ես այն աստիճան վշտաբեկ եմ եղած, որ առաջուց ոչինչ չեմ կարող գուշակել։ Մի լուծում, և ամենահասարակ լուծումը, այն է, որ ես հիւանդանամ որ և է ուղեղացին հիւանդութեամբ։ Ճամանակով այդ էլ կարող է պատահել, որովհետև ցերեկները տանջւում եմ սրտիս մորմոքից, իսկ գիշերները բոլորովին քուն չունեմ։ Միւնոյն ժամանակ ծխում եմ ու ծխում անվերջ, համարեա այնքան, որ իսելքս կորցնում եմ, և այդպէս նատում եմ մինչեւ արշալոյս։

(Կը շարունակուի)

## ԱՅՎԱԶՈՎԱԿՈՒ ԹՈՎԱՆԿԱՐԻ ԱՌԱՋ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Ծանր ալիքները լայն ովկիանոսի,  
Խառնելով շերտը մռայլ մշուշի,  
Կուտակւում էին գոռալով ահեղ,  
Եւ մրրիկն ուժգին շնչում էր այնահղ—  
Անեզր և անվերջ  
Տարածութեան մէջ:

«Կանգնեցէք», գուեց վրձինը ձեռքին  
Ծեր նկարիչը յուզւած տարերքին.  
Եւ, հնազանդւած հանճարի ձայնին,  
Սև ալիքները փոթորկի ժամին  
Կտաւի վերայ  
Կանգնած են ահա:

# ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Գ Է Ո Ր Գ Դ Ա Ր Ա Զ Ե Ա Ն Ի

Ես նպատակ ունիմ համառօտ կերպով ներկայացնելու մարդկացին սեռի զարգացման դլխաւոր շրջանները, պէտք է աշխատեմ ոչ թէ շօշափել պատմական անցքերը կամ դէպէքերը, այլ որոշել քաղաքակրթութեան շրջանները և ցոց տալ թէ այդ շրջաններում մարդս ինչպէս է ապրել և ինչ փոփոխութիւնների է ենթարկւել: Միակ նպատակը, որ ունեցել եմ այս նիւթի ընտրութեան մէջ, եղել է՝ առիթ տալ մտածել այն հարցերի մասին, որոնք գերակշռող գեր են խաղացել մեր մոածողութեան մէջ և դիտութեան սուացած հետևանքներով ջրել այն սխալմունքները, որ մենք գործում ենք մեր առօրեայ տրամաբանութեան մէջ:

Մարդկութեան կեանքի զարգացման ընթացքը բաժանվում է երկու մեծ շրջանների. մէկը այն երկարատև ժամանակամիջոցն է, որ ընդհանուր պատմութիւնը անւանում է նախապատմական շրջան. միւսը՝ սկառագաղացական շրջան, որ անհամեմատ շատ կարճատև է քան առաջինը:

Առաջին նախապատմական շրջանի մարդու մասին մինչեւ վերջին ժամանակները ոչինչ չգիտէինք, որովհետեւ ոչ մի աղբիւր չունէինք. ոչ աւանդութիւններ, ոչ գրի անցուցած պատմութիւններ, ոչ մոնումէնաններ, ոչ լեզու, ոչ էլ արձանագրութիւններ, որոնք կագմում են պատմական կեանքը լուսաբանելու համար մէկ-մէկ անհրաժեշտ աղբիւրներ: Աակայն գիտութեանը յաջողւում է վերացնել հետզետէ այն քողը, որով ծածկւած էր նախնական մարդը,

գիտութիւնը սկսում է ցոյց տալ և պարզել թէ ի՞նչ է եղել մարդս և ինչ կեանք է վարել։ Մարդաբանական գիտութեան այն ճիւղը, որը ուսումնասիրում է նախապատմական մարդուն և նրա բովանդակ կեանքը, յայտնի է նախապատմական արևսէօլոգիա (հնագիտութիւն) անունով։ 40—50 տարի է ինչ որ հնագիտութիւնը հիմնել է և միւս գիտութիւնների շարքն է անցել. նա գտել է և այսօր էլ շարունակում է գտնել շատ միջոցներ հետաքրքրական անդեկութիւններ տալու նախնական մարդու կեանքի մասին։ Նախապատմական հնագիտութեանը սերու կերպով գործակցում է մի ուրիշ գիտութիւն այն է՝ երկրաբանութիւնը (գէօլոգիա)։

Հնագէտները գտնում են հողի մէջ խորլ թաղւած զէնքեր, զործիքներ, մարդկացին կմախք, մարդուց թողած ամեն տեսակ մնացորդներ։ Հազարներով հողից հանում են եւրոպացի բոլոր երկիրներում, Ասիայում, Աֆրիկայում և այլն այդ տեսակ թաղւած իրեր, որոնք մնացել են նախապատմական մարդուց։ Այսօր հնագիտական թանգարանները լիքն են այդպիսի մնացորդներով (débris)։ Պարիզի մօտ գտնուող Saint-Germain en Laye թանգարանը ամենահարուստն է. միայն Գանիայում գտել են այդպիսի իրերից 30,000 հատ։ Եւ ամեն օր էլ գտնում են։ Այդ իրերը գտնուում են շատ խորլ, այնպիսի հողածալքերի տակ, որոնց մարդկացին ձեռքը չէ դիպէել։ Գիտնական անթրոպոլոգ-հնագէտները այդ իրերով իմանում են թէ ինչպէս է եղել մարդս, ինչպիսի նիստ ու կաց և զործիքներ է նա բանեցրել։ Տանից գուրս է զալիս, որ այդ զործիքները համանման են այն զործիքներին, որոնք գործ են ածւում գեռ այսօր մի քանի վայրէնի ցեղերի մէջ։ Այդ նախապատմական մնացորդները պատկանում են են մարդկացին բոլորովին աարբեր ցեղերին։ Նրանք դասաւորեն են հողի մէջ զանազան գարեշրջաններում այն ժամանակից ի վեր, երբ երկրիս վրայ ապրում էր մամութը (mammouth, մամոնթ), մի տեսակ հսկայական փղի նման կենդանի՝ բրդով ծածկւած կաշով և կեռ ժանիքներով։

Այս նախապատմական երկարամեւ ժամանակամիջոցը բաժանում է չորս դարեշրջանների։ Մի քանի խօսք ասենք այդ շրջանների մասին, որից յետոյ կանցնենք պատմական շրջանին։ Յիշեալ չորս շրջաններն են.

1. Տաշած քարի շրջան:
2. Ողորկած քարի շրջան:
3. Բրոնզի շրջան:
4. Երկաթի շրջան:

Երջանները այսպիսի անուններ են ստացել իւրաքանչիւր շըրջանում՝ գործածող գործիքների ինչ նիւթից պատրաստւած լինելու համար. այնպէս որ եթէ գործիքները պատրաստւում են եղել քարից՝ զիտութիւնը լնդրւնել է այդ շրջանը անւանել քարի շրջան, բրոնզից—բրոնզի շրջան, — երկաթից—երկաթի շրջան:

I. Քարի շրջանում մարդս ապրելիս է եղել խիճախառն աւազում փոսերում, ժայռերի խորշերում։ Նրա զէնքերը եղել են կացիններ, դանակներ, սրածայր նետեր, բայց այս բոլորը շինած կայծաքարից. յետոյ աղեղներ, ոսկորից շինած ասեղներ, ինչպէս որ մի քանի վայրենիններ դեռ այժմ էլ գործ են ածւում։

Քարայրերում ապրող այդ նախապատմական մարդիկ պատառում էին անասուններին, գազաններին և ուտելուց յետոյ ոսկրները թափում էին իրանց բնակած փոսերում։ Այդ կենդանիների մէջ գտնում ենք ոչ թէ միայն ձիի, եղի, եղջերւի, սոմոն (σαυμόν), ձկան ոսկորներ, այլ նոյնպէս ռնգեղջիւր, քարայրերի արջերի, մամութի, հիւսիսային եղջերւի, (renne) և ուրիշ վաղուց անհետացած, հանգած սեռի կենդանիների ոսկորները։ Այդ ոսկորները ցոյց են տալիս որ քարի շրջանի մարդը ժամանակակից է եղել մամութին և հիւսիսային եղջերւին։ Այս շրջանում մարդս զիտէր կայծաքարից գործիք պատրաստել և կրակ վառել։

## II Ողորկած քարի շրջան:

Այսուղ մարդս ապրում էր զլխաւորապէս ջրերի լճերի վրայ։ Հիմնում էին ամբողջ գիւղեր ջրերի երեսին. բազմաթիւ գերաններ խորասուզում էին ու տնկում ջրի յատակը, իսկ այդ տախտակամած գերանների վրայ կառուցանում էին փայտաշէն խրճիթներ։ Այս շրջանի վայրենիններ ևս գազաններ էին ուտում, յետոյ սկսում են սովորել որսի միս ուտել։ Արանք զիտէին հող մշակել և աղալ։ Գիտէին նաև կոպիտ հիւսւածք գործել ճիւղերից, որով ծածկում էին իրանց մարմինը։ Ասեղները ոսկորից էին պատրաստում. գանակը, նետերը—կայծաքարից. բայց նրանք պատրաս-

տում էին կացինը մի շատ կարծր քարից և սովորել էին ողորկել։  
այդ պատճառով այս շրջանը կոչում է ողորկած քարի շրջան։

### III Բ բոնզի շրջան։

Հէնց որ մարդիկ սովորել են մետաղ հալել, այնուհետեւ բար-  
ւոք են համարւել զէնքերը պատրաստել մետաղից և ոչ քարից։  
Առաջին գործածական մետաղը եղել է պղինձը. բայց զուս պղինձ  
չեն գործածել, որովհետև զէնքերը կը ծալւէին. ուստի գործիքները  
աւելի ամուր, դիմացկուն դարձնելու համար սովորում են խառնել  
անագ ( $\frac{1}{10}$  մաս). պղնձի և անագի հէնց այս խառնութրդն է որ  
կոչում է բրոնզ։ Բրոնզից սկսում են այնուհետեւ պատրաստել աշ-  
խառնաքի բոլոր գործիքները, զարդերը և մանաւանդ զէնքերը։

IV Երկաթի շրջանը։ Որովհետեւ երկաթը աւելի դժւար  
է հալել, աւելի կարծր է քան բրոնզը, ուստի երկաթը աւելի ուշ է  
մտնում գործածութեան մէջ։ Սովորելով երկաթ հալել և տեսնե-  
լով որ աւելի ամուր և դիմացկուն մետաղ է քան բրոնզը, սկսում  
են զէնքերը շինել երկաթից։ Երկաթը ճանաչելով, երկաթի դարը  
վերջ է տալիս նախապատմական շրջանին և երկաթով սկսում է  
քաղաքակրթութեան պատմութիւնը։

Բայց ինչպէս պէտք է հասկանալ այս շրջանները։ Արդեօք  
անցել է ամբողջ մարդկութիւնը այս նախապատմական շրջան-  
ները, և երկրորդ, եղել են արդեօք բոլոր ժողովուրդները այդ  
շրջաններում մի և նոյն ժամանակներում, թէ մի ժողովուրդ  
ինչ շրջաննում որ գոնեւել է, նոյն շրջանումն են եղել ուրիշ  
ժամանակ և միւս ժողովուրդները։ Ոչ. միեւնոյն երկրի բնա-  
կիները յաջորդաբար գործ են ածել քար, բրոնզ, յետոյ երկաթ։  
բայց բոլոր երկիրները չեն անցել միեւնոյն ժամանակ նոյն շրջանը։  
Օրինակ, երբ Եգիպտացիք արդէն գործ էին ածում երկաթ, յոյ-  
ները բրոնզի շրջանումն էին, մինչդեռ Դանիայի բարբարունները քա-  
րի գարում։ Ամերիկայում ողորկած քարի շրջանը վերջացաւ այն  
ժամանակ, երբ եւրոպացիք սկսեցին դաղթել այնտեղ։ Հէնց մեր  
օրերում աւտարալիացի վայրենիները քարի դարումն են. հէնց Նրանց  
մօտ կը գոնէք ոսկրից և կաշճաքարից շինած նոյն գործիքները, ինչ  
որ գործ էր ածում քարի շրջանի այրերում ապրող մարդը։

Բայց որքան ժամանակ է աւել ամեն մի շրջան, երբ է սկսել

և վերջացել այս կամ այն շրջանը զանազան երկիրներում։ Այս և ուրիշ այսպիսի հարցերին առ այժմ դժւար է որոշակի պատճառախանել։ Միայն այս կարելի է հաստատ ասել, որ ամեն մի շրջան տեսել է հարիւրաւոր և աւելի դարեր։ Հաշւից դուրս է գալիս, որ եթե հողի խորութիւնը, այն հողածալքերի հաստութիւնը, որոնց տակ գետնի խորութեանմէջ գտնւում են քարի շրջանից ննացորդները, ինչպէս են կմախք, զէնքեր և այլն, նոյն ծանր կերպով կազմեէր, հողը այնպէս նստէր, ինչ կերպով որ այժմ է նստում, հազիւ թէ բաւական լինէր դրա համար 200,000 տարի (2000 դար). ուրեմն այդ հաշւով քարի շրջանի մարդը մեզնից 2000 դար առաջ է ապրել։

Առաջ ենք բերում նոյնպէս համառօտ կերպով Նիւյիս Մորգանի և նրա հետեւողների հետազօտութիւնների հիման վրայ արած պատմական ընթացքի մի ուրիշ բաժանմունք, որը նշանաւոր է այն պատճառով, որ նրա մէջ ինկատի է առնւում բացի ցեղաբանական (էթնոլոգիական) և լեզւագիտական (լինգւիստական) հետազօտութիւններից նաև տնտեսական գիտութիւնից սուացած հետեւանքները։

#### Քաղաքակրթութեան աստիճաններ։

I. Վայրենութիւն։ Սա այն շրջանն է, ուր մարդս սեպ-հականացնում է բնութեան մէջ գտնւած պատրաստի բերքերը, ապրում է այդ պատրաստի բերքերով։ Մարդուս աշխատանքի արհետական միջոցները (գործիքները և այլն) օգնում են մարդուն բերքերը ձեռք բերելու։

1. Վայրենութեան ստորին աստիճանը։ Մարդիկ այս աստիճանի վրայ մասամբ ապրում են ծառերի վրայ, պատշները և արմատիք կազմում են նրա կերակուրը։

2. Վայրենութեան մակարդին աստիճանը։ Այսակ սկսում է կրակի գործածութիւնը և, իբրև կերակուր, գործածական են դասունում ձուկը և ջրի մէջ ապրող կենդանիները։ Առաջին զէնքի գիւտի շնորհիւ, որը միջոց տւեց այդ աստիճանի վրայ գտնուղ մարդուն որսալ և որսը իբրև կերակուր գործածել, և այն հանգամանքի շնորհիւ, որ կրակը նոյնպէս գործածութեան մէջ է մտնում, կերակուրը, սնունդը սկսում է լաւանականութիւն կայ որ

այս շրջանումն է սկսւում նաև մարդակերութիւնը (anthropophagy): Այս աստիճանի վրայ են կանգնած դեռ այժմ Աւսորալիայի և Պոլինէզիայի վայրենիները:

3. Վայրենութեան բարձր աստիճանը սկսւում է նետ ու աղեղի գիւտով: Որսորդութիւնը դառնում է աշխատանքի կանոնաւոր ձիւղը: Այստեղ նկատում է նստակեաց կեանքի սկիզբը. փայտէ գործիքներ, ձեռքով գործելը, եղեղնից կողովներ հիւսելը, ողորկած քարէ գէնքեր պատրաստելը սկիզբն է առնում այստեղ: Մի խօսքով մարդս ձեռք է բերում իշխանութիւն--բայց դեռ շատ թոյլ—ապրուստի միջոցներն արտադրելու նկատմամբ: Մեծ մասամբ այս շրջանումն են սկսել խրճիթներ շինել և գերաններ ու տախտակներ պատրաստել շինութիւնների համար: Այս աստիճանի զարգացման վրայ են կանգնած այժմ Նիւսիս-արևելեան Ամերիկայի հնդիկները:

II. Բարբարոսութիւն: Սա անասնապահութեան և երկրագործութեան շրջանն է. մարդս սովորում է սեպհական գործունէութեամբ, սեպհական աշխատանքով բնութեան բերքերի արտադրութեան ձեւերը հնարել:

1. Բարբարոսութեան ստորին աստիճանը. այստեղ գործածական է դառնում հողի ամանը: Երկու մայրցամաքների զարգացումը կատարում է տարբեր կերպով. տարբեր բնաւորութիւն է ստանում այն պատճառով, որ հին աշխարհի մայրցամաքը ունէր լնտանի դարձնելու համարեա բոլոր պէտքական կենդանիները և թէ մշակութեան համար հարկաւոր բոյսերը, բացի սիմինդրը. իսկ նոր աշխարհը, Ամերիկան, ունէր միայն այդ բոյսը:

3. Բարբարոսութեան միջին աստիճանը: Արևելեան մայրցամաքում մարդը սկսում է լնտանի դարձնել կենդանիներին, այն ինչ արևմտեան ջամաքի վրայ առաջ է տառնում սննդառու բոյսերի մշակութիւնը, ոռոգում դաշտերը և պատրաստում աղիւսներ, արևելի վրայ չորացնելով, և քար շինութիւնների համար: Այս աստիճանի վրայ էին գոյնուում Միսսիսիպից գեպի արևելք ապրող Ամերիկայի բոլոր հնդիկները: Արևելեան ցամաքի վրայ բոյսերի մշակութիւնը աւելի ուշ ժամանակներից է սկսում: Ատկայն խաշնապահութիւնը առաջ բերեց հովական կեանք Եփ-

բառի և Տիգրիսի ափերում ապրող սեմիուական ցեղերի և Հնդկաստանում ու Օկսուս և Եակսարտ, Դոն և Դնէպր գետերի ափերում ապրող արիական ցեղերի մէջ: Հացահատիկների մշակութիւնը զարգացաւ երեխ այն պատճառով, որ անասուններին հացաբոցներով կերակրելու պահանջ էր զգացւում: Աստիճանաբար վերանում է այս շրջանում՝ մարդակերութիւնը և մնում է միայն իբրև մի կրօնական ծէս:

3. Բարբարոսութեան բարձր աստիճանի վրայ արդէն սկսում է երկաթի հանքի մշակութիւնը. բացի սրանից անդի է ունենում գրերի գիւտը. երկաթի հանքի մշակութեամբ և նշանագրերի գործածութեամբ մարդս մնում է բարբարոսութիւնից քաղաքակրթական շրջանը: Աչքի լնկնող, բնորոշ նշաննը բարբարոսութեան այս բարձր շրջանում մանաւանդ երկաթի գութանի շինելը և գործածութիւնն է: Զարդացման այս աստիճանը կազմում է յունաց պատմութեան այն շրջանը, որի մասին նկարագրում է Հոմերոսը իւր պօէմաներում (Իլիականը և Ոդիսիականը):

III. Քաղաքակրթութիւն և ընտանիք: Քաղաքակրթութիւնը բնութեան բերքերի մշակութեան շրջանն է, այն է մշակութիւնը կատարելագործելու, իսկապէս արդիւնագործութեան (industry) և արեւեստի շրջան: Խւրաքանչիւր պատմական շրջան ընտանիքի իրան յատուկ ձեւն ունի, որ փոփոխւել է յաջորդ շրջաններում, այնպէս որ իրօք մենք տեսնում ենք վերոցիշեալ շրջանների ընթացքում զարգացել են ընտանիքի միմեանց տարբեր ձեւեր, որոնք մէկը միւսին յաջորդել են անփոփոխնելի կարգով. այդ պէս ընդունում են շատ սոցիոլոգներ, այդպէս էլ ընդունում է Մորդանը:

Սկզբունք, մարդու նախնական վիճակում տիրում էին ցեղի մէջ այնպիսի սեռական յարաբերութիւններ, որ ոչ մի բանով չէր կարելի սահմանափակել. այնպէս որ ամեն կին պատկանում էր ամեն մարդուն և ամեն մարդ - ամեն կնոջ: Այս նախնական վիճակում, ինչպէս երեսում է, առենից շուտ կազմակերպւեց այդ առաջին ձեւը, որ ընտանիքի առաջին աստիճանը հասարակութեան մէջ պէտք է համարել:

1. Արեն ական կապով ընտանիքը: Այսուղ ամուսնական խմբերը կազմում են սերնդէ սերունդ. բոլոր պապերը և տա-

տերը ընտանիքում փոխադարձապէս միմեանց ամուսիններ են, նոյնպէս նրանց զաւակները ամուսիններ և ծնողներ են դառնում: վերջիններիս զաւակները կազմում են ընդհանուր ամուսինների երրորդ շրջանը. սրանց զաւակները և առաջնների, այսինքն պապերի և տատերի թոռների զաւակները—չորրորդ շրջան: Այսպիսի ընտանիքի տիպական ձևը կազմում էր ուրեմն ժառանգների գուգաւորութիւնից. այսինքն ընտանիքի իւրաքանչիւր ճիւղաւորութեան ժառանգները փոխադարձապէս—ուրեմն քոյրեր և եղբայրներ—ամուսիններ էին դառնում: Արենական կապով ընտանիքի այս տեսակը անհետացաւ:

2. Պունալուա տիպի ընտանիքը: Քիչ-քիչ, աստիճանաբար դուրս ընկնաւ ամուսնական յարաբերութիւններից քոյրերի և եղբայրների մէջ ամուսնութեան կարգը, որին յաջորդեց Պունալուա անունով յայտնի ընտանիքի տիպը (այդ անունը առնւած է Հաւաիի կղզիներից): Նախ և առաջ արգելում է մասնաւոր զէպքերում հարազատ քոյրերին և եղբայրներին ամուսնալաւ այնուհետև ընդունեում է ընդհանուր կանոն, որով արգելում է մինչև անգամ ամուսնութիւնը հարազատ քոյրերի և եղբայրների զաւակների, թոռների և սոցա զաւակների մէջ:

Այս երկրորդ տիպի ընտանիքները այնքան յարմարութիւն էին ներկայացնում գոյութեան կուի համար, որ նրանցից առաջացաւ տոհմային միութիւն (gens). աս, կարելի է ասել, աշխարհի եթէ ոչ բոլոր բարբարոս ժողովուրդների, բայց համարեա մեծ մասի հասարակական կազմակերպութեան հիմքը եղաւ. Յունաստանում և Հռովմում ընտանիքի այդ տիպից մենք անմիջապէս անցնում ենք քաղաքակրթութեան շրջանը: Այս ընտանիքի կազմութեան բնորոշ գծերը կացանում էին հետեւալում. այր ու կին ամուսինների ընդհանրութիւն՝ ընտանիքի որոշեալ շրջանում, որից սակայն դուրս էին դցւած կին ամուսինների նախ հարազատ, յետոյ նաև խորթ եղբայրները, նոյնպէս և այր ամուսինների քոյրերը:

Այս խմբերի ամուսնական կապակցութեան ժամանակ սահմանւում է սերտ ազգականութիւն լոկ մայրական գծով և ապագայում ևս յաջորդող ժառանգական յարաբերութիւնների մէջ այն կարգն է առաջ գալիս, որին սովորաբար անւանում են «մայրական իրաւունք»:

(Mutterrecht—թէև իրաւաբանական մոքով իրաւունքի մասին գեռ ևս խօսք չէ կարող լինել այսուեղ): Հենց որ բոլոր ազգականների մէջ անխոսիր ամուսնանալու կարգը արգելւեց, այդ հանգամանքը տոհմային միութեան (gens) սկիզբը դրեց, այսինքն առաջ եկաւ մօր կողմի ազգականների մէջ սերու շրջան: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ Պունալուա տիպի ընտանիքը գոյութիւն է ունեցել այն ամեն ժողովուրդների մէջ, որոնց վերաբերութեամբ առաջուցւած է, որ տոհմային կազմակերպութիւն են ունեցել:

3. Զուգական ընտանիքը առաջ է դալիս նախընթաց տիպից. առաջ է գալիս այն ժամանակից, երբ մի մարդ մէկից աւելի կին է ունենում և այդ կանանցից մէկը դառնում է նրա զլիսաւոր կինը, իսկ մարդկանցից մէկը՝ մի կնոջ զլիսաւոր մարդը: Խմբովին ամուսնութիւնները հետզհետէ անհնարին են դառնում շնորհիւ յաճախ տեղի ունեցող ամուսնական խոչնոտների: Ըստ մեծի մասին ամուսնութիւնները առանձնացնում են զոյգերը, բայց մարդը պահում է բազմակինութեան (սակաւ դէպքերում տնտեսական պայմանների շնորհիւ) և պատճական անհաւատարմութեան իրաւունքը. իսկ կնոջ կողմից սիրահարութիւնը սաստիկ պատժում է. ամուսնութիւնը հեշտ լուծելի է և երեխաները առաջւան պէս մօրն են պատկանում:

Ընտանիքի զարգացման այս աստիճանի վրայ սկսւում է կանանց յափշտակութիւնը և նրանց վաճառումն և գնումն իբրև ապրանք: Տնտեսական յարաբերութեան մէջ զուգական ընտանիքը չափազանց անհաւատատուն է և առաջ չի բերում դեռ ևս հարստութիւնների կենդրոնացումն, սեպհականացումը: Զուգական ընտանիքը կազմում է վայրենութեան և բարբարոսութեան շրջանների սահմանում, զլիսաւորապէս վայրենութեան բարձր աստիճանի վրայ, և մասամբ նաև տեղ տեղ բարբարոսութեան ստորին աստիճանի վրայ: Ինչպէս վայրենութեան շրջանի համար միամուսնութիւնը, այնպէս էլ զուգական տիպի ընտանիքը կազմում է բարբարոսութեան շրջանի բնորոշ ձևը: Ամերիկայի բնիկների մէջ ընտանիքան զարգացումը այդ ձևից տւելի հեռու չէ զնացել:

Զուգական ձև ընտանիքի գոյութեան ժամանակ բարբարոսու-

թեան շրջանում տեղի է ունենում անտեսական նշանաւոր մի հանգամանք, որ մակաբերել է տալիս արդէն գոյութիւն ունեցող ընտանիքի կազմակերպութիւնը։ Եւ ահա թէ ինչպէս։ Բարբարոսութեան շրջանում անասնապահութիւնը դառնում է հետզհետէ հարստութեան զարգացման աղբիւր։ Սկզբում այդ հարստութիւնը անսպազման պատկանում էր տոհմին, սակայն շատ շուտ սկըսում է զարգանալ նոյնապէս հօտերի մասնաւոր սեփականութիւնը։ Անհերքելի կերպով արդէն վկայւած պատմութեան հէնց սկզբներում մենք ամեն ուրեք տեսնում ենք հօտերը առանձին ընտանիքների մասնաւոր սեփականութիւն դարձած։ ոչ թէ միայն այդ, այլ նաև բարբարոսութեան շրջանում արւեստի արտադրած արդիւնքները, մետաղեայ գործիքները, շքեղութեան առարկաները, գուքսը, վերջապէս մարդուն (սորուկներին) մասնաւոր սեփականութիւն դարձրած ենք գտնում։

Նարբարոսութեան ստորին աստիճանի վրայ կանգնած մարդու համար ստրուկը ոչ մի գին չունէր։ Մարդու բնաւորութեան ոյժը այդ աստիճանում չէր տալիս ուշադրութեան արժանի այնքան արդիւնք, որ նրա (ստրկի) կեանքը պահպանելու ծախսը գերակշռէր։ Բայց այդ փոխւեց հէնց որ անասնապահութիւնը, մետաղների մշակութիւնը, գործելու արհետով և վերջապէս երկրագործութիւնը կեանքի պարապմունքի ճիւղերն են գտնում։

Ինչպէս որ առաջ բազմաթիւ կին ամուսինները արժէք ստանալով սկսեցին ի վաճառ հանւել և գնուել անոպէս էլ պատահեց բանւորական ոյժերի հետ, մանաւանդ այն ժամանակից սկսած, երբ հօտերը վերջնականապէս անցան մասնաւոր սեփականատէրերի ձեռքը, երբ հօտերը անհատների մասնաւոր սեփականութիւն դարձան։ Սորա հետեանքն այն եղաւ, որ հօտերը հսկելու համար շատ մարդկանց պահանջ զգացւեց։ սկանանջը լրացնելու համար հարկաւոր եղաւ գերել թշնամիներին։ գերիներին սորկացնում են և հարստահարելով աշխատում են հնարաւորից աւելի օգտական նրանց ոյժերից, հէնց այնպէս ինչպէս անասունից։ Այժմ ընտանիքը այսպիսի պատկեր էր ներկայացնում։ ըստ սովորութեան արդէն ապրուսոի միջոցներ և աշխատանքի գործիքներ ձեռք բերելու հոգսը ընկնում էր

տղամարդու վրայ. բացի այդ, նրան էին պատկանում այժմ հօտերը և ստրուկները. այն ինչ կնոջը պատկանում էր տնային կահ-կարասիքը, իսկ երեխաները, որոնք ըստ մայրական իրաւունքի մօրն էին պատկանում հօր մահից յետոյ ժառանգներ չէին դառնում։ Այսուհետեւ բնականաբար կարիք զգացւեց փոխել մօր ժառանգութեան այդ աւանդական իրաւունքը։ Յիրաւի, այս յեղափոխութիւնը կատարեց բոլոր կուլտուրական ժողովուրդների մէջ մեզ անլայտ ճանապարհով. իսկ հիւսիսային Ամերիկայի հնդիկների մէջ կատարել է և կատարւում է դեռ այսօր մեր աչքի առաջ։

Մայրական իրաւունքի անկումը իգական սեռի համաշխարհին ապահանական ապահութեան էր։ Տղամարդը իւր ձեռքն առաւ իշխանութիւն նաև տան մէջ. կինը կորցրեց արժանաւորութիւն, հարստահարւեց, դարձաւ նրա քմահանութեան սորկուհի, և երեխաների արտադրութեան պարզ գործիք։ Առաջ եկաւ նահապետական ընտանիքը, որի խակապէս ընորոշ կէտն է ոչ թէ բազմակնութիւն այլ այն՝ որ ընտանիքը ներկայացնում է անորոշ թւով ազատ և անազատ անհատներից գոյացած մի կազմակերպութիւն, որի գլուխ անցած է հայրը, իսկ միւս անդամները գտնուում են սրա՝ իբրև ընտանիքի գլխաւորի իշխանութեան տակ։ Նահապետական ընտանիքը եղաւ այն կամուրջը, որով մարդագուգական ամուսնութիւնից անցաւ ընտանիքի միամուսնական կազմակերպութեան։

4. Միամուսնութիւն։ Միամուսնական ընտանիքի ծագումը առաջ է գալիս բարբարոսութեան միջին և բարձր աստիճանների սահմանի վրայ. նա յենում է այր ամուսնու իշխանութեան վրայ. այդ իշխանութիւնը որոշեալ կերպով արտացայտում է մի նազատակով—այն է երեխաներ արտադրել, որոնք անպայման այդ հօրից պէտք է լինեն. իսկ այդ պահանջում է, որովհետեւ նրանք (երեխաները) պէտք է ապադայում ժառանգեն հայրական կարողութիւնը։ Ամուսնական լուծումը աւելի գժւարութեամբ է լինում և, ընդհանրապէս ասելով, կալուած է միայն տղամարդու կամքից։

Այսպէս ուրեմն պարզ տեսնում ենք որ նախնական պատմութեան մէջ ընտանիքի զարգացումը տեղի է ունեցել այնպէս որ հետզհետէ աստիճանաբար սահմանափակւել է ամուսնական շրջանը, որ թոյլ

էր տալիս սեռերի մէջ ամուսնանալու կապը, և որ սկզբում տեսնում ենք իբրև տարածւած սովորութիւն ամբողջ ցեղի մէջ։ Աստիճանաբար դուրս է գցւում ազգականների մէջ ամուսնանալու սովորութիւնը։ Նախ մերձաւոր ազգականների, այնուհետեւ աւելի և աւելի հեռաւորների մէջ, այնպէս որ ի վերջոյ գործնականապէս անկարելի է գառնում ամեն տեսակ խմբական ամուսնութիւն։ Միամուսնութիւնը, հանդէս գալով պատմութիւն մէջ, նպաստում է հասարակական և քաղաքական կեանքի զարգացման։ այնպէս որ պատմութեան մէջ զարգացող գասակարգերի առաջին հակալրութիւնը հանդիպում է միամուսնութեան ընտանիքում՝ կնոջ և մարդու մէջ տեղի ունեցած անտագոնիզմի զարգացմանը և մի դասակարգի կողմից միւս գասակարգին ճնշելու առաջին փորձը հանդիպում է մարդու ձեռքով կնոջ ճնշման հանգամանքին։ Մրամուսնութիւնը մեծ պատմական յառաջադիմութիւն էր, բայց միեւնոյն ժամանակ նրանով, սորկութեան և մասնաւոր սեփականատիրութեան հետ միասին սկսում է նոր էպոսա, որ մինչեւ այժմ շարունակւում է, որտեղ ամեն մի յառաջադիմութիւն իրան հետ կից առաջ է բերում և յարաբերական յետաղիմութիւն, որտեղ ոմանց բարօրութիւնը և զարգացումը պայմանաւորւում է այլոց տանջանքով և հալածումով։ Նա քաղաքակրթութեան շրջանի հասարակութեան մի սաղմնացին ձեւ է, մի ձեւ, որի մէջ մենք արդէն կարող ենք ուսումնասիրել հակադրութիւնների բնոյթը, հակադրութիւններ, որոնք այնքան առատապէս զարդանում են այս հասարակութեան մէջ։

Միամուսնական ընտանիքը ընդունեց ամենասուր ձեւ Յունաստանում։ Հռովմում նա արդէն աւելի ձախող կերպարանք է ստանում։ իսկ գերմանները, որոնց պատմութեան հէնց սկզբում գրունում ենք այն դրութեան մէջ, որ նրանց մօտ ընտանիքը դեռ զուգական ձեւ ունէր, մտցրին միամուսնութեան մէջ յարգանք դէպի կինը, մի աւանդական յարաբերութիւն դէպի կինը, որը մնացել էր զուգական ձեւ ընտանիքից և որի պատճառով կնոջ դրութիւնը նրանց մօտ բարձրացաւ։

Միամուսնութիւնը, իբրև ընտանիքի նոր տիսպ, զարգանալով հռովմէական աշխարհի աւերակների վրայ միայն ժողովուրդների գաղթի ժամանակ և թէ յետոյ—աւելի կակուղ կերպարանք

տւեց աղամարդու տիրապետութեան և կանանց շնորհեց, թէև միայն արտաքուստ, աւելի յարգելի և աւելի ազատ դիրք քան թէ կինը ունէր հին կլասիկական աշխարհում։ Հէնց այդ ժամանակից միայն հնարաւոր եղաւ միամուսնութեան վերաբերմամբ այն առենամեծ բարոյական յառաջադիմութեան սկզբնաւորութիւնը, որի համար մենք նրան ենք պարտական, —այդ բարոյական մեծ յառաջադիմութիւնն է նորագոյն անհատական սեռական սէրը, որը յայտնի չէր ամբողջ նախորդ աշխարհին։ Այսոեղ մի խնդիր անհրաժեշտ է պարզել։

Սեռական պահանջը իրբև կիրք յառուկ է ամեն մարդուն և կազմում է սեռական սիրոց առաջին ձեր, որ արտայացուում է միջնադարեան ասպետական սիրով, բայց այդ սէրը բոլորովին ամուսնական սէր չէր։ Ընդհակառակը, տիրապետող դասակարգերի մէջ ամուսնութիւնը որոշում է ամուսնացողների դասակարգային դիրքով և այսպէս նա ներկայացնում է իրեւ հաշւով ամուսնութիւն, այսինքն շահի տեսակէան է աւելի ի նկատի աւնուում։ Խսկ ստորագրեալ դասակարգերի մէջ ամուսնական յարաբերութիւնները աւելի մարդկացին են։ Իրօք ստորին խաւերում կնոջ վերաբերմամբ ընդհանուր կանոնը լինում է և կարող է դառնալ սեռական սէրը, որովհետեւ ներկայ եւրոպական զարդացած հասարակ ժողովրդի մէջ տիրում են բոլորովին ուրիշ անձնական և հասարակական պայմաններ քան թէ Եւրոպայի բուրժուազիա կոչւած տիրապետող դասակարգի մէջ։ Կինը եւրոպական երկիրներում զանազան տնտեսական պատճառներով անկախ գործող, աշխատող է թէ տնտեսական կեանքի մէջ և թէ հասարակական շատ ասպարէզներում։ Նա մարդու առաջ անկախ ապահով է այժմ նիւթականապէս։ Կինը մարդու կողմից նիւթական մնշման տակ չէ այլ ևս, որովհետեւ, բացի ընտանիքի մայր լինելուց, նա բանում, աշխատում է դուրսը արհեստանոցում, գործարանում, խանութում և այլն։

Այս բանից արդէն երկեռում է, որ կնոջ ազատութիւնը, էմանսիպացիան, նրա համահաւասար իրաւունքներ վայելելու հանգամանքը մարդու հետ՝ հնարաւոր չէ և կը մնայ անիրագործելի մինչեւ որ կանաչք յետ կը մղւեն հասարակական արդիւնագործային աշխա-

տանկից<sup>1)</sup> և կը սահմանափակւեն տնային, մասնաւոր աշխատանքով։  
Կնոջ էմանսիպացիան հնարաւոր կը լինի միայն այն ժամանակ, եթե  
որ նա հնարաւորութիւն կը ստանայ մասնակցելու արդիւնագործու-  
թեան մէջ հասարակական լայն չափերով և տնային աշխատանքը  
կը սկանանջի նրանից աննշան կորուստ։ Իսկ այս հնարաւոր է միայն  
ներկայ խոշոր արդիւնագործութեան ժամանակ, որը ոչ թէ թոյլ  
է տալիս կանացի աշխատանք լայն ծառալով, այլ ուղղակի որո-  
նում է այդ աշխատանքը և միւնոյն ժամանակ ձգտում է փոխա-  
րինել տնարարութեան մասնաւոր գործը աւելի և աւելի հասարա-  
կային արդիւնագործական աշխատանքով։

(Վ. Երջը լաջորդ համարում)

<sup>1)</sup> Համեմատեցէք, ի միջի ալոց, Ա. Արասիսանեանցի լոգւածը «Ավճը  
հասարակութեան մէջ» «Մուլու» 1891 № 6:

# ԲՈՅԱՐԻ ԲԵՂՄՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

ՍԱՄՈՒԵԼ, ԲԱԼԱԴԵԱՆԻ

Աճեցէք և բազմացարուք և դաշխարհ լցէք...

Բոլոր կենդանի էակները՝ թէ բոյսերը և թէ կենդանիները՝ ունին մի քանի նշանաւոր յատկանիշներ, որոնցով սաստիկ տարբերում են մեռած անօրգանական բնութիւնից։ Այդ յատկանիշների թուն պատկանում է անկասկած նաև բազմանալու ընդունակութիւնը։ Մեռած առարկաները ընդունակ չեն բազմանալու, մինչդեռ ոչ մի բոյս կամ կենդանի չէք գտնիլ, որ զուրկ լինէր աց ընդունակութիւնից։

Կենդանիների աշխարհում բազմանալու ցանկութիւնը կամ բնազգումը այնքան զօրեղ է, որ կարող է համեմատել միմիայն ինքնազգութեան բնազգումի հետ։ Բնչակիսի զոհաբերութիւններ չեն անում կենդանիները, որպէս զի ապահովեն իրանց սերունդների կեանքը։ Յաճախ նոյն իսկ անհատական կեանքը չէ խնայում այդ վսեմ նպատակի համար։

Բազմանալը կենդանիների շրջանում հետեանք է լինում ըստ մեծի մասին բեղմնաւորութեան։ կենդանիների ամեն մի տեսակը ունի որձեր և էգեր, վերջինների բեղմնաւորւելուց առաջանում են, նոր սելունդները։ Աական հարկաւոր է աւելացնել, որ բազմանալու այդ միջոցը՝ բեղմնաւորւելը՝ գոյութիւն ունի աւելի բարձր կազմածք ունեցող կենդանիների շրջանում, իսկ ինչ վերաբերում է ստոր կենդանիներին, նրանցից շատերը սեռ չունին, այսինքն որ և է սեռի օրգաններ նրանք չունեն, ուստի և անհնարին է բեղմնաւորութիւնը նրանց միջև։

Եթէ սեռ չկաց սոսր արարածների շրջանում, ապա ի՞նչպէս  
են բազմանում նրանք:

«Անսեռ կերպով» — ասում են գիտնականները: Երբ մի որ  
և է սոսր կենդանի զարգանում՝ է այնպէս որ այլ ևս մեծանալ չի  
կարող, նրա մարմինը ուղղակի կէս է լինում, բաժանում է երկու  
մասերի, որոնցից ամեն մէկը նոր անհատ է: Այդ անհատներից  
ամեն մէկը մեծանում է և նորից բաժանում... Անսեռ կերպով  
բազմանում են օրինակ բուսաները, սպունդները, ինֆուզորիաները և  
ուրիշները:

Այդպիսով կենդանական աշխարհում գոյութիւն ունին բազմա-  
նալու երկու ձև՝ բեղմնաւորութիւնը և անսեռ կերպով բազ-  
մանալը:

Բազմանալու նոյն երկու նշանաւոր ձևերը մենք գտնում ենք  
նաև բոյսերի շրջանում: Սոսր կազմւածք ունեցող բոյսերը բազմա-  
նում են անսեռը կերպով, իսկ աւելի բարդ և բարձր կազմւածք  
ունեցողները — բեղմնաւորութեամբ: Զրիմուների (водоросли) մի  
քանի տեսակները, բակաերիաները, սունկերը — գոքա բոլորն էլ բազ-  
մանում են անսեռը կերպով, այսինքն նրանց մարմինը կամ՝ բաժան-  
ում է սոսր կենդանիների նման, կամ թէ արտադրում է այսպէս  
անւանեալ սպորներ: Յանախ այդ բոյսերի որոշ մասերում գոյա-  
նում են անթիւ միկրոսկոպական մարմնիներ, որոնք միասին փո-  
շու առաւորութիւն են անում: Դոքա են սպորները, որոնցից ամեն  
մէկը խոնաւ տեղ ընկնելով՝ զարգանում է և նոր բոյս է դառնում:  
Սպորները ուրեմն նոյն նշանակութիւնն ունին, ինչ որ սերմերը  
բարձր կազմւածք ունեցող բոյսերի համար:

Սակայն անցնենք բոյսերի բեղմնաւորութեան երևոյթներին,  
որոնց մէջ շատ հետաքրքրական և զարմանալի բաներ կը գտնենք:

Նախ կանգ առնենք «բոյսերի բեղմնաւորութիւն» խօսքերի  
վերաց: Ի՞նչ է նշանակում այդ: Միթէ բոյսերի մէջ էլ կան արա-  
կան և իգական անհատներ կենդանիների որձերի և էգերի նման:

Հին ժամանակներում և նոյն իսկ միջին դարերում այդ հարցին  
բացասական սպառասխան էին տալիս: Այն ժամանակները նոյն իսկ  
ծիծաղելի էր թւում—սեռի գոյութիւն ենթալլրել բոյսերի շրջանում:

Սակայն սկսած XVII դարից, երբ գիտնականները սկսեցին մի

փոքր աւելի ուշադրութիւն դարձնել դիտողութիւններ անելու վերաց, իրողութիւնը փոքր առ փոքր սկսեց պարզել:

Հարցը պարզելուն ամենից առաջ օգնեց Տիւբենգենի համալսարանի պրոֆեսոր Կամերարիուսը, որը փորձերով ապացուցեց, որ բոյսերի շրջանում էլ գոյութիւն ունի բեղմնաւորութիւնը: Յայսւեց, որ իբրև բեղմնաւորութեան գործիք ծառայում են բոյսերի ծաղիկները:

Ուրեմն անթիւ քնքոյց և շքեղ ծաղիկները, որոնցով լիքն է բնութիւնը, ստեղծւած են միայն նրա համար, որ օգնեն բոյսերի բազմանալուն և առաջացնեն վերջինների անթիւ սերունդներ:

Ծաղկի կազմութեան հետ ծանօթանալու համար մտաբերենք շուշանը: Ամենքը տեսած կը լինեն այդ բոյսը և դիմեն, որ նրա ծաղիկը ունի վեց հատ սիրուն սպիտակ թերթիկներ, որոնք օղաձեւ կպած են ծաղկի հիմքից: Դոքա միասին կազմում են ծաղկի պատճեռ: Վերջինի միջից երեւում են վեց հատ երկար թելի նման օրգաններ զեղին գլուխներով. դրանց անւանում են առէչքներով շրջապատւած բարձրանում է նոյնպէս մի թելի նման օրգան, որ շատ հեշտ ջոկում է առէչքներից. դա՝ ինչպէս ասում են՝ վարսանդն է:

Ես վերև նկատեցի, որ առէչքները ունին զեղին գլուխներ: Եթէ վերցնենք մի առէչք և դիմենք նրա գլուխնը, մենք խկոյն կը նկատենք, որ դա խկաղիս մի քասկի պէս բան է զեղին փոշիով լցւած: Այդ հանգամանքն է, որ աւիթ է տել ուսումնականներին անւանել առէչքների զեղին գլուխնը փոշանդն է:

Այս երեսոյթներով հետաքրքրողը եթէ զիտերի ծաղիկները, խոկոյն կը համոզէր, որ վարսանդը ծաղկի ամենակարևոր մասերից մէկն է, որովհետեւ նրա ներքին մասումն է, որ գոյանում են սերմեր. եթէ ծաղկից պոկենք վարսանդը, ծաղկիը այլ ևս անկարող կը լինի սերմեր արտադրելու:

Սակայն զիտողութիւնները ցոյց տւին, որ ոչ պակաս գեր են կատարում սերմեր արտադրելում նաև առէչքները. բանից գուրս եկաւ, որ վարսանդի ներքին մասում սերմեր երբէք չեն գոյանում առանց առէչքների մասն ակցութեան:

Տեսնենք ինչումն է կայանում՝ առէչքների մասնակցութիւնը:

Ծաղկի բացւելուց մի որոշ ժամանակամիջոց անցած՝ ծաղկի մէջ գտնւող օրգանները համուռմ են լիակատար զարգացման, նրանք բոլորովին հասունանում են սերմեր արտադրելու համար։ Այդ ժամանակ առէքների ծայրերում գտնւող փոշանօթները պատռւում են ու դուրս թափում պեղին փոշին։ Երբ այդ փոշուց մի չնչին քանակութիւն լնինում է վարսանդի գլխին՝ (որը՝ 'ի դէպ է ասել՝ անւանուում է սպի), չի անցնում երկար ժամանակ և վարսանդի ներքին մասում սկսում են սերմեր գոյանալ:

Պարզ է, որ այտել առէքները այրական օրգան-ների դեր են կատարում, իսկ վարսանդը իդականի՝ Թողլ չկարծի ընթերողը թէ ասած ևնթադրութիւնն է, ոչ, դա իրողութիւն է՝ ասլացուցած բազմաթիւ փորձերով և զիտողութիւններով։ Ընթերցողն էլ եթէ կամենայ, կարող է սոուգել ասածներս հետևեալ կերպով։ Թողնամաս մի որ և է բոյսի ծաղիկներին, զգուշութեամբ կտրի հեռացնի նրանից բոլոր առէքները ու ծածկի այդ ծաղիկները խասով, որպէս զի միջանաները շմօտենան նրանց։ Եթէ այս բոլորը կատարուի զգուշութեամբ, այն ժամանակ խասի (կիսէց) տակ զանուող ծաղիկներից և ոչ մէկն էլ չի արտադրիլ ոչ մի սերմ, թէև լինեն նրանց մէջ իդական օրգանները—վարսանդները։

Փոխենք այժմ մի փոքր մեր փորձը։ Վոտենանք մի որ և է բոյսին և տասը հաս ծաղիկներ ընտրելով, հեռացնենք վերջիններից բոլոր առէքները, թողնելով նրանց մէջ վարսանդները, ինչպէս արել էինք առաջ։

Յետոց վերցնելով դանակով նոյն ծառի միւս ծաղիկներից մի փոքր առէքների փոշի, թափենք այդ մեր ընտրած ծաղիկներից հինգի վարսանդների վերաց, իսկ մնացած հինգ ծաղիկների վարսանդները ազատ սպահնք փոշուց։ Ուրեմն մենք այժմ ունենք տասը ծաղիկ առանց առէքների։ այդ տասից հինգ ծաղիկների վարսանդների վերաց փոշի է ածւած, իսկ միւս հինգ վարսանդները զուրկ են փոշուց։ Ծածկենք այժմ՝ ինչպէս և առաջ էինք արել բոլոր տասը ծաղիկները խասով։

Մի քանի ժամանակ այդպիս թողնելուց յետոց մենք կը տեսնենք, որ տասը ծաղիկներից հինգի մէջ սերմեր են գոյացել, իսկ

միւս հինգ ծաղիկները մնացել են անպտուղ: Եթէ լաւ նայենք. կը տեսնենք, որ սերմեր արտադրողները այն ծաղիկներն են եղել, որոնց վարսանդների վերայ մենք ածել էինք առէջքների փոշի, իսկ անպտուղ մնացել են նոքա, որոնց վարսանդները մենք զրկել էինք փոշուց:

Բուսական աշխարհում՝ մենք լսու մեծի մասին գանում ենք սեռերը միացած, միևնոյն ծաղկում՝ լսու մեծի մասին լինում են և առէջներ և վարսանդներ: Այդ դէպքում միևնոյն բոյսը ներկայանում է թէ արական և թէ իգական անհատներ: Այդ երեսցթը, այսինքն սեռերի միացումը, գոյութիւն ունի նաև կենդանիների շրջանում: կան կենդանիներ, որոնց ամեն մի անհատը միաժամանակ թէ էգ և թէ որձ: Եթերև օրինակ կարմիր է բերել ասոր կազմը՝ ւածք ունեցող որդներին. դրանց սմեն մի անհատը պարունակում է իւր մարմնի մէջ թէ արական և թէ իգական օրգանները. այդ պատճառով էլ նա ընդունակ է լինում ինքն իրան բեղմնաւորել:

Հարկաւոր է նկատել, որ սեռերի միացումը միևնոյն անհպտի մէջ (հերմոֆրոդիտիսմ), թէև ինչպէս ասացի պատահում է կենդանիների շրջանում, բայց ոչ այնքան յաճախ. սեռերի միացումը կենդանիների շրջանում աւելի բացառութիւն կը համարուի, քան օրէնք:

Ուրիշ բան է բուսական աշխարհը. այսոեղ սեռերի միացումը ոչ թէ բացառութիւն է, այլ օրէնք. ինձորենին, տանձենին, սերգեկլը, վարդենին, մանուշակը և շատ ուրիշ բոյսեր հերմոֆրոդիտներ են, այսինքն ամեն մի բոյսը միաժամանակ պարունակում է իւր մէջ երկու սեռերն էլ:

Սակայն պէտք է աւելացնել, որ, բայցի հերմոֆրոդիտ բոյսերից, կան և այնպիսիները, որոնց արական ու իգական անհատները միացած չեն, այլ գոյութիւն ունին առանձին առանձին: Եթերև ապացոյց կարող ենք առաջ բերել ամենքին յայտնի ուռենին: Եթէ ընթերցողը ուշադրութեամբ դիտի մի շարք ուռենու ծառեր, նա անշուշտ կը նկատի, որ նրանց ծաղիկները երկու տեսակ են. կան ուռենիներ, որոնց վերայ գտնուում են միմիայն առէջք աւոր ծաղիկներ. դոքա ունենալով առէջքներ (արական օրգան) միշտ գուրկ են լինում վարսանդներից և կոչւում են արական ծա-

զիկներ։ Բացի դրանցից կան և ուռենու աշնագիսի անհատներ, որոնք բոլոր ծաղիկները լինում են իգական, այսինքն նրանց մէջ լինում են միմիայն վարանդներ, իսկ առէջքներ չեն լինում։

Այդպիսով գոյութիւն ունին ուռենու առանձին արական ծառ և առանձին իգական ծառ։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ուռենու արական ծառի վերայ երբէք չեն կարող սերմեր գոյանալ, որովհետեւ նրանց վրայ չկան վարսանդներ։ Միւս կողմից իգական ուռենին էլ միայն այն ժամանակ է կարողանում վերմեր ու սրուցներ պատրաստել, երբ նրա մօտ բուսնում է արական կամ առէջքաւոր ուռենին։ Թէ ինչպէս է անցնում առէջքների փոշին արական ուռենուց իգական վարսանդների վերայ, այդ մենք կը տեսնենք մի փոքր յետոյ։

Անցեալ գարում, երբ գիտնականների մեծամասնութիւնը զեռ չէր հաւատում թէ բոյսերն էլ սեռ ունին, մեծ տպաւորութիւն արաւ գերմանացի գիտնական Գլեգիչի ձեռնարկած հետեւեալ փորձը։ Յերլինի բուսաբանական այգում, որի գերեկտորն էր Գլեգիչը, կար մի արմաւենի, որը միշտ վարսանդաւոր ծաղիկներ էր տալիս, ուրեմն իգական անհատ էր։ Բայց որովհետեւ Յերլինում չկար ոչ մի արական արմաւենի, ուստի բուսաբանական այգում գտնւող արմաւենին չէր կարողանում սերմեր արտադրել, թէև ապրում էր 80 տարի։ Վերջապէս Գլեգիչը իմացաւ, որ Լայզցիգում կայ նոյն տեսակ արմաւենու արական անհատ։ Նա իսկոյն կարգադրեց, որ Յերլին բերեն Լայզցիգի արմաւենու մի ճիւղը ծաղիկների հետ Լայզցիգիդի արմաւենու ճիւղը ստանալուն պէս, Գլեգիչը վերցըրեց մի փոքր փոշի և թափեց Յերլինի այգում գտնւող արմաւենու ծաղիկների վարսանդների վերայ։ Կարճ ժամանակից յետոյ Յերլինի արմաւենին սերմեր տւեց։

Բացի ուռենուց և արմաւենուց, կան և ուրիշ բոյսեր, որոնց արական և իգական անհատները առանձին առանձին գոյութիւն ունին։ Դրանց թւին են պատկանում նաև կաղամախին (տոպոլ) և կանեփը (կոհոռլ)։

Խօսելով կանեփի մասին պրոֆեսոր Բորոդինը աւելացնում է՝ «Իգական անհատների հետ, որոնք սերմեր են տալիս, բունում են առանձին արական անհատներ, որոնք բացառապէս առէջքաւոր

ծաղիկներ են արտադրում... թէ արական և թէ իգական անհատները զարգանում են բոլորովին միասնասակ սերմերից, այնպէս որ միանգամայն անհնարին է գուշակել թէ որ սեռի կը լինի զարգացող բոյսը, մինչև նրա վերաց չեն առաջանալ այս կամ այն (այսինքն արական կամ իգական) ծաղիկները: Այն հարցը թէ երբ և ի՞նչ պատճառներ են արտադրում բոյսերի այս կամ այն սեռը, նոյնքան քիչ է սկարզւած, որքան և կենդանիների վերաբերմամբ: Արդեօք սերմի մէջ արդէն գծւած է սեռը, թէ նա առաջանում է յետոյ որ և է արտաքին պայմանների ազդեցութեան տակը,—այդ մենք չգիտենք:

«Սակայն վերին աստիճան հետաքրքրական է այն ֆակտը, որ նորագոյն գիտողութիւնների համեմատ՝ արական և իգական անհատների թւական յարաբերութիւնը մնում է միևնոցնը, թէև արտաքին պայմանները սաստիկ տարբեր լինեն: Օրինակ Mercurialis առուս բոյսի վերաբերմամբ գտնւած է, որ 100 հատ իգական անհատների վրայ գալիս են 106 հատ արական անհատներ...<sup>1)</sup> Բնդհակառակը 100 հատ իգական կանեփին գալիս են միմիայն 86 արական անհատներ...<sup>2)</sup>:

## II

Ընթերցողին անշուշտ անցացն չէ այն հանդամանքը, որ յաճախ բեղմնաւորութիւնը տեղի է ունենում զանազան տեսակներին պատկանող կենդանիների միջև: Օրինակ բեղմնաւորութիւնը պատահում է ճագարների և նապաստակների միջև, շների և գայլերի միջև, ձիաների և էշերի միջև և այլն: Զանազան տեսակների մէջ կառարւած բեղմնաւորութիւնից առաջացած սերունդները չեն լինում կառարեալ նման իրանց մայրերին կամ հայրերին, այլ եթէ կարելի է այսպէս ասել՝ միջին տեսակի կենդանիներ են լինում, նմանւելով մի քանի բաներում հայրերին, միւս կողմերով մայրերին.

<sup>1)</sup> Ուրեմն մեծ նմանութիւն կաէ մարդկանց և ալդ բուսերի բազմանալու մէջ. մարդկագին հասարակութեան մէջ 100 տղաներին գալիս են 106 աղջիկներ... (Դա անպայման օրէնք չէ: Ծանօթ. Խմբ.):

<sup>2)</sup> Проф. Бородинъ—Процессы оплодотворенія въ растит. царствѣ. էջ 5—6.

մնչպէս օրինակ ջորին, որը ոչ կատարեալ ձի է, ոչ էշ, այլ միջին տեսակի կենդանի։ Ազդպիսի միջին տեսակ կինդանիները անւանւում են հիբրիդ (ռսերէն ասում են կամ ցիբրիդ կամ պոմքե)։

Եթէ բոցսերի շրջանում կան սեռեր, չի կարելի արգեօք նրանցից էլ հիբրիդներ արտադրել։ Փորձերը իրաւունք են տալիս զբական պատասխան տալ այդ հարցին։ Այժմ արդէն ապացուցւած է որ բոցսերը, կենդանիների նման, ընդունակ են հիբրիդներ տալու։ Հարկաւոր է միայն ինկատի ունենալ, որ հիբրիդներ պատանալու համար անհրաժեշտ է վերցնել թէկ զանազան, բայց և անպէս կաղմածքով իրարից մօտիկ բոցսեր։

Վերին աստիճանի հեշտութեամբ հիբրիդներ են տալիս զանազան տեսակ խնձորենիները, տանձենիները, սեխերը և այն։ Հիբրիդ ստանալու համար հետևեալ կերպ են վարւում։ Ենթադրենք, որ մենք ունենք խնձորենու երկու իրարից բոլորովին տարբեր տեսակներ և նրանցից ցանկանում ենք հիբրիդ ստանալ։ Այդ նպատակին համնելու համար հարկաւոր է մի տեսակի խնձորենու մի քանի ծաղիկներից կարել հեռացնել բոլոր առէչքները, որպէս զի նրանցից փոշի չթափախ վարսանդների վերայ։ յետոյ խնձորենու միւս տեսակի ծաղիկներից պէտք է դանակով առէչքներից մի քիչ փոշի վերցնել և թափել առաջին տեսակի խնձորենու վարսանդների վերայ։ Ազդպէս արւեստական կերպով բեղմնաւորւելուց յետոյ, բեղմնաւորւած ծաղիկները ծածկում են խասով, որպէս զի միջատները չժօտենան նրանց։ Մի քանի ժամանակից յետոյ արւեստական կերպով բեղմնաւորւած ծաղիկները սերմեր կը տան։ Այդ վերջինները եթէ սերմենք, կը ստանանք նրանցից ոչ առաջի և ոչ երկրորդ տեսակի խնձորենիներ, այլ հիբրիդներ կամ միջին տեսակի խնձորենիներ։ Օրինակ եթէ առաջին տեսակ խնձորենու պտուղները շատ մեծ են, իսկ երկրորդինը շատ մանր, նրանցից ստացած հիբրիդը կունենայ միջին մեծութեան պտուղներ։

Այս գործողութիւնը այժմ ահագին գործադրութիւն ունի թէ անասնապահութեան և թէ ազգեպանութեան մէջ։ անասնապահութերը և այգեպահները սաստիկ կատարելագործել են՝ առաջինները իրանց կենդանիներին, երկրորդները՝ իրանց բոցսերը՝ միացնելով արւեստական կերպով զանազան տեսակի անհատներին և հիբրիդներ ստանալով նրանցից։

Վերջին ժամանակները մանաւանդ մեծ ուշադրութիւն են դարձնում և շատ զբաղւում են խաղողի վազերից հիբրիդներ սուանալով, որովհետև վազերի հիբրիդները մեծ գործնական նշանակութիւն ունին ֆիլոքսերա հիւանդութեան դէմ կռւելում։ Յայտնի է, որ ամերիկական վազերը այնքան էլ չեն վնասում ֆիլոքսերայից, բայց տարաբաղդաբար նրանց տւած խաղողը անպիտան է։ Միւս կողմից խաղողի եւրոպական վազերը թէև լաւ պտուղ են տալիս, բայց չեն կարողանում դիմանալ ֆիլոքսերայի աւելցումներին։ Այդ գիտնականները աշխատում են արևեստական կերպով այնպիսի հիբրիդներ ստանալ ամերիկական և եւրոպական վազերից, որոնք ունենան երկու տեսակների լաւ կողմերը և զուրկ լինեին նրանց պահանջմանը միացնեն։ Այսինքն՝ լինեին դիմացկուն ֆիլոքսերայի դէմ և լաւ պտուղներ տացնուն։

Այժմ անցնենք մի ուրիշ նշանաւոր հարցին, այն է թէ ինչ միջոցներով է փոխում առէչքների փոշին վարսանդների վերայ։ Դիտողութիւնները ցոյց են աալիս, որ յաճախ մի որ և է ծառի վարսանդները բեղմնաւորելու համար առէչքների փոշին բերւում է բաւական հեռու տեղերից։ Աւշադրութեամբ ուսումնասիրելով բոցակների կեանքը գիտնականները գտան, որ փոշին տեղափոխուում է մի տեղից միւս տեղ բեղմնաւորութեան համար երկու միջոցներով։ ա) քամու և բ) միջատների օգնութեամբ։

Քամին հետեւեալ կերպով է օգնում բեղմնաւորութեանը։ Երբ որ և է ծառի ծաղիկները զարգանում են և նրանց առէչքները հասունանում են, առէչքների փոշանօթները պատռում են։ Այդ ժամանակ, եթէ քամի է բարձրանում, նա քշում տանում է փոշին մի ծառից դէպի միւս ծառերը և թափում վերջինների վարսանդների վերայ։ Դրանից յետոց բեղմնաւորութիւնը կատարւած է։ Փոշին տեղափոխուում է քամու օգնութեամբ։ օրինակ ասզատեր և ծառերի (Խօմիա), հացանատիկների և այլն։ Հասկանալի բան է, որ այն բոյսերը, որոնց փոշին քամու օգնութեամբ է տեղափոխուում, պէտք է ահազին քանակութեամբ առէչքների փոշի սպառաստեն, որպէս զի այդ փոշուց զոնէ մի փոքրիկ մասը կարողանայ ընկնել մօտակայ ծառերի վարսանդների վերայ։ Դրանով է բացատրւում, որ ասղատերն բոյսերը այնքան առէչքների փոշի են արտադրում,

որ քամի եղած ժամանակ նրանցից բարձրանում է զեղին փոշու ալբողջ ամսու:

Հատ մեծի մասին շատ հեշտ է լինում ջոկել այն բոյսերը, որոնց փոշին վորուում է քամու միջոցով. մինչդեռ վերջին բոյսերը ունենում են մանր աննկատելի տգեղ ծաղիկներ, առաջինները ընդհակառակը զարդարւած են լինում շքեղ, սիրուն ծաղիկներով: Եթէ դուք տեսնեք մի որ և իցէ բոյս գեղեցիկ աչքի ընկնող ծաղիկներով, համոզւած եղեք, որ աչք բոյսի փոշին մի անհատից տեղափոխում է միւս անհատների վարսանդներին միջատների օգնութեամբ. վարդենու, շուշանի, մանուշակի, նարզիզի և շատ ուրիշ ների փոշին միջատների շնորհիւ է անցնում մէկից միւս անհատներին:

Սնկասկած մեծ նշանակութիւն ունի այն հանդամանքը, որ միջատների օգնութեամբ բեղմնաւորւող բոյսերը լինում են աւելի զեղեցիկ գոյններով նկարած: Եթէ այդ բոյսերը չունենալին մեծ, սիրուն, աչքի ընկնող ծաղիկներ, այն ժամանակ միջատները նրանց չէին տեսնել հեռուից և չէին դալ նստիլ նրանց ծաղիկների վերայ:

Ահա թէ ինչ է ասում Զ. Դարւինը իր յայտնի «Տեսակների ծաղումը» դրածքում:

Առ ազիֆում բոյսի մի քանի անհատները արտադրում են միայն արական ծաղիկները չորս առեւքներով... իսկ միւսները արտադրում են միմիայն իգական ծաղիկներ... Տեսնելով այդ բոյսի մի արական և մի իգական ծառերը, որոնք իրարից 60 եւրդ հետու են գտնուում, ես սկսեցի զիտել խոշորացոցի տակ իգական ծառի 20 ծաղիկների վարսանդները և նրանց բոլորի վերաց գաաց փոշու հատիկներ... որովհետեւ մի քանի օրւաց ընթացքում քամին փշում էր իգական անհատից դէպի արականը, ո սոի նա չէր կարող տանել փոշին (արականից իգականին)... Բոլոր իշտ տեսած ծաղիկները բեղմնաւորւած էին մեղսուների օգնութեամբ, որոնք պատահմամբ բերել էին փոշին արական ծառից»...

Սակայն տեսնենք թէ ինչպէս են միջատները վոխում առեւքների փոշին մի ծաղիկից դէպի միւսները: Բանը նրանումն է, որ ծաղիկների մէջերբում յանախ դոյանում ու հաւաքւում է մի տեսակ

քաղցր հեղուկ, որին գիտնականները նեկտար անուն են տւել։  
Ահա այդ նեկտարի համար է որ միջառները հեռու աեղերից՝ տես-  
նելով աչքի ընկնող ծաղիկներ՝ թուշում դալիս են, որպէս զի ծծեն  
համեղ նեկտարը։ Երբ նրանք իրանց գունչը կոխում են ծաղիկի  
մէջը նեկտար ծծելու համար, նրանց մէջքը գիտչում է առեջնե-  
րի փոշանօթներին և ծածկում՝ փոշիով։ Նեկտարը ծծելուց յետոյ  
միջառը թուշում է գետի միւս ծաղիկը, էլի կոխում է գունչը  
նեկտարը ծծելու համար ծաղիկի մէջ, իսկ այդ ժամանակ այդ երկ-  
րորդ ծաղիում գանւող վարասնդը բոլորովին մէքէնացաբար քսում  
է միջառի մէջքին ու ծածկում՝ փոշիով։

Այդպէս փոխւելով մի ծաղիկից միւսին միջառ-  
ները անդադար տանում են իրանց հետ ծաղիկների  
փոշին ու թափում միւս ծաղիկների վարսանդների  
վերայ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ միջառները օգնում  
են բոյսերի բեղմնաւորութեան բոլորովին անգիտակցաբար։ Նրանց  
նորատակն է միմիայն ծծել, բայց այդ նորատակն հասնելու համար  
նրանք անդիտակցաբար մեծ օգուտներ են տալիս բոյսերին հեշտա-  
ցնելով նրանց բեղմնաւորութիւնը։

Աչ միայն ծաղիկների գոյնը այլ և նրանց պատկի մեծութիւնը  
և ձեւը կապ ունին միջառների այցելութեան հետ։ այն ծաղիկները,  
որոնց շատ յաճախում են կարճ կնճիթով միջառներ, ունենում են  
աւելի կարճ պատկիներ, որպէս զի այդ միջառների կնճիթը կարո-  
ղանաց հասնել պատկի յառակում զանւող նեկտարին։ Ընդհակառակը՝  
աւելի բարձր պակաս են ունենում այն ծաղիկները, որոնք բեղմնա-  
ւորում են երկար կնճիթ ունեցող միջառների օգնութեամբ։

Այդպիսով՝ բեյսերի բազմանալու տեսակէտից ծաղիկի ամե-  
նակարեւոր մասերը առէջքներն ու վարսանդներն են,  
իսկ պսակը, նրա գոյնը, ձեւը, նեկտարը—գրանք բո-  
լորը ունին երկրորդական նշանակութիւն, երկրորդա-  
կան ֆունկցիա—այն է գրաւել միջառներին և ապահովել վար-  
սանդների բեղմնաւորութիւնը։ Դրանով է բացարւում այն հան-  
գամանքը որ բեղմնաւորութիւնը կատարւելուց յետոյ ծաղիկի պատկի  
թառամում է ու վեր ընկնում, որովհետեւ բեղմնաւորութիւնը կա-  
տարւելուց յետոյ նա այլ ևս հարկաւոր չէ։

Այս վարդապետութիւնն է, որ կոչում է «Ծաղկի թէօրիա»։ Արը ընդունում է այժմ գիտութեան մէջ։ Այդ թէօրիայի գլխաւոր հեղինակները Նպրենդէլն ու Դարւինը են։

Եատ կարելի է, որ ընթերցողը զարմացած լինի և հարցնի, թէ ի՞նչ կարիք կայ փոշին մի բոյսից միւսներին փոխելու, երբ բոյսերը ըստ մեծի մասին հնրմոֆրողիս են. չէ որ ամեն մի ծաղկում շատ անդամ լինում են համարելու, համ էլ վարսանդը իրար կողքին կպած։ Ել ի՞նչ կարիք կայ, որ քամին կամ՝ միջատները ուրիշ սեղերից փոշի բերեն մի որ և է ծաղկի վարսանդը բեղմնաւորելու համար, երբ նոյն հենց այդ վարսանդի մօտ կապած են առէջները։ Անհամեմատ աւելի հեշտ չէր լինի, երբ ծաղկիները ի՞նքն աբեղ մնաւորւէին, այսինքն որ նրանց վարսանդները բեղմնաւորւէր իրանց մօտ գտնող առէջների փոշիով։

Նպրենդէլը առաջինը եղաւ, որ հիմնաւորապէս հետազոտեց այդ հարցը։ Նա գտաւ, որ բոյսերը՝ եթէ կարելի է ացապէս ասել՝ խորշում են ինքնաբեղմնաւորւելուց։ «Բնութիւնը՝ ինչպէս երևում է չի ցանկանում, որ ծաղկիլ բեղմնաւ որւի իր սեփական փոշիով» — ասում էր Նպրենդէլը։ Երբ այս բանը իմացաւ Դարւինը, նա ձեռնարկեց մի շարք փորձերի, որպէս զի իմանաց, թէ ի՞նչ է նշանակում, որ բոյսերը խորշում են բեղմնաւորւելու աւելի հեշտ միջոցով — սեփական փոշիով։ Դարւինի փորձերը հետեւելումն էին կայսնում։ Մի քանի բոյսերի ծաղկիները նա բեղմնաւորում էր նոյն ծաղկիներում գտնուող առէջների փոշիով, այսինքն նա ստիպում էր այդ ծաղկիներին ինքնաբեղմնաւորւել։ Դրանից անկախ նա վերցնում էր նոյն տեսակ բոյսերի մի ուրիշ սերիս և գրանց ծաղկիները բեղմնաւորում էր ոչ սեփական աց ուրիշ տալիս, երբ բեղմնաւորում են սեփական փոշիով։

Անելով ացգալիսի փորձեր Դարւինը տեսաւ, որ ի՞նքն աբեղ մնաւորւած բոյսերը առաջիս են աւելի քիչ և աւելի վատ սերմեր քան թէ նրանք, որոնք բեղմնաւորւել են ոչ սեփական փոշիով։ Կան նոյն իսկ բոյսեր, որոնք բոլորովին սերմեր չեն տալիս, երբ բեղմնաւորում են սեփական փոշի-

ով։ Ահա ուրեմն ինչ է պատճառը, որ բոյսերը խորշում են ինքնաբեղմնաւորւելուց։

Սակայն որովհետեւ բոյսերից շատ շատերը հերմոֆրոդիտներ են, ուստի և շատ հեշտ ու յաճախ կարող էր կատարւել ինքնաբեղմնաւորութիւնը, այդ պատճառով բնութիւնը գիմել է մի շարք միջոցների որպէս ովի խանգարի բոյսերի ինքնաբեղմնաւորութեանը։

Ծանօթանանք այդ միջոցների հետ։

Առաջին միջոցն կայանում է նրանում, որ միեւնոյն ծաղկի մէջ գտնւող առէջքներ և վարսանդը միաժամանակ չեն հասունանում։ կան իրաւ բոյսեր՝ ինչպէս *Geranium pratense*, *Malva*, *pelargonium* և այլն, որոնց առէջքները աւելի վաղ են հասունանում քան վարսանդը։ Երբ մի որ և է ծաղկում առէջքները հասունանում են ու նրանց փոշանօթները պատռւելով դուրս են թափում փոշին, այդ ժամանակ նոյն ծաղկի վարսանդը գեռ լիովին զարգացած ըլլինելով՝ անկարող է լինում օգտական իր մօտը գտնւող առէջքների փոշուց, իսկ երբ նա վարսանդը հասունանում է իր մօտ գտնւող առէջքների փոշանօթներում, էլ փոշի մնացած չի լինում, այնպէս որ վարսանդը ստիպւած է լինում բեղմնաւորւել ուրիշ անհատների փոշիով, քամու կամ միջատների միջոցով բերւած։

Հակառակ երեոյթը մենք տեսնում ենք *Plantago media*, *parietaria diffusa*, *Lucula pilosa* բոյսերի շրջանում։ սրանց մօտ էլ վարսանդն է աւելի շուտ հասունանում։ այնպէս որ երբ մի որ և է ծաղկի վարսանդը պատրաստ է լինում բեղմնաւորութեան համար, նոյն ծաղկի առէջքների փոշանօթները լինում են փակւած, ուստի և անկարելի է գտննում ինքնաբեղմնաւորութիւնը։

Երկրորդ միջոցը ինքնաբեղմնաւորութեան դէմ հետեւալն է։

Մի քանի բոյսեր, որոնց թւին պատկանում է և *Primula*՝ տալիս են միշտ երկու առասկ ծաղիկներ։ Զանազանութիւնը նրանցում կայանում է նրանում, որ ծաղիկների մի առակում վարսանդներն են շատ երկար, իսկ առէջքները՝ կարճ։ Այդ հանգամանքը խանգարում է մի որ և է ծաղկում գտնւող վարսանդին բեղմնաւորել նոյն ծաղկում գտնւող առէջքների փոշիով։

Բացի դրանից կան մի շարք բոյսեր, ինչպէս մանուշակ, *Aris-*

tolochia՞ն, Orchis և այլն, որոնց մէջ վերին աստիճան զարմանալի խոչնդոսներ են զբւած ինքնաբեղմնաւորութեանը խանգարելու համար։ Սակայն այդ խոչնդոսների վերայ ես կանդ չեմ առնիլ, որովհետեւ նա մեզ շատ հեռու կը տաներ։

Հասկանալի բան է, որ շատ անգամ մի որ և է տեսակ բոյսեր վարսանդների վերայ թափւում է և բոլորովին տարբեր տեսակ բոյսի փոշին։ չէ որ մի որ և այգում ապրում են շատ բոյսեր, և երբ քամի է բարձրանում, նա փոշին մի բոյսից թափում է նրա մօոր գտնւող բոյսի ծաղիկների վերայ առանց ու շաղրութիւն դարձնելու թէ նրանք մէկ թէ զանազան տեսակների են պատկանում։ Դիտողութիւնները ցոյց են տալիս, որ երբ մի որ և է բոյսի ծաղիկների վերայ թափւում է բոլորովին տարբեր տեսակ բոյսի փոշի, այդ վերջինը ոչինչ ներգործութիւն չի կարողանում անել վարսանդի վերայ։ այս գէպքում բեղմնաւորութիւն չի կատարւում։

Իսկ երբ մի որ և է բոյսի վերայ թափւում է թէև ջոկ, բայց էլի կազմւածքով մօտիկ տեսակի փոշին, այն ժամանակ բեղմնաւորութիւնը կատարւում է և զրանից առաջանում են հիբրիդներ, որոնց հետ մենք արգէն ծանօթ ենք։

### III

Ինչ որ մինչև այժմ պատմեցի, բոլորը՝ վերաբերում է բարձր կազմւածք ունեցող բոյսերին, այն է ծաղկաւոր բոյսերին։ Բայց յայտնի է, որ բեղմնաւորութիւնը կատարւում է նոյնպէս և անծաղիկ բոյսերի շրջանում։ Անծաղիկ բոյսերից միայն ամենասոր կազմւածք ունեցողներն են զուրկ սեռերից այդ պատճառով բազմանում են անսեռը կերպով։

Հետաքրքիր է բեղմնաւորութիւնը ջրիմուռների շրջանում։ Ջրիմուռներին անկասկած տեսած կը լինի ընթերցողը, դոքա այն կանաչ թելի նման բոյսերն են, որոնք ապրում են գետերի մէջ գտնւող քարերին կալած։ Յաճախ միեւնոյն քարին կպած են լինում ջրիմուռների բազմաթիւ թելեր։ Ջրիմուռներից մի քանի տեսակներն էլ ապրում են ձահիճներում, կազմելով կանաչ կենդանի կեղե հոսած ջրի երեսին։ Այդ վերջինները կպած չեն լինում որ և է պինդ մարմնի, այլ ազատ լողում են ջրի վերայ։

Սկսենք *Oedogonium* կուտող ջրիմուռից: Դա ունի կանաչ թելի նման մարմին: Եթէ այդ վերջինին դիտենք, խոշորացուցի տակ, մենք կը տեսնենք, որ *Oedogonium* թելը բաղկացած է առանձին օգակներից, որոնց ուսումնականները անւանում են «խորշեր» (ΕΛΕΥΘΕΙΑ): Սիկրոսկոպը ցոյց է տալիս, որ ոչ միայն ջրիմուռները այլ և առհասարակ բոլոր բոյսերի մարմինը բաղկացած է խորշերից: Ինչպէս մի որ և է տուն կազմւած է անթիւ մանր մասերից — ազուռներից, նոյնպէս և բոյսի մարմինը կազմւած է բազմաթիւ մանր մասերից — խորշերից:

Այդպէս ուրեմն *Oedogonium* թելը բաղկացած է մի շարք իրարից կպած խորշերից: Սկզբում այդ վերջինները ունենում են միենոցն տեսքը, այնպէս որ թելը լինում է հաւասար հաստութեան ամեն մի մասում: Բայց շուտով բանը փոխում է: Թելը կազմող խորշերից մի քանիները սկսում են ուռչել, մեծանալ և գնդակածել տեսքեր են ընդունում այդ գնդակածել խորշերը: Որոնք անւանւում են իգական, և կատարում են յետազայ ժամանակները նոյն գերը, ինչ որ վարսանդները ծաղկաւոր բոյսերի շրջանում:

Իգական խորշերի կազմւելու ժամանակ մի երեսյթ էլ է կատարում *Oedogonium* մէջ. Թելը կազմող խորշերից մի քանիները — ամենափոքրիկները ենթարկելում են նոյնպէս մի ինչ որ փոփոխութեան, որից յետոյ նրանց թաղանթը պատուում է և նրանց միջից դուրս են գալիս մանր կոլոլ մարմնիկներ, որոնք ազատ կերպով լողում են ջրում: Այդ մարմնիկները *Oedogonium* ի արական տարրն են կազմում և յետազայ ժամանակներում կատարում են նոյն գերը, ինչ որ ծաղկաւոր բոյսերի առեւքների փոշին: Երբ *Oedogonium* ի արական մարմնիկները լողում են ջրի մէջ, նրանք բոլորովին կենդանիների տակաւորութիւն են անում: Մի փոքր լողալուց յետոյ այդ մարմնիկները սկսում են մօտենալ *Oedogonium* թելի իգական գնդակածել և ուռած խորշերին, որոնք ծածկւած են լինում հաստ թաղանթով: Վերջինը փոքր ժամանակից յետոյ ծակւում է, կազմւում է փոքրիկ մուտք, որի միջով մտնում է արական մարմնիկը իգական խորշի մէջ ու ձուլում վերջինի հետ: Դրանով վերջանում է բեղմնաւորութիւնը: Մի քանի ժամանակ անցած, բեղմնաւորւած իգական խորշը զարգանում է և տալիս *Oedogonium* նոր անհատ:

Սի փոքր տարբեր կերպով է կատարւում բեղմնաւորութիւնը  
Voucheria sessilis կոչւած ջրեմուռի մէջ։ Դա նոյնպէս երկար  
կանաչ թելի նման մարմին ունի։ Որոշ ժամանակ Վոշերիայի միեւ-  
նոյն թելի վերաց առաջանում են երկու փոքրիկ ուռուցքներ, որոնք  
շուտով աճելով բաւական երկարանում են։ Նրանցից մէկը սկսում  
է հաստանալ և շուտով գնդակի ձև է ստանում—դա ապագայում  
պէտք է իդական տարրի-վարսանդի դերը կատարի։ Միւսը մնում է  
ընդհակառակը բարակ, կարճ ժամանակից յետոյ նրա ծայրը սկսում  
է կռամնալ դէպի գնդակաձև աւելածքը։ Միւնոյն ժամանակ նրա  
կռացած ծայրում գոյանում են բազմաթիւ մանր մարմնիկներ,  
որոնք պատռում են իրանց թաղանթը և շտապով ժողովւում գըն-  
դակաձև (իդական) աւելածքի շուրջը։ Դրանից յետոյ նոյն մարմ-  
նիկներից մէկը կամ մի քանիսը մտնում են գնդակաձև աւելածքի  
մէջ և ձուլում նրա հետ։

Բեղմնաւորութիւնը կատարւելուց յետոյ գնդակաձև աւելածքը  
բաժանում է Վոշերիայի թելից, առանձին կերպով զարգանում է  
և տալիս Վոշերիայի նոր անհատ։

## ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

(Պատահօսութիւն, կարդացւած 20-ն մայիսի 1893 թ. Վարժուհիների եւ Պատիարակչութիների Ընկերութեան մէջ Թիֆլիսում):

ՍՈՖԻԱ ԵՐԿԱՅՆԱՐԱՋՈՒԿ-ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

II

Դ Պ Ր Ո Յ Ը

Ինձ թւում է թէ ամեն մի երեխայի նոյնքան անհրաժեշտ է գովրոցը, որքան և լաւ ու առողջարար անունդը: Ինչպէս առողջ սնունդով երեխան ամրանում է ֆիզիկապէս և առողջութեան հիմքն է գնուում, այնպէս էլ գովրոցը նրան հնարաւորութիւն է տալիս ամրացնել բարոյական և մտաւոր կողմերը և նրանով հիմք է գնուում ապագայ քաղաքացու և հասարակական գործիչի համար: Ես կարծում եմ, որ ով չի փորձել գովրոցական կեանքը, նա չի կարող լաւ հասարակական գործիչ դառնալ: Դուք ու ուշոք է շարունակի ծնողների սկսածը, և գովրոցական գործը այնպէս պէտք է, դրւած լինի, որ լնտանիքից գովրոց անցնելը երեխի համար շատ զդալի չլինի: Սկզբնական գովրոցի առաջին և զլիստոր կոչումը հէնց նրանում պիտի կայանայ, որ, լնտանիքից յետոյ, ուր խիստ կարգապահութիւն (գեսցիսլինա) չէր պահպանուում և ուր երեխան

<sup>1)</sup> Տես «Մուրճ» № 7—8:

«իւրայիններից» դուրս ոչոքին չէր ճանաշում, նա նախապատրաստի աւելի բարձր գաղրոցը մտնելու։ Դպրոնումն է, որ երեխի առաջ նկարում է հանրային կեանքի պատկերը։ Առաջին անգամ նա տեսնում է կազմակերպւած, պատւիրած, նախադիտած մի կարգ։ Մեզնից ով չի ցիշում գաղրոցական առաջին տպաւորութիւնները? Ով մեզնից չի վրդովել առաջին անգամ մերձենալով այն խորհրդաւոր շինութեանը, որ այնքան ախորժելի և լաւ բաներ էր խոսանում, կամ՝ որը այնքան սարսափելի էր թւում։ Երեխի ամբողջ արամագրութիւնը, գաղրոցը մտնելիս, կախւած է ծնողներից։ Եթէ քիչ է մնում որ օրորոցից արդէն կրկնեն թէ ասպասիր, կը տանք ուսումնարան, այնտեղ քեզ ցոյց կը տան», — այն ժամանակ, ի հարկէ, խեղճ երեխերքը արդէն միմիայն գաղրոց խօսքից այնպիսի սարսափի մէջ են ընկնում, որ մարդու ցաւն է գալիս նրանց վրայ նայել անգամ։

— Ինձ շատ է ասել մայրիկը (պատմում է իմ սաներից մէկը), թէ չես ուզում այս բանն անել, ես քեզ էգուց և եթ ուսումնարան կը տամ։ Ինձ չէր կարելի ուրիշ բանով վախեցնել քան ուսումնարանով։  
— Ինչու, հարցնում եմ ես։

— Ենդուր որ տանը մի գւարճութիւն ստացած ժամանակ, թէ մայրս թէ հայրս խկոյն վրայ են բերում թէ Շու, Սաշա, գաղրոցում այդ քեզ չեն թողնիլ. եթէ այնտեղ քո քէֆի բաներ անես, կամ քեզ տուն գալ չեն թողնիլ, կամ կը փակեն մութը կարցերում։ — Ես յիշում եմ այն երեկոն, երբ մայրիկս հայրիկի հետ վճռեցին յաջորդ օրը ինձ ուսումնարան տանել։ Երբ հայրիկս դուրս եկաւ ունեակից, ես ընկայ մօրս վզին և աղաչում-պաղատում էի ինձ ուսումնարան չուզարկել։

— Զի կարելի, չի կարելի, մատազ, դու պէտք է ամեն բանի սովորես, պատասխանեց ինձ մայրիկս։

«Եւ ամբողջ գիշեր ես չկարողացայ քնել Ինձ թւում էր թէ ծնողներս ինձ այլ ևս բոլորովին չեն սիրում ու ուզում են շուտով ինձնից ձեռք վերցնել։ Գիշերը ես դել էի տալիս և սարսափելի երազներ էի տեսնում, թէ իբր ես երեխաների մէջ եմ, որոնք ամեն կողմից ինձ վրայ են յարձակում, ինձ կոխուում են, կրծոսում և այլն»

Եւ իրօք ես յիշում եմ առաջին Փրազը, որ արտասանեց նա դպրացը մտնելիս՝

—Եհ ես ձեզնից չեմ վախենում!

Տւեցին զանդը գասատուն մտնելու:

—Դէհ, Սաշա, կերթաս գասատուն?

—Ոչ, ոչ, որ սպանէք չեմ գնալ: Լսել չեմ ուզում և երբէք գասատուն չեմ մտնիլ!

—Եհ, թէ որ չես ուզում, ոկի հարկաւոր էլ չէ: Մնացիր այսեղ, թէ որ սիրադ այզպէս է ուզում:

Դասատուն մտնելուց առաջ ես նրան տալիս եմ Շուբերտի «Կենդանիների թագաւորութիւնը» և, իբր ծանօթի, ասում եմ՝ «Սաշա, հոգիս, այս գիրքը պահիր, մինչև որ գասատունից ես զուրս կը գամ, կամ տար վերև ու գիր սեղանիս վրաց: Երեխան վերցնում է գիրքը առանց խօսք ասելու և մի կողմ է քաշւում: Անցնում է մի քանի րոպէ, և Սաշան կամաց-կամաց մօտենում է գասարանին: Սկզբում ներս է նայում պատուհանից, յետոյ մերձնում է զսան, և յետոյ տես թէ ինչպէս մեր ֆիլոսոփան կամաց քայլերով մօտենում է սեղանին:

Խայց պատահում է և աւելի վատը: Երբեմն աջնպիսի բզաւոցով ու աղմուկով են ներս բերում երեխին, որ մարդ կարող է մոտել թէ նրան մորթում են:

«Լսեցէք, թէ որ դուք բարի էք, թէ որ դուք լաւ էք, թողէք որ տուն զնամ», բղաւում է նա որքան ոյժ՝ պատում է, թաւլւելով գետնի վրաց և ոսները թափութափ տալով:

Յանախ հէնց ծնողներն են ստիպւած լինում տուժել իրանց սխալների համար: Յիշում եմ որ մի երեխաց ամեններին չէր կարողանում ընտելանալ ուսումնարանին: Նա իւր մօրաքրոջը, որ 50-ին մօտ կին էր, այսպիսի պայմանն էր զնում: «Թէ որ դու հետո կը նստես գասատան մէջ,—ես էլ կը նստեմ: Կը հաւատաք որ այդ կինը ստիպւած եղաւ մի ամբողջ ամիս երեխաների հետ միասին գասատանը նստել ?!

Զարմանալի է որ ծնողները չեն խոստվանում որ, այդպէս վախիսեցնելով, նրանք խանդարում են երեխաների առողջութիւնը և դանդաղեցնում են ուսուցչի ու երեխի գործը: Ախար որքան

կոխւ է հարկաւոր, մինչև որ երեխան բոլորովին կընտելանայ!

Միս կողմից, որքան դուրեկան է տեսնել, որ երեխան չի նախապաշարւած ամեն տեսակ հերիաթներով դպրոցի մասին և չի զինւորւած դպրոցական բոլոր կարգերի դէմ։ Որքան սիրուն ժպիտով նա խոնաւում է երեխաների ամբոխի մէջ և ինչ հաճութեամբ նա տնաղում է նոր դէմքերը ու նոր կարգերը։ Ամենաչնչին մի բան, երեխաների հանապեսները, ուսուցչի կամ վարժուհու նկատողութիւնը, ացդ բոլորը նրա դէմքին ժպիտ է բերում։

—Պետեա, ասում է չորս տարեկան երեխան իւր մեծ եղբօրը, ուրախութիւնից թռչկոտելով. գիտես, ինձ ընդունեցին. ես մտայ!

Պէտք էր տեսնել թէ որքան հանդիսաւոր կերպով նա մտաւ դպասառունը և բարձրագոչ յայտարարեց՝ «Ես գեռ կը տեսնեմ թէ դուք ինչ էք անում, իսկ յետոց ես էլ կը նստեմ»։

Այս, ուրախութեան բաղկաւոր և անփոխարինելի զգացմունք ուսումնարան մտնելիս:

Ախար չէ որ ացդ փոքրիկ մարդը պէտք է ձեւք վերցնի բոլոր եսասիրական զգացումներից, հէնց որ դպրոցը մոռաւ։ Նա մի փոքրիկ քաղաքացու իրաւունք է ստանում։ Նա պէտք է ուրախանաց և վրդովեի ոչ միայն իրա համար, այլ և ուրիշների համար։

Շատ անգամ հարց են տալիս թէ ուսումնարանը պէտք է արդեօք բարոյակրթական նպաստակներ դնի իրան։

Լաւ կազմակերպւած դպրոցը, ասում է Նմիտ, պէտք է իրան նպաստակ դնի փոքրիկ էակներին սովորեցնել ժամանակի և տեղի կարգը, կրթի աշխատանքի ընդունակութիւնը, մտցնի լնկերականութեան, աշխատաղ մարդու և լնկեր-մարդու դաղափարները։

Անկասկած է որ դպրոցը չի կարող ունենալ այնքան լայն աղղեցութիւն երեխի վրայ, որքան ընտանիքը և շրջապատը, բայց և այնպէս նա ահազին նշանակութիւն ունի մարդու կեանքի համար։ Քիչ է պատահել որ դպրոցը համարեա վերաստեղծել է երեխաներին, առել է նրանց առողջ ուղղութիւն և մինչև անգամ իւր բարերար ներգործութիւնով թափանցել է լնտանիքի մէջ և վերաստեղծել է նոցա շրջապատը։

«Մեր գործն է երեխաներին դիտութիւններ տալ, ասում են մի քանի հանկավարժներ. իսկ կրթութիւնը—ծնողների գործն է»։

Խսկ եթէ ընտանիքը չի կրթում? Եթէ նա, զգալով իւր անկարողութիւնը, ուղղակի յայտնում է թէ որ կարողանամ ինքս կրթել, ձեզ չէի տալ երեխիս, նրան ինձնից չէի կորիլ:

Ոչ, այժմ, մեր հասարակական պայմանների մէջ և ներկայիս ընտանիքների սկզբունքներով, ինձ թւում է թէ դպրոցը իւր վրայ պէտք է առնի կրթութեան գործը: Դպրոցում ոչ միայն պէտք է արթնանան բարոյական հասկացողութիւնները, այլ և զարգանան և ամրանան սրանք:

— Երբէք չեմ մոռանալ այն սրտալի և անկեղծ զրոյցները, որ մենք անում էինք մեր ուսուցիչ-դաստիարակ Կ.-ի հետ, պատմում է երիտասարդ մանկավարժներից մէկը: Եւ ինչպէս օտարոտի կերպով կցւեց մեր բարեկամութիւնը: Առաջ նա ինձ հետ այնպէս էր, ինչպէս բոլոր միւս աշակերտների հետ. բայց մի դէպք մեզ իրար մօտեցրեց: Ես 15 տարեկան էի և չորրորդ դասատանը ու ես ինձ արդին չափահաս մարդ էի կարծում: Ես ոչ-աղքատ ծնողների որդի էի, շատ երես տւած: Առհասարակ պէտք է ասած որ ամբողջ ընտանիքը մի խառնութիւնոր բան էր ներկայացնում: Հայրս մի զարհութելի հրէշ ու բռնակալ էր. մայրս թուզ, ծոյլ և բնաւորութիւնից զուրկ մի կին, որը ոչ մի նշանակութիւն չունէր տան մէջ: Ես, իբր անդրանիկ տղայ, պարտք էի համարում ամեն բանում հօրս հետեւել և նրա օրինակով ես բռնութիւններ էի դործ դնում եղբայրներիս ու քրոջս վրայ: Աւելորդ եմ համարում թւել իմ բոլոր մոլութիւններս, որոնք հետեւանք էին մեր ընտանիքի սանձարձակութեան, կ'ասեմ միացն, որ ես 14 և նոյն իսկ 13 տարեկանից սկսած իմ պարտքն էի համարում ժամանակիս մեծ մասը տանից գուրս անցկացնել՝ բուլւարում, Մուշտայիլում, բեստորանում, երեկոյթներում և այլն: Կը հաւաքւեինք ընկերներովս ամբողջ խմբով, և չափիր ու չափիր փողոցները! Մի անգամ, ինչպէս պատահնեց, երեկոյեան ժամը 7-ին, չնկատելով իմ ետուից հսկող դտատիարակիս, մտայ բեստորան բիլեարդ խաղալու: Նոր էի պատրաստւել խաղը սկսելու, և յանկարծ բացւում է գուռը և, ոհ սարսափ, դաստիարակս առջևս կանդնած: Կիյլ (խաղալու փայտը) գէն զցեցի ու փայտ կարած մնացի: Էլ ինչպէս անեմ, ուր գնամ, մտածում եմ եւս Խսկ նա, բոլորովին հանգիստ, կարծես ինձ համար

չեր ներս մտել, մօահցաւ ինձ ու հարցրեց, — «իսկ դու խաղալ գիտի՞սա՞» — Ես լսում եմ և արձանի նման մնում եմ կանգնած:

— Բանդ ինչ է կտրւել՝ որ այսպիսի կեղառն տեղեր ես մոնտում, ասում է նա:

— Ես... միայն այսօր, ասում եմ ես, դողից բռնւած:

— Դէ զնանք, զնանք այսուեղից: Եւ թևանցուկ բռնած նա ինձ դուրս տարաւ րեսուրանից: Մենք դուրս եկանք փողոցը:

— Ներեցէք, Կ. Պ., ես այլ ես երբէք չեմ անիլ գիտեմ, որ այսօրւայ համար ինձ հասնելու է:

— Դէ սրանից աւելի վատ չի լինելու, ասաց նա ծիծաղելով, բայց այնպէս որ դող անցկացաւ մորմնովս:

— Եսկ հիմա ուր պիտի գնաս. բուլար, թէ նորից րեսուրան? Աւելի լաւ է զնանք մօտս թէի, ասաց նա ու տարաւ հեալ:

Ճանապարհին ես մտածում էի թէ տունս քանդւեց: Բայց հէնց որ գաստիարակիս տունը մտայ, նրա ընտանիքը, երեխանները, համեստ սարք ու կարգը ինձ վրայ կախարդիչ տպաւորութիւն արեցին:

— Տէր-Աստւած, մտածեցի ես, տեսնելով նրանց ընտանեկան բաղդաւորութիւնը և հանգստութիւնը, ինչ անդունդ այս տան ու մերի մէջ: Մենք թէի խմեցինք, խօսեցինք, և այդ ամենը ազնքան պարզօրէն որ կարծես ոչինչ չէր պատահիլ:

Թէից յետոյ նա տարաւ ինձ իւր կարինէտը և երկար-երկար խօսեց հետաւ իւր խօսելու բնական ձևով նա միանգամից արամազրեց ինձ դէպի ինքը և դրդեց ինձ դէպի ճիշդ խօստվանութիւն: Ժամը 10-ն էր, որ ես նրանցից դուրս գնացի:

Կարծես յանկարծ վերածնեցի: Ես ուզում էի շուտ հասնել տուն ու ամենքի, ամենքի վզովն ընկնել:

Հայրս ինձ հանդիպեց յիշոցով, ըստ սովորականին, իսկ ես, որին բաւական էր մի խօսք ասել՝ տասը ստանալու համար, — ես լռեցի: Գլխումն ամեն ինչ խառնւեց, ես չէի կարող որ և է բանի վրայ մտածել, բայց սիրոս այնպէս հանգիստ էր, այնքան լաւ էր! Յաջորդ օրը ես գնացի ուսումնարան բոլորովին այլ տրամաչքութեամբ: Ուսուցիչը ներս մտաւ լուրջ, յօնքերը կիտած, թէկ դասը բաւական ուրախ անցաւ: Դասից յետոյ, կորիկորով անցնելով, նա ժպտաց և զլուխս շոյեց: Այդ ժողիաը ինձ շատ բան ասաց:

Այդ օրից ես սկսեցի յաճախել նրա մօս։ Մեղանում սկսւեցին շաբաթ՝ օրւայ երեկոյթներ և ամեն տեսակ խօսակցութիւններ թէ դասարանի մէջ և թէ նրա տանը ։ Ես նպառակ զբեցի զբաղւել մեր ընտանիքի հետ, պատրաստել քրոջս և նրան գուրս բերել տգիտութեան դրութիւնից։ Քոյրս այժմ անկախ անձն է, և ընտանիքը կարող է շատ բարեկիրթ առւն համարւել։

Այս, 16 տարեկան հասակում զրկւելով հօրից, նա իւր տան գլուխ անցաւ։ Առանց չափազանցի կ'ասեմ, որ հիմա նա կարող է օրինակելի հայր և օրինակելի դաստիարակ լինել։

Մեծ ցաւով պէսոք է ասեմ, որ այժմ համեմատապէս քիչ են այդպիսի դաստիարակներ կամ դաստիարակչուհիներ, որոնք հետաքրքրւեին երեխի ներքին աշխարհով։ Դաստիարակներից, մարդ թէ կին, ամեն մէկը իրօք այն հայեացքն ունի թէ մեր գործը միայն դիտութիւն տալն է, և իրան մի քանի քայլ հեռու է պահում անից։

—Գիտես, մամա, այսօր առաջին անգամ ժապաց մեր ուսուցիչը, պատմում է աղջիկը իւր մօրը։

—Զարմանալի է թէ ինչու ես ոչ մի բանի մասին չեմ կարող խօսել Կ-ի հետ. ես բոլորովին ինձ կորցնում եմ և համբ եմ կը առում, երբ նրան հանդիպում եմ որ և է հասարակութեան մէջ, պատմում է կուրսը նոր աւարտած մի պատանի։

Պատահում է նաև, որ գալոցը ոչ միայն չի ուղղում երեխի պակասութիւնները, այլ և կոպիտ հալածանքով և անտաքտ վարմունքով կրկնապատկում է նրա պակասութիւնները և չարացնում է նրան նախ ուսումնարանի, աստ և ամբողջ մարդկութեան դէմ։ Ծնողների և մանկավարժների բոլոր անհեթեթ պահանջները սկսում են երեխի ուսումնարան մանելու օրից։ Մէկ կողմից՝ ծնողների անկարգ սրահանջները և անհասկացողութիւնը դպրոցի նշանակութեան մասին. միւս կողմից մանկավարժների անսաքտութիւնները։

Ծնողների պահանջների մասին ես արդէն նկատեցի յօդւածիս առաջին մասում։ Իսկ ինչ մանկավարժներին է վերաբերում—նրանք շատ յաճախ անտես են առնում երեխի անձնաւորութիւնը։ Զի կարելի մերձենալ երեխին կը թութեան միւնոյն տեսակ ձևերով. մէկի վրայ ազգում է շոյելը, միւսի վրայ՝ խստութիւնը. մէկի հետ ամեն

ինչ կանես զիջողութիւնով, միւսի վրայ կը ներգործէք միայն հաստատակամութիւնով։ Աշխոյժ և զիւրազգաց երեխայից կարելի է գուրս բերել ոչ ոքի վրայ չվտահացող ու յամառ երեխայ և սպանել նրանում սմեն լաւ բան, որով բնութիւնը նրան օժտել է։ Լուրջ, խորհող, զարգացած երեխին այնպէս կարելի է խելքից հանել անհիթեթ պահանջներով, որ նա կը դառնայ ցրւած, անուշաղիր, անտարբեր, և զրա հետ միասին կը կորչէն նրա մտաւոր ընդունակութիւնները, կը փչանայ բնաւորութիւնը, կը թուլանայ կամքն ու եռանդը։

—Գիտէք, ինձ շատ ծանր է գալիս, որ իմ որդու մէջ մշակւել են ինչ որ օտարուոի հայեացքներ մարդկանց վրայ, գանգատւում է ինձ կրթւած հայրերից մէկը։ Համաձայնւեցէք որ մեր ընտանիքը ամեն բան անում է, որ երեխաների կամքը չճնշւի և նրանք հոռերեսներ չգուրս գան։ Ես գրականապէս գալիս եմ այն եզրակացութեան, որ դպրոցն է նրանց վրայ այդպէս ազգել։ Ինչպէս էք հաւանում այն, որ նա իւր մօրը այսպիսի բան է յայտնում։

—Մայրիկ ջան, ինձ թւում է թէ վարժուհիները, դաստիարակները, ուսուցիչները այնպիսի մարդիկ չեն ինչպէս ամենքն են։ Նրանք չգիտեն հանաք անել, ուրախանալ, խօսել ուրիշների պէս։ Ամենքն էլ ինչ որ տժգո՞ն և բարկացկոտ մարդիկ են, կարծես ամեն բան, որ կայ, ուրիշ տեսակ պէտք է լինի։ Երբէք չեմ ցիշում թէ մեր ուսուցիչը մեզ հետ խօսեր կամ ծիծաղէր։ Երբեմն կ'ասի թէ դէ լաւ կորիր—բայց այն ձեռվ, որ վախենում ես թէ իրօք չկորչես աշխարհքի երեսից։

Եւ կամ գանգատուում է ձեզ մի մայր։—Երեխաների պատճառով ես չեմ կարողանում որ և է տեղ գնալ, զրկում եմ ինձ ամեն բանից, հեռացնում եմ նրանց աւելորդ խօսակցութիւններից ու վէճերից, աշխատում եմ առողջ ուղղութիւն տալ նրանց, տեսնելով նրանց մէջ միայն ուրախը և լուսաւորը։ իսկ դպրոցից նա ինձ մօտ այնպիսի խաբարներ է բերում, որ չգիտես ինչ անես։ Զարմանում եմ որ մեր ուսուցիչներից շատերը մանրակրիտ ձեւասիրութեան հետ միասին թոյլ են տալիս իրանց ամենքի հետ այնպիսի մտերմութիւններ, որոնք եթէ մէկերի համար հաձելի են,

միւսների համար անտանելի են: Գիտէք, մինչև հիմա էլ իմ տղէն ուշքի չի եկել անզգոյց և բաւականի անվայել նկատողութիւններից, որ անում են նրան ուսումնարանում:

Դպրոցի երկրորդ դաստիարակիչ միջոցը - ուսումն է: Ուսումը պէտք է ազնւացնող և դաստիարակող աշխատանք լինի երեխի կեանքի համար: Ուսումը այն ժամանակ միայն դաստիարակող նշանակութիւն ունի, երբ տպւած նիւթը բաժանւած է այնպէս որ համապատասխանի երեխի զարգացման որոշ աստիճանին: Դասը պէտք է կարելիին չափ ամբողջացած լինի: Այսպէս իսելացի կերպով դասաւորելով ուսման նիւթը, կարելի է երեխաների վրայ բոլորովին բնական ճանապարհով սպառւաստել շատ բարոյական յատկութիւններ:

Տարաբախտաբար իրականացնել այդ բանը միշտ կարելի չի լինում, մանաւանդ մեր հասարակական պայմանների մէջ: Այդ մանաւանդ նկատելի է տարրական ուսումնարանում:

Տարրական դպրոցը մտնում են 6, 7, 8 տարեկան հասակում (իսկ եթէ նրա հետ կից կայ մանկական պարտէզ - նաև 4, 5 տարեկան): Ֆիզիկական զարգացման նկառմամբ, մանաւանդ քաղաքի երեխաները մեծ մասամբ հիւանդ սպուղներ են, որոնք, բացի ժառանգական հիւանդութիւններից, կրում են նաև սկզբնական անփոյթ կրթութեան հետեւանքները:

Նշանաւոր է զանազանութիւնը գաւառականների ու քաղաքացին երեխաների մէջ:

Առաջինները - առողջ, աշխոյժ, մեծ մասամբ ընդունակ, - դրանք իսելքին զօր չառող մայրերի զաւակներ են: Երկրորդները՝ գունատ, սակաւարիւն, անսուարեր և սաստիկ յոզնած երեխաներ են: Ոկքենական (տարրական) դպրոցը պէտք է ներկայացնի աշխատանք և հանգստութիւն: Նա պէտք է միջնակարգ դպրոցների նախադուռը լինի: Այնուեղ պէտք է բարոյական մարդու հիմք դրւի իսելացի կրթութեան միջոցով, այսինքն ացգոտեղ պէտք է երեխի մէջ արթնանան բարոյականութեան առաջին գաղափարները...

Մեր պայմաններում մեծ մասամբ մեր դորձն է լինում ոչ թէ երեխաներին կրթել, այլ քիչ է մնում օրորոցից սկսած պատրաստենք նրանց ուսումնարանի համար: Ծնողները չեն պահանջում, որ

Նրանց տրւի ամենալաւ ու առողջ զարդացում; որ կրթւեն նրանց մարմի, հոգու և սրտի բոլոր կողմերը, —ոչ, ծնողների միակ խընդիրքն է՝ զիմնազլ մտնելու. կանդիպատ թիւեն իրանց երեխաները: Եերում են 6 կամ 7 տարեկան մի ինչ որ թոյլ, անզարդացած երեխայց, որը երկու խօսք իրար հետ կազել չգիտէ, և պահանջում են որ մի տարում պատրաստւի զիմնազլ մտնելու: Որքան պէտք է խօսեա, որ հասկացնես թէ նրանց թոյլ երեխան չի կարող տանել զիմնազական աշխատանքները և պայմանները:

Մեծամանութիւնը մի՛ իրէալ ունի միայն — համազգիստը և պատրաստական գասարանը:

— Օհ, փառք Ասութու, ասում է ձեզ բոլորովին գոհ վարժուհին, վերջաղէս իմ փոքրիկները ճանապարհի վրայ ընկան: Այս, ես արդէն ալլան եմ կազմել, թէ ինչ անցկենամ նրանց հետ բարձր պատրաստականում: Ահա վեց ամիս է ինչ որ նրանք մտել են ուսումնարան և միայն հիմա նրանք բացւել են և ընտելացել դըպրոցի հետ...:

— Զեր հրապուրւելլ զուր է, հիասթափեցնում էք դուքք. վարժուհուն. այդ երեխաներին ուզում են հէնց այս տարի զիմնազլ տալ:

— Ախար այդ ինչպէս, չէ՞ որ նրանք դեռ շատ են մանր, ինչպէս են նրանք կարողանալու զիմնազական պահանջներին բաւարարութիւն տալ:

Հարցնում ենք՝ կարելի է արցնօք այդպիսի պայմաններում կանոնաւոր զարգացում տալ. կարելի է արդեօք թոյլ տալ անգամ դաստիարակութեան մասին մտածել: Եւ այդպիսի երեխան զիմնազում սկսում է բժանալ, զգւանք ստանալ դէպի ուսումը: Ժամը 8-ից մինչ 3-ը մնում է դպրոցում քաղցած, սկսում է ուշանալ դասերին, պատժւել դրա համար մի կամ երկու ժամով, նոյնպէս քաղցած մնալով...

Ի՞նչ հարկ կայ 8 տարեկան երեխին զիմնազ տալ: Իմ կարծիքով դա անկանոն բան է 8 տարեկան երեխին ստիպել ամենալիստ կարգ ու կանոնով կեանք վարել:

Նոյն խոկ ինտելիդէնտ ծնողներից շատերը իրանց աշխատում են արդարացնել նրանով, որ իբր տեղի պակասութիւնից դժւար է

զիմնագում ընդունել տալ և այդ պատճառով աշխատում են օգտել հէնց որ հնարաւորութիւնը ներկայանում է:

Դպրոցը պէտք է կարելիին չափ խոյս տայ պատիմներից: Արքան յաճախ պատիմներով ստորացնում են երեխի սեպհական արժանաւորութեան զգացմունքը և սպանում են նրա մէջ ամօթի զգացմունքը! Ինչպէս խելացի մայրը կարող է մի պարզ և սրտալի խօսքով ազգել երեխի վրայ, այնպէս էլ վարժուհին կամ ուսուցիչը կարող են պարզ ու հասարակ վերաբերմունքով և խօսելու ընական ձեռք կառավարել մի մեծ հանկական ամբոխ: Վարժուհին կամ ուսուցիչը զպրոցում հեղինակութիւն է, իսկ մեր գպրոցների երեխաների համար այդ հեղինակութիւնը դեռ աւելի էլ է քան մօր ու հօր հեղինակութիւնը:

«Բաւական է իմ աղջկան յացանեմ թէ այս ինչ բանը կասեմ վարժուհուն և ահա նա թողնում է իւր կապրիզները»:

—Դու ուրեմն վախենում ես որ քեզ չպատժեն, հարցնում է մայրը:

—Ոչ, մայրիկ, ամենեին ոչ, ես չեմ վախենում, բայց ես ամացում եմ, ես չեմ ուզում որ վարժուհիս նեղանայ:

Ամենախիստ պատիմն անգամ չի ազդում երեխի վրայ այնքան որքան յարգւած վարժուհու մի նկատողութիւնը:

—Եսէր Ասուծու, խնդրում է մայրը վարժուհուն, իմացեք, Արամից թէ ուր է տարել նա հօրը փղոսկրէ կորիչը: Ես հաստատ դիմեմ որ նա հօր սեղանից վերցրել է: Ես երէկ նրան հարց ու փորձ արեցի, հայրը մինչև անգամ նրան խփեց մի երկու անդամ, բայց չէ, չէ ու չէ. ոչ մի կերպ չի ուզում խստովանել:

—Արամ, հարցնում է վարժուհին, իսկն ասա, ումն ես տւել կորիչը:

Երեխան գլուխը կորացրեց և լռեց:

—Երեի դու զիմնագում կորիչը փոխել ես ուրիշ բանի հետ, ընկերներիդ մօս?

—Այն, ասում է նա արտասուք թափելով...

Իմ կարծիքով աւելի լաւ է բարկանալ երեխի վրայ, կատաղել, ցիցոցներ տալ նրան, ինչպէս այդ կ'անէր մայրը բարկացած բոպէին, քան բոլոր ոյժերը հաւաքել ու փերել ու վերեկից նայելով բարոյա-

խօսութիւն կարգալ երեխին։ Երեխան խմանալով ձեր մօսիկ և բնական յարաբերութիւնը դէպի նա, դիտէ որ եթէ դուք աչժմ արժանի կերպով բարկանում էք նրա վրայ, մի այլ անդամ, երբ նա արժանի կլինի՝ դուք կը ժամանակ ու կը շոյէք նրան։ Բայց երբ դուք միշտ և ամեն տեղ հաւասար կերպով փաքւած էք և լուրջ, — երեխան կզգայ իրան անմատչելի դէպի ձեզ։ Ես նկատել եմ որ յաճախ ծնողները, երեխանների և ուրիշների այդպիսի վերաբերմունքի ազդեցութեան ներքոյ, իրանք էլ են վարակւում դրանով և չեն վատահանում երեխանների յառաջդիմութեան մասին դիմել վաստիարակներին։ Որ անկեղծ ու սրարզ վերաբերմունքը անհամեմատ տւելի բարձր է քանի բարոյախօսութիւնը, այդ ես կարող եմ օրինակով հաստատել։ Իմ պանսիոնը բերել էին Երևանից Զ տարեկան մի տղայ, որը ազատ մեծացել էր և սովոր էր միացնակ ճամբորդել Երևանից մինչ 15 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղը, մասամբ ոտով, մասամբ ձիով (եթէ, ինչպէս ինքն էր ասում, բարի մարդիկ էին գտնուում)։ Նա մտաւ ինձ մօտ ուսումնարան առանց արտասուքի ու առանց զալմաղալի, բայց հէնց որ ամենքը նստեցին նախաճաշի — նա հագաւ գգակը և ուր որ անհետացաւ։ Կարող էք երեւակայել թէ ինչ վրդովմունք եղաւ ամբողջ դպրոցում! Տղէն ամենեին չէր ճանաչում քաղաքը և առաջին անգամն էր զուրս զալիս փողոցը։ Ամբողջ օրը մենք սարսափելի վրդովմունքի մէջն էինք։ Մենք ամեն միջոցի դիմեցինք և արդէն պատրաստում էինք ոստիկանութեանը իմաց տալ, որ մեր Աւոնը ներս մտաւ։

— Ուր էիր և ինչու դնացիր։

— Այնպէս, ես գնացի ցուցահանդէս հնչ լաւ է այնուեղ!

Ես հաւաքեցի իմ ամբողջ օրը խանգարւած նեարդերը և աշխատեցի հանգարտ տոնով բացադրել նրան, թէ ինչպէս ես տիրել էի։ Երեխան ինձ խօսք տւեց այլ ևս երբէք չկրկնել այդ։ Բայց յաջորդ օրը, բուպէն գտնելով, նա նորից ուր որ վախաւ։

Ես իմ գլուխը բոլորովին կորցրի։

Այդ անդամ նա վերաբարձաւ մի ժամից յետոյ և յայտնեց թէ նա ուզում էր պալատը տեսնել։

Թէև նա նորից խօստացաւ այլ ևս այդպիսի բան չանել, բայց ևս ոստիկանական պահանգանին խնդրեցի մեր տունը գալ, մտնել

սինեակը և հարցնել թէ արդեօք չենք ճանաչում մի տղայ, որը մենակ շրջում է փողոցներում, և որ եթէ նա որբ է և տուն չունի, այն ժամանակ պէտք է նրան վերցնել ապաստանարանը:

Էռտ երեւութիւն՝ տպաւորութիւնը կատարեալ էր:

— Ես ամենուին որբ չեմ, ասաց երեխան: Տեօտեա (ինձ այս պէս էին կանչում), թող այս մարդը գնայ, ես այլ ևս դուրս չեմ փախչիլ:

Ես այժմ բոլորովին հանգստացայ: Բայց մի երեք օրից յետոյ, չնայած մեր հսկողութեան, նա հնարք գտաւ նորից փախչելու: Ես արդէն կատաղեցի և մոռացայ մանկավարժական ամեն մի տաքտիկան: Երբ ծառան նրան ներս բերաւ, ես յարձակւեցի վրան և արտասուքի մէջ բղաւեցի՝ ամօթ է, ամօթ այդպէս ինձ տիրեցնել: Ես շարչարել: Լաւ, այսուհետև դիտեմ թէ ինչպէս պէտք է քեզ հաւատալ...» Աւելին ես չկարողացայ խօսել: Տղէն նոյնպէս ընկնում է վրաս և լաց լինելով ազաշում է—«Տեօտեա, հոգիս, մի լաց լինիր, եթէ մի անգամ էլ գնամ» ինձ բոլորովին դուրս արա»:

Եւ իրօք, այդ օրից նրա վերաբերմունքը դէպի ինձ վերին աստիճանի քննոյց գառաւ: Աւելին եթէ դարոցը իւր բնական և պարզ վերաբերմունքով դէպի երեխերքը կարող է այդպիսի իշխանութիւն ձեռք բերել երեխաների սրտերի վրայ, ուրեմն ինչ զօրեղ դէնք կայ դպրոցի ձեռքում և ինչ վիթխարի ոյժ ունի նա, և որքան ուրեմն անհրաժեշտ է որ ընտանիքը և դպրոցը ձեռք ձեռքի տւած ընթան: Ուրեմն էլ ինչ է մնում ուսումնարանին? Մի բան միայն. զգալով ընտանիքի անկանոն կրթութիւնը—դալ ընտանիքի օգնութեանը և անհամեմատ աւելի մօտ լինել երեխային և նրա շրջապատին: Թող մի՛ սրտով դպրոցն ու ընտանիքը դիմեն վերջնական նպատակին: Թող ընտանիքը վերաբերւի դէպի դպրոցը աւելի մեծ հաւատով և աւելի անկեղծօրէն, իսկ դպրոցը թող անմատչելի չմնայ և ընտանիքի հետ հաւասար հողի վրայ կանգնի: Մեր երեխաները լիակատար աղատութեամբ ապրում են միայն մինչ 8 տարեկան հասակը, իսկ 8-ից անց՝ նրանք մեքենայ են դառնում: Աւթ ժամից մինչ 2-ը նրանք դպրոցումն են. տուն վերադարձած՝ նրանցից շատերին սպասում է Փրանսուհին, որը ճաշի վրայ պէտք է Փրանսերէն խօսակցութիւնով զբաղեցնէ: Ճաշից յետոյ գալիս է երաժշտութիւնը,

որից յետոյ ժամ՝ 5-ին նստում է բեպետիտորի հետ դաս սերտելու յաջորդ օրւայ համար։ Եւ այսպէս ամեն օր։

Մեզանում 100 աշակերտներից միայն կէսն է իւր դասերը ինքը պատրաստում։ Թող դպրոցն ու ընտանիքը միասին աշխատեն մաքրել փողոցները բուլւարական կոմիտէտի փոքրիկ անդամներից։ Երեխաններից ումանք լարւած մեքենայի պէս առաւօտւանից մինչ երեկոյ վազվզում են տանից դուս, միւսներն էլ՝ անգիր անելով դասերը գնում են դպրոց, վերադառնում են տուն, շտապով ճաշում են և վազում, ուր? նուլւարը...

Դպրոցը ընտանիքի հետ միտցնելու համար ամենից առաջ հարկաւոր է հիմնել ծնողական շրջան, որտեղ ծնողները կարողանային պատահել իրանց որդկերանց դաստիարակների հետ և միասին խորհել դպրոցի այս ու այն պակասութիւնների մասին։ Դպրոցը, այսինքն ուսուցիչները կամ վարժուհիները պէտք է նւիրեն երեխաններին շաբաթական կամ թէկուզ ամսական գէմթ մի ազատ երեկոյ, ընդհանուր ընթերցումներ, ներկայացումներ և խաղեր սարքելու համար, որոնք մեծ օգուտ կը բերեն դպրոցին և շատ կը մօտեցնեն դպրոցը ընտանիքին։

Ինձ թւում՝ է, որ սկզբնական դպրոցները կարող են ձեռք բերել իրաւունք և կանոնաւոր պայմաններ միայն պաշտօնական բնաւորութիւն կրող դասականութիւններով, որովհետեւ մասնաւոր խօսակցութիւնները միանգամայն այլ բնաւորութիւն են ստանում։

# ԳԻՒՂԱՏԱՏԵՄԻԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆ ԵՒ ՀԱՅ ԳԻՒՂԱՏԱՏԵԱԾ:

ՆՊԱՍՏ ԳԻՒՂԱՏԱՏԵՍԱԿԱՆ ԽՆՏԻԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԽՆԴՐԻՆ<sup>1)</sup>

## Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆՅԻ:

Անդրկովկատահան նահանգների ընական հարստութիւնները, կուլտուրական բովուրի բազմութիւնը և ամեն տեսակ գիւղատեսական կենդանիների գույնութիւնը ընականապէս պէտքէ, առաջացնէին մեր երիգասարդութեան մէջ զրանցից աւելի խելացի և չահաւէտ կերպով օգոււելու, զրանց արդիւնագործելու ձգտում, մանաւանդ որ ալս վերջին հանգաւանքը կա. բող էր մեր երկրի անահետական զարգացման մի ամենահաստատագրիւր դառնալ. Այս ուրախալի ձգտումը քսան տարիներից ի վեր արտակարուել է և զրա արտակարիչ եղել են երիտասարդներ, որոնք իրանց միջնակարգ ուսումը աւարտելուց լետով, Ռուսաստան կամ արևմտեան Եւրոպա են ուղերւել տեղական բարձրադրոն դպրոցներում գիւղատնութեական ուսումն ուսանալու.

Եթէ այդպիսի անհատների թիւը մեզնում շատ չէ եղել, զրանում մեղաւոր են ուրիշ հանգամանքներ, որոնց մասին խօսելը զուրս է իմ նպատակից, սակաւն չէ կարելի նաև ասել թիւ զրանք հաղլազիւս երեսթներ են եղել որովհետեւ Ասոկլազի Վհարովոկի զիւղատնութեական ճեմարանը, որպէս նաև արտաստանմանեան նորնանման հաստատութիւնները, ունեցել են գիւղատնութեան հայ ուսանողների մի որոշ կանոնագենատ.

Դրանցից շատերը, ուսման ընթացքը աւարտելուց լետով իրանց զիւտութիւնները գործ աղքելու լի տեխնով հալբերիք են վերադարձել. Սական հալբերիք զառնալուց լետով հայ զիւղատնաեմների մասին ոչինչ չէ լսում, իսկ եթէ լսում էլ է, մեծ մասամբ անհպաստ լուրեր. ասում են, որ նրանց գործերը անաջող են գնում, որ նրանք որպէս

<sup>1)</sup> Համեմատէք պ. Ա. Արասիսանեանցի լողւածի հետ «Գիւղատնականինութեանցիա» խորագրով, «Մուլգ» 1892 թ. № 41.

գործնական գիւղատնտեսներ շատ թուլ են եղել, որ իրանց հետ բերած գիտութիւնները ապարդիւն են մնացել, որով և առաջին անաջող փորձերից լուսահառուած՝ մի երկու տարուց լետու ծգել են գիւղատնտեսական պարագմունքները մի կողմ, քաղաք են մերագրաքեր և բալորովին ուրիշ իրանց մասնագիտութիւնից տարբեր, զործ են ձեռնարկել:

Ի՞նչով պէտքէ բացատրել այս ինքն ըստ ինքեան ցաւալի, երեսովը, բնչու գիտնական գիւղատնտեսական կրթութիւն ունեցող հաչ երկառարդները գործնական կեանքի մէջ գրեթէ միշտ անաջողութիւնների են հանդիպում, որով և իրանց ստացած գիտութիւնը, որպէս սեփական անձի համար նորինպէս և այն հասարակութեան համար, որին ծառաւիկը նրանց ողերութեանմի աղբիւր է եղել, «ապարդիւն է անցնում»:

Մեր ուսումնական գիւղատնտեսների գործնական կեանքում ունեցած անաջողութիւնների պատճառները գտնելու համար բաւական է միայն աչքի տակ ունենալ թէ որպիսի երկառարդներ են մեջնում գիւղատնտեսական բարձրագուն կրթութիւն ստանում, ինչ հանգամանքներում են նրանք հայրենիքում և ապա արտօսահմանում ուսումն ստանում:

Միմեանցից պէտք է զանազանել երեք կարգի երիտասարդներ:

ա. Քաղաքացի երիտասարդներ, որոնք իրանց կեանքում երբէք գիւղատնտեսութեամբ անձանի չեն պարագել և չեն հետաքրքրուել շատ շատ միջնակարգ ուսման ընթացքու ունեցած ամառաւակ արձակուրդներին գիւղ են ընկած, ուր նրանք վայր ի վերու զիտել են երկրագործական ամառագին աշխատանքները.

բ. Կալւածատէրերի որդիք, որոնք դարձեալ 9 ամիս շարունակ քաղաքումն են ապրել իրանց ուսման պատճառով, իսկ գիւղում, իրեն աղաներ կամ աղաների որդիք, իրանց հեռու են պահել երկրագործական աշխատութիւններից, Ծրանց գիտութիւնը առաջիններից եթէ, պակաս չէ շատ էլ չէ, և վերջապես՝

ը. Ամենահագւագիւտ դէմքերում երիտասարդներ՝ գիւղական զանակարգից, որոնք 9-10 տարեկան հասակից խլում են հայրենի գիւղական ընտանիքներից և ուսում առնելու նպատակով քաղաք գալով՝ քնքանում են և գիւղատնտեսական աշխատանքների համար անընդունակ դառնում. այս վերջինները մինչև անդամ մի տեսակ արհամարհանքով են նախամ իրանց ծնողների պարագմունքների վրաէ, որով և հայրենի շրջանից դուրս գալիս գրքերով և զբօնանքներով են զբաղւում ամառնատին արձակուրդների ժամանակ:

Այս երեք կատեգորիաներից որմի էլ որ վերցնելու վիճակը, կը տեսնենք, որ նրանք տեղական գործնտեսական գիւղատնտեսներից շատ պակաս, եթէ չառեմ ոչինչ նախապատրաստութիւններ ունին, առա ակտպիսիններն էլ միջնակարգ ուսումը աւարտելուց կամ կիսատ ըստնելուց իւստի ումանք

ոգևորութիւնից, ոմանք անտեսական կարիքից սահպւած և ոմանք էլ ուրիշ մասնագիտութեանց համար պահանջելիք կրթութեան պակասութիւնից՝ գիւղատնտեսական ուսման են դիմում Ռուսաստանի կամ արտասահմանի բարձրագույն զգացոցները, ուր ոչ միայն գիտութիւնը բոլորավեր հիմունքների վրաէ է գրած; այլ և հատարակական միւս պազմանները գլխովին ուրիշ են, ուրեմն և անծանօթ են մեր հայ գիւղատենու ուսանողին:

Աչմ տեսնենք թէ գերմանացի ուսանողը մինչև գիւղատնտեսական բարձրագույն զգացոց մասնելը կամ այդ ուսման ընթացքն աւագտելը ինչ տեսական և գործնական նախապատրաստութիւններ ունի:

Նախ մենք տանք մեզ նոյն հարցը, ինչ որ մեր երիտասարդների մասին՝ տեսցինք, այսինքն որպիսի երիտասարդներ են Նորագալում գիւղատնտեսական բարձրագույն կրթութիւն ստանում:

Ազատեղ ևս երեք տեսակ կրթութեան և դասակարգի անձեր պէտք է միմեանցից տարբերել:

ա. Ֆիջնակարգ կալուածառէրերի որդիքը, (գիւղատնական դասակարգից) որոնք գիւղատնտեսական միջնակարգ զգացոցի (Landwirtschaftsschule) 3-4-տևեալ զասընթացքը աւարտելուց վետով ուղղակի մտնում են բարձրագույն զգացոց ընդգարձակելու համար իրանց մասնագիտութեան տեսական կրթութիւն գիւղատնտեսական ուսումնարաններում: Դրանք անցել են մասնագիտութեան անշրջանին առարկաներից հետեւանելիք՝ բնական գիտութիւններից՝ Փիզիկա, հանքագիտութիւն, կենսաբանաբանութիւն, լուսաբանութիւն. գիւղատնտեսական առարկաներից՝ սոսումն անասնապահական արդիւնագործութեան, բուսական արդիւնագործութեան և ուսումն գիւղատնտեսական արդիւնագործութեան, բուսական արդիւնագործութեան և ուսումն գիւղատնտեսական արդիւնագործութեան (Betriebsslehre). Այսպիսի միջնակարգի ուսումնարաններում, չուրհիւ ընտրովի ուսուցչական ուժերի և դասաւութեան ձեւերի՝ աշակերտների ստացած զիանիքնելը հիմնաւոր են գործնական:

բ. Երիտասարդներ, որոնք, գիւղատնտեսական միջնակարգ ուսումն աւարտելուց վետով, 2-3 տարտվ մասնում են մի հարուստ կալւածառիրոջ մօս որպէս հասավարիչներ, վերակացուներ և կամաւորներ: Երանք այս տեղ միջոց են անհնուում հիմնաւորագիս ծանօթանալու անտեսութեան հետ, նրա զարգանիքների և կառավարչութեան հետ և ապա բարձրագույն զգացոց մտնում միայն մի քանի սկզբանքներով (վեցամւեակ) <sup>1)</sup> մինչև անզամ մի ուսմասրով: ուր լուսում են միայն այն առարկաները, որոնց գիտենալը գործ:

<sup>1)</sup> Ուսումնական աարին, Գերմանիաի բարձրագույն զգացոցներում, որպէս համալսարան և ալն, բաժանուած է երկու կիսամետակների կամ երկու ուսմասրութերի՝ ճնենուալ և ամսուալ սեմբառութեր:

նականի մէջ ամենից անհրաժեշտ են համարում, ալղպիսիները վեառ ստանում են լաւ ուսմիկներ մեծ կալւածատիրոջ մօտ, այս անդամ անպատճառ որպէս կալւածի ընդհանուր կառավարիչ կամ վերասահուուչ:

զ. Հարուստ ասպետական կալւածատէրի (Rittergutsbesitzer) բարձը աղնուականների և զիտնականների որպիք որոնք իրանց միջնաշկարգ կրթութիւնը զիմնապիտերում կամ թալական զպրոցներում աւարտելուց լեռու համալսարան են մտնում առանց նախապէս զիւզանատեսութեամբ պարապած լինելու: Ազգիսիները երկու նույտակ ունին աչքի աւաշ, ա) իրանց կալւածների կառավարչութեան համար անհրաժշտ զիւզանատեսական կրթութիւն ստանալ և բ) միջնակարգ զիւզանատեսական ուսումնարանների դասաւանական կամ շրջող ուսուցիչներ (Wanderlehrer) պարապատէլ, և կամ զիւզանատեսութեամբ որպէս սոսկ զիտութեամբ պարապէլ: Դրանցից զուրս են զալիս պրիւատ զոցինաններ<sup>1)</sup>, պրոֆեսորներ և կամ մասնաւոր զիտնականներ: սրանք 2-3 սեմեստր համալսարան լառախելուց լեռու, մի քանի տարով համալսարանների հետ միացած վորձնական դաշտերում, սննախսութեան մէջ կամ փորձնական իջևաններում (Versuchsstation) պարապաւմ են և զիտական փորձեր անում և ապ անորից համալսարան զալով, շարունակում են ընդհատած ուսումը:

Ինչպէս տեսանք, գերմանացի զիւզանատես ուսանողը մի որոշ տեսական և զործնական նախազարդարասութեամբ է բարձրագույն զպրոց մտնում կամ եթէ նա զործնական ապէս մինչև համալսարան մտնելը չէ պարապէլ, նա ապ անում է բարձրագույն կրթութիւն ստանալու ընթացքում, որով ամերողացնում է զիւզանատեսութեան անհրաժեշտ ուսման և զիտութեան պակասը: Ուրիշ խօսքով, եւրոպակի զիւզանատես ուսանողը մինչև կեսանք մտնելը բոլորովին ուրիշ կրթութիւն և զործնական հըմտութիւններ է ձեռք բերում քան հազ ուսանողը, որին պակասում են նախա միջնակարգ ուսման զիտակցական և հիմնատր զիտութիւնը և ասլազորձնական փորձառութիւնը և իւր ապագալ մասնավիտութեան մասին պատրաստի մտապատճենները: Դիւզաննատեսութեան մէջ ալղպիսի մի խորթ երխասարդ բարձրագույն զիւզանատեսական զպրոցում պարզ է որ անկարող է 2-3 տարւակ ընթացքում անցնել այն բոլորը, ինչ որ համալսարանի ամբիոնից լուսմ է, տեսնում, որովհետեւ զրամնք բոլորն էլ անչքան սերտ կապւած են անմիջական գործի հետ, որ ուսանողի ամենահարուստ երեակալարութիւնն անդամ եթէ չկատ ուիփական փորձառութիւն

<sup>1)</sup> Պիտառ զոցինա (մասնաւոր ուսուցչապետ) կոչւում են Գերմանիակում պրոֆեսութեան թեկնածուները, որոնք զասախօսում են բարձրագույն զպրոցներում, բայց որոնց զասերը պարտադիր չեն և որոնք դեռ եռ ոռձիկ չեն ստանում համալսարանից:

հրաժարում է նրան մի զրական օգուտ տալուց. անուհետե ավագիսի ուսանողը դիմում է դասագրքերին, մտածելով դրանց միջոցով գոնէ իւր ծանօթութիւնները լայնացնել իւր դիտութիւն պակասը լրացնել: Սակայն գրքերը նրան քիչ ծառալութիւն կարող են մատուցանել, մինչև որ նա ինքը անձամբ դործի հետ ծանօթ չէ, որով բոլո և կենդանի, հող և ջուր, գաշտ և մեքենայ, դրանց հետ վարելու ձեւերն ու եղանակները և ալին և ալին նրա համար որպէս վերացական գաղափարներ են մնում: Եւրոպական նորագոյն գիւղատնտեսութեան հետ անծանօթ օսար երկրացի ուսանողը իւր գործնական և տեսական ծանօթութիւնների ունեցած պաշարի թուզութիւնը զգում է մանաւանդ ուսումնական նպատակով ձեւնարկած ճանապարհորդութիւնների զրում (Excursion) ժամանակ:

Ալլաեղ աւելորդ չեմ համարում Եւրոպական ընդունւած ուսումնական նպատակներով կատարող այս զրուանքների մասին ի միջի ակլոց մի քանի խօսք ասել: Զրօսանքները գերմանական մանկավարժութեան ամենազօրեղ ուսուցանողական միջոցներից ամենազլիաւորն է: Մանաւանդ գիտողական առարկաների և գիտութիւնների վերաբերմամբ՝ ընդհանուր են բոլոր կարգի ուսումնարանների աշակերտները. զրօսանքներ են անում քաղաքացին միջնակարգ դպրոցների սաները, որպէս նաև բարձրագոյն դպրոցների, համալսարանների չափանաս ուսանողները: Զրօսանքները մի նպատակ ունին՝ առարկան իւր ամերամբ ծանօթացնել աշակերտին, որով և նա աւելի ամուր է մնում աշակերտի լիշտութեան մէջ. այց զրօսանքները լինում են, ինչ կասկած, ուսուցիչների կամ ուսուցչապետների առաջնորդութեամբ: Ստորակարգ և միջնակարգ ուսումնաբաններում արշաւանքներին մասնակցելը պարտաւորեցացիչ է, անի ինչ ուսանողների համար կամաւոր, սակայն, չնայելով այս վերջին հանգամանքին, ոչ մի դասախոսութիւն անքան չաճախորդներ չի ունենում որքան արտպիսի զրօսանքները՝ մասնակցողներ: Մի ամսամ մի պրոֆեսոր ասաց, «երանի թէ իմ լսարանը այս ազատ բնութիւնը լինէր, ես հաւատացած եմ, որ վարձասարութիւնս եռապատիկ կը բարձրանալ»: Աշխարհահագրութեան ուսուցիչը բնութեան մէջն է ցուց տալիս արեի ծագումը ու մայր մտնելը, հորիզոնն ու երկրագնդի կոլորութիւնը և ալին և ալին, բնագիտութիւնը՝ բոլուսերի բազմութիւնը, տերենների, ծաղիկների, արմատների տեսակները, հողի, քարերի, զեռունների, անասունների տեսակները և ալին և ալին բնութեան մէջ աւելի չօշափելի են խօսում քան դասարանում քարտէզի, նկարների, մաստիկների միջոցով: Բայց ոչ մի գիտութեան ուսանողների համար զրօսանքները անքան շահաւէս և ուսանելի կարող չեն լինել որքան գիւղատնտեսութիւն սովորողի համար, որի ապագայ գործունէութեան հիմնաքարը, — բնութիւնն է, հողն ու դաշտը, արտն և իւր բուսականութիւնը, ջուրը, լուսը, տաքութիւնը և

ալին և ալին, մի խօսքով բնութիւնը և նորա ոչերը, որից, իւր կեանքի նիւթական ապահովութեան համար, ամեն կերպ օգտում է մարդու, իսկ այդ օգտելու աեսակները և միջոցները մեծ մասամբ նունպէս ազատ բնութեան մէջն են: Սակայն չպէտք է մոռանալ, որ աղպիսի զբոսանքներ միայն այն ժամանակ իրանց խակական օգուտները կը տան, երբ ուսանողը ծանօթ է իւր տեսածի գոնէ էական մասերի հետ, հակառակ դէպքում, առարկան կորցնում է իւր հետաքրքրութիւնը, որով և ուսանողը զիկում ստանալիք օգուտներից: Ակսպիսի զբոսանքների ժամանակ (Ausflug) գիւղատնտեսը ծանօթանում է նախ զանազան հողերի տեսակների, նրանց բաւականութեան և դրանց տեսակների աճման և զարգացման հետ, պատղափոխութեան տարբեր սիստէմների, գիւղատնտեսական տեսակ տեսակ մեջնաների հետ՝ զործելու, բանելու ժամանակ, պարարտացնելու նիւթի և ձեռքերի հետ, որպէս նաև զիւղատնտեսական անստունների ցիւրի և նրանց արդիւաբերութեան և գրտ տեսեսութեան հետ:

Հատ պարզ է, որ սունանման զբօսանքներից տեղական զիւղատնտեսութեան հետ ծանօթ ուսանողը անհամեմատ աւելի շատ օգուտներ է ստանում, քան օտար երկրներից եկած ուսանողը:

Եւ ակսպէս երկու երեք տարի բարձրագուն զիստոնտեսական դպրոցում մնալով, աւտոական զիստութիւնները տեսուկանորին, գործնականները զարձեալ տեսականորին սովորելուց, կարգալուց վետով, չակ ուսանողը մեծ լուս դրած իւր ձեռքք բնրած զիստութիւնների պաշտրի վրայ, հայրենիք է վերացանում, լի հազար ու մի տեսակ հոկազական ծրագիրներով և անմիջապէս գործ ոկտում, և ինչպէս Նա նախ անհարաժեշտ է համարում բերել տալու իր զասագրքերի մէջ լինած ըոլոր մեքենանները, առունց մասածելու որքան լարմարն զործագրելի կարող են նրանք լինել մեր հողի, մեր տեղական պալմանների համար, նա անպայման հաւատ է ընծալում այն բոլորին ինչ որ զրգելում զրուած է: Եւ ահա մի քանից վետով ահապին ծախսերով արտասահմանից նա ըերել է տալիս ամեն մեքենաներ, ազատով կան ամերիկական երկաթի գութաններ, էքստրազատորներ, ցենտրիֆուզներ, ծեծելու, հնձելու, խուրճ կատելու, չողեշարժ մեքենաներ, մաքրելու, տեսակների բաժանելու, ծղանը մանրացնող և ալին և ալին մեքենաներ, որպէս նաև խոլանդական օստֆրիզեան կամեր, եղներ, անգլիական ձիեր<sup>1)</sup> և ալին և ալին, մի խօսքով այն բոլորը, ինչ որ նա աեսել է և լսել, ակտով հարկաւորէ անձամբ գործ ունենալ դրանց հետ:

<sup>1)</sup> Անաստունների ցեղերը աղնուացնելու համար չենք կարծում որ մինչ ալիմ աղքան ովեսութիւն եղած լինի ուսում առած զիւղատնտեսների մէջ:

պրոլիտներ աեզացի մշակները ոչինչ չեն հասկանում դրամից շինւածքից՝ Աչժմ գալիս է նրա գործունէութեան ամենավճռական բաղին. նա ինքը դրանց հետ երբէք գործ չէ ունեցել, ինքը նոյն իսկ անձանօթ է դրանց կազմութեանը, ալսուզ նա առաջին անգամ շօշափելի կերպով տեսնում և զգում է իր ունեցած գիտութեան պակասութիւնները, իր գործնական խելքի և ծանօթութիւնների թերութիւնները: Հասարակութիւնը, ծանօթները, բոլորը աչք անկած սպասում են, որ տեսնեն թէ ինչ դուքս կըդալ աչս բոլոր ձեռնարկութիւններից, դրանք բոլորն էլ կասկածում են դրանց լաջողութեան մէջ, և տեսնելով դիանական գիտառնութեան անլաջողութիւնները, կամայ ակամայ սկսում են ծիծաղել նրա վրայ: Խակ մեր գիւղատնտեսը իր առաջին փորձերի անլաջողութիւններից մետք ըստահատում է, թուլանում, նա կորցնում է եռանդը զործը շարունակելու, առաջ առանելու, և մի երկու տարուց թողնում է զիւզը և կալածը, զաշո ու մեքենան, եղն ու կովը. թողնում է ամեն ինչ քաղաք գալիս և իր համար մի ուրիշ շահաւելու պարապմունք փնտուում, գուցէ և զատառտանատներում զրագործիւն. իսկ տեսնազին և հարցնողին ասում է, թէ մեր երկիրը զեռ ևս անընդունակ է գիտական անտեսութեան, մեր ժողովուրդը զեռ ևս անընդունակ է գիտական գիւղատնտեսին գնահատելու և ազն և ազն: Այրանով էլ վերջանում է ամեն ինչ Խոկ հետեւանքը. նախ նա ինքը դրամական ահապին վնասներ է ունենում իր ձեռնարկութիւններից, պարաքի մէջ է խրւում և երկրարդ—ամենազիստը վնասը— հասարակութեան հաւատը թուլացնում զեսի գիւղատնտեսական գիտութիւնները, որով և ծիծաղելի գարձնում մի ուրիշին, որը նոյն գիտութեամբ պարապել է ցանկանում:

Ո՞վ է սորանում մեղաւոր, գիւղատնտես ուսանողը, հանդամանքները, մեր երկրի անլաջող պարապմունքը. ինչպէս կարելի է գործը լաջողութեամբ տանել երբ մենք մեր երկրում գիւղատնտեսական ոչ միջնակարգ և ոչ էլ բարձրագուն: զպրացներ ունենք, ոչ փորձնական զաշուր, իջեաններ և ոչ էլ օրինակելի տնտեսութիւններ և կալւածներ, կամեն մեզ ընթերցողները. սական իմ կարծիքով կարելի է, թէ մեծ գժւարութեամբ, աղդ բոլորը չունենալ բայց և այնպէս զործը աւելի աջող տաճել քան այդ լինում է մեղանում: և ահա թէ ինչպէս:

Նախ շատ ցանկալի է, որ մեղնում գիւղատնտեսական բարձրագուն ուսում ստանան մեծ մասամբ հարուստ կալւածատէրի որդիք, որոնք ունին նախ սեփական հող, իրանց ալպակակ ձեռնարկութիւնների պահանջելիք դրամագուլիս և երրորդ՝ ունին միջոց և ժամանակ բարձրագուն գիւղատնտեսական ուսում ստանալու համար երկար տարիներ արտասահմանում մնալ և այնտեղ օգտել այն բոլոր լարմարութիւններից, որ ներկազացնում է ներոպան իւր բազմակողմանի հաստատութիւններուի: Ցանկալի է նաև, որ

աղղակիսի երլատառարդները միջնակարգ ուսում ոստացած լինեն ոչ յէ կլասիկական գիմնազիներում, ալլ բէալտական և մեր թիմական դպրոցներում, ուր աշակերտը համեմատարար աւելի շատ միջոցներ ունի գիւղատընտեսութեան հիմնական գիտութիւններով—այն է բնական գիտութիւններով—պարագելու, ապա անհրաժեշտ է որ նա միջնակարգ ուսումը աւարտելուց հետո (այս անպատճառ աւարտելուց և ոչ թերի թողնելուց) (իսուոյ) ոչ թէ ուղղակի գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց շտապի, ալլ զեռ ևս 1—2 տարի իր կալւածը գնալ և անձամբ անմիջապէս գիւղատնտեսութեամբ զբազւի. այսինքն ծանօթանաչ իր հայրենի տնտեսութեան եղանակների հետ, փարժի չարքաշութեան մէջ, գիտէ ամեն ինչ իր շուրջը, երկիրը, նրա կլիմայական աջող և անլաջող պահմանները, հողը, նրա ֆիզիքական և քիմիական լատկութիւնները, բուսերը, քարերը, կենդանիները. վարժի տեղական երկրագործական գործիքների գործադրութեան մէջ, ուսումնասիրի նրանց կազմութիւնը, շիմի մշակների, բանարժների, գիւղացիների հետ—մի խօսքով այն հասարակութեան հետ, որոնք պէտք է կազմեն այն միջնողորդը, ուր նա ապագազում գործելու է: Այս երկու տարբաց ընթացքում նա պէտք է իր ուսումնասիրութեանց համար օգնութեամն կանչի դպրոցում սովորած գիտութիւնները՝ բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, ֆիզիքա, քիմիա և ալին. հետաքրքրութիւն կրանցով և իր հարցարդիլութեանը կարելի՞ն չափ բաւականութիւն տաչ, գիտէ բնութիւնը և զարգացնի ալյափիսով իր մէջ իրախուզութեան ոգին. իսկ այս փերջինս ամենահրաժեշտ չափութիւն պիտի լինի մի բնագէտի և գիւղատնտեսի համար: Այդ երկու տարիներում ձմեռները, երբ նա աւելի ազատ ժամանակ ունի, պէտք է պարագի այն երկրի լեզուից ուր նա մտածում է գնալ բարձրագոյն կրթութիւն ուսանալու, որպէս զի նա անտեղ շատ ժամանակ չկորցնի լեզու սովորելու համար. և ապա այս բոլոր ծանօթութիւններով և նախապատրաստութիւններով ուղերձու արտասահման՝ գիւղատնտեսական մի որ և է բարձրագոյն դպրոցում ուսանելու:

---

Գիւղատնտեսական բարձրագոյն դպրոցները արտասահմանում, մասնաւոր գերմանիացում, երկու տեսակ են. ա) առանձնացած գիւղատընտեսական դպրոցներ կամ ձևարաններ (isolierte landwirtschaftliche Anstalten կամ Akademien) և բ) համալսարանների հետ միացած գիւղատնտեսական ինստիտուտներ: Առաջինները համալսարաններից անկախ բարձրագոյն դպրոցներ են իրանց ուսուցչապետներով և վերատեսուչներով. դրանք լինում են մեծ մասամբ միծ քաղաքներից դուրս, մի կալւածում, և որոշած են աղաղակ մեծ կալւածատէրեր, կալւածների կապալառուներ (Pächter), տնտեսութեան պաշտոննեաներ, պետական պաշտոններ պատ-

բաստելու համար, որոնցից պահանջվում է հիմնաւոր ծանօթուն գիւղառընտեսութեան համար։ Այսպիսի հաստատութիւնները զվարապէս գիւղատնական գիտութեան կիտնական կենդրուններն են, ուստի և ուսանողներից պահանջվում էն միջնակարգ ուսման հիմնաւոր պաշար և գիւղառնեսական գործնական ծանօթութիւններ։ Եւ եթէ ուսանողը պատրիսի նախապատրաստութեամբ մանում է նորանման ուսումնարաններ, նրան 4—5 մետրար ուսման ընթացքը աւարտելու համար բոլորավին բաւական են, ի հարկէ այն գէպքում, երբ ուսանողը լրջութեամբ պարապաւմ է գիտութիւններով։ Այսպիսի առանձնացած գործոցների համար անպայման միացած է մի կալած, որը և ծառալում է ուսումնական նպատակներին, որպէստեև գրանց վրայ են փորձնական դաշտերը — գիտնական հետազոտութեանց և փորձերի, համար, փորձնական պարտէղներ, բուսաբանութեան ալգի, գիւղատնական անասնաւուներ (Rossstall), փորձնական իջևաններ (Vezsuchsstation)։ Բացի այդ, արգավիսի դպրոցները անպատճառ ունենում են զանազան գիտնական թանգարաններ, ինչպէս օրինակ, բուսաբանական, կենդանաբանական, երկրաբանական, ֆիզիքական մօտէլների, գիւղառնեսական մեքենաների և գործիքների, սերմերի, բուրդի, միկրոսկոպների և ալզն, որպէս նաև քիմիական լաբարատորիա, հարուստ գրապարան, ջերմոցներ և ալզն և ալզն։ Բարձրագույն առանձնացած դպրոցների հետ սովորաբար միացած են լինում նաև երկրագործական ստորադարդ ուսումնացաններ (Ackerechauschule), որոնք միջոց են տալիս ուսանողներին ուսումնարանի աշակերտների գործնական պարապունքները դիտել զասատութեան եղանակի հետ ծանօթանալ և ալզն եալզն։ Ուսման ծրագիրը մօտաւորապէս հետեւելն է։ Քնական դիտութիւններ՝ քիմիա, ֆիզիոլոգիա և անատոմիա, ֆիզիկա, երկրաբանութիւն, բուսաբանութիւն և կենդանաբանութիւն իրա սոսրաբաժանմունքներով, ապա անտառապահութիւն, քաղաքական անտեսութիւն, գիւղագիտութեան կիրաւութիւն և պատմութիւն գիւղատնաբնութեան, մեքենացագիտութիւն, ազգաբանութիւն (Etnographie) ստատիստիկա, ջրաբաշխութիւն, երկրաչափութիւն, ճարտարապետութիւն և հաշագիտութիւն (գիւղատնական), զուար գիւղատնեսական գիտութիւններ՝ հողագործութիւն, բուսական և անասնական արդիւնաբերութիւն (Pflanzen-und Viehzuchtlehre) և ուսումն արդիւնաբերութեան (Betrlebslehre)։ Բոլոր ուսմանորմները ապրում են ճեմարանապատկան շինութիւնների մէջ, ունին առանձին առանձին սենեակներ։ Որպէս գիտնական և ընկերական հաստատութիւններ, կամ գիւղատնեսական և քաղաքատնտեսական ընկերութիւններ և վարժոցներ ուսանողամիտութիւններ (Verbindung) և զամշտական ժողովներ։ զրանցից շատերին մասնակցում են ի՞ո՞անք ուսուցչապետները օգնելով ուսանողներին խօսքով և զործով, ուսումնական ընկերութիւնների մէջ ուսանողների կող-

մից կարդացում են դասախոսութիւններ, որոնք, ընդհանուր քննադատութեան և նվթարկելուց մտող, տպագրում են ուսանողական աշխ կամ աճն ամսագրի մէջ:

Բ. Երկրորդ տեսակի գիւղամտեսական ինստիտուտներ՝ միայնաձնամալսարանի հետ: Այս տեսակի ինստիտուտները անպայման քաղաքներում են և կազմում են համալսարանի ֆիլոսոփական ճիւղի մի բաժանմունք: Սրանց առաւելութիւնները առաջին տեսակի դպրոցների համեմատութեամբ կազմում են նրանում, որ նախ ուսուցչական ոգֆերը, ընդհանուր առմամբ, աւելի նշանաւոր են լինում քան առաջիններում, որոնց համար, չնորհիւ դրանց քաղաքների քիչ թէ շատ հեռու լինելուն, գմւար է լինում աչքի ընկնող ուսուցչապետներ հրաւիրել: Իսկ թէ ազդպիտիներ ճարռում էլ են՝ միւս գիտնականներից, հարուստ զբանարաններից և ուրիշ կրթական հաստատութիւններից տնջառած լինելու պատճառով զմւարանում են ժամանակակից զիտութեան բարձրութեան զրաւ միշտ միաւ: Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին, որանք համալսարաններում լարմարութիւն ունին ոչ միան իրանց ընտրած մասնագիտութեան մէջ սահմանափակւած միաւ այլ նաև աւելի բազմուղումնի լինել միւս գիտութիւններով ևս հետաքրքրելու, որպէս համալսարանների ամբիոններից նույնպէս ուրիշ դասակարգերի և մասնագիտութիւնների աէր կրթւած անձանց հետ շփել, խօսալ, և, բայցի ազգ, նաև իրանց հոգեկան և գերարւեսական աշխատրնը ազնւացնել՝ քաղաքակին թատրոններ, նուազահան գէսներ չաճախելով, ցուցահանութէներ, նկարչական և քանդակակալործական թանգարաններ ացնելելով և ազդպիտով քաղաքակիրթութեան չաւաշագիրմութեան անմիջական դիտողը, տեսնողը և մասնակցողը լինել: Խսկ գալով միւս մասնագիտական թանգարաններին և հաստատութիւններին, ինչ կառկած որ ինստիտուտներ ունին, նոյն չափով եթէ ոչ աւելի, սական համալսարանի գիւղամտեսական ինստիտուտները ունին մի մեծ պակասութիւն—ազգ աէն է, որ ուսանողները կարւած են լինում գիւղական դաշտավն աշխատանքների չաճախ զիտողութիւննից, իրանց ապագակ գործունելութեան անմիջական ազբիւրից, և թէե ձեռնարկուում են չաճախակի զբուանքներ, էքսկուրսիաներ, գէսպի զանազան կալանարդեր, ուական գրանք չկարծեմ թէ արդ պակասը բոլորովին ծածկել կարողանան:

---

Գալով աէն հարցին թէ հաւ ուսանողը արտասահմանեան արդ գիւղամտեսական բարձրագուն գպրոցներից որը պէտք է վեր զատի, դա, իմ կարծիքով, գրեթէ մի և նոյն է, երկուսն էլ ունին իրանց բարձր արժանաւորութիւնները, առաւելութիւնները և լարմարութիւնները. երկուորի մէջ էլ գիտութիւնը խնամում է հաւասարապէս և

երկուսից որմ էլ որ ընարի ժրաշան, աշխատասկը ուսանողը, կարող է չատ բան անել: Սական, իմ կարծիքով, աւելի լառ կը լինի եթէ հայ զիւզատնական ուսանողը իր ուսման ընթացքում ազդ երկու տեսակ գըպ-րացներումն էլ լինի փոփոխապէս, ախինքն նախ համարականական քա-ղաք զնակ, աճնուղ 2—3 սեմետր մեաչ և ապա շարունակի առանձնացած ձեմարաններում: Ահա թէ ինչու:

Մեր աղերքը, երբ հալմենիքից առաջին անգամ հւրուպա են գալիս խկոն աչքի են ընկնում մի աեսակ կոստութեամբ ձեերի, խօսակցու-թեան, ճաշակի, մինչև անգամ ման գալու մէջ, մի խօսքով աճ բոլոր բա-ներում, որ վերարերում է քաղաքակրթութեան արտաքինին: Ազգափախ մի երիտասարդ, երբ իր լետ ընկած քաղաքից ուզգակի ընկնում է եւ-րոպական քաղաքներից հեռու ընկած մի համեմատաբար փակւած ձեմա-րան, ուր նրա շրջանը միմիան տղամարդիկ և ուսանողներ են կազմում, նա մի քանի տարուց լետ գրեթէ նույն է մնում ինչ որ էր հալմենիքից զարում՝ կոսիտ, անոտաշ, անբարեկիրթ: աճ ինչ եւրոպական մի քաղա-քում մնալով նա վաքր առ վաքր վոխւամ է, կրթում է, որովհետեւ նա ալսուել առիթ է ցնենում շիւել զանազան զառակարգի և դիրքի մարդ-կանց հետ, կանանց և օրիորդների հասարակութեան մէջ է մանում և ազն, սրոնց ներկայութիւնը ալսակէս թէ աճնողէս ատիպում է նրան իրեն ուրիշ կերպ պահել, քան թէ նա իւր ընկեր ուսանողների մէջ է, իսկ արտաքին բարեկրթութիւնը ներկազ հասարակութեան մէջ նունքան անշրաժեցա է, որքան և ներքինը, իսկ քաղաքը, ազդ բանում միշտ ունենում է իր ազ-դեցութիւնը, որով և իւր գերը կատարում, Դալով բուն ուսմանը, հա-մալարաններում բնակած դիտութիւնները—զիւզատնանութեան ազդ հիմ-նաքարերը—աւելի են խնամեած քան աւանձնացած զպրացներում: Հարո-րատորիանները աւելի հարուստ են, ուսուցչապեանները աւելի խստապա-հանջ քան առաջիններում, ուստի և շատ լաւ կը լինի եթէ ազդ տեսա-կետից ես ուսման սկզբում համալսարանական ինստիտուտներին նախա-պատութիւն առինք, աճ ինչ լնուց երբ ուսանողը բնական զիտու-թիւններով պարապած կը լինի, թող նա մանի երկրորդ տեսակի զպրոց-ները, ուր բուն դիտաշտուական դիտութիւնները աւելի ինստիտում են, և երկրորդ՝ ալսուել ուսանողը ամենից աւելի միջոց և լարմա-րութիւն ունի իւր սովորածը և սովորելիքը միշտ բնութեան, զործա-զրութեան մէջ տեսներու, զիտելու և համեմատելու, իսկ միւս կտղմից՝ վեր-ջին սեմեստրներում ուսանողը սովորաբար պատրաստում է լաւածիկայ քննութիւնների համար, նրա պարապմունքները բարդանում են և զժու-րանում: Ժամանակի աւելի շատ պահանջ է զգացւում, ուստի ալսուել ու-սանողը աւելի շատ լարմարութիւններ ունի խսդող և հանգիտ պարա-պիլու քան ազմիալից, գործից խլուզ զւարծութիւններով լի քաղաքի անմաքուր օդի մէջ:

Բայց եթէ մեր ուսանողը ցանկանում է ապագայում ոչ միայն խօսքի և այլ գործի մարդ զառնալ, անհրաժեշտ է, որ նա, առաջ քան բուն գիւղատնտեսական գլուխութիւններին անցնելը, մի տարով ընդհատի իւր տեսական ուսմանինթայցքը, մտնելով մի որ և է օրինակելի կալւած որպէս կամաւոր, (volontaire) և այնտեղ մի հմուտ կալւածատիրաջ ձեռքի զեկավարութեան տակ գործնականով պարապի: Ահա ակատեղ նա միջոց կունենալ ծանօթանալու աղն իսկական առաջադիմութեան հետ, որ արել է 19-րդ դարում գիւղատնտեսութիւնը: ‘Նա ակատեղ կ’ուսումնասիրի անտեսութեան զանազան եղանակները, կը հմտանաէ երկիր մշակելու բոլոր գիւղական ձեռքի մէջ, զրա հետ բազմահասակ անհրաժեշտ մեքենաների և գործիքների գործադրութեան մէջ, կը ծանօթանակ անսասունների և նրանց կերակրելու, պահելու, խնամելու արւեստի հետ: Գաշտերի բնական և արեստական պարարապման միջոցների, կուլտուրական բոլուրի զարգացման պայմանները, պատղափոխութեան, դաշտային տնաեւութեան, կալւածի կառավարչական հոգսերի և գժւալութեանց հետ, մի խօսքով ան բոլորի հետ, ինչ որ մի տարուց լետոյ նա պէտք է իւր ուսուցչապեսից, որպէս գիտնական մէթոսներ, ամբոխնից լսի, նրա քննադատութիւններին հետեւ, բացարարութիւններին մատնակցի: Ալսուղ ահա նա առիթ ունի իւր սովորած բնական գիտութիւնների օրէնքները, որոնց ազդեցութեան և հետեանքների ողջ պրոցէսը իրականութեան մէջ տեսնել, հետազոտել, ճշտել: Եւ շատ լաւ կը լինի, թէ կամաւորը չբաւականանաէ միմիայն հանդիտատես լինելով այլ ինքը անձամբ մասնակցի դաշտային բոլոր աշխատանքներին, արդիւնատնաեւութեան բոլոր գործանութիւններին, կալւած ատէրը միշտ ուրախութեամբ է նաևում կամաւորի ակսափսի եռանդուն գործանէութեան վրակ և ամին քաղաքիուսմ շտափում է իւր կամաւորին որպէս գործով նույիս և խօսքով օդնել, հետաքրքրութեանը բաւականութիւն տալ: Մի տարի ակսափս կալւածում անցնելը գիւղատնտես ուսանողին անքան օգուտներ կը տալ, որքան հազիւ լսարաններում անցրած մի քանի տարիները, և ապա թէ տնտեսական տարին բոլորելուց լետոյ նա կարող է նորից գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց գնալ չարունակելու ընդհատած ուսումքը, ակսուղ դասախոսութիւնների ժամանակ միայն նա կը հասկանաւ կալւածում անցրած մի տարւակ օգուտների տրժէքը, ապունակ դասախոսութիւնները նրա համար կը ստանան մի առանձին հետաքրքրութիւն, մի առանձին գրաւչութիւն, նա ձեռք բերած կը լինի կրիտիկական հաջացք, և այն բոլոր զրքերը իրանց բազմաթիւ նկարներով կը դադարեն այլ ևս վերացական զաղափարներ լինելուց, այլ որպէս վերաբառութեան միջոցներ իւր տեսածների ու կարգացածների, կը տան իրանց իսկական օգուտները: Ալնուհետև նա ֆիլտրափակութեան դոկտրի քննութիւն կը տալ թէ ոչ դա բոլորովին իր իմանալու և վճռելու հարցն է:

Եւ ալոպէս չորս տարի արտասահմանում անցնելուց, և լուսական նորագոյն դիւղատնուսութիւնը տեսականապէս և գործնականապէս ուսումնասիրելուց վետով, նա կարող է հանգիստ խղճով հալբենիք գառնալ, լի ասլազաչ լաջողութեան հաւատավ։ Հաջրենիք գալուց նա պէտք է վախչի իսկոն և եթ մեծ գործ ոկտելուց, նա զեռ ևս պէտք է այն երկիրը, ժողովուրդը, նրա պայմանները ուսումնասիրելու գործին ինքն նւիրւի, ինքը անձամբ փորձեր անի և ապա թէ իւր իսկական զործին և կոչմանը նւիրւի։ Միայն ալոպիսի գիտնական և փորձնական հմտութիւններից վետով նա կարող է որպէս իւր սեփական անձի նունապէս և հասարակութեանը օգտաւէտ լինել, և նրա մէջ հաւատ և վատահութիւն հաստատել գէպի գիւղատնական բարձրագոյն կրթութիւնը մամնաւորապէս և գէպի նրա վրկարար նշանակութիւնը՝ ընդհանրապէս

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱՅ0.—«Ախտահանութիւն»: 1893 թ., 175 էջ. Բաքու, տպարան  
Արօր: Գինն է 40 կոպէկ:

Ախտահանութիւնը էտիւդի նըստակելը լոկ գեղարվեստը չէ, այլ հեղինակը ունեցել է ձգտում մարմնացնելու մի բարձր, անպալման համակրելի, էտիկական (բարոկադիտական) սկզբունքը. Գոնիա բալորապին հաւանական է թւում մեղ, որ որ Լէօն կամեցել է ընթերցողին բերել այն եղբակացութեանը, թէ անհատը չէ կարող երջանիկ լինել, ապահով կեանք ունենալ, եթէ նորան շրջապատճերը տանչըում են, անապահով կեանք ունին. Մի հարուստ, որը նիւթական և ոչ մի պակասութիւն չէ զգում, անուամենանիւ չէ կարող երջանիկ լինել, քանի որ նորան շրջապատճում է ազգատ ժողովուրդը. Եթէ մեր ապահոված պարոնը կղզիացած կեանք, քը վարէ, նա մի տեսակ որբութիւն կը զդակէ բանտարկւածի նման կը լինի... Բնութիւնը, բնութեան արարածները (մարդիկը) քարշում են նորասիրու, գուրս են հրաւիրում... Եւ նա չէ կարող չտանջել անջատող պարիսպն է մեջ նախական թողնում է կղզիացած կեանքը շիւում է մարդկութեան հետ, չէ կարող դարձեալ բազզաւոր լինել, եթէ չէ մասնակցում նոցա հոգսերին և ուրախութեանը. Հետեապէս իւրաքանչիւր ապահոված անհատ հէնց իւր սկսական երջանկութեան համար պիտի առդիք հասարակութեան հետ, կապէ իւր վլաճակը նորա վիճակի հետ, նորա հետ ձեռ ձեռի տած մաքառէ նեղութիւնների գէմ, մասնակցէ գոլութեան ընդհանուր կուլին իւր բոլոր ոչմերով.

Որքան մաքուր, բարձր, մարդարկանիկ միաք, որ ունեցել է պ. Լէօն. Տեղ տեղ հերոսների արած կասուգութիւններից երեսում է, որ հեղինակի միաքը սա է. Միան թէ հեղինակի միաքը իրազործւած չէ վիպի պատմւածքի մեջ, նորա հերոսի մեջ մարմնացած չենք անմուռ է էօր բարձր միաքը:

Մեր առջեն պատկերացած է մի հարուստ սրաբոն, որը թէե բարի և

սիրող ամուսին և հակը է, բայց սաստիկ վախկոտ է, Խոլերալի ժամանակ նա ամենածագրավեղ միջոցներ էր որոնում իւր ընտանիքը վարակւելուց ազատ պահելու համար: Նա վախկոտութեամբ թէ ինքն է տանջում և թէ ընտանիքին է չարչարում Խոլերան աճում է: Մեր հերոսը, Արդարեանը դնում է գաւառապետի մօտ, որ նորան խնդրէ հեռացնել շրջակացքի աղքատ բնակիչներին դէպի հեռու վրանները: Բայց հերոսի խօսքը բիրանումն են թողնում և դաւառապետը, բժիշկը և միւսները նորա վզին դնում են մի քանի հարիւր բուբլի զոհել ձրի (Ժամանակաւոր) ճաշարան և թէրարան բանալու համար: Եւ նա զոհում է:

Ճաշարանը բացւելուց լետու իսու լիբան սկսում է պակասել: Եւ ահա այլ ևս նա չի վախենում, նա ուրախ է, երջանիկ է... կինը, Աշխենը, ոկը սում է ամելի սիրել նորան, վզովն է վաթաթւում:..

«Ա՛խ, այդ շատ լաւ է...» (Խոլերալի պակասովը) — ասում է տիկինը ամուսնուն — Եթէ ուզում ես որ հանգիստ ապրենք, աւելացրու (Ճաշողների թիւը), թող անգիստ մեծացնեն, որ օրական երկու հարիւր հոգի ուտեն: Ո՞ւզում ես մեր և մեր երեխաների հանգստութիւնը:»

Ուրիշն մեր հերոսի արած բարեղործութիւնը ուրիշ մի բան չէր, բայց եթէ զարձեալ իւր ընտանիքը ապահովութ մի միջոց: Նորան դէպի բարեղործութիւնը չէ, որտի էտիկական մեծութիւնը չէ, այլ լոկ իւր

անձի և սեփական ընտանիքի շահը, իսկ պ. Լէօն Արդարեանի բարեգործութեամբ հիացած է, ուզում է երկինք բարձրացնել նորան, որ ամենքը տեսնեն և սքանչանան Արդարեանի բարձրական գեղեցկութեամբ: Խակ մենք բոլորովին հակառակ կերպով ենք նակում այդ գեղեցկութեան վրաց:

Մի հարուստ մարդ, որը ով գիտէ ինչ ծուռ ու մուռ միջոցներով հարստացած հօր ժառանգն է, որը ոչինչ չի ինայում սեփական կեանքի բարօրութեան համար, ժողովրդ շական աղէտի ժամանակ վերջապէս համաձայնել է «մի քանի հարիւր բուբլի» շպատել ժողովրդի առաջը, այն էլ իրան ապահովելու նպատակով: Գլխերին տւած այդ մի քանի հարիւրները, որ շան առաջը նետած վշրանքների են նմանում: Այսօք Արդարեաների սեփական ապահովութիւնը պահանջում է մի քանի հարիւր բուբլի զոհել ժողովրդի համար, իսկ վազը նոցա ապահովութիւնը կը պահանջէ (և շատ անդամ խալապէս պահանջում է), որ նոյն ժողովրդից հարիւրների փոխարէնը հազարներ ծծեն և նոքա կը ծծեն և դարձեալ իրանց երջանիկ կը զգան:

Մենք հաւատացած ենք, որ պ. Լէօն չէ կամեցել արդպիսի ալլանդակ պակեր ստեղծել, բայց նա չէ կարողացել իւր իդէալը ամբողջացնել, իսկ իիսատ իդէալը միշտ ալլանդակ է լինում: Ծնթերցաղի ուշադրութիւնն ենք զարձնում հետեւալի վերակ:

«Յանկարծ նորա (Արդարեանի) միտքը լուսաւորւեց մի քանի համ

ճառագալթներից. Նա հանգստացաւ,  
նա գտաւ: Հասկացավ, ասաց նա,—  
հասկացավ... Դու առաջնորդիր ինձ  
դեպի այնտեղ ուր լաւ է, իմ Աշ  
խէն, իմ թագուհի...» Այդ խօսքե-  
րից մասամբ միան երեսում է Լէօփ  
իսկական միտքը, բայց միայն մա-  
սամբ: Մենք չգիտենք թէ այդ  
աթագուհին» ինքը ինչ արարած էր,  
հետևապէս մեզ համար գաղտնիք է  
մնում, թէ որ աստիճանի բարձրու-  
թեան կը հասնի նորա առաջնորդու-  
թիւնը: Վերեսում մենք տեսանք, որ  
նա խոլերակից վախենալով մարդուն  
համազում էր ճաշարանը մեծացնել,  
Նթէ ապագալումն էլ այդքան է  
առաջնորդելու իւր ամուսնուն, նո-  
րա առաջնորդութիւնը գրոշ չ'արժէ,  
Ուրիշ բան կը լինէր, եթէ նա ա-  
մուսնուն տանէր դեպի Լէօփ իսկա-  
կան իդեալը, ալսինքն նորան հա-  
մոզէր բոլոր սրտավի իւր ամ-  
բողջ էութեամբ նւիրւել ընդ-  
հանուր տառապանքները վերացնե-  
լու գործին... Խոկ կիսասիրտ...  
Հրէաստանի ձկնորսները անիծում  
էին կիսասիրտ Անանիաներին, խոկ  
մենք պիտի սոցա առաջ օրհներդ  
երդնք, ոչ երեք, Թող սոքա կամ  
բոլորովին տաք լինեն, կամ բոլորո-  
վին սառն, դոլ ջուրը զզւելի է:

Մենք պիտի թով չտանք որ սոքա  
իրանց փշրանքներով մարդկանց  
կուրացնեն:

Մի ուրիշ բան էլ կաչ Աթէ Ար-  
դարեանը խկապէս վերածնւած լի-  
նէր, ինչպէս հեղինակը կամեցել է  
ցոց տալ (բաց չի չաջողւել), այդ  
էլ անընական կը լինէր Որովհետեւ  
մարդիկ չանկարծակի չեն վերածըն-  
ւամ: Մենք ընդունում ենք, որ ան-  
հատի բնաւորութեան մեջ կարող են  
աշնաբիսի չեղափոխութիւններ տեղի  
ունենալ, որպիտիք տեղի են ունե-  
նում ժողովուրդների քաղաքական  
կեանքի մէջ, Բաց ինչպէս քաղա-  
քական չեղափոխութիւնները, նոյն-  
պէս և անհատական վերածնութիւն-  
ները երկար ու բարակ նախապատ-  
րաստութիւն են ունենում: Խոկ այդ-  
պիսի նախապատրաստութիւնն մենք  
չենք տեսնում Արդարեանի կեանքի  
մէջ: Նա գաւառապետի տանը մի  
շարք ֆրազներ լսելով և հենց թըշ-  
ւառութեան քանի մի օրինակներ  
տեսնելով, չէր կարող վերածնելը  
Խոկ եթէ նա չէր կարող վերածնել  
և խոկի չվերածնեց էլ, մենք առան-  
ձին նշանակութիւն չենք տալ նորա  
արած «բարեգործութիւններին»:

ՄՈԶԽՈՒԲԱՐԻՉԵ, Ա.—«Ելգուջա»: Վրացերէնից թարգմանեց Տ. Փի  
բումեանց: Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Հրատարակչական,  
Ընկերութեան: Գինն է 45 կոպէէ:

Այն ժամանակից ի վեր, երբ կովկասաբնակ հակերն էլ սկսեցին հրատարակել զանազան լրագիրներ, ամսագիրներ և գրական հանդէսներ, խմբագրողներից և որանց աշխատակիցներից ոչ մէկը մինչ վերջին ժամանակներու ուշադրութիւն չդարձրեց մի փոքրաթիւ ազգի գրականութեան վրա, թէն այն ազգը միր զարեսրու հարեանն է, որը ներկայումս ճգնում է գովելի հռանդով լուսաւորութիւն տարածել իր անդամների մէջ մարդինի հասկանալի լեզուի: Այդ ազգը վրաց ազդն է, որը ինչ պէս հին դարմբում, ունի և ներկայում ծաղկող գրականութիւն արժանի լուրջ ուշադրութեան և համակրանքի: Բայց թնջու չինչը հարցափրաւմ այս գրականութիւնը, ինչու գէպի նա մասիս ի աչին ազգասիրական արհամարանքով էինք վերաբերում մինչև ալժմ: Երեխ այն պատճառով, որ միր եզրաքը վրացիները «մոջչարա ուսմեխիս» (վախլուն համար) էին անւանում միզ ու մինք էլ պարագի տակը չմնալու համար, առաջաց վրացին կանչում նրանց: Ո՞րտեղից կամ որ չար հոգին էր գյուլ այս փոխադարձ անարդ առելութիւնը զարեսր հարեան ուղղեց սիրելու և չարգելու համար: Մասնաւում մի անդամն սիրելու մէջ, որոնք միմեանց սիրելու և չարգելու փոխանակ, իրար միմն են ուղղում: Մական ուրախալի է նկա-

տել մի երեսովթ, որ հաւերճ ու վրացիները, լաւ հասկանալով անմիտ ատելութեան վեատակարութիւնը, միմանց հաշութեան և բարեկամութեան ձեռք մեկնել են սկսել այս վերջին ժամանակներում, լարգանքով և ակնածութեամբ վերաբերւելով իրար: Օրինակ, տեսէք, լարգելի պ. Գ. Ծերեթելու խմբագրութեամբ հրատարակող «Կւալի» շաբաթաթերթի ըրացել է իր սիմեակները և ուրախութեամբ տպագրում, հակերին վերաբերեալ ինքնուրուն օգուածներ, նկարագիրներ և մանրավեպեր:

Հայերէն «Տարադ» շաբաթաթերթըն էլ սկսել վրացերէնից թարգմանութիւններ գետեղել իր մէջ: Սական պէտք է ձշմարիտը խոստովանել, որ ազ նոր և համակրելի շարժման սկիզբը դրեց պ. Աւ. Արատիսանեանցը, իր «Մուրճ» ամսագրով, որը չեշտելով միր վրացի ազգերի ուսումնաութիւններ անհրաժեշտութեան վրայ, որուա սկիզբը դրեց, տալով հայընթերցադ հասարակութեանը վրացերունից երկու գեղեցիկ վէպերի թարգմանութիւնը: — Ալացիա Աղամիանի:

Ի. Ճաւճաւաձէի և «Ելլիսօ» Ալ. Մոշիսուրարիձէի, որոնք լաւ ընդունելութիւն դատն և որոնց պէտք է հետեւէր նոյն Մոշիսուրարիձէի «Ելգուջա» վէպը «Մուրճ»-ի խմբագրութեան քանիցս կրկնած խոստման

համաձայն <sup>1)</sup>: Յուսանք, որ բանը սրանով չի վերջանալ, այլ կը չարատեի մեզանում նոր ծնունդ առած գրացիական համերաշխութեան գաղափարը:

«Մուրճ»-ի տւած դրդումին հետեւ նաև Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութիւնը, որը մօաժամանակներում հրատարակեց վրացի նշանաւոր հեղինակի «Ելգուջա» գլուխ դործոց վէպը, թարգմանութեամբ պ. Փիրումնանցի: Բայց նախ քան այն մասին խօսելը, թէ որ աստիճան լաջող է հայերէն թարգմանութիւնը, անհրաժեշտ ենք դատում բերել ալսուեղ վէպի կարծառութ բովանդակութիւնը:

Ոչգուջավոր հեղինակը իր վէպի համար նիւթ է վերցրել Վրաստանի նորագուն պատմութեան այն ժամանակամիջոցը, երբ Վրաստանը զանազան պատճառներից ստիպւած՝ իր գոլութիւնը չարատեելու համար ընդունում է ուսւաց հզօր տէրութեան հոլանաւորութիւնը: Ելգուջա, որ վէպի հերոսն է, Գագութիւնապահ ճորտերից մէկն էր և իր տիրոջ նոր զնած, Զերքէպստանից փախցրած գերունու վրա սիրահար-

<sup>1)</sup> Այդ վէպը խոստացել էինք տալ ներկալ 1893 թւականին, բայց այժմ ապագրած տեսնելով Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկերութեան կողմից, մենք մեզ համար գեռ ևս չենք վճռել նորա նոր հրատարակութեան խնդիրը, թէն արդէն վազորոք վէպի թարգմանութիւնը լանձնւած էր մեր աշխատակից և այս օղուածի հեղինակը պ.

մելով ու փոխադարձաբար սիրելով, խնդրում է Դագուց, որ չերքէզուհի Մզազօին իրեն տալ: Սական Դագին այսպիսի բազմաթիւ գերուհին ներ ունենալուց վերին աստիճան լրացած և տակավին Մզուղօի տըրփանքները չվակելած, մերժում է էլգուջավին: Խնչէր մնում էլգուջավին անել, եթէ ոչ լեռնականների ընդհանուր սովորութիւն համեմատ, փախցնել աղջկան, և փախցնում էլ է իր հաւատարիմ ընկերի օգնութեամբ: Բայց ելգուջան չէ կարողանում երկար ժամանակ վակելել անդորր երջանկութիւն իր սրտի հատորի հետ, ազ նրան կոզակները սպանում են իր ընկեր Մաթիազի հետ, կառավարութեան հրամանով, և ապաբախտ Մզազօն իր զաւակներով նորից ծորտ է դառնում:

Ահա ալսպէս է վերջացնում իր վիպը Մոչսուբարիձէն: Սական պ. Փիրումնանցը վէպի թարգմանութիւնը աւարտում է անտեղի ուր ելգուջան փախցնում է իր սիրահարին ու պսակում: Թարգմանիչը իր վարմոնքը ալսպէս է բացարում հէնց առաջնորդներում: «Թարգմանելով պ. Ա. Մոչսուբարիձէնի (Ա. Ղազբէղի) ալս ամենանշանաւոր գրւածքը, մենք հարկ համարեցինք դուրս ձգել սրա մի ամբողջ երրորդ մասը, որ ոչինչ կապ չունելը ընդհանուր հիւաւածքի հետո» Վերուիշեալից ընթերցողը կարող է եպրակացնել որ Մոչսուբարիձէնի վէպի հայերէն թարգմանութիւնը մի շատ պակաս պատաս բան է և ոչ մի նմանութիւն չունի բնագրի հետո: Բացի երրորդ գլուխի չթարգմանելը, պ. Փի-

րումեանցը քմածին կերպով դուրս  
է զցում երկրորդ գլխից շատ տեղեր։  
Օրինակ բնագրի 81.երեսից հանել է  
28 տող այն խօսակցութիւնը, որը  
տեղի է ունենում Սւյմոնի և Ալեք-  
սանդր արքայորդու պատգամաւոր-  
ների մէջ, և 98.երրորդ երեսից դար-  
ձեալ 31 տող հանւած է և այն,  
մինչդեռ այս հանած տողերը շատ  
բան են հասկացնում ընթերցողին,  
այն ժամանակւակ կացութեան մա-  
սին, իսկ պ. թարգմանիչը զրկում է  
մեղ այս ամենից։

Մենք հաստատապէս համոզւած  
ենք, որ եթէ վէպի հեղինակ՝ Ա.  
Մոչիսուբարիձէն տակաւին տիրա-  
պետելիս լինէր իր մտաւոր ուժե-  
րին ինչպէս իր գեղեցիկ վէպի հեղի-  
նակելու միջոցներում<sup>1)</sup>, շատ պիտի  
վրդովէր և զարքանար իր գործի,  
բացի անչնորհ թարգմանութիւնից,  
այս կերպ ավանդակելու պատճառով։

Կարդալով հէնց առաջին երե-  
սում գրւած թարգմանչի ծանօթու-  
թիւնը, շատ զարմացանք, նամանա-  
ւանդ այն պատճառով՝ որ մենք էլ  
էինք կարդացել վէպի վրացերէն  
բնագիրը և թարգմանչի գտած  
հիւսւածքի հետ կապ չու-  
նենալը չէինք նկատել և հա-  
մոզւելու համար կրկին ծալրէ ի ծալր  
կարգացինք բնագիրը, բայց այնպի-  
սի բան չգտանք։ Այդ մտքով մենք  
դիմնցինք նոյն իսկ վրաց հրատա-

<sup>1)</sup> Պլ. Ա. Մոչիսուբարիձէն քանի  
մի տարի է, որ անդամալով և Հո-  
գեպէս հիւսնդ՝ զտնուում է Ֆիֆլիսի  
Միքայէլեան հիւսնդանոցում։

Յ. Հեղ.

րակչական ընկերութեան վարիչ ան-  
դամներից մի քանիսին և խնդրե-  
ցինք ցուց տալ մեզ վէպի աչն մա-  
սերը, որոնք թարգմանչի ասութեամբ  
կապ չունէին ընդհանուր հիւսւածքի  
հետ Բայց ի մեծ զարմանու մեր, ար-  
գոյ պարոնները, միաբնրան բողոքե-  
րով թարգմանչի վարմունքի դէմ,  
չափարարոցին, որ պ. Փիրումեանցը  
բոլորովին չէ հասկացել հեղինակին,  
Եւ ուղիղ որ չէ հասկացել և շատ  
տեղեր բոլորովին, ալսպէս ասած,  
թարս է թարգմանել։ Որպէս զի  
«Մուրճի» ընթերցողը մեզ չմեղադրի  
զրպարտութեան մէջ, բերենք մի քա-  
նի օրինակներ։ —Հեղինակն ասում է  
1 երեսում. «այսուեղ սարը ծական  
ներքնուղի էր շինւած, որի ծալրի մօտ  
մոխեցի պահնակներ էին կանգնած,  
որոնք պաշտպանում էին Վրաս-  
տանը անկոչ հիւսերից»։ Իսկ թարգ-  
մանիչը ասում է. —«Այդ ծակի մի  
կողմում կանգնած էին պահապան-  
ներ Վրաստանի մուտքը պահպանե-  
լու համար»։ —Սրանից չի հասկաց-  
ում թէ ոլքնը էին պահապանները  
և ում դէմ էին պաշտպանում։

Հեղինակն ասում է. «Այ քո Խեն-  
ցելակի զօրութիւնը խոռվ կենաչ ինձ,  
ծաղրելով պատասխանեց Մոխեցին»։  
Իսկ թարգմանիչը ասում է. —Այ  
սրբերով խռով կենան գլխիղ, ծիծա-  
ղելով առեց ձորեցին (էջ 5)։ Այսուղ  
թարգմանիչը երկնչում է Մոխեցու  
փոխանակ, որ չէ ուղում օսի Խենցե-  
լան խռով կենաչ նրան և անէծքը  
թափում է նոյն իսկ օսի գլխին։  
Հարկ չկաչ կոմպլիմէնտ անելու Մո-  
խեցուն, որը ծաղրում է (և ոչ Բ'.

ծիծաղում) օսի երկչուառթիւնը և նրա սրբին:

Հեղինակն ասում է. «Այս խօսքերի վրա որահի պատկից թագուի վրաից մի հրացան վայր թեքեց ու ձան լււեց» թարգմանիչը ասում է. «Ազ խօսքերի վրալ մի հրացան դուրս ցցւեց պատի քացւածքից ու ձան եկաւ» (Եջ 7-րդ):

Հեղինակն ասում է. «Ուրիմն չեն չարշարիւ չեն սպանիւ ինձ»: և այս պիսի թեթև նախաղասութիւնը թարգմանել է. — «Հապա ինչու են ինձ չաք քարում. չեն սպանի արդիօք ինձ» (Եջ 15-րդ): Զերքէզուն սական ոչ ոք չեր չարշարում, հետեափս չեղած բանի դէմ չեր կարող բողոքել:

Հեղինակն ասում է. — «Դակ և թէ ձանձրանաս, այն ժամանակ ինչ կ'անհառ, թարգմանել է. «Դակ և թէ զզջաս, այն ժամանակ ինչ պէտք է անել» (Եջ 23): Զզջում են ոչ խկական սիրով սիրողները, որպէս են ելգուջան և Մզազօն, ալ նրանք, որոնք փողի և դրութեան համար են ամուսնանում, որոնք ցոփակեաց են և որոնց սիրան ու զզացմունքները լրացած են ընդհանուրին չափոնի մը աններում:

Հեղինակն ասում է. — «Եւ որանք հեշտութեամբ կարող էին պահապաններից աննկատելի կերպով փախչել և ընդմիշտ զերծ մնալ նրանցից»: Թարգմանւած է. — «Քանի որ նրանք կարող էին զիշերով զուրս գալ ընդդմադրել պահ և ապա ներին կը զիշտ միշտ աղառուել (Եր. 49): Ինչու ելգուջան կը զուրս գար ընկերների հետ արձակ տեղ և կը նդ-

դիմադրէր պահապաններին, քանի որ աւելի ապահով տեղումն էր ապատանած և առաւել հեշտ էր ծածկած տեղից մարտնչել իրան հալածող բազմաթիւ թշնամիների դէմ. հետեապէս պէտք է փախչէր առանց նկատելու, ինչպէս որ հեղինակն էլ գրում է:

Առաջ բերած կտորները, կարծում ենք, բաւականին պարզ ցոյց է տալիս, որ թարգմանիչը աշխատել է, կարծես գիտմամբ, բնապիրը բոլորին թարս թարգմանել: Կարող էինք աւելի շատ, մինչեւ անդամ վիրին աստիճանի ծիծաղնի կերպով թարգմանած կտորներ բերել. բաց ապահնն էլ բաւական պարզ ցոյց է տալիս, որ թարգմանիչը չէ հասկացնել հեղինակին, երեխ վրացերէն լեզուում զլխորին բոբիկ վիճելու պահճառով: Հատեապէս չեր էլ կարող ճիշդ թարգմանել, որովհետեւ, բացի վրացերէնը լրաւ չզիտենալուց, չզիտէնալու իսկ ամեն որ հազար անդամ կրինւող ամենապարզ խօսքերի նշանակութիւնը:

Տերենք դարձեալ քանի մի օրինակներ:

Հշանակութ է Առաջանաւ և Դացինաւ — ծաղրել — ծիծաղնել  
մոծդինաւ — ձանձրանաւ — զզջաւ  
փրուտուճնի — փոնչալ — ախորժակ  
մլլաւի — թե, աջ — սպանող  
մորչնաւ — առողջացնել — կենդանացնել  
զաշինջւա — զննել, մնդղել — ահսնել  
օխոճնորա — կատակ — փալիւին  
մոքնեա — վրա բերել — թոփ տալ  
գանաչառվերա — մեղապարտութիւն,  
թարգմանած է՝ անհնազանդութիւն  
գարզընիլի — լրացած — փչացւած  
նաբագի — եապինջլի — թաղիք

Դեռ սրանք ոչինչ. պ. Փիրումեանցը իր թարգմանութիւնը կատարելապէս թարս անելու համար, մինչև անդամ քանի մի չատուկ անուններ էլ է քմածնօրէն թարգմանել. Օրինակ Մոխեցիների «նաղւարափ» սուրբի անունը թարգմանել է հեղեղ, քաց աւելի զարմանալին ան է, որ այն «հեղեղը» մի ավլ տեղ «Ասածոկամք» և մի երրորդ տեղում էլ «Ոք. Վէորդ» է դուրս դալիս:

Խորհուրդ ենք տալիս վրացերէն

խմացող հակ ընթերցողներին կարդալ բնագիրը և կը տեսնեն թէ որքան կեղեցիկ ոճով է գրւած վեպը, որ առաջնան համակրելի են զուրս բերած տիպերը և ինչ հիանալի ու գեղարւեսական նկարագիրներ կան տեղագրական և բնութեան երեսթների, որոնք դժբաղսաբար, բոլորովն չեն նկատում հակ թարգմանութեան մէջ:

Մէրժէ Նահանաբարեանց:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՕՇՄԱՆ ՀԱՆԴԵՍԻՑ

Աւելի քան երկու տարի առաջ սկսած դործը իւր վերջնական վախճանին հասաւ սեպտեմբերի 26-ին։ Այդ օրը օծւեց ազգընտիր և կայսերահաստատ Կաթողիկոսը ս. Էջմիածնում, ներկայութեամբ տասնեակ հազար հոգու։ Ես չեմ մոնիլ այդ փառաւոր հանդէսի մանրամասնութիւնների մէջ, ես չեմ նկարագրիլ հանդէսը ինքը, որի կատարումը որոշ կարգ ու կանոն ունի։ Ես պէտք է արձանագրեմ տեսածս բաներից միայն այն, ինչ որ և է կապ ունի գրութեան ու ժամանակի հետ, այն, ինչ վերաբերմունք ունի ժամանակիս կեանքին։ 08ման հանդէսը լիուլի առիթներ ուեց այդպիսի դիտողութիւնների։ Խայց ամենից առաջ չթողնենք, որ աննկատ անցնեն այն խմաստալից արտայացաւութիւնները, որոնց աղբիւրը Խրիմեանի պէս մարդու մաքի ու սրտի մէջն է։ Այդ արտայացաւութիւններից արձանագրենք մի քանիսը, որոնք առանձին խորհուրդ ունին։ Հայրիկի կարգագրութեամբ ս. 08ումը կատարւեց ոչ եկեղեցու մէջ, Էջմիածն տեղում, Մաշտոցի համաձայն, այլ կատարւեց դուրսը, վանքի առաջ, գաւիթում, տասնեակ հազար հոգու ներկայութեամբ։ Դա մի մեծ դաս էր, որ արւեց եկեղեցու հայրապետի կողմից, հայրապետի, որի հեղինակութեան առջև խոնարհում է թէ աշխարհականը և թէ հոգևորականը։ Դասը կայանում էր նրանում, որ կարելի է և հարկաւոր է ծիսակատարութիւնների զիրք Մաշտոցը այսպէս ասած սրբագրել, փոփոխել ժամանակի և կեանքի պահանջների համեմատ, մի հացեացք, որ արտայացել էինք երեք ամիս առաջ նոյն այս տեղում («Մուրճ» 1893թ. № 6, «Եկեղեցական-վարչական բեղորմներ» յօդւածում), և որ մեզանից

առաջ յայտնել են յառաջդիմական մամուլի լաւագոյն ներկայացուցիչները սկսած 60-ական թւականներից:

Միմիայն կենդանի վերաբերմունքով դէպի անցեալի աւանդուցիւնները և դէպի ներկան կարելի է ոդի ներշնչել ժողովրդին նոյն իսկ նորից իմաստ տալ այն ծէսերին, որոնց հիմքում խելացի իմաստներ են թագնւած, բայց որոնք աննկատ են անցնում միայն էնդուր, որ արարողութիւնը լոկ արարողութիւն է դառած, լոկ մի հանդիսակատարութիւն:

Հենց այսպէս էր որ օծումը ինքը ժողովրդի հասկացողութիւնով լոկ մի հասպիսակատարութիւն է, այն փառաւոր, բայց և այնպէս լոկ հանդիսակատարութիւն, ուրիշ ոչինչ։ Որքան մեծ սիսալմունք է այդ սակայն ևս ևս, որ գրքերով չեմ սովորած մեր արարողութիւնների իմաստը, մտածում էի ինչպէս մտածում է համայն ժողովութրդը։ Բայց ինչ արժէք պէտք է ունենայ այն հանդէսը, որի իմաստը ըմբռնելու համար պէտք է հին զրքեր քրքրել։ Ով է մեղաւոր որ այդպէս է. կրկին մեռած վերաբերմունքը դէպի կեանքը։ մեղ սովորեցրել են ծէսի վրայ նայել որպէս լոկ հանդէսի վրայ։ Խրիմեանները սակայն վերակենդանացնում են անցեալը, իրանց կենդանի վերաբերմունքով ուսուցանում են այն, ինչ միայն գիտնականի, պատմագէտի բաժին են համարում մեր փոտածները։ Բանից, իրօք, գուրս է գալիս որ օծումը լոկ մի արարողութիւն չէ. բանից գուրս է գալիս որ օծումով կատարում է վաւերացումն ընտրւած կաթողիկոսի, և որ այդ վաւերացումը չի կարող լինել հրամանով կաթողիկոսի, այլ համաձայնութեամբ առնւազն տասներկու եպիսկոպոսների, այսինքն եկեղեցու ամենաբարձր աստիճանաւորների։ «Դուք, ասաց Հայրիկը դիմելով տասներկու եպիսկոպոսներին, հանդէսից յետոց, ճաշկերոյթի ժամանակ, — գուք ձեր բութ մատները սղմեցիք իմ գագաթին. ազգը ինձ ընտրեց, կայսրը հաստատեց, բայց ևս կաթողիկոս չի լինիլ եթէ զուք ինձ չօծէիք. այժմ այլ ևս ձեր կախումից ազատեցի և հերթը իմն է իմ բութս ձեր գլխներին սղմելու։ Օծումը, այսպիսով, լոկ մի արարողութիւն չէ, ինչպէս լոկ արարողութիւն չէ երբ ազգի ընտրածները էջմիածին են հաւաքւում կաթողիկոսացուներ ընտրելու համար։ Օծումով կատարւում է մի ակտ, մի գործողութիւն, ուր մի գասակարգի

կամքը գեր է կատարում, ինչպէս գեր է կատարում «ընարեմ» և «ոչ ընարեմ» խօսքերը համազգացին ժողովում կաթողիկոսական ընտրութեան ժամանակ։ Սրբարև մեծ խորհուրդ. Եկեղեցական գառակարդը օծումով ինքը իւր հաճութիւնն է յայտնում կաթողիկոսունենալ նորան, ում որ ազգը ընարել է։ Եկեղեցուն գլուխ կանգնելու համար թեկնածու առաջարկողը ազգն է. և որովհետև կաթողիկոսը պէտք է յարաբերութիւն ունենայ մարմնաւոր իշխանութեան հետ, որպէս նաև հոգեւոր դասակարգի հետ, հետեւապէս ազգի առաջարկածին պէտք է հաւանութիւն տայ թէ մարմնաւոր իշխանութիւնը և թէ եկեղեցուն ծառայող դասակարգը։ Ազգի կամքը յայտնուում է համազգացին ընտրութիւնով, մարմնաւոր իշխանութեան հաւանութիւնը՝ կայսեր հաստատութիւնով, հոգեւորական դասակարգի հաւանութիւնը՝ օծումով։ Օծումը ուրեմն լոկ արարողութիւն չէ, այլ ընտրողական գործողութեան շարունակութիւն, գործողութեան, որի ամենանշանաւոր բովէն բնականապէս առաջինն է՝ ազգի ընտրութիւնը, իսկ ամենահանդիսաւորը՝ այդ ընտրութեան նւիրագործումը, սրբագործումը օծման միջոցով հոգեւորականութեան ամենաբարձր անդամների կողմից՝ յանձին տամներկու եպիսկոպոսների։

---

Այն բազմաթիւ ընդունելութիւններից, որ արեց ԱՅՀափառը Օծման հանդէսին եկած պատգամաւորներին, յիշառակելու արժանի է մէկը, ուր մի նոր նիւթի մասին նոր խօսք առեց։ ՎԵՀափառը, դիմելով պատգամաւորներին, յայտնեց որ Կրանից ազգը շատ բան է սպասում, և որ Խնքը, սակայն, առանց ազգի ձեռնաւութեան՝ հրաշքներ գործել չի կարող։ Նա կարօտ է օգնութեան և որ յոյս ունի թէ ազգը չի խնացիլ իւր միջոցներով օգնութեան զալ։ Ահա այս առիթով է որ Հայրիկը, դիմելով պատգամաւորներին, յայտնեց թէ ինչպէս է Նա հասկանում դրամական օգնութիւնը։ Ոչ թէ ժողովել վանականների ձեռքում, այլ թող որ ժողովուրդը ինքը շինէ, անէ և վերահսկէ հաշիւներին, — այդպէս յայտնեց Հայրիկը։ Այսպիսով աշխարհականները, Հայրիկի ցուցմունքով և հաւանութեամբ՝ կարող են օգնել գործին։ Դորանով իրագործած կը լինի,

մի յայտնի չափով դոնէ, ժողովրդական կոնտրոլը եղած ծախքերի վրայ:

Հայրապետի այս խօսքերով արտայացուած ենք տեսնում մի ընդհանուր ցանկութիւն — մացնել ժողովրդական վերահսկողութիւն էջմիածնի Փինանսների վրայ: Եւ մենք համոզւած ենք որ այդ պիտով ժողովրդի կազմը էջմիածնի հետ աւելի ևս կամրանայ, թէև Մայր-Աթոռի հետ ունեցած յարաբերութեան մէջ ազգի կողմից — Փինանսական գիուռմները անշուշտ երկրորդական տեղ ունք է բռնեն: Բայց եթէ խօսքը վերաբերի արտաքին գարդին, բարեկեցութեան, անհրաժեշտ շինութիւններին — ժողովրդի հաւատը գէպի հոգեոր կառավարութիւնը երկրորդական դեր չի կատարում այլ առաջնակարգ: Եւ այդ հաւատը պէտք է աշխատել որ ամրանայ. իսկ ամրացնելու առաջին և ամենաանլրէալ միջոցը — ժողովրդական կոնտրոլն է ժողովրդից դուրս եկած փողերի գործածութեան վրայ: Պէտք է պարզը խոստովանել. ազգի մասնող մասի մէջ այդ հաւատը արդէն վազուց խախտւել է. չկայ հաւատ ոչ դէպի երեց փոխը և ոչ դէպի կենարունը, որաեղից յաջորդներ և առաջնորդներ են նշանակում թեմերի համար:

Այս նիւթի մասին աւելին ընդարձակելլը աւելորդ ենք համարում. հանգամանքը ամենքին յայտնի է: Մեզ համար մեծ կարևորութիւն են ներկայացնում Հայրիկի խօսքերը այդ նիւթի մասին: Եթէ ժողովրդական կոնտրոլը սիստեմատիքապէս մացնւի եկեղեցական-վարչական բոլոր գործառնութիւնների մէջ, — այն ժամանակ պէտք է կարծել որ ժողովրդի այդ մերձաւորութիւննը իւր ազգեցութիւնը կ'անի նաև ամբողջ հոգեոր դասակարգի բարոյականի վրայ:

---

Այդ ցաւալի հանգամանքը, որի մասին մենք խօսում ենք, իւր գրոշմը զրել է էջմիածնի այսպէս ասած ամեն մի քարի վրայ Վերցրէք ս. էջմիածնի որ շինութիւնը որ կամենաք — և դուքզը համոզւեք որ կարծես նոքա միայն վարձով բնակողներ են ունեցել: Հենց ինքը Մայր-Աթոռի Մայր-Եկեղեցին — վերանորոգութեան կարօտ մի շինութիւն է: Վերցրէք Ամենայն Հայոց կաթողիկոսի բնակարանը՝

Վեհարանը, — ոչինչ չկայ նրանում վեհ. այդ դեռ ոչինչ՝ — նա նոյն իսկ մի յարմար բնակարան էլ չէ: Կաթողիկոսը սովորած է ոչ բարձր պաշտօնական ընդունելութիւնները իւր ննջարանում անել: Նայեցէք վանքի շուրջը — եպիսկոպոսների և այլ միաբանների բնակարանները. իսկ որ խուց եր և ոչ բնակարաններ, առանց որքան և իցէ հրապուրիչ արտաքինի և նոյնքան էլ անհրապուրիչ ներքինի: — Սինոդը, ուր վճռում են եկեղեցական-վարչական կարևորագոյն գործերը — մարդու հաւատալլը չի գալիս թէ այդ շինութիւնը Հայեաստանեաց եկեղեցու սինոդն է և Կաթողիկոսի խորհրդարանը: — Ղազարապատ կոչւած հիւրանոցը — բայց, Տէր իմ, Ասուած իմ, դա բանի նման շինութիւն չէ: Ճեմարանն է, որ մի չնորհքին տեսք ունի. բայց մամուլի մէջ նոր չեն խօսում նորաներքին անյարմարութիւնների մասին: Լիճը՝ փառաւոր է, լաւ է, գոնէ արտաքուստ, բայց այն անտառը որ նա պէտք է ուսոգէ, — այդ անտառը անխնամ է թողած և ոչ մի հրապոյր չի ներկայացնում: Շրջեցէք վանքապատկան հողերը — անշակ, զուրկ հարկաւոր շափով ջրից: Շրջեցէք մօտ վանքերը՝ նողակաթ, Հռիփսիմէ, Գայանէ — մինչ մօտ օրերս բոլորը բարձի թող արած:

Այս ամենը տեսնելով մարդս չի կարող զավել իւր հիացմոնքը նախկին տեղակալ Երեմիա եպիսկոպոսի համարձակ ձեռնարկութիւնների վրայ: Առանց վտահանալու ձեսք կառկառել դէսի ժողովուրդը, առանց զբսից օժանդակութեան զիմելու, այդ համեստ գործիչը, լոկ վանապատկան մշտական հասոյթների խնայողութեամբ և իւր պատասխանատուութեամբ ապագայ կաթողիկոսի առաջ՝ համարձակ պլանների է հետեւել: Եւ իրօք մոքի թուիչք է հարկաւոր միաբանների այժմեան հինաւուրց խուցերից սլանալ վէպի ճարտարապետ Շտերնի հոյակապ շինութիւնների նախագծի իրականացումը. փառաւոր փաստղով սրբառաշ քարերից կտոռուցած մի զեղատեսիլ և հոյակապ շինութիւն, արժանի էջմիածնի անւանիը: Բայց բացի ացդ մեծ գործից՝ Երեմիա եպիսկոպոսը նոյն ացդ երկու տարիներում քանքաններով խմելու ջուր է բերել տալիս վանքի գաւիթը, նորոգում է սեղանատունը այնպէս, որ Վեհափառ Հայրիկը չնորոգած մասերը ացցելելով՝ հրամացում՝ է նոյն ձեռվ նորոգել տալ: — Վեհարանի երկու գանիճներից մէկի առաստաղը բարձրացնել է

տալիս, որ գոնէ ընդունելութեան մի շատ թէ քիչ բանի նման սենեակ դառնայ: Մի խօսքով այն, ինչին մարդու ձեռք է կողեւ— Երեմիա եպիսկոպոսի ձեռք տաճներն են:

Բայց եթէ առանց օգնութեան դիմելու կարելի է այդպիսի ձեռնարկութիւններ սկսել, — նոցա շարունակելլ անհնարին է առանց ազգի ձեռնաւութեան: Մանաւանդ որ խնդիրը միայն շինութիւններ կառուցանելու մէջ չէ: Պէտք է գործունէութիւնը, նպաստակները արդարացնեն շինութիւնների վրայ արած ծախքերը: Իսկ էջմիածնի ներքին գործունէութեան հետ, ինչպէս այդ ամենքը սպասում են, անհրաժեշտ ծախքեր են կապւած, որոնց հայթհայթմանը չեն կարող բաւել այժմեան եկամուտները:

Էջմիածնի արտաքինի հետ բնականաբար պէտք է սպասել, որ նորա սպասաւորների սերունդը ևս կը փոխւի: Եթէ Էջմիածնը պէտք է լուսաւոր գործունէութեան մի կենտրոն գտանայ, — անկարելի է այդպիսի մի բան սպասել հին սիստեմների և հնացած սովորութիւնների տէր մարդկանցից: Եւ արդէն իսկ նկատելի է որ Էջմիածնի միաբանութեան մէջ մի թարմ տարր է մտել, որը անշուշտ զօրեզանալու է Հայրիկի օրերով: Յաւում եմ որ չեմ կարող վկայել թէ բոլոր թարմ և համակրելի գործունէութեան հետեւղ անձերի մէջ համերաշխութիւն տիրապետելիս լինի. ոչ, այդ տպաւորութիւնը ես գուրս չբերեցի: Բայց այժմ, երբ հայոց Արծիւը Էջմիածնի վեհարանումնէ, ամեն ինչ բնականաբար ձգտելու է միանալ մի գրօշակի տակ: Յանկանք որ այդ գրօշակի տակ գործող բոլոր անձերը կը սովորեն յարդել միմանց և փոխադարձ համակրութիւնից նոր հաւատ ձեռք բերեն ապագայ ժամանակներում համերաշխարար գործելու համար:

## ՎԱԹՈՐԻԿՈՍԻ ՕՆՈՒՄԸ ԵՒ ՇԱՄԱՆՈՒ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԵՐԸ

Հայրիկը օծւեց, ամեն մի հաչ զգացւեց, ուրախացաւ և ալդ ուրախովթիւնը ամեն մէկը մի եղանակով լսանեց. Խ՞ոչ էին մտածում բողոքական հայերը այն ժամանակ, երբ հաչ ժողովուրդը շարժւած, վառած էր. ահա մի հետաքրքրական երեսիթ, որի մասին քիչ կը պատմենք մենք. Բողոքադան հայերը, մտածում էի ես, չեն կարող չցաւել չուրախանալ այն ժամանակ, երբ ցաւում կամ ուրախանում է ազգը. ուրեմն ալժմ երբ ցնծում է հաչ ժողովուրդը, պէտք է որ բողոքականներն էլ ցոցեր անեն արժանաւորին արժանաւոր կերպով սղջունելու համար:

Անհրաժեշտ է, մտածում էի ես, Կովկասու բողոքական համաճնքի կողմից մի պատգամաւոր ուղարկել օծմանը կամ մի ալլ կերպ լսանել մեր ուրախութիւնը. Միւս կողմից քաջ ծանօթ լինելով թէ. ինչպէս Շուշան հաչ բողոքականները կարդում էին Հայրիկի գրքերը, ինչպէս համակրում, սիրում էին նրան, համոզւած էի որ եթէ Շամախու բողոքականներն էլ միանան սրանց հետ, վետով կարելի էր սպասել որ Կովկասու բոլոր բողոքականները կը միանան սրանց հետ և ապա մենք հասած կը լինենք մեր նախառակին:

Սեպտեմբերի սկզբներում Շամախի էի. կիրակի օրը քարոզը վերջանալուց քետով ինդրեցի ժողովքից, եթէ կարելի է, թող տան ինձ մի առաջարկութիւն անել:

Համաձայնութիւն ստացաւ և ապա սկսեցի պարզել եղանակութեան և հաչ ժողովդի բաժանաւած տարբերի փոխադարձ սիրու կարեսութիւնը, աշխատեցի ապացուցանել բաժանման, ատելութեան կորսատակեր հետեանքը, բարբարոս ինկիվիտարների չարաչար սխանները և ապա մօտեցան ինդրին. շմռացաւ ալյտեղ վիշել այն ուրախութիւնը, որով լողունեց ինձ Հայրիկը Թիֆլիզում, երբ լսանեցի ևս Շուշան բողոքականների համակրանքը դէպի. նա: Ամբողջ խօսակցութեան ժամանակ աշխատում էի մտրակել, աղբել, համողել:

Ես վերջացրիս ժողովրդից մի քանի աղնիւ անհամեն բաւակա

հութեան ցողցիր արին, և մենք զուրս նկանք որահը, ուր անսարանը բոլորովին փոխւից. Այսաեղ հաւաքւած էին քարոզիչը, ուսուցիչը և ուրիշ շատեր, ևս մօտեցաւ քարոզին և բունելով նրա ձեռը՝ հարցրի թէ նա ինչ է մտածում իմ առաջարկութեան մասին:

—Ես, ասաց նա քարկացած, չեմ ուզարկիլ ոչ մի պատդամաւոր և եթէ մէկը հարցնի՝ կասեմ չպէտք է ուզարկիլ, որովհետեւ մենք ջոկ բան ենք, նրանք (լուսաւորչականները) ջոկ բան են:

—Եթէ մենք «ջոկ բան» ենք, կտրեցի նրա խօսքը, ապա թուրքերը աւելի ևս ջոկ բան են, եթէ նրանք ներկալացուցիչ են ուզարկում՝ միթէ ամօթ չէ մեզ բազոքականներիս, ոչ մի ցուց էլ շանել:

—Թուրքերը իրանց արածը չեն հասկանում, իոկ քրիստոնեալին չփ վայելիլ քաղաքականութիւն անել, մարդ պէտք է Լութերի նման լինի, ոչ մի կողմէ չծռւի:

—Ասացէք ինողրեմ, պատւելի քարոզիչ, հարցրի ես, Պօղոս առաքեալը որ խիստ հակաւակ էր թլպատութեան՝ ինչու իր ձեռքերովը թլպատեց Տիմոֆէոսին, սա քաղաքականութիւն էր թէ չէ.

Երկար մտածեց մեր աստւածաբանը, մտածեց ու ինողրեց որ ես պատասխանեմ իմ հարցին, և ինքը ինողրից խոս տալու համար՝ շփոթեց խառնեց ինողրեց ու սկսեց Հայրիկի խօսքերից քաղաքածներ անել:

—Եթէ նա քրիստոնեալ է, ասաց նա, տաքացած, ինչու է իրան համար երկար կեանք ինողրում, մինչդեռ առաքեալը ուզում էր շուտ մեռնել.

—Պատւելի քարոզիչ, ասացի ես, նախ հարց չկատ թէ Հայրիկը քրիստոնեակ է թէ չէ. երկրորդ, եթէ ձեզ համար այդ խօսքերը գալթակդեցուցիչ են, առաջ թիրթեցէք Աւետարանը և դաւք կը տեսնէք որ իւր մահը ուզող Պօղոս առաքեալը ասում է. ամեսնելու ինձ շահ է, միալու ձեզ օգուտո. Ահա միենան խորհուրդը ունին և Հայրիկի խօսքերը:

Աս զարմանում էի, երբ տեսնում էի որ մի հինգ րոպէ առաջ ամբիսնից մեղմ ձաների ելեկջով խօսող համբերութեան, սիրու, խազաղութեան առաքեալը փոխւել կրակ էր զառել, նրա զոնը փախել էր, ձանը զողովում էր, զառան մորթու տակից զալլի առամներ էին երկում:

—Եթէ զուք հոգիոր մարդ էք, քարոզ տւէք՝ մենք ևլ լսենք, ասաց մեր չերմուանդ հոգեսրականը. ինչ դործ ունի հիեղեցին կաթողիկոսի հետ,

Աս տեսնելով թէ նրա խօսքերի մէջ տրամաբանութիւն չկատ ուզում էի թողնել վեճը, բայց այդ ժամանակ մի ուրիշը մեսեց, բայց աւելի ևս տղիղ, ամզի անհամ եղանակով, որի մէջ կար և իրոնիա, և ծաղր, և ծիծաղ:

—Ագէր նա լաւ մարդ ա, ինքը մեզի շուռ կիգալ, կիքիթանա, (թէ որ նա լաւ մարդ է, ինքը մեզ կ'որոնէ ու կը գանէ), ասաց մեր հոգաբարձուն Շամախու բառքառով,

—Ակստեղ լաւ, ու վատի վրաէ խօսք չկաչ, ասացի ես, ամստեղ կորածի ու գտնւածի վրաէ խօսք չկաչ մեր կողմից մի ողջուն, մը շարժում է հարկաւոր օծման օրը, ահա բռն խնդիրը:

Դէ հէնց ասըմիս, աէ Խարաէլ, կտրեց իմ խօսքը մի ուրիշը հոգաբարձուներից, դէ տեսնանք՝ աղէր նա (Հայրիկը) կարացաւ ան խշխոցը (քշոցը) փոխել:

—Ե՞նչ անհիմն բաներ էք խօսում, եղաւ իմ պատասխանը, մեր ինչ գործն է թէ նա ինչ կը փոխէ և ինչ կը թողնէ. թողէք ձեր հակառակութեան, ինքնահաւանութեան փթած հոգին, ընթացէք ժամանակի հետ առաջ, ասացի ես:

Ես պատրաստ էի քար ու քանդ անել սրանց բորբոսնած շահախնդրութեան սատաշները, բաց ալդ ժամանակ մէկը ետքիցս ձեռքս սեղմեց, սրանով երկչոտ զերին ուզում էր ասել «թէ քո ասածները ճշմարյաւ են, բաց չի կարելի ասել, որովհետեւ...» Եթէ մի մարդ կար, որ նոր հարսի նման անխօս էր մեր խօսակցութեան ժամանակ, սա մեր բողոքականների նոր սերնդի բէալական կրթութեան գործով պարապող մանկավարժն էր, որը կանգնած մեր առաջ տանջում էր և կարծես իր մտքումը ասելիս լինէր այն թրքական առածը թէ՝ «վերև եմ թքում պէխեր է, ներքե եմ թքում՝ միրուք է», Հացի խնդիրը կըսի աչքումն էր, ճշմարտութիւնը՝ միւս աչքում՝ վերջը նիւթը զաղափարից ծանր եկաւ, մեր ուսուցիչը մունջ մնաց մինչև վերջը. Սիրու և հաշութեան վկան խոսված հեռացաւ.

Միւս օրը սկսեցի ևս համոզել երիտասարդութեանը, որի վրաէ միան մեր լուսը. Նա ճշմարյան ասած, առելի զայտացած էր մի ուրիշ աւելի տպել երեսվիթի վասէ. Բանը նրանումն է որ բողոքականները ունենում են իրանց զպրոցում 40-ի չափ լուսաւորչական երեխաններ. Սրիկաներից մէկը մի զիշեր կամենում է արել բողոքականների ժողովարանը, որը սական չի լաջողուած. և ահա վերջինները հաւաքում են, խելք խելքի են տալիս և աս չարութեան առաջն առնելու միակ միջոցը նրանումն են գտնում թէ պէքատ է լուսաւորչականների զաւակները զպրոցից վանդել ու ահա զուբս են անում 40-ի չափ երեխաններ. Աս խօ վատ բան չէ. համ վրէժ է, համ զգուշութիւն, համ էլ ուսուցիչների համար թեթեութիւն... Աս բաւական չէ, դեռ լանդպնում ենք ասել թէ մենք, բողոքականներս, աադ և լուսու ենք:

Անցաւ ալս անցքից իրեք օր, և ահա եկաւ Շամախի Մոսկվակի լութերական կոնսիստորակի անդամ վեներալ սուսպեր-ինտենդենտար. Մի գիշեր միան քարոզեց ալ, սուսպեր ինտենդենտար. նա չկարողացաւ թագյնել այն մատնութիւնները, որ օր առաջ արել էին մեր «ոչ-քաղաքական» բողոքականները. նա չեցաւում էր թէ պէտք է հագրական կրօնը (ի հարկէ լութերականը) պինդ սլահել, ամեն հոգու չհաւատալ և ուրիշների ետքից չգնալ:

Միւս օրը ժողով կազմնեց հոգաբարձուներից և եկեղեցու գործունեակ անդամներից, ժողովին նախագահում էր վիզիտատոր գ. սուպերինտենդենտը, և դուք պիտի տեսնէիք թէ մեր քաղաքականութիւն չսիրող քարոզիչը և իր արքանեակները ինչ օփնուեր էին խաղում։ Շատերից մէկը միան։

Հասարակավարչական ընտրութեան, ել ու մուտքի և դպրոցի դրութեան հաշիւը պահանջելիս այնպէս գոյներ էին քսում, այնպէս կեղծում էին, որ ես համոզւած եմ թէ հէնց ինքը վիզիտատորը զգուամ էր։

— Ի՞նչպէս է եկեղեցու բարուական վիճակը, հարցրեց վերջապէս վիզիտատորը ժողովքից։

— Եատ վատ է, ասացի ես։

— Ոչ, շատ վատ չէ, ու չի կարելի մեր եկեղեցու համար այսպէս ասել, գոռաց վիզիտատորի մօտ կանգնած քարոզիչը։

— Ակատեղ նստածներս բոլորս էլ լաւ ենք, կրկնեց հոգաբարձուներից մէկը նեղացած, մինչև անգամ պոլիցիան (ոստիկանութիւնը) մեզանից չորհակալ է։

— Այդ ոչինչ, ասաց վաստոր (բողոքականների քահանա) Հանգէնը, պէտք է Աստած ճեղանից չորհակալ լինի և ոչ թէ ոստիկանութիւնը։

— Ի՞նչ ասես չկայ մեր մէջ, ասացի ես զարացած՝ հարբեցողութիւն-պունկութիւն, խարէութիւն, կեղծաւորութիւն և այն և այն։

— Ազդ՝ երիտասարդներն են որ ալսեղ չեն, մեր ալսեղ նստածներումս այսպէս բաներ չկայ, ասաց հոգաբարձուներից մէկը։

Ես, զարացած ազդ երեսովի վրայ, ցոյց եմ տալիս ժողովրդի բարուական մնանկութեան վրայ, բացում եմ նրա ծածկած կեղտը, նրա խալատառակ խարդախութիւնը և պահանջում եմ որ միջոցներ ճեռք առնենք արդ վարակիչ և կորստաքեր հսանքի առաջն առնելու համար։

Ազդ ժամանակ վաստորը մի ինչոր բան փափսում է վիզիտատորի ականջին, և առանց խղճահարւելու, ասում է հրապարակաւ թէ՝ «ժողովքում իրաւունք ունին միան հոգաբարձուները, խօսելու», մինչդեռ քիչ առաջ հէնց ինքը բոլորին իրաւունք էր տեղ խօսելու։ Ինչպէս էլ լինի, շատ ստերի հետ մտաւ արձանագրութեան մէջ նաև այն թէ Շամախու Լութերական եկեղեցու հոգևոր վիճակը շատ է։ Թուղթը կուղարկվի ի հարկէ Մոսկավի կոնսիստորիալին, գերմանացիք կը նախանձեն տեսնելով թէ ինչպէս Շամախու հակերը բարուական են, սուրբ են, հրեշտակ են։ Մրանից աւել էլ ինչ էք ուզում ամեն բան իր տեղն է, ամենքն էլ գոհ են, պրծաւ գնաց։

Աւելի ցաւալին ան է, որ այդ բոլորը կատարում է աղօթքով և կաթողիկոսին ողջունելը մեղք համարող, քաղաքակրթութիւն չսիրող քրիստոնեաների ձեռքով։

Մենք թշնամի չենք բողոքականներին, բայց և անհաշտ թըշնամի ենք կեզծութեան, խաւարի, խարդախութեան. և անշուշտ պիտի չաղթենք, որին ապացուց է Շամախու 15 բողոքական երիտասարդների կողմից Էջմիածին ուղարկած շնորհաւորական հեռագիրը: Ժողովքում եթէ չթողին խօսելու, մենք խօսելու տեղ կը գտնենք, ասեցինք մենք, և կասենք որ Շամախու և Բաքւաչ բողոքականների մէջ երգը, աղօթքը, քարտողը նոյն մեռած ձևականութիւնն է, ինչ որ ամենահին և կեղեցիներինը, նրա հոգեորականները նոյն անհամ չինովակիներն են ինչպէս և շատ ուրիշ եկեղեցիներինը, որի դէմ բողոքում են իրանք:

Ի. ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

# ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

## ՍԵՒ ԾՐՎԻ ԱՓԵՐԻՑ

### Յ. ՄՈՒԽԱԴԵՍՆՑԻ

II

Հայ պանդուխտների հետ միաժամանակ Անատոլիական ավերից այս տարի շարունակեցին զալ և մի քանի հաւ գաղթական տներ։ Այս տարի Սուխումի կողմերն եկող տնւոր հաւ գաղթականները, որոնք մի քանի չափ կը լինեն, բոլորն էլ Տրապիզոնի սանջակի (գաւառ), Տրապիզոնին մօտիկ հայաբնակ գիւղերից են։ Սև ծովի ափերի միւս կողմերում համարեա գաղթողներ չեղան ալս տարի։ Վերջին տարիներու և մասնաւորապես այս վերջեա թիւրքահակերի գաղթական հոսանքները ուղղւած են վնում զլխաւորապես Սուխումի կողմերը, որ վերջին ժամանակներս թութունի արտահանութիւնով տնտեսական մեծ քաղեր է անում։

Այս տարի գաղթական շարժումներ եղան և զէպի Սոչիի կողմերը. բայց այդ շարժումներն ուղղւած էին վնում ոչ թէ ուղղակի, հայրենիքից, այլ Սև ծովի գաղթական ափերի զանազան կետերից։ Սոչի զնացողները արդէն մի քանի տարի չլովանական ափերում մնացողներն են, որոնք ձեռք են բերել բաւականաչափ տնտեսական ապահովութիւն և իրանց մնացած տեղերը հողի քչութեան և արօտառեղերի պակասութեան պատճառով թողնում ձգում են և զնում Սոչիի կողմերը։ Հայրենիքից, Անատոլիական ափերից այս վերջին մի երկու տարին անտեղ համարեա ոչ ոք չէ դնացել, եկողների մեծ մասը Սուխումի կողմերն են մնացել։

Այս տարի եկողներ եղան Սուխումի կողմերը և գաղթական ափերի զանազան կետերից, ինչպէս օրինակ՝ Զէրնոմորի շրջանի մի քանի գիւղերից, Ան կողմերը թութունի արտահանութիւնը, ինչպէս երեսում է, այս վերջին տարիներս չատ է ընկնէ. թութունը զի՞ն չունի, ասում են որ

պուղը մինչև 2 րուբլու է իջել, իսկ սովորաբար 5—6 րուբլուց չէ անցնում: Ինչ խօսք որ այն տաժանելի աշխատանքը, որպիսին պահանջում է թութունի մշակութիւնը, այդպիսի գներով չէ կարող վարձատրւել: Մանաւանդ նկատի ունենալով, որ այդ բերքի մշակութեան ժամանակ անքաժան են և շատ կողմնակի ծախսեր, բացի անձնական աշխատանքից: Այն ինչ Սուխումի շրջանում հետզհետէ թէ բերքի քանակութիւնն է աւելանում և թէ գներն են բարձրանում:

Բոլոր հայ գաղթականների մէջ թւով ամենից ամելի քիչ եկողները Տրապիզոնի մօտակայ հայաբնակ գիւղերից են, որոտեղից գաղթել են և այս տարւան եկտորները: Նրանց ամենամեծ բազմութիւնը կենտրոնացած է Սուխում քաղաքի մօտիկ՝ Բուրց, Եաշտուխա և Գումա կոչւած տեղերում, չոչն գաղթականներին մօտիկ: Տեսել եմ և մի քանի տուն նրանցից, որոնք շատ վաղուց ապրում են Անապակի վիճակի (Տէմրիւկի գաւառ՝ Կուբանի վիճակում) զանազան տեղերում: Այս տարւան եկողներից մի մասը մնացին Սուխումին մօտիկ, իրանց հայրենակիցների մօտ, իսկ միւսները զրաւելով աւելի լեռնապին մաքուր և առողջարար կլիմակից ու ջրից, փոխադրւեցան Ծէրէլդակի հայ գաղթականների մօտ:

Համեմատելով Տրապիզոնի մօտակալ գիւղերից եկած հայերին Ան ծովի ափերի միւս բոլոր հայ գաղթականների հետ, մարդ տխուր եղբակացութեան է համուս: Խնչպէս երեսում է՝ սրանց հայրենական կենցաղը շատ տխուր պալմանների մէջ է անցնում: Ճշմարիտ է՝ միւսների (Խնչպէս օրինակ Զարշամբագի, Խնիալի, Թէրմէի, Ալինոպի, Օրդուի և այլն վիճակներից եկողների) հայրենական կեանքի մէջ մխիթարական ոչինչ չկայ, բայց և էլլ՝ թէն ճնշւած ու զրկւած, հալածւած ու վիրաւորւած, այն մարդիկը գոնէ հայրենիքում մի բան ունեցել են, մի բանի տէր եղել են, լինի դամալ կամ արտ, թէն բաղդ չեն ունեցել երկար վայելելու իրանց դառն աշխատանքի պտուղը: Որանք, ինչպէս երեսում է, հայրենիքում ոչ աւելի մատ են ունեցել և ոչ կարգին երկրագործութիւնն արել: Նրանցից մէկը չկայ, որ հերկ անել զիտենակ. անասունների հասարակ ինամենք ու դարմաննեն անգամ չզլիտեն. չեն կարողանում մի կարգին յանկապատ քաշե արտերի շուրջը և շատ ուրիշ երկրագործական գիտելիքներ ու ձեեր, որ անհրաժեշտ հարկաւորւում են ամեն մի գիւղացու տնտեսութեան մէջ: Ան ինչ այլ կողմից մեր միւս գաղթականները շատ օրինակելի են դրանց մօտ: Բայց ինչպէս երեսում է՝ այդ պակասութիւնները ոչ աչքան ծուլութեան հետևանք են, որքան իրանց բնակած տեղերի տեղադրական պահմանների և ընդհանրապէս թուրքական վարչութեան անկարգ և ապադակ կազմակերպութեան:

Մի կողմից լեռնապին երկիր, ժամուոտ ու քարքարտ վայրեր, ուր երկրի մշակութիւնը կարող է լինել միան գլխաւորապէս փեաատի կամ

Ճեռքի ուրիշ գործիքով, Բայց գոնէ ազդքանը թող լինէր իր ուսփականութիւնը, իրան պատկանէր: Ո՞վ է տւել հային հող թիւրքիալում: Ազդաեղէլ ինչպէս որ Անասուիխակի ափերի շատ տեղերում՝ հայը իր հայրենիքում ուրիշի հող է բանում: Վէտ մինչև օրս էլ աղալական երկրի մէջ կարծես ամեն բան աղալական է: Ինչ որ լաւ է, ինչ որ մարդկանց պահանջն ու պահպանողն է, տնսեսական ամենամեծ բարիքը, ազգի կենդանութեան և ապագավի աղբիզը, մարդկութեան տնտեսական ամենամեծ չուսը—պարզ ասելով հողը նոյնպէս աղալին է պատկանում: Խսկ ով է աղան, մի թիւրք կամ քիւրդ բէկ, մի ինչ որ աւազակ տմարդի, մի ցեցապետ վաշխառու, որ ով գիտէ թէ ինչ անխիզծ և տմարդի քաջութեան համար երկրագործի, հասարակ գիւղացու քրտինքով ոռոգուած հողը կարողացել է պաշտօնական ձեռվ իր ձեռքն անցնել: Խսկ գիւղացին, խսկ բազմամարդ երկրագործը, թող ջանը դուրս գայ, բանի նրա հողը և այնպէս ապրի: վարձկան, օտար և գերի իր հարազատ, իր շինած ու մշակած հողում, իր անխօս մտերիմ, հոգու չափ սիրած՝ իր մաքրերկում...

Եւ այդ օտարասպատկան ցից ժակուրի, այդ անմատչելի գագաթների հետ, ուր որ անսովոր ոտն անգամ չէ կարող բարձրանալ, հայ գիւղացին տափաւած տամնեակ տարիներ կոււ է մղել, հայկական կոււ, զինւորւած իր ձեռքերով ու միմիան փետատով: Օրեր մթնեցնել ամբողջ տարին միմիան փետատով ան էլ քարքարոտ ժաճերի վրաց հասկանալի է, թէ ինչքան արդիւնք պիտի տտանար գիւղացին: Անասուններով հերկ անել, երկիր մշակել—անկարելի է եղել ան անմատչելի տեղերում: Խսկ միմիան փետատի փորածովն էլ մարդ չէր կարող կշտանալ: Եւ իրաւ, խեղճ գիւղացին ամբողջ տարին բնութեան ահուելի և քար կրծքի դէմ տաժանելի կոււ մղելուց լետու էլ դեռ քաղցած է մնացել: Էլ չեմ ասում, որ այդ քարքարու տարածութեան մեծ մասը անտառի տակ է եղել, ծառերով ծածկւած է եղել: Ուրեմն կոււր պէտք է առաջ այդ բուսական թաղաւորութեան հետ սկսէր, որպէս զի փետատով փորելու համար գոնէ մի քիչ տեղ կարողանար գտնել:

Ցանելիս են եղել զլիսաւորապէս սիմինդր, որ հազիւ բաւականացել է իրանց և արտահանւելու չէ մնացել: Արտահանութեան համար միացն մի բերք են ունեցել: այն է կաղինը, որ այն էլ ամեն տեղ չէ եղել: Գլխաւորապէս կաղինի մշակութիւնը շատ տարածւած է եղել Տրապիզոնի վիճակի Շահնու գիւղում: Առասարակ բաւական գոված է Տրապիզոնի վիճակից արտահանւած կաղինը: Շատ տեղ Տրապիզոնի մօտակաէ գիւղերում ամբողջ ապրուսուր գիւղացին այդ բերքից է ստանում: Ասում են, որ բաւական էլ արգինը է տալիս և մշակութիւնն էլ առանձին մեծ ծախսեր չէ պահանջում: և մանաւանդ որ ծառը շուտ է մեծանուի, շուտ է պտուղ տալիս և շուտավ էլ բազմանում է ինքն իրան:

Տրապիզոնի մօտակաւ հաղ գիւղացիների ապրուստի գլխաւոր միջոցներից մէկն էլ բեռնակրութիւնն է եղել Ոչնչացնել հակաւ անտառները, ջարդել հինաւուրց ծառերը, ածուխ չինել և կրել քաղաք. թէ ինչ է մի քանի փարս կամ շատ-շատ մի քանի զուրուշ կարողանաւ ստանալ, որ իրանց զանազան կարիքներն հոգան. Կրել բաց Հվաճառաք թէ սալերով կամ ձիերավ, ոչ ազգան բարեկեցիկ պակմանների մէջ չին եղել նրանք: Կրել ևն իրանք, շալկած, լեռնացին անհարթ կածանների վրաչ, ժամերով ոտով գնալով՝ ահազին բեռները մէջքերին... Եւ ազգիսի արիւն քրափնքով աշխատող մարդը դեռ էլի քաղցած է մոտում. հայրենիքում հաց չէ զտնում և օտարութիւն է զնում՝ սովամահ չլինելու համար:

Միմիախն երկրի բնութիւնն ու աղքատութիւնը չէ պատճառը, որ հայր չէ կարողանում ապրել իր հայրենիքում: Աչ այդ աղքատութիւնն և քաղցած միալու պատճառները շատ-շատ են և բոլորն էլ իր կամքից զուրս առանց նրան հարցնելու են լինում: Չնայելով որ հաղ գիւղացին իր հացը հազիւ է դտնում, բաց թիւրք կատավարութիւնը այնքան անգութ է վար- տում, որ չէ թողնում, որ այդ քիչը մնակ գիւղացուն:

«Աշար», «ըմլազ», «բաղալի» և այլ մի շարք հարկերով քա- մում է գիւղացու վերջին ոճեցածը և նրան զատարկ ձեռքով թո- գում: Եւ չեմ լիշում զանազան անթիւ կեղեքիչներին և միւլթէղիմ (կապալասու-հարկահան) գազաններին, որոնք տէրութեան անունով ամեն տեսակ անխիղճ խաղեր են խաղում խեղճ գիւղացու զլիխին: Հապա անե- րես զափիթիաները, ով չէ զգացել նրանց մտրակների հարսածները, Անի- րաւ և կաշառակեր զափիները ու գատաւորները, որոնք իբր թէ իրաւոնք և արդարութիւն պիտի պաշտպանէին իրանց քարացած ու մեռած խղճով և անշարժ ու թմրած խելքով. Ազն ինչ գիւղացու հարստահարող ցեցերից մէկն էլ նրանք են: Խնչեր չէ քաշում գիւղացին զրանց ձեռքից, արդա- րութիւն և անմեղութիւն չէ ծանաչում այլ բարբարոս երկրի մէջ: Ար- դարութեան լուսը դեռ չէ ծագել այդ խաւար երկրում:

Իսկ կեանքի և կոչքի ապահովութիւնը, աշկարա՞ օր-ցերեկով կա- տարւող աւագակութեան դէպքերը, զողութիւններ, թալնել, զարկել, ծե- ծել ու սրանց նման բոնութիւններ, ամեն տարի անվերջանալի հասարա- կան աշխատանքներն ու ձրի բանելը թիւրքական ողորմելի խճուղինե- րի վրա՞՝ օրերով տնից հեռու, անգութ զափիթիաների հսկողութեան տակ, շատ անդամ քաղցած ու ծածարաւ, կիզող արեի տակ, ոտով ահազին ճանա- պարն գնալիս... Ե՞ն, որ մէկն ասեմ: միթէ կարելի է ազգան անգթութիւն. Ների մէջ գլուխը պահել և մնալ հայրենի երկրում, այդքան ցամերի ու կրակի մէջ: Կենդանի մարդու ովքերից վեր է դա. նահատակի համբերու- թիւնը քիչ է զրա համար: Ազգ ցաւերին վերջ տալու, դրանց լաղթելու համար հարկաւոր է մի ուրիշ գիտակիցութիւն, անգիտակցական և անտեղի

Նահատակութեան տեղ գիտակցական նահատակութիւն և անձնւիրութիւն.  
որպիսի գաղափարը հայ գիւղացու որտի և հոգու մէջ դեռ չէ արժա-  
տացիլ...

Վերջին ժամանակներս շատ տխուր լուրեր են գալիս Անսատովիավի  
հալրենական ափերից: Գաղթականներից նրանք, որոնք բազզ են ունե-  
ցել այս վերջին ամիսներ այցելել իրանց ծննդավարը, բոլորն էլ շատ  
տխուր տպաւորութիւն են ստացել Նրանց ասելով՝ հայ գիւղացու դրու-  
թիւնը հալրենիքում ալար վերջին ծալր լուսահատութեան է համել: Նե-  
ղութիւններն այժմ շատ առելի են, քան մի քանի տարի առաջ, իրանց  
զաղթած ժամանակը: Քանի գնում թիւրքական կեղեքումներն ու բանու-  
թիւններն էլ առելի են ճնշում հայ գիւղացուն: Տուրքերը հօ չափը կորց-  
րել են. օրից օր աւելանում են և հայ գիւղացուն հացի կարու թողնում:  
«Աշարը» (բերքից վերցնեող տուրքը), որ առաջւան ժամանակները բերքը  
ստանալուց իմուց, հունձը վերցնելուց լետոյ էին ստանում, այս վերջին ժա-  
մանակներս ուղղակի ցանած ժամանակն են պահանջում, միմիան նախ-  
լով ցանած տարածութեան, երբ դեռ լաւանի չէ, թէ ինչ է լինելու վերջը,  
ինչքան հունձ է տալու կամ թէ ոչնչանալու չէ արդեօք բոլսը երաշտից,  
կարկտից կամ բնութեան մի ուրիշ պատահարից: Այս մինուն է, թէ  
դեռ սիմինդր կամ ցորեն չստացած, դեռ հաց չունեցած, հացի փող են  
ուգում, դեռ չեղած բանի տուրք են պահանջում: Ինչ խօսք, որ այդ ձեռվ  
տուրք ժողովները սարսափելի անարգար պալմաններով կը գործ դնեն թիւրք  
պաշտօնեանները: Նրանք կարող են մի որոշ տեղ ցանքից երևակավել թէ  
ալսքան բերք կը լինի հեծի ժամանակը և այն հաշով պահանջել իրանց  
մասը: Ի հարկէ՝ նրանք միշտ բնական չափից աւելի կը նդունեն հունձը,  
քան պակաս, չէ որ նրանք խիզը չունեն. ովէ է կարող նրանց առաջը  
կտրել: Խակ եթէ վերջը մի բան էլ չլինի, նրանք արդէն ապահով են,  
իրանց մասը առաջուց ստացած են, նրանց ինչ փութ. թող գիւղացին  
մտածէ այդ մասին: Խեղճ, մոռացւած ժողովուրդ... Միթէ ալդպիսի պա-  
մաններում գիւղացին կարող է իր հացը ճարել և հանգիստ ապրել: Աղ-  
քատութիւնը կարծիս համաձարակ ախտի պէս վարակել է շատերին. գիւ-  
ղացին ուտելու հաց չունի:

Նահապետական առատութեան սովորած գիւղացին ալար անօթու  
թիւնից գլուխը կորցրած՝ չգիտէ ինչ անի. ում զուռն ընկնէ, ումից ուզէ  
իր հացը:

Այցելուները պատմում էին, որ իրանց զնացած ժամանակը, որ որ  
հացի էին նատում, երեխաներից չին աղաւում: Քաղցածութիւնից աղց  
փոքրիկ արարածները՝ մի տեղ կերտակրի հոտն առնելուն պէս, խումբ-

խումբ պաշարնել են նրանց և, առանց հարցմելու, առանց քաշմելու, ագա-  
հաբար սկսել են իրանց լափառակութիւնները:

Նրանց պատմածները բոլորն էլ սրոտաձմվկ նորութիւններ էին:  
Նրանց ասելով՝ իրանց ժամանակը գիւղացու դրութիւնը երբէք ազդ աս-  
տիճան վատ չէ եղիլ: Ացցելուներն հաւատացնում էին, որ հալքենիքը  
զնալուց ինտու, ինչքան միք զրպաններ ունենակ մարդ, դասարկ պիտի  
վերադառնաց: Որտքինեան գնալուն պէս՝ կը շրջապատի իր ազգականնե-  
րով ու ծանօթներով, որտնք սինչեմ մի բան չստանան, դադար չեն թողնի:  
Ի հարկէ՝ նրանք փոխ են ուղում, բայց ազդ միենողն է, թէ բաշխել ձրիս-  
բար, որովհետեւ երբէք չի լինի, որ զիւղացին անքան փող ունենակ հաջ-  
րենիքում, որ համ իր պակասները տեսնէ, համ պարտքերը տակ, մէկն ու  
մէկը անպատճառ կիսաս կը մնայ:

Ազդ կարծիքների ու ազդ կիսասի համար է, որ անքան խմբերով  
երիտասարդներ են պանդիմում դէպի օտար ափերը: Որը տանը հացի պա-  
կաս ունի, որը մալ չունի, որը պարտքի մէջ խեղլւած է, որը տուրք պի-  
տի տաչ, փող չունի... Ահա ազդ բոլոր կարիքները տեսնելու համար՝ գիւ-  
ղացին և զլիսաւրապէս գիւղական զառակարգի ամենառավեղ, թարմ և  
գործող տարրը, նրա ապագայ լուսը. երիտասարդութիւնը տունը-տեղը  
վայր է ձգում, սիրելիներին թողնում չանձնում է ուրիշն, իսկ ինքը  
զլուխը վերցնում, պանդիստութիւն զիմում:

Ացցելուները պատմում էին, որ մի քանի զիւղեր համարեա ամրող-  
ջապէս դատարկւել են ալր-մարտիկանցից: Գիւղերում տղամարդ շատ քիչ է  
մնացել, մեծ մասը կովկասեան սարերն են պանդիմահի: Գիւղերը մնացել  
են կանանց ձեռքին, ինչ խօսք որ՝ ալր-մարտկանց զնալով, տան տնտե-  
սութիւն հետ ազդ խեղճերի պարտականութիւններն էլ աւելացել են: Կա-  
նանց է մնացել ջրաղաց զնալ՝ հատիկը շալակած, մէջքով անտառից փայտ  
կրել, արտում բանել անսառուններն հովել և նոյն իսկ երկիրը մշակել...  
իսկ ազդ տաժանելի զլիկանքներն ուսի բելիներից հեռու մնալը քաշել նրա  
համար, որպէս զի մի քիչ փող ձեռք բերեն և կարիքներն հոգան, իսկ  
աւելի և զլիսաւրապէս կառավարչական անթիւ ու անվերջանալի տուր-  
քերը տան:

Անտանելի նեղութիւն են քաշում թիւրքահակ գիւղացիները իրանց  
հալքենիքում՝ ացցելուների ասելով՝ նաև աւազակութեան պատճառով: Վելո-  
ջն ժամանակներս թիւրքա-Հայաստանի զանազան կենդրուններում կրկն-  
ւող աւազակակին շարժումները արձագանք են գտել զրանց կողմերն ևս  
Աւազակները շրջում են տնից տուն, գիւղից գիւղ խոսափելով իրանց  
հետամուտ եղած կառավարչական ոստիկաններից: Ոստիկանները իրանք  
շատ լաւ գիտեն, թէ այս ինչ ժամանակ որտեղ կը լինին աւազակները,  
այս ինչ իրանք չեն համարձակւում կամ չեն ուզում շարձակւել տեղն ու

տեղը, ազ երբ աւագակները այստեղից հեռանում են, սկսում են հալածել և պատժել այնտեղի տիրոջը, պատճառ բերելով թէ իրաւունք չկատ աւագակներին ապաստանարան տալու Բայց ինչպէս կարող է մերժել, տուն շթողնել խեղճ գիւղացին կատարեալ զինուրած մի խումբ մարդկանց, երբ արդէն նրանք ներս են մտել առանց հարցնելու:

Աւագակներին բոնելու տեղ՝ կառավարութիւնո հայ գիւղացիներին է բոնում: Երևի թիւրք կառավարութեանը այդ վերջիններին, այդ անգէն ոչխարնեղին պատժելը աւելի հեշտ և արդար է թում, քան զինւած, վրէժխնդիր մարդկանց...

Միան հայը չէ որ լալիս է իր սե օրը Թիւրքիավի բոնակալ լծի տակ: Թիւրքահպատակի իմ տեսած բոլոր ազգերը, դուրս չհանելով նոյն իսկ բնիկ թիւրք և մահմեդական լազերն, նոյն սե են օրն քաշում: Կովկասնան ափերով անցնող ամենն մի շղինաւ բերում է իր հետ թիւրքական ափերից պահպատիւնների ահագին բազմութիւն: Չեք գտնի մի նաւահանգիստ կովկասնա ափերում, ուր զրանք ըլինին: Մասնաւորապէս լոյներ ու լազեր ցրւած են ամբողջ կովկասնան ափերի երկարութեան վրա: Առաջինները պարագում են աւելի արհեստաներով, իսկ վերջինները տախտակ են հանում, շէնքեր են շինում և օրավարձով զանազան ծառալութիւններ են անում գաղթականների մօտ:

Դրանք բոլորն էլ թէ հայ և թէ միւսները, մի ցաւ ունեն հայրենիքում: բոլորին էլ մի թշառութիւն խլում, հեռացնում է մաչրենի գըրկից—մի կոոր հաց չտնելը և հանգստութիւն չունենալը:

Ինչ խօսք, որ հայրենիքից հեռու նրանց կեանքը շատ տիսուր պատմանների մէջ է անցնում՝ պանդխտական կեանքից անբաժան դառն պատմանների մէջ: Մի քիչ աւելի մսիթարական պալմանների մէջ մնում են էլի հայ պանդուխտները, որոնք մեծ մասով իրանց հայրենակից դաղթականների մօտ են մտնում: Ինչ ասել կուզէ, որ նրանց համար այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունի: Հայ պանդուխտներից շատ քչեր կը պատահին, որ օտարների մօտ բանեն: Ան ինչ լոյն և լազ պանդուխտները սովորաբար բանում են ամեն տեղ և ամենքի մօտ: Նրանց համար ամենքն էլ խորթ են և օտար: Նթէ կաչ մի մօտիկ կապ, մի միացնող բան նրանց մէջ, դա հայրենիքն է, որ այդ բոլոր օտար լեզու ցեղերին միացրել է իր երկնքի տակ:

Բայց չնայելով լոյների և լազերի պանդխտական կեանքի աւելի ծանր պայմաններին, համեմատենք նրանց հայերի հետ, կարծես դրաից գոնէ նրանք աւելի ուրախ, ժիր և աշխուժ են երեսում, քան հայերը: Աչդ աւելի շատ աչքի է ընկնում մասնաւենդ շղինաւի վրա: ուր Անատոլիական

պահապան պահողուխտների հետ լինում են և հայ պահողուխտները Միջնեռ Կոչը աւելի շարժուն, կենդանի, զգալուն և կրտսու է վարում, նոյնքան հակը աւելի տիսուր, մտածուն, անխօս և լուռ է մնում. Շատ անդամ է ինձ պասահել տեսնել չորմնաւի վրայ չափ պանդուխտների խմբեր, որոնք մի քանի ժամ շարունակ զղողեցրել են տախտակամածը իրանց պարերով, երգերով ու նւազներով. Ան ինչ երեք չմի տեսներ որ հան էլ մի բան երգեր կամ պարեր ու իր սրտի ցաւը աշխարհին ւախներ...

Խնչ վատ բան է պանդխտութիւնը. Խոյն խոկ աղդ երգից ու քեչ Փից չգադարող մարդիկը կարծես մարդու սիրալ կտրատում են, ուր մնայ թէ հայի պէս տիսուր ու լուռ ու մոհնչ հայեացքները. Պանդխտութիւնը ամենածանը հարւած է մարդկապին երջանկութեան. Հայրենիք, տուն, սիրելիներ, կին, որդիք և ով դիտէ սրտի ինչ սրբութիւններ ու վիշտակներ մնում են հեռու, անտէր ու անտես, զուրկ ու մինակ, անոք ու անօդնական... Արիւն է կաթում պանդխտի սրտից, երբ միտքն են գալիս հայրենական վիշտութիւնները. Խոկ նրանք, որ մնացին ծովի ան կողմը՝ իրանց զլխաւոր և միակ լուսապահնից զրկւած,—ինչ կը լինի հապա նրանց զլութիւնը. Ո՞հ, երբեմն սարսափելի բան է պանդխտութիւնը...

Բայց միան Թիւրքիան չէ՝ որ պանդուխտներ է տալիս. Խնչպէս երեսում է, շատ անդերում գիւղական ժողովուրդը աղքատութեան և թշւառութեան մէջ է. Աև ծովի վրազով պանդուխտներ են գալիս և շատ ուրիշ երկիրներից. Հենց ալստեղ, մեզ մօտիկ Ծէրէջդալում (Սուխումի շրջան) կան աւստրանապատակ բուսիններ՝ Գալիցիալից եկած. Նրանց գաղթելու սպատառն էլ, իրանց ասելով, կրօնական հալածանքն է եղել. Աւստրիան՝ իրեմ կաթոլիկ անտութիւն՝ խորթ աչքով է նաև նրանց վրաց որովհեան նրանք ջերմ լուսաղաւաններ են. Ել չեմ վիշում էստերին, գերմանական զանազան ցեղերին, մոլցացիններին, բուլզարներին, չէխերին և այն, որոնք ցրւած են Սուխումի և Զէրնոմորի շրջաններում. Բազմաթիւ պանդուխտներ են գալիս և Ռուսիակի զանազան կողմերից. Միան անցած տարին հազարաւոր բանտորներ էին բանում ուստաներից Սուխումի ծովեզրեաւ խճուղու ճանապին. Նրանք ամենքն էլ սովոր վնասւած նահանգներից էին. Այժմ խճուղին բոլորովին աւարտւած է և աղքանուրների, ի հարկէ, կարիք չկա. Նրանք վաղուց զնացել են. Բայց միան դրանք չեն. ուսւ պանդուխտներ ու գաղթականներ միշտ գալիս են. Նրանցից ոմանք հող են ստանում տէրութիւնից, հաստատում, մնում են մի տեղում, ոմանք էլ միան ժամանակաւորապէս են մնում:

Եթէ հարցնես դրանց, ամենքն էլ հայրենիքում տնտեսական նեղ պատմանների մէջ են. Չնալելով, որ անտեղ ոչ աւաղակ կա, ոչ անխիզ

միւլթէզիմը, ոչ կաշառակիր ու անիշտ դատաւորներ, ոչ անգութ զափթիա և հաղարաւոր ցեցելը ու կեղեքիչ պաշտօնեաներ,—բայց և անպէս էլի գիւղացին աղքատ է. ուտելու հաց չէ գտնում: Յւ այդ բոլոր թշւառութեան պատճառը այն է՝ ինչպէս երեսում է նրանց պատմածներից, որ գիւղին շատ տեղերում հող քիչ ունի, խոկ տեղ տեղ էլ բոլորովին չունի:

Մակիսին ինձ պատահնեցան աւդպիսի անհող ոռա զիւղացիներից երկաթուղու ճանապարհին՝ Բաթումի գծի վրայ Նրանք մի քանի տուն էին, մօտ 20 հոգի. գալիս էին Վիալովէցկի գաւառից և պէտք է Թիֆլիսի վրալով Վլադիկավաղի կողմերը զնալին: Ասեցին, որ իրանց գաւառից արդէն 20 տուն գաղթողներ են եղել այդ կողմերը և իրանք էլ նրանց մօտ են գնում: Ահա թէ ինչ էին պատմում նրանք: Խրանք հալրենիքում հող չեն ունեցել. ուրիշի հողերն են բանել կապալով, այն էլ միայն գործարանների համար ճակնդեղ են մշակել, որովհետեւ ուրիշ ոչ մի բերք դրանից տեղի արդիւնք չէ տել: Խոկ այդ արդիւնքը ուարսավելի չնչին բան է եղել: Երկարացէք ողջ ամառը մի գեսեատին ուրիշի տեղի վրայ քրտնելուց ու բանելուց միմիայն 8 րուրլի վարձ են ստանալիս եղել: Ամառան օրավարձը ամենաշատը 20 կոպէկից չէ անցել: Այդ փողով խեղճ գիւղացին համ պիտի իր հացն ուտէր, համ իր բանեցրած եղան, համ ձիան ուտեցնէր, համ տունը պահէր և համ էլ միւս կարիքները տեսնէր... «Դ աղթում ենք, որովհետեւ հող չունենք, ապրելու միջոց չունենք, ևԿԵՖՄԵ ՀԱՏԵ» կրկնում էին նրանք:

Խոկ գիւղացին հող չունենայ և ապրի, — այդ միննոյն է, թէ մարդ կենդանի մնակ առանց արիւնի և հոգու նթէ միայն հող չունենալն աչդքան թշւառութիւն է, որքան աւելի՝ երբ տնտեսական այդ մեծ զրկանքի հետ, անհողութեան հետ, միացած են լինում և հարիւրաւոր ուրիշ չարիքներ—կեանքի և գուքի անապահովութիւնը, կատարեալ անարդարութիւնն ու անգթութիւնը և կեղեքիչ ու վախառու բռնակալների անսանձ կամականութիւնները, որոնք կարող են կարճ միջոցում բոլորովին քամել և ուժաթափ անել ժողովուրդը, եթէ վերջ չըտրուի այդ անարդար հալածանքներին:

Ակաօր հակը այդ վիճակի մէջ է իր հալրենիքում՝ թիւրքական լծի տակ:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

1889 թվի հոկտեմբերին Հելսինգֆորում կազմւեց առանձին յանձնաժողով, որին մասնակցողին, բայց սետական հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, նոլիպէս մի քանի դործարանատէր գլուղատնտեսներ։ Յանձնաժողովի նսպատակն էր զբաղել այն միջոցների քննութեամբ, որոնցով կարելի կը լինի բարոյքել Ֆինլանդիաի բանւորների դրութիւնը ու ապահովել նոցա հիւանդութեան ու ծերութեան ժամանակը. Դեռ անցեալ տարի յանձնաժողովը մշակեց երկու ծրագիրներ վերաբերեալ բանւորներին ապահովացնող (Երթաչօօք) կասաներին, որոնց հիմունքները իւր ժամանակին բացատրւեցան «Ֆինանսական Աւտոաքերի» մէջ։ Այժմ յանձնաժողովը ներկայացրել է կառավարութեան հաւեցողութեանը դարձեալ երկու ծրագիրներ, որոնցից մէկը պահանջում է աւելացնել ու կանոնաւորել գործառների պատասխանատութիւնը բանւորների վիրաւորւելու կամ մահանան դէպքում, իսկ միաը ի նկատի ունի հիմնել բանւորների համար թոշակատու կասա, որը պիտի գտնելի կառավարութեան մշտական հսկողութեան ներքու Ծրագրի հետ ներկայացրած բացատրութեան մէջ, վերաբերեալ գործարանատէրների պատասխանատութեան, յանձնաժողովը նկատում է, որ ներկայումս շատ տէրութիւններում օրէնքով հաստատած է գործարանատէրների դրամական պատասխանատութիւնը, եթէ նոցա անզգութեան պատճառով բանւորները աշխատանքի անընդունակ են զառնում։ Ֆինլանդիացում արգինապերութիւնը անքան ծաղկել է, գործադրութեան մէջ մոցնելով ամենաբարդ մեքենաներ, որ բոլորովին ժամանակարմար է գործարանատէրների և բանւորների լարաբերութեանց կանոնաւորութիւնը, մանաւանդ որ գործադրուղ օրէնսդութեանց մէջ համարեա կատարելապէս բացակացում է աչղ ճիւղը։ Միւս կողմից յանձնաժողովի հաւաքած ստատիստիկական տեղեկութիւնները ցուց են տալիս, որ բանւորների վիրաւորւելու կամ մահի ենթարկելու դէպքերը բաւական շատ են։ Այդպէս, մի տարւակ ընթացքում 3267 արդիւնագործական և արհեստակին ձեռնարկութիւնների մէջ, որտեղ գործում էին 44,933 բանւորներ և որոնցից 1889 թ-ին շատ հիմնարկութիւններ զուտ գործարանական բնաւորութիւն ունէին, պատահել են 953 անբաղդութիւններ, որոնցից 63 եղել

են մահ, 155 ծանր վիրաւորանք, ու մնացեալները աւելի թեթև վէրքեր։ Ըստ որում վեասւած բանւորները միասին կորցրել են տարեկան աւելի քան 30 հազար մարկ վարձ, իսկ փշացած բանւորները աշխատելիս են եղել տարեկան աւելի քան 43 հազար մարկ. մանաւանդ մեծ է անբաղդ դէպքերի տոկոսը զուտ ալովւնագործական հիմնարկութիւնների մէջ, ուր աշխատում է Ֆինլանդիայի բանւորների 45 տոկոսը։

Լնկատի առնելով, որ 1889 թվի ապրիլի 15 օրէնքով հիմնւած է գործարանական տեսչութիւնն և ձեռք են առնւած զանազան նախազգուշական միջոցներ, չանձնաժողովը վճռել է կանդ առնել բացառապէս անբաղդ դէպքերի հետեանքները կանոնաւորելու խնդրի վրայ Ռւստի ներկացած են քննութեան երկու հիմնական սկզբունքներ, որոնք են՝ պարտաւորացուցիչ ապահովութիւնը գործարանատէրերի կամ բանւորների կողմից ու գործարանատէրերի պարտաւորութիւնը՝ հատուցանել բանւորների կորուսալ թոշակով կամ միանւագ վճարով. Յանձնաժողովի մեծամասնութիւնը ընդունեց իբր ծրագրի հիմք երկրորդ սկզբունքը նախ այն պատճառով, որ նա աւելի համապատասխան է Ֆինլանդիայի գործարանական կեանքի պայմաններին. Երկրորդ՝ ի նկատի ունենալով, որ նոյն իսկ Գերմանիայում, որտեղ ամենից առաւել է զարգացած ու կարգաւորւած առողջութեան և կեանքի ապահովացումը (եռախօսանութիւն), բանւորների պարտաւորութիւնը՝ անդամ լինել որ և է ապահովացնող միութեան, չպահասացրեց անբաղդ դէպքերի թիւը. Գերմանիայի պաշտոնական ստոատիստիկան ընդհակառակը ցոյց է տալիս որ անբաղդ դէպքերի թիւը փոքր առ փոքր աւելանում է: Նէկըցարիալում և Սկանդինավիալում նոյնը երեւաց: Ազդ և մի քանի տեղական հանգամանքներ ի նկատի ունենալով, յանձնաժողովի մեծամասնութիւնը ընդունեց գործարանատէրերի անմիջական պարտաւորութիւնը անբաղդութեան դէպքերւմ:

Կիեւի նահանգում լայնուել է մի նոր օտարոտի աղանդ «մալեվանչ-չիներ» անունով, որի հիմնադիրն մի ոմն Մալիվանի. Պրոֆեսոր Սիկորսկի աւսումնամիրել է այդ աղանդը ու շատ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս նորա վերաբերեալ:

Մալիվանին մէկ նիհար, բարձրահասակ, խոլերիկ բանւորութեամբ անձնաւորութիւն էր. նա խօսում էր պարզ, սահուն և ոգնորւում, գրաւում էր ինքը իւր խօսածներով: Նորա ծնողները եղել են հարթեցողներ ու նա ինքը, մինչև 40 տարիքին հասնելը, սաստիկ հարթեցող էր, բայց վետոյ մոտաւ շտունդիստների մէջ ու հարթելը թողեց: Ակժմ նա սկսեց չափից դուրս նւիրւել շտունդիստների կրօնական գործողութիւններին: Մի քանի տարի աւսպէս շարունակելուց կետու Մալիվանին սկսեց ունենալ հոտառու-

թեան և այլ զգացմունքների հալլիցինացիա: Նա զգում էր այնպիսի հոտեր, որոնց նմանը աշխարհումը չկատ Նա սկսեց զգալ ինչոր օտարութիւնը ուրախութիւն և ամբողջ մարմնի թեթեռվթիւն, Նորան թւում էր, թէ ինքը երկրից կտրում է աղօթքի ժամանակի: Վերջապէս նա համոզւեց որ իրան ներշնչում է սուրբ հոգին, թէ ինքը Քրիստոն է, աշխարհքի վըբ-կիչը ու Առուածածնչի մարգարէկութիւնները նորան են վերաբերում:

Մալիվանին տարւեց Կիւիւի պախատարական բաժինը, որտեղ զան-ւում է մինչեւ օրս: Բայց նախքան հիւանդանոց տարսիւը նա կարողացաւ իւր աղանդը տարածել մի քանի զիւզերում և վարակել ոչ միան շտունդիստներին, այլև ուղղափառներին, բոլորականներին ու կաթոլիկ-ներին:

Պրոֆեսոր Սիկորսկիի առելով Մալիվանցինները տղանդի մէջ մտնելով վճռական կերպով փոխում են իրանց կեանքի, ընթացքը՝ ծախում են իրանց կաւքը, հրաժարում են առնեն մի աշխատանքից և նոյն խակ ու-վորական աշխատութիւններից: Նոքա շարանակ դանւում են հողեկան անստոր զրութեան մէջ, մի առանձին ուրախ զգացմունք ունենալով, նոքա սիրում են խօսել շարժել, ուրախութեան արտասուք թափել Բափել Բայց զարմանալին այն է, որ նոքա առանձնապէս ձգտում են գեպի զար-դարանքը, գեղեցիկ հագուստը: Նատերը ձախել են իրանց տաք հագու-տը ու ձեռք են բերել շլեշապատ, հովանոց, մետաքսեալ շքեղ թաշկինակներ և այլն: Նոյնպէս առանձին հակումն ունին գէպի քաղցրաւենիքը և զրգը-ռող կերակուրները: Հարուստ Մալիվանչինները զործ են ածում միծ քա-նակութեամբ արմաւենի, քիշմիշ շաքար և նոյն նիւթերով օգնում են ող-քատաններին: Նոքա իրանց շատ բաղդաւոր են զղում, շարունակ ացցերում են միմեանց, զրօնում են փողոցներում և հեռացնում են իրանցից իւ-րաքանչիւր միտքը որը կարող է անախորդութիւն պատճառել: Նոքա զգում են իրանց, որպէս անհոգ երեխաներ:

Մալիվանցինների գաղափարները և դաւանանքները շատ հասարակ են: Նրանք սպասում են, որ չուտով աշխարհքը պիտի վերջանաէ: Երկիրը պիտի մնաց բայց նորա վլատ մի այնպիսի կարգ պիտի ախրապեսէ, որ մարդ ոչ կը զործէ, ոչ կը հոգաւ, ոչ ել կը մնանի: Ամեն ինչ կը պատ-րաստէ Երկնապին Հայրը: Մի խօսքով նոցա հաւատը հիմնւած չէ տրամա-բանութեան կամ որ և է մտածողութեանց ու գաղափարների վրայ այլ ուղղակի հալլիցինացիանների ու իրանց ախործ զգացողութեան վրա:

Նոցա մէջ ամենատարածւած հալլիցինացիանները հոտառութեան վերաբերողներն են: Նոքա զգում են ինչոր «աստւածավին» հոտ: Հատերը գիշերը զարթնում են ալզ հոտից: Նոյնպէս ունին առանձին թե-թեռութեան, օդակին և աննիւթութեան զգացմունք (ալսինքն իրանց օդակին կամ աննիւթ են համարում): Նատերը ունին նոյնպէս աչ-

քի ու ականջի հալլիցինացիաներ, լսում են Աստուծոյ ձախնը, սուրբ Հռ. գոյ շվիզոց, տեսնում են «քացած երկինքը», գոյնզգոյն աստեղներ և ազն: Ամանք այդ զգացմունքները ունենում են շարունակ, միւնները պարբերաբար:

Սիկորսկին հաւատացած է, որ մալլիվացիները խկապէս աչդ զգացումները ունին: Բայց ի հարկէ այդ բոլորը առաջանում է կրօնական անշափ մոլուանդութիւնից:

### Մ Ա Ն Ր Լ Ո Ւ Ր Ե Բ

—Պետերբուրգի բարեգործներից ոմանք մուադիր են ձիաքարչ երկաթուղիների վարչութեան հետ համաձանութիւն կալայնել վերաբերեալ այն աշակերտներին ու աշակերտութիւներին, որոնք դպրոցներից հեռու են ապրում: Չիսքարշը վիշեալ բարեգործներից տարեկան որոշ վճար սատարով, ապարատառը կը լինի տոմսակ ունեցող չքաւոր աշակերտներին և աշակերտութիներին դէպի դպրոց ու դպրոցից տուն տանելու:

—Ծեազանի մի խոսք բժիշկների մէջ միաք է ծագել գնալ զանազան չետ ընկած գիւղեր, որտեղ տակավին դործում են ժողովրդական հէքիմները իրանց սեփական միջոցներով ու զեղերով և հետազօտել թէ նոցագործ զրով միջոցները ու զանազան բուները, որոնցից ժողովուրդի բժիշկները զեղեր են պատրաստում: Նաև համալրելի քառ է Ծեազանի բժիշկների մտածածը: Ազագիտով սկիզբ կը զրւի ժողովրդական բժշկութեան հետազօտութեանը, որից անշուշտ գիտութիւնը կարող է օգուտ քաղել:

—Նուասով լուս պիտի տեսնէ անզիկերէն թարգմանութեամբ կուսական ծովագութիւնը մի նոր աշխատառթիւնը, որի վերնադիրն է «Աստուծութագաւորութիւնը մարդու մէջ»:

### ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ

Венгеровъ. Русская поэзия. Собрание произведений русскихъ поэтовъ, съ важнейшими критико-биографическими статьями. Աչս վերնադիմ սկսած հրատարակւել մի բաւական բազմաբովանդակ ժողովածու, որի միջոցով կարելի կը լինի հիմնաւոր տեղեկութիւն ստանալ ուսւաց բանասահղական գրականութեան մասին: Հրատարակիչ Վենգերով արդին լայտնի է իւր նմանօրինակ արտադրութիւններով: Ուստի թէն ամբողջ ժողովածուից առ այժմ միան առաջնին տեսրակն է լուս տեսել, աշնուամնախիւ կարելի է վստահ լինել, որ ամբողջ ժողովածուն (12 տեսրակ) յաջողութեամբ ու բարեխղճութեամբ զլուխ կը բերւի: Կարծում ենք աչզպիսի մի ժողովածու արժէ ունենալ զոնեա հալոց աչն դպրոցներում, որտեղ ուսւաց գրականութիւնը անցնում էն: Խորաքանչիւր տեսրակը արժէ 1 բուրբլի:

Джаншіевъ Г. Изъ эпохи великихъ реформъ. Москва. 1893. 4-е изд. п. 2 рүб. Մեր հայրենակից Զանշեանցի լիշեալ աշխատութիւնը մեծ ուշադրութեան արժանացաւ ուստաց առաջադէմ ինսիլվիգինցիալի կողմից։ Մի քանի տարւաւ մէջ երիտասարդ իրաւագէտի գիրքը չորրորդ հրատարակութիւն ունիցաւ Հեղինակը ամենաճն իրաւամբ շատ ջերմ կերպով է վերաբերում դէպի Աղեքսանդր Երկրորդի բարենորոգումները։ Ազդպէս ուրեմն փոքրիկ ազգերն էլ կարողանում են ծնել որդիներ, որոնք ոչ մի-աէն իրանց հայրենիքին, այլ ամենամեծ ազգերին կարողանում են աչքի ընկնող ծառակութիւններ մատուցանել։ Ուրախալի է, և մենք մասամբ իրաւամբ պարծենում ենք։

Ա. Թ.

## ԱՐՏԱՍՏԻՄԱՆԵԱՆ ՔՐՈՒՀԿ

կանանց կրթութեան գործը Ամերիկակում: 1) «Կուպերի» բարձրագոյն ուսումնարանը: «Գրեկուելի Ճեմարանը»: Կորնելի և Զիկագոյի համալսարանները: «Մոոր Կոլեժը»: Տ. Մակ Կահանի կարծիքը ուսում առած ամերիկուհիների մասին: Բուրժուազական կանանց կրթութիւնը ֆրանսիակում և նրա հետեանքները: Ա. Դիւմակի մի նամակը Ֆրանսիական պատգամաւորների ժողովը և պատգամաւորական ընտրութիւնների բնաւորութիւնը և եղանակները:

Խօսելով կանանց կրթութեան գործի մասին Ամերիկակում—տիկին Մակ-Կահանը տալիս է հետեեալ ամփոփ տեղեկութիւնները: Առաջին տեղը իգական ուսումնարաններից պատկանում է Նիւ-Իօրկ քաղաքի «Cooper Union» հաստատութեան: Սրա գուները հաւասարապէս բաց են երկու սեռի համար: Մուտքը ձրի է: Սա հիմնել է 1857 թ. միլիոնատէր Պիտեր Կուպերի ձեռքով: Շինութիւնը նստել է իրան 630,000 դոլար՝ 1): Նոյն Պիտեր Կուպերը նվիրել է այդ հաստատութեան գրադարանին և ընթերցարանին 300,000 դոլար:

Ներկալում գրադարանը ունի 20,000 հատոր զանազան հեղինակների, իսկ ընթերցարանը ստանում է 455 պարբերական հրատարակութիւն: Ալցելունների թիւը օրական համառմ է 1,800 հոգու: Նշանաւոր գասախօսները գասախօսութիւններ են անում ամեն շաբաթ օր: Այս գասախօսութիւնները նմանապէս ձրի են ամենքի համար: Ներքին չարկում մի մուծ դաշլիճ հատկացրած է ժողովների, միաժնեների համար՝ ազդուղ ևս մուտքը ձրի է:

Դասաւանդութիւնը անողի է ունենում երեկոները: Լսողների թիւը հասնում է 3,000 հոգու: Երկու սեռի ընդունւում են միան գրել կարգավիմացողները և քիչ էլ թւաբանութիւնից: Գիտնական բաժնում գասաւանդում են՝ մատեմաթիկա, ֆիզիկա, քիմիա, մեխանիկա, աստղաբաշխութիւն

1) «Մուրթի» №№ 5, 6, 7—8 այն տեսութիւնները, որոնք կրում էին՝ «Հիւսիսագին Միացեալ նահանգները և ժամանակից մեջ կամաց մակարանում ամերիկացինք» վերնագիրը, —մենք կը շարունակենք մաս-մաս, ներկայի ձեռնի ամեն մի Արտասահմանեան Քրոնիկում»:

2) Դոլարը=5 ֆրանկ 40 սահմանիմ: Աչժմեան կուրսով մօտ 2 ռուբլ:

և գծագրութիւն։ Գրական բաժնում դասաւանդւում են՝ անզլիական գրականութիւնը, ճարտասանութիւնը և բեմբասացութիւն։ Կան նաև ձրի գառեր՝ տպագրութեան, հեռագրութեան և վարժութիւններ տպագրութեան զաղգեահի վրայ։ Առաւօտաալ՝ զծագրութեան, քանդակագործութեան և նկարչութեան դասերը աջնպէս են չարմարեցրւած որ դասերից լետո իդական սեռը չզրկի ապրուստի աշխատութիւնից։

Մինուն հիմունիքների գրայ է և Բրուկլինի քաղաքի Pratt Institute-ը (հիմնած 1887 թ.)—բաց 30-ից 60 դոլար տարեկան վճարով։ Լողունում են՝ 14 տարեկանից ոչ պակաս երկու սեռի ուսանողներ—քննութեան, ենթարկելով՝ քերականութիւնից, ազգային պատմութիւնից, աշխարհագրութիւնից, թւաբանութիւնից և ալգեբրայի առաջին մասից։ Որպէս զի ամեն ոք կարողանալ ալցիկել իւր ազատ ժամերին՝ դասաւանդութիւնը տեղի է ունենում օրը երեք անգամ՝ առաւօտեան, ճաշին և երեկոյնան, ամեն ոք ազատ է զալ երեք ուղում է։ Կան նաև կարճացրած կուրսեր աջնպիսիների համար, որոնք օրում է ազատ ժամանակ ունին։

Այս ճեմարանը պարունակում է իւր մէջ նաև մի տեխնիկական զըպրոց, որի նպատակը շատ լայն է։ Նրանում աւանդում են թէ զիտութիւններ թէ հասարակ ու զեղեցիկ արհեստներ։ Դիտութիւնները, արեւոտները սրանք են՝ մատեմաթիկա, Փիզիկա, մեխանիկա, խիմիա, նկարչութիւն, զծագրութիւն, քանդակագործութիւն, անզլիքրէն լեզու, ճարտասանութիւն և քաղաքացիական իրաւունք։ Ապա աւանդում են հաշւապահութիւն և արհեստի դասեր՝ ասադակործութեան, դարբնութեան, կար ու ձեր, խոհարարութեան և տնապին տնտեսութեան օրիորդների համար։

Ճեմարանը բացի այս տեխնիկական մասերից ունի նաև մասնագիտական բաժիններ զեղարկեսանների համար, տնտեսագիտութեան, սղագրութեան և, բացի այս ամենից, պատրաստում են վարպետ զարթիններ, որմանագիրներ, աստղագործներ, կար անողներ, վարպետ խոհարարութիւններ, շոր լւացողներ, մոդիտականներ և այլն։

Մի նոր բաժին ևս ունի ճեմարանը, ուր սպառաստում են վարպետ գրադարանապետներ, քանի որ սրանց պահանջը օրեցօր աւելանում է։

Ճեմարանը ունի նաև հողագործութեան և զիւղասնտեսութեան բաժիններ։ Ուշը է զարձնուում նաև ազգեգործութեան և ծաղկապահութիւնն վրայ։ ծաղկինները առհասարակ շատ են ընդունւած և շատ թանգ են վճարուում<sup>1)</sup> ։ Ծննդեան տօն օրին՝ 12 վարդի համար նիու-Կօրկում հեշտութեամբ վճարում են 30 դոլար<sup>1)</sup> (60 սուբլուց աելի)։

Ճեմարանը ունի մի ընդարձակ փերմա և պահում է օրինակելի անա-

<sup>1)</sup> Բարձր շրջանների ամեն մի երիտասարդի համար պարաւարեցուցիչ է փունջներ առաջարկելը ծանօթ օրիորդներին և տիկիններին։

առններ: Կաթնատնաեսութիւնը գործադրում է գիտնական հիմունքների վրայ Աշակերտները ալսպիսով ծանօթ են լինում բոլոր տնտեսութիւնների հետ և ամեն մէկը հեշտութեամբ ընտրում է իւր սրոփ ուզածը և ապա կատարեալագործում: Ճեմարանը ունի նաև մի արտասովոր բաժին—խնալողութեան բաժին, որի անունը արդէն բացասարում է նպատակը: Բոլոր ուսանողների թիւը Պրատու ճեմարանում համառ է 3,232: Ճեմարանի վարչութիւնը 1890 թ. դիմեց տպագրած հարցերով ուսանողներին և կողմնակի անձանց ընդունելի և մացնելի փոփոխութիւնների մասին: Ստացւեցան 556 պատասխաններ, որոնց հետևանքը այն եղաւ՝ որ ճեմարանի վարչութիւնը պայմանաւորեց շատ ֆերմերների հետ, որ սրանք ձրի՝ բաց կերակրելու պայմանով—վերցնեն իրանց մօս ճեմարանի սաներին ամառւաչ արձակուրդների միջոցին: Սանի պարաւորութիւնն է այդ գէպօրում կատարել գիւղական մշակութիւն: Եթէ երիտասարդ սանը ընտելանում է գիւղական կեանքին և վճռում է ինքն իրան նւրբել ալդ գործին՝ նա զիմում է իւր հալրենիքի կառավարութեան և հիմնելով Homestead Law օրէնքի վրայ պահանջում է իւր մշակութեան համար 160 ակր պետական հողերից Արևմուտքում<sup>1)</sup>:

Նոցն ուղղութեանն է հետևում 1891 թ. դեկտեմբերին Ֆիլադելֆիա-չում բացւած Drexel Institute<sup>2)</sup>—բաց աւելի մեծ ծառալով:

Դրեքսելի ճեմարանի լսկական անունն է Դրեքսելի ճեմարան գեղարեսատի, գիտութեան և արդիւնագործութեան<sup>3)</sup>: Այս ճեմարանի գըուները նմանապէս բաց են երկու սեռի համար, բաց ոչ ձրի՝ այլ թեթև վարձով:

Ճեմարանի շինութիւնը իւր մանրամասներով նառել է Անտոն Դրեքսելի մօս իէս միլիոն դոլար և բացի գրանցից հիմնադիրը նվիրել է իւր ճեմարանի պահպանութեանը մի միլիոն դոլար: Արևելեան Ամերիկայի հակառակ, Արևմտեանը բացել է իւր բոլոր համալսարանների դոները երկու սեռի համար: Սակայն Արևմտեան Ամերիկայում վերջիրա գանգառներ և բողաքներ էին լուսմ կանանց համալսարանական իրաւունքների դէմ: Ալսպիսի գելքեր տեղի են ունեցել Միչիգանի համալսարանում և Ան Լութի American Medical College-ում<sup>3)</sup>: Արևելեան Ամերիկայի միակ համալսարանը, որ ունի հողագործական բաժին և որի դռները բաց են երկու սեռի համար է, —Cornel University: Արա մուտքը նմանապէս ձրի է:

<sup>1)</sup> Արևմուտք են կոչւում իրանց երկրի արևմտեան մասը:

<sup>2)</sup> Drexel Institute of Art, Science and Industry.

<sup>3)</sup> «Ամերիկական բժշկական կուլտ»:

Մի նոր համալսարան, որ բացւելու էր 1892 թ. աշունքին երկու սեռի համար էլ, Զիկագօի համալսարանն է, որի կառուցանելուն նպաստել են մեծ մասամբ բապտիստները<sup>1)</sup>: Այսպէս I. D. Rockefeller բապտիստը նվիրել է այս համալսարանին 1,600,000 դոլար, W. B. Ogden մէկը նվիրել է իւր ամբողջ Կարողութիւնը, այսինքն մէկ ու կէս միլիոն դոլար երացի գրանից ստորագրութեամբ ժողովել է մօտ 600,000 դոլար: Բապտիստը նվիրողները պազման են դրել որ համալսարանի 21 հոգաբարձուների 2/3 (այսինքն 14 հոգի) լինին բապտիստներից: Մինուն ժամանակ նրանք չակտարարել են որ համալսարանը իրան հեռու պէտք է պահի ամեն մի աղանդաւորական ուղղութիւնից և նկատի միմիան իբրև մի լումակ ամերիկական բապտիստների կողմից:

Այս նոր համալսարանի կառավարիչ Կարպերը մտադիր է ընդունել այն ամենը, ինչ որ նա օրինակելի կը գտնի անգլիական և գերմանական համալսարաններում: Իսասախօսութիւնները լինելու են առանց ընդհատւելու ամբողջ տարւաւ ընթացքում: Համալսարանի գրադարանը արդէն ձեռք է բերել 350 հազար հատոր գտնազան հեղինակների:

Ամերիկացիք թէպէտ հոչակել են իբրև փողասէրներ, բայց նրանք հոչակել են նաև իբրև միլիոնանոց կտակներ անողներ: Միլիոնատէր Ա. C. Troop'ի միջոցներով է հիմնւած Կոլորադով համալսարանը երկու սեռի համար: Սենատոր Ստանֆորդ հիմնել է Կալիֆորնիացում նմանօրինակ մի համալսարան ի վիշտակ իւր հանգուցեալ որդու:

Արևմտեան Ամերիկակի գրեթէ բոլոր կոլեջներում և համալսարաններում իրական սեռը իրաւունք ունի չաճախելու և իրաւաբանական մասը, իսկապէս աւելի ճիշտ կը լինէր այս մասերը անւանել փաստաբանական, որովհետեւ իրաւագիտութիւնը, հռովմէական քաղաքացիական իրաւունքները դասաւանդուում են նրանց ոչ իբրև գիտութիւններ, այլ այդ բաժիններում, այսպէս ասած, փաստաբաններ են թիւում, որոնք հէնց համալսարանական նստարանից կարող են իրանց նվիրել աղդ արհեստին: Ամբողջ Ամերիկացում կան 7 բժշկական կոլեջներ (որոնց հիմնադիրներն են կին բժիշկներ) և մօտ 50 հաստատութիւններ, ուր իդական սեռի համար զոնները բաց են բժշկութիւնը սովորելու:

Բրուկլինում նորերս բացւել է «զեղագործների» մի ուսումնարանու 4 կին և 65 տղամարդ ուսունող են գրել:

Իրաւագիտութեան կուրսերը հիմնել են Նիու-Յորկում միմիան 3 տարի սրանից առաջ—մաննաւոր կերպով: Դրանց գլուխ բերողը Շենցարիակի թեուն'ի համալսարանը աւարտած ամերիկուէի էմիլի Ռեմալին՝ է,

<sup>1)</sup> Սորա հանգուցեալ ամուսինը չաճանի թղթակից էր ամերիկական լրագիրների վերջին ուսումնական պատերազմի ժամանակ:

որը 17 ուկնդիր ունեցաւ երկու տարի շարունակ իր հիմնած կուրսերում՝ Ազնուհետե նա կարողացաւ համոզել նաև Նիւ-Խօրկի համալսարանին ընդունել իւր իրաւաբանական մասում նաև իգական սեռը. 1892 թւականին 4 համալսարանաւարտ իրաւաբանութիներ ելան:

Արեւելեան Ամերիկակի միան երկու քաղաքների ուսումնական հաստատութիւններում՝ իգական սեռը համահաւասար իրաւունքներ է վայելում: Առաջինը արդէն լիչած կորնելլի համալսարանն' է և երկրորդը Բուտոնի տեխնոլոգիական ճեմարանը:

Ամերիկական ամենահին համալսարանը՝ Հարւարդին'ի իգական սեռի համար մի առանձնացած և ուրիշ կառավարչի լանձնւած մի բաժին ունի, Կոլումբիակի համալսարանը նմանապէս մի լատուկ բաժին ունի և կանաչքո առանձին տան մէջ են լսում դասախոսութիւնները:

Արեւելեան Ամերիկաչում կան մի քանի մասնաւոր իգական կոլլեժներ: Սոքա են՝ Bryn Mawr College-ը Ֆիլադելֆիայում, Vassar College-ը Նիւ-Խօրկի մօտ և Wellesley College-ը՝ Մասաչուսետսում: Այս վերջինիս ուսանողուհիների թիւը հասնում է 700, իսկ Vassar College'ում՝ էլ աւելի: Սրանց ծրագիրը ընդհանուր-կրթուղական է, Փիդիկա-մատեմաթիկական, բնադիտական, քաղաքավիճ տնտեսութեան բաժիններով: Ուսանողուհինները անում են գիտնական հետազոտութիւններ, ունին ընկերութիւններ մարմնամարզական և նաւագնացական: Bryn Mawr College'ի համալսարանուհիներ ունին ընդունած համազգեստ նման անդիմական կեմբրիջի համալսարանականների—սև մանտիա և քառանկիւնի գլխարկներ:

Այս հետաքրքրական աեղեկութիւնները տալուց լեռու, տիկին վ. Մակ Կահաննը լավագում է իւր սեփական կարծիքը բարձրագուն ուսում ստացած ամերիկուհիների մասին: Նրա ստեղով ազդ կանաչքը ժողովրդականութիւն չունին իրանց երկրում: Այս կէտը շատ է բնորոշում ամերիկուհի գտառած՝ ուսւ արիւն ունեցող տիկին Մակ-Կահանին, որը վրդով-ւերով է ասում թէ «ամերիկուհիք զուրկ են ինքնուրունութիւնից, թէ նրանք իրանց անքան շատ են կարգին պահում—որ մի գուցէ մէկը նրանց բամբասի, որ նրանք խօսում են քաշերով և շատ կամաց իբրև մի վտանգաւոր հիւանդի սենեակում, որ նրանք անպէս են ու փոխում իրեն թէ ձուաների վրա լինին մանգալիս, կամ թէ տանելիս լինին մի աստւածալին հուր պաշտպանելով սրան ամբոխի շնչումից: «Կապովս գուլբա»<sup>1)</sup> մականունից վախ կրելով ամերիկուհիները առանձին խնամք են տանում իրանց առւալետի վրա և այնու ամենահին նրանց մօտ երեան չէ գալիս այն շնորհալիութիւնը, որ լատուկ է բարձր շրջանների կանանց, Դրանք

<sup>1)</sup> Այսպէս են կոչում ուսումնական ձեւացող կանանց:

մնում են անդո՞ն իրանց գործունէութեան հետ չնակելով որ ոչինչ չեն խնակում ամեն բարի գործին օգնելու համարու:

\*  
\*

Ֆրանսիական բուրժուազական իրական կրթութեան մասին մի շատ բնորոշ գաղափար է տալիս հետեւալ հետաքրքրական նամակը, որ ապէէլ էր անցեալները Պարիզի «Ֆիզարո» թերթում և որից քաղում ենք հետեւալ մի քանի կտորները:

«Ես պատկանում եմ բուրժուազական մի ընտանիքի, որը հոգս է քաշել ինձ մի փալուն կրթութիւն տալու, բայց որը չպիտի կարսզանակ նոցնքան մեծահոգի լինել օժիտիս վերաբերմամբ: Ոժիտու բաւականին նվար է: Որովհետեւ ևս գեղեցիկ եմ՝ ուրիշների ասելով, բարի, երածու հի, անդովերէն խօսող, կար անել իմացող, ճաշ պատրաստել զիացող անտեսութիւն անելու ընդունակ—կարծ ասած՝ կատարելսպորթիւն մարդու տալու աղջկակ (շատերա ենք արագէս), տառի հէնց որ 18 տարեկան հասակում ուսումն աւարտեցի բարձրագոն վկաչականով—իմ ծնողները ինձ դուրս բերին հասարակութեան մէջ, առանց մի բոպէ անդամ կամկածեւ որ ես խոկոն և եթ պիտի գանեմ ցանկալի մի ամուսին... Ես ունեցակ ամենամեծ լաջողութիւն պարելով ամբողջ գիշերներ՝ 16—22 տարեկան երիտասարդների հետ, որոնք ինձ հրաշալի էին գտնում, —բայց ես երբէք չպատահեցի խոկապէս ամուսնայ դներին, այն է 30—35 տարեկաններին: Ո՞ւր են դրանք: Ինձ չկարացին կամ չուզեցին ասել! կարծ կտրած—ահա ես համնում եմ զրեթէ քսանիս—ես չունիմ ոչ մի ցանկութիւն ինձ շրջունակ ի ցոլց հանելու պատմանիների գլարձութեան համար, ես բաւականին պար եկալ, ինձ տեսել են, ես չունիմ ամուսին և չպիտի էլ ունենամ մինչ որ չկոլողացնեմ օժիտա! Ի՞նչ անելու»

Ապա, անցնելով այն ասպարէցներին՝ թատրոն, դաստիարակութիւն, առուստուր, բժշկութիւն—առապարէզներ, որոնք բաց են կնոջ առաջ—համակագիր օրիորդը ւալունում է, որ ինքը հակումներ չունի դէպի երածշութիւնը և թատրոնը. որ հակառակ իւր կամքին ինքն իրան չի կարող նուիրել բժշկութեան—քանի որ մինչեւ աւարտելը ինքը կը դառնար 30 և աւելի տարեկան և արդէն թառամած. որ կրթութեան և դաստիարակութեան անպարէցները լիքն են, իսկ առետուր անելը անքաղաքալարի է համարում իւր շրջանում:—«Ապա ինչ անել, հարցնում է ալս ամենից իմոտ օրիորդը. «Ինձ խորհուրդներ են հարկաւոր ոչ միան իմ անձիս վերաբերմամբ, այլ նաև իմ 50—80 ընկերունիներիս համար, ինչ անել տպանելու համար տախտկալի ժամանակը մինչեւ ակնկալած փեսալի գալը և ինչ մի ջոցներով խոչորացնել մեր սուզ օժիաները?»

Ով կը կարծէր թէ իրաւ որ մի օրիորդ կարող կը մնէր գրել Առա-

գրում ակապիսի մի նամակ! Բայց որդինեան անկարելի բան չկաէ աշխարհիս երեսին—այն էլ մեր XIX-րդ դարու վերջերքում, ուստի հաշտւենք իրականութեան հետ առանց զարմանալու և տեսնենք թէ ինչպիսի պատասխան և խորհուրդներ տեսք նամակադիր օրիորդին Ալեքսանդր Դիւմա որդին, —որը զարմացածների թւումն էր և որից Ֆիգարօի իրեւագրութիւնը խնդրել էր մի պատասխան իրը մասնագէտից պահանց խնդրումն։ Դիւմայի պատասխանը եղաւ «ամենաթուներիցը—թերեւ այն պատճառով, որ ինքը զարմացածների թւումն էր»։

Ամենից առաջ նա չանդիմնում է օրիորդի ապերտիստութիւնը զէպի իւր ծնողները—մի վարմունք սական, աւելացնում է Դիւման, որը չառուկ է աշնպիսիներին, որոնք զլուխ են պատուում մարդու գնաւու Ապա շարունակում ալսպէս։

«Տղամարդիկ իսկի անքան էլ վիմար չեն որքան որ կարծում են կանակը և լաւ վեսացուները իրանց համար կին չեն որոնում ան ժողովարաններում, ուր ջանիլ օրիորդները պարում են առաջին պատահածի դրբ կում։ Փամանակ առ ժամանակ, շարունակուս է Դիւման, կըպատահի որ մի աղքատ օրիորդ, արտակար գեղեցկութեան, աջակցութեամբ իւր աեւլի քան խելօք մօրը, կը չաջողի մարդու գնալ մի միլիոնատէրի—սական սրանք բացառութիւններ են։ Դալով «հիանալի» երիտասարդներին, որոնք հրաշալի կերպով վալս են պարում, իսկ պարերի մէջներքում իրանց «դամաներին պազպազակ թաւազա անում ու հիանում սրանց հաղուստի վրալ—ալդպիսի երիտասարդների մասին, պէտք է ասել որ նրանք՝ կողմ նակի կերպով սովորած լինելով—քաջ տեղիւակ են լինում թէ ալդ տեսակ հաղուստները ինչեր են նատում դրանց ամուսիններին ու սիրահարներին, ուստի ալդ երիտասարդներն էլ սովանջում են որ այն մատադ օրիորդները, որոնք ցանկանալու են նաև ամուսնանալուց լեաով շարունակել պճնել, որ սովա վող օժիտ բերէին, որով և կարելի լինէր ձեռք բերէլ ալդ ամենը։ Խակ ինչ վերաբերում է նրանց, որոնք աշխատում են և կեսնքի վրաէ լուրջ տեսակէտից են նախում ու իրանց համար որոշած ունին կեանքի մէջ չալանի նոպատակի, —ալդպիսիները իրանց համար կեանքի ընկերունից չեն որոնում կոտիլոն պարելիս...»։

Օրիորդի նամակի երկրորդ կիսին անցնելիս Դիւման գրում է.

«Այն՝ ինչ ամենից շատն է ապշեցնում ինձ օրիորդի «հաւատամբքի», մէջ, (օրիորդի, որի քսան տարին դեռ չի լրացել)՝ իւր նշան դասակարգի, հաստին, սեռի—դա այն բնածին ահամարանքն է, որ ցարտում է ամեն կաղմից լուսականից դէպի արականը։ Աչ մի խօսք սիրու մասին, անձնւիրութեան, համերաշխառութեան, իդէալի մասին։ Աչ մի խօսք զոհաբերութեան մասին, որ նա պատրաստ լինէր անել նիւթականից—եթէ որ իրան չաջողւէր հանդիպել մի շիտակ մարդու։ աչ մի խօսք միջակու-

թեան մասին, որ նա ուրախութեամբ և քրիստոնէաբար չանձն կառնէր յարգւած ամուսին և օգուակար մայր լինելու համար — և ոչ մի նշան ալս ամենի մասին: Ըստ երեսվթին թէ սրա և թէ, սրա 50—80 ընկերուհիների համար — տղամարդը տեղեցւած է ոչ թէ իւր հոգու, սրտի: և լաւ կրթութեան տենչանքները ու իղձերը իրազործելու — ալ գոհացում տալու նէրա փառափիրութեան, քիմքին, փառամոլութեան, նէրա ցանկութիւններին՝ շարժւելու, աղբակ հանելու, լշխելու, զուգելու... Եւ եթէ, օրիորդ, երլոտասարդը խոլս է տալիս ձեզանից — նա կատարեալ իրաւունք ունի, քանի որ ինչքան էլ որ զուք նրան լիմար համարեք ուրիշների հետ միասին, հէնց սրա իւր զուք նրան լիմար համարեք ուրիշների հետ միասին, հէնց սրա իւր զուք է ձեղ հետ ամուսնանալու, ապինքն միանգամայն կապ-մելու իւր զուգութեամբ — ես չգիտեմ՝ մի ինչոր անամսական ընազդաւմ նրան ետ է կանգնեցնում: Նա զիտէ, որ զուք 300 հազար ֆրանկի օժիտ չունիք: Նա նախազգում է որ զուք մի շահու հոգի էլ չունիք, և ահա նա ձեղ թողնում է ի հաշիւ ձեր մօր, որի մայրական սէրը սխալ ուղի էր ընարել: Դուք մնալու էք կող և դա կը վի՞ արդարացի՞:

Այս խիստ գուշակութիւնից էտոսի Դիւման անցնում է խորհուրդներին:

«Խակութիւնը այն է, օրիորդ, որ զուք և ձեր ընկերուհիների մի ա-հագին խոսմբ կրթւած էք հնացած հիմունքների հասկացողութիւնների հագին խոսմբ կրթւած էք հնացած հիմունքների հասկացողութիւնների հագին խոսմբ կրթւած էք հնացած օժիտ առաջանա, բայց նա սիրուն է, կրթ-ւած է, շիտակ է — միթէ այս ամենը հերիք չէ որ նա իրա համար մարդ գանել կարողանալ»:

«Ա՛յտ, եկէք ու տեսէք, որ ազդքանը բաւական չէ մարդ գանելու հա-մար, գոնէ աշնալիսի մէկը, որպիսինի մասին որ զուք երազում էք: Այն տղամարդիկը, որոնց որ զուք կը կամենալիք — ձեղ չին ցանկանում, խկ աշնալիսիները, որոնք որ ձեղ կը ցանկանալին — զուք չէք ցանկանում, որովհետեւ ձեղ շրջապատող շքեզութիւնը, շուազութիւնը դարձել են ձեզ փառասէր և աղաճ: Որքան էլ ձեղի յոց զնեն սալոններում, ծովեղբեալ լողարաններում, թէկուղ Զիկազուլ ցուցանանդիմում: — ամենտեղ զուք կը լավագանքները նոյն երգը՝ հապա ուր է օժըտը: Եւ իրաւ, ինչու տղամարդիկ ձեղա-նից օժիտ չպահանջեն, քանի որ զուք իրանցից կարողութիւն էք պահանջում:

Այս տողերից էտոսի Դիւման անցնում է իւր վերջաբանին և զգու-շացնելով օրիորդին լուսահասութիւնից և օրինաւոր ամուսնու փոխարէն ապօրինի մէկին գտնելուց — շարունակում:

«Ես երաշխաւոր չեմ ձեր անձի համար: Ձեր ոկզբունքը շատ վտան-գաւոր է, որովհետեւ զուք արհամարում էք աշխատանքը, որը օգնում է մեծ թշւառութիւնների ժամանակ, միսիթարում — տառապանքի ժամա-նակ, վերանորոգում ովերը նոր կոիւների համար: Դուք հէնց այն

էք մոտածում թէ աշխատանքը վիճակւած է լոկ չնշին արարածների համար։ Դուք սխալում էք։ Մեր հնացած աշխարհը, որի կարերը բոլորովին քանդում են, նորից կըստանաւ հաստատուն հիմքեր աջակցութեամբ և յօդուտ անվախիների, որոնք բանում են, աշխատում են։ Եւ քանի որ տղամարդիկ աւելի և աւելի խոս են տալիս ամուսնութիւնից և ուշը ստորացնում հասարակ գլարձութեան աստիճանի—ապա ձեզ պէս անօժիտ բուրժուազուհիներին կը մնալ—միանդաման ձեռք քաշել միլոնատէրերի կամ ազնւազարմների օրինաւոր ամուսիններ լինելուց ու հաշուել պառնկութեան հետ եթէ դէմքով զեղեցիկ էք և ծով, կ ամ որոնել որ և է աշխատանք եթէ խելօք էք և հապարա։ Ալլ ևս լուս միք կապիլ, օրիորդ, տղամարդկանց վրաւ—լուս գրէք միմիան ձեր անձի վրաւ։ Ալլափէս միք արհամարդիլ գեղարւեստը, գիտութիւնը, արդիւնագործութիւնը, վաճառականութիւնը, դրանց մէջ է հասարակութեան հոգին ու կեանքը։ Փոխ առէք դրանցից մի քիչ ան բանից, որ զրանք տալիս են մեզ, տղամարդկերանց, — ապօնքն անձնական արժանաւորութիւնն, որը ձեզ երբէք չեն կարող փոխարինել ոչ լաթի կտորները, ոչ ձեր զիկուտէ՛ն, ոչ վալսը։ Սա կը լինի ամենալաւ միջոցը մարդ զսնելու... Ալս պատճառով միք տըքնի կողոլացնելու ձեր օժիոր—շատապահանջ ամուսին գոնելու համար, — ալլ աշխատեցէք և էլի աշխատեցէք։ Պարապւեցէք նկարչութեամբ—Ռոզա Բոների նման, գրականութեամբ—Ճորժ Զանդի նման, գրամատիկական զեղարւեստով—Սառա Բերնապ'ի նման, փիլիսոփայութեամբ—Էլոիզավի նման, թարգմանութիւններով—տիկին Դաստիէ՛ի նման, արդիւնագործութեամբ—տիկին Էնուիկո՛ի նման, գուցէ հեշտ չինի—սական անքան էլ տաղտկավ չի լինել, որքան անընդհատ մարդ ուրոնելը և պակաս ստոր—քան ալգախին չգտնելը» !

\*  
\* \*

Օգոստոս ամսի 8/20-ին ամբողջ Ֆրանսիացում տեղի ունեցան քւէ-արկութիւններ և ապա կրկնաքւէարկութիւններ պատգամաւորների ժողովի համար պատգամաւորներ ընտրելու 1893—1897 ժամանակամիջոցի համար։

Ֆրանսիական մեծ լեզափոխութիւնից լետոց Ֆրանսիան բաժանւած է 86 գեպարտամենտի, որոնցից ամեն մէկը բաժանւած է «առողջիւման-ների», գաւառակների։ Ամեն մի 100,000 բնակիչ ունեցող գաւառակ ընտրում է մի պատգամաւոր։ Բնակիչների աճումի հետ աճում է և պատգամաւորների թիւը։ 1885 թ. պատգամաւորների թիւն էր 576, իսկ ներկայ թւականին 581, քանի որ հինգ գաւառակների բնակիչների թիւը աւելացել էր 500,000-ով։

Ոչ մի պատգամաւոր չի ընտրւում մեն մենակ, ալլ անպատճառ պ ստ.

կանում է եղած քաղաքական կուսակցութիւններից մէկին, իսկ եթէ ստեղծւում է մի նոր կուսակցութիւն—մի նոր մարդու ուղղութեան անունով,—պատգամաւորը ընտրում է այդ խոկ թուլ սակաւաթիւ կուսակցութեան անունից:

Ոչ մի երկրում կուսակցութիւնների թիւը աճնքան մեծ չէ, որքան ֆրանսիացւմ—մի երկրում, որը ունեցել է մեծ պատմութիւն և ուր կուսակցութիւնների իրար հետ ունեցած կուները դառել են առասպելականն: Եւ սական—ամեն անդամ երր դործը հասնում է մի ընդհանուր թշնամու հարածելուն բոլոր կուսակցութիւնները խսկոն միանում են իրանց հայրենիքի աղատութեան սուրբ զործում: Մի նորագոյն օրինակ կուսակցութիւնների օրինակելի միաձանութեան կարող է լինել այն ոգևորւած ընդունելութիւնը, որ ֆրանսիացի քանում են այս օրեւր իրանց քաղաքական դաշնակցին—Ռուսիակին—Հանձին ուսուաց նաւատորմիդին:

Ապան չժեղենք և մասնաւրապէս ներկայ ընտրութիւններին անցնելուց առաջ—մի քաղաքար տանք ֆրանսիական այս ընտրութիւնների բնաւրութեան և եղանակների մասին ընդհանրապէս:

Ամենամեծ գերը ընտրութեան գործում կատարում է տպած թուղթը, որը զանազան լայտարարութիւնների, աղջերի ձեերով կացնում են սովորական լայտարարութիւններին լատիկացրած սիւներին, մասնաւր, հասարակական և պետական շինութիւնների պատերին, իսկ ընտրութեան օրը նաև լուչարձաններին, ծառերի ճիւղերին և բուներին, հասարակական շինութիւնների սանդուխներին և նոյն խոկ սալայտակալին,

Այդ օրը պէտք է Պարիզում լինել ու տեսնել գոյն-գոյն այդ թըդթերի հարիւրհազար օրինակները !

Թէև ըստ ֆրանսիական օրէնքի արզելում է լայտարարութիւններ կացնելը մասնաւր տների պատերին և մինչև անդամ տնատէրերը լիշեցնում և զգուշացնում էլ են ում հարին է՝ գեֆանս գ'ափֆիչէ<sup>1)</sup> մակագրութիւններով—իրանց տների պատերի վրաէ—աճնուամենալին կացնողը անում է իւր գործը և տնատէրը երբէք չի դիմում օրէնքի օգնութեան բաւականութիւն ստանալու համար:

Պատգամաւորների լայտարարութիւնները պիտի լինին զոյնաւոր, իսկ սպիտակ թուղթը վերապահաւած է միմիան պետութեան: Օրէնքի պաշտպանութիւնը վակելում են նմանապէս եկեղեցիները և լուչարձանները բաց եթէ ոստիկանութիւնը քնած է լինում—արձաններն էլ են ծածկւում պատգամաւորգական լայտարարութիւններով, օրինակ այս տարի Վոլտերի կիսարձանին կացրել էին մի կղերական պատգամաւորի լայտարարութիւն:

<sup>1)</sup> «Արդեւած է ափիշաներ կացնելը»:

Ալլ լաւարաբութիւնները լինում են զանազան ձևերի, Ամենից առաջ կպցնւում է 60 սանտիմէտր երկարութիւն և 20 սանտ. լայնութիւն ունեցող լաւարաբութիւնը՝ 10—15,000 թուվ, որը պարունակում է միան թիկնածւի անունը և որա որ կուսակցութեան պատկանելը, Երկրորդ աեղը ըստ ժամանակագրականի բռնում է աւելի մեծ լուսարարութիւնը, այն է 80 սանտիմէտր երկարութիւն և 30 սանտ. լայնութիւն ունեցողը, որը հանդէս է գալիս—երբ առաջին կարգինը անընթեռնելի է լինում չնորհիւ հակառակորդի վրան կացրած աֆիշաների, Ապա գալիս են հրաւիրաթղթեր—ժողովներին ներկայ լինելու, թող սրանց թիւն էլ լինի մի 15,000 հատ. Ապա գալիս է մի չորրորդ տպագրութիւն՝ 60 սանտ. երկարութեամբ և 80 սանտ. լայնութեամբ, որը պարունակում է թեկնածւի ծրագիրը, գաւանանը և խոստումները, և եթէ այս բոլոր տպւող և ցրւող թերթերին աւելացնենք և թեկնածու պատգամաւորի պատասխանները, իբր «զրպատուզերի հասցեին», բայց խկապէս ուելլամի համար թխւած բացատրութիւնները,—այն ժամանակ միան գէթ կարելի կը լինի մի գաղափար կազմել գործածուղ թղթի քանակութեան և տպարանների ունեցած գործի մասին:

Բացի այս տպւած թղթերից, տպարանից, ցրւողներից—թեկնածու պատգամաւորը, որը անսպատճառ ուզում է ընսրւած լինել—տիխալած է դիմել և գործ ունենալ հազար ու մի այլ տեսակի մարդկանց հետ, մարդկանց, որոնցից ամեն մէկը իրա համար մի մասն է ընսրել—իբր մասնա, գիտութիւն—ընտրողական բարդ գործից:

Եւ իրաւ ահա թէ ներթով ովքեր են ներկալանում թեկնածու պատգամաւորին:

Գ բ ո դ ը, որը զլուխ է անցնում մի թերթի (ի հարկէ ՚ի հաշիւ թեկնածու պատգամաւորի), մի թերթի, որը ընդ ամենը մօտ մի ամիս միան պիտի գործւթիւն ունենայ և խիստ ջղւածների հետ ի պաշտպանութիւն և չստապովութիւն թեկնածւի՝ պարունակի նաև խիստ չարձակումներ և հարուածներ աջ ու ձախ եղած հակառակորդների հասցէին:

Թ ե կնածւի քարտուղարը, որը բնակութիւն է հաստատում կուի դաշտում, ապինըն անտեղ ուր կատարելու է պատգամաւորական ընտրութիւնը, Քարտուղարը աշխատում է անձնիրաբար, օրն ի բուն մաշում փողոցները, շարունակ չաճախում այ ճատաներ, ճաշարաններ, որոնում և գըտնում բարեկամներ, որոնց ուտեցնում է, խմեցնում է և նոյն խկ փող տանուլ տալիս թղթի, գոմինոցի մէջ և այլ խաղերում: Ներկայ է լինում ժողներում, ուր առաջարկում է նպաստաւոր բանաձեռ խւր «ալիրոջ» համար, գրում հասցնում նկատողութիւններ լրացրելին և այլն:

Ծափահարութիւնների կազմում, որի գերը նրանում է կալանում, որ կարելիլին չափ չառ ծափահարի իւր «ալիրոջ»—սրա ճառեր արտասանելու ժամանակը

ընդմիջելով նրա ամեն մի նախաղասութիւնը՝ կեցցես բացականչութիւններով:

Նւացնողը—կատարում է ծափահարողի հակառակ գերը, աչսինքն շացնում է իւր «տիրոջ» հակառակորդների արտասանած ճառերի ժամանակ. իւր տիրոջ թեկնածութեան անլայնողութեան դէպքերում—աղմուկ հանելով բանը հասցնում է անկարգութիւններին և նիստը փակել տալիս:

Ճանապարհ գցողը, որի արհեստը և գերը այն է որ ճանապարհ գցի իւր թեկնածու պատգամաւորին ժողովատեղերից տուն: Տուն հասնելուն պէս—ճանապարհ գցողը աչսքան կեցցէ է կոչում, որ իւր «տէրը» բարեհաճում է զուրս զալ պատշգամը և մի նոր ճառ արտասանել հաւաքած ամբոխին: Նոյն ճանապարհ գցողը բարձրագոչ կերպով զանազան վիրաւորիչ մականուններ է կացնում իւր «տիրոջ» հակառակորդին:

Ճառախօսները, որտեղ առաջարկում են իրանց ծառակութիւնները այն դէպքերում, երբ թեկնածու պատգամաւորը զուրկ է լինում ճառախօսական ընդունակութիւնից: Սրանք լինում են դերասաններ, արտասանելով անգիր արած ճռճռան խօսքեր—սրանք հիացմունքի մէջ են գցում ունինդիր ամբոխին:

Գրադարանի մուկը, որը գրադարաններ քրքրելուց լեռոց ներկայանում է պատգամատրին այն խալտառակիչ և արատաւորող տեղեկութիւններով, որոնք ստեկ են զցում թեկնածւի ծնողների վրաք նթէ թեկնածու պատգամաւորը մերժում է ձեռք բերել այդ գրադարանական մկան լուսութիւնը—ապա նոյն տեղեկութիւնները տանում են մկան ձեռքերով—պատգամաւորի հակառակորդի մօտ, որը ի հարկէ կը գնի այդ տեղեկութիւնները:

Այնուհետև առաջ են զալիս—քաղաքաչին վարչութեան քարտուղարը—որը թեկնածու պատգամաւորին տալիս է ընտրողների անունները և հասցէնները. անպատճուն վարժական գրքեր և նրանց վրա հասցէններ գրելը. աղքատը—որին չանձնում են այդ շրջաբերականների ցրւելը, փողոցաչին երդիչը—որը երգեր կը օրինի ի փառաբանութիւն թեկնածու պատգամաւորին, ընտրողական թերթիկների ցրւիչը, որը կանգնած է լինելու այն դռան շեմքին, ուր կատարւելու են ընտրութիւնները. վերահսկողը, որը աչք է պահում ընտրութիւնների կանոնաւորութեանը կամ անկանոնութեանը, և վերջապէս—չաղթանակի մարդիկ—որոնք նոր թիւած պատգամաւորին ձեռքերի վրա տանում են մօտակակ սրճատունը:

Միջին թւով թեկնածու պատգամաւորի արած ճախքերը հասնում են 15—18.000 ֆրանկի, ասել է մօտաւորապէս պատգամաւորութեան երկու տարւակ ուսձիկը:

Այն էլ պէտք է ասել, որ Պարիզի իրա մէջ ընտրութեան վրա եղած

ծախքերը պակաս են քան գաւառում: Պարիզում ընտրելու համար ամենակարևորը է լուսալի ընտրողական կոմիտենի աջակցութեան ձեռք բերելը: Այս դէպքում բոլոր հոգուները ընկնում են կոմիտեաի վրա:

Աւելի գժւար է գաւառներում ընտրելը, այսինքն զիւղերում և գիւղաքաղաքներում, ուր ընտրողները չեն ժողոված մի տեղ, ինչպէս Պարիզում, այլ ժուռած են ընտրութեան տեղի շրջակալքում:

Գաւառական թեկնածուի գործը աւելի ծանր է և ընտրւած լինելու համար—նա պէտք է ծանօթներ, ազգականներ ունենաչ իւր գաւառում: Ամենից առաջ թեկնածուն պարաւական է չաչտնել ուստի կանութեան իւր թեան իւր թե կնածութեան մասսին—հակառակ դէպքում նա ենթարկում է 10.000 ֆր. տուգանքի: Եւ ապա նա սկսում է իւր արշաւանքը ընտրող ձախների ետելից՝ չաճախելով տօնագամառները, հրապարակները, ուր որ լուս ունի ձախներ ձեռք բերելու թեկնածու պատղամաւորը հետը քերած է ունենում Պարիզից... սիդարներ և մեծ-մեծ խոստումներ, որ նա անխոտիր բաժանում է աջ ու ձախ իւր ընտրողներին—տալով նաև զանազան մեկնութիւններ թէ ինչու չաջողեցան իւր աջ ինչ այն ինչ առաջարկները պատղամաւորների ժողովում: Եթէ նա հին պատղամաւոր է, արդէն զիտէ թէ որոնք են հեղինակաւոր և ազդեցիկ ընտրողները իւր շրջանում, ուստի նա շտապում է ամենից առաջ այցելութիւններ անել ացպիսիներին, սեղմել ամենմէկի ձեռքը, «մոն շնր ամի՞» ասել ամեն մէկին, պատմելով իւր ջանքերի, արած քայլերի, արտասանած ճառերի, գրած լոգւածների մասին, ընդ սմին մի քանի փաղաքական խօսքեր ասելով իւր ամեն մի «կարեւոր» ունկնդրին: Սրանց թւումն են, տեղական մէրը՝ սրա օգնականները, բժիշկը, նոտարը, դատավորը, դիւզատնեսը, կապալառուն, ուսուցիչը, քահանան և այլն: Թեկնածուն, եթէ մասնագէտ է—չի խնալում իւր մասնագիտական խորհուրդները: Եթէ նա բժիշկ է՝ իւր խորհուրդների հետ և ձրի գեղորակք, եթէ նա փաստաբան է, գիւղատնտես է—նմանապէս ձրի խորհուրդներ ամեն մի տեղական խնդրի վերաբերմամբ, որ և խոստանում է պաշտպանել պատղամաւորների ժողովում: Բացի մասնաւոր այցելութիւններից և հրապարակական ժողովներից—թեկնածուն լայտնուում է և սրճատանը և գինետանը, և այդ տեղերում ներկայ եղաղները նրա հաշով անուշ են անում դինի, աբսենթ, ամեն պիկոն, դարեջուր, սուրճ և այլ «լուսումասիններ», իսկ ինքը թեկնածուն ճառեր է արտասանում, զրոցներ անում:

Շատ չաճախ պատահում է, որ հրապարակական ժողովներին մասնակցում են երկու հակառակ թեկնածուներ, պատերազմը սկսում է թեկնածուներից մինի ճառով, որով պատղամաւոր թեկնածուն աշխատում է:

<sup>1)</sup> Գրանսիալում գործածող ըմպելիներ.

պարզել և սպասովածնել իւր ծրագիրը։ Ապա խօսում է հակառակորդը։ Շատ չաճախ վիճաբանութիւնները աճնքան են տաքանում, ներկայ հասարակութիւնը աճնքան է գրգռուում, որ բանը հասնում է տուր ու գմբոցին և նողն իսկ արիւնեղութեան։

Ներկայ կուսակցութիւններից ամենախուսվարները—ընկերվարականներն են, որ մեկը ընդդեմ լինի որանց կարծիքներին, ահա գործ է ուստի տեսնել բոռնցքը։ Ժաղվում լսելի են գառնում ա լո, ա լա լամուերն ! (ջուրը զցել կախել զրան)։ Եթէ թեկնածուն հեռատիս չէ լինում և զգուշաբար նահանջի ճանապարհ չի լինում պատրաստած կարող է իւր կեանքը նաև վտանգի ենթարկած լինել։

Ներկայ ընտրութիւնների ժամանակ ակսղիսի դրութեան մէջ էր նախկին մինիստր Խւ Գիւզօն, չնակած որ մասնաւոր ժողովին հրաւիրած էին միան հրաւիրագրերով։ Նրա մի գիրքը ընդդեմ «ընկերվարականների բռնաբարութեան» զրաւել էր վերջիններիս ուշագրութիւնը, որոնք և ներս էին խծկել կեղծւած հրաւիրագրերի օգնութեամբ, չորհիւ իրանց ընկերակից Ալեմանին, որը վարպետութեամբ կեղծել էր հրաւիրագրերը իրա սեփական տպարանում։

Մի ուրիշ դէպք, բայց աւելի վատ հետևանքով, պատահեց ընկերվարական Մոժանի անձի հետ։ Սամիրիչների զաջնակ ցութիւնը ը, (որը վերը պատմած խաղը խաղաց Գիւզօնի գլխին) չգոհացաւ շըտցներով վարձարել Մոժանին, այլ և վերք հասցըց նրան։ Խոկ պատճառը—պատճառը աճն էր որ Մոժանը հարուստ է և սեփական տներ ունի—թէն ընկերավարական է և մի ընկերութարական թերթ էլ է հրատարակում Փերմինալ անունով—կումմունակի նախկին զեներալի Գրուստի հետ։

Մինչև ներկայ տարին, ամեն անգամ նմանօրինակ ընտրութիւնների ժամանակ, բոլոր գոյնների հանրապետականները ընդհանուր ժողովներ էին ունենում և համաձայնութիւն կազայցնում իրար քւէ տալու հականարապետական և այլ թեկնածուների դէմ։ Միմիան ալս տարի էր, որ հանրապետականները այլ ես ոչ մի վախ չունենալով ուրիշ կուսակցութիւններից—ընտրութիւնը թողել էին աղատ մրցութեան։

Եւ նրանք չսխալւեցին իրանց հաշիւնների մէջ։

Քւէարկութիւնների հետևանքների մասին խօսել է «Մուրճի» անցեալ № 7—8 Քաղաքական բաժնում։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅԻՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՄԵԿԱՄՄՈՒԹԻՒՆԸ

Ներկայ բոսկէին ֆրանսիացում կատարում են մեծամեծ հանգէսներ ի պատիւ ռուսաց նաւատարմզի այցելութեան։ Խնչաղէս որ երկու տարի առաջ, 1891 թ., ֆրանսիական նաւատարմզի մի էսկադրան, վոլուադիրալ Ֆերզէի առաջնորդութեամբ, ի նշան քաղաքական միաբանութեան Ռուսիայի և Ֆրանսիայի մէջ, կրոնշատ պատերազմական նաւահանգիստը այցելեց և ինչպէս այդ առիթով Պետերբուրգում մեծ հանդէսներ սարքեցին ի պատիւ ֆրանսիական հիւրերի, այնպէս էլ այժմ ռուսական նաւացին էսկադրան, առաջնորդութեամբ կոնտրադիրալ Աւելանի՝ վոլուացելութիւն է անում ֆրանսիական առաջնակարգ նաւահանգիստ Տուլոն քաղաքին, և ֆրանսիացիք են հանգէսներ սարքում իրանց բարեկամ Ռուսիայի պատւին՝ թէ Տուլոնում և թէ Պարիզում, և ոչ մի համայնք չի ուզում յետ մնալ բարեկամական ցոյցերից։

Ցոյցերը մեծ են, փառահեղ են, վիթխարի են։

Դոքա՝ քաղաքական ցոյցեր են։

Ռուսաց նաւացին էսկադրայի Տուլոն այցելովը ոչ միայն ամբանդուում է արգէն տարիներ առաջ կյած մի բարեկամութիւն, այլ զորանով իսկական դաշն է կառում Ռուսիայի և Ֆրանսիայի միջև։ Այդպիսի ցոյցերից յետոց անհնարին է իրաք հետ կապւած չզգալ և բոլոր քաղաքական միջազգային գործերում ձեռք ձեռքի տւած չլնթանալ։

Բայց և այնպէս թոյլատրելի է հարցնել՝ կայ այդ երկու պետութիւնների մէջ թղթով կապւած դաշինք թէ ոչ։

Այդ բանին պատասխան դեռ ևս չկայ, մինչդեռ հաստատ է, որ Ռուսիայի ու Ֆրանսիայի հակառակ բանակում՝ Գերմանիայի, Աւստրիա-Անգլիակարիայի և Իտալիայի միջև՝ թղթով կապւած դաշինք կայ, ամեն հինգ տարին մի անգամ վերանորոգելի։

Բայց եթէ թղթով կապւած դաշնք էլ չլինի, — Թուսիացի և Ֆրանսիացի բարեկամութեան բնաւորութիւնը շատ և շատ պարզ է: Միջին Եւրոպացի եռապետական դաշնակցութիւնը ուղղած է մեկ կողմից Ֆրանսիացի, միւս կողմից Թուսիացի դէմ: Անգամ եթէ Թուսիացի և Ֆրանսիացի միջև որոշ դաշնակցական ծրագիր էլ չլինէր, — պէտք էր ընդհանուր հակառակորդների դէմ միանալ, թոյլ շտալու համար որ, ոչ միացն պատերազմի դէպքում, այլ և սովորական միջազգացին խնդիրներում, Ֆրանսիան և թէ Թուսիան ջոկ ջոկ վերցրած՝ ամեն մեկը երեք միաբան պետութիւնների զիմաց կանգնէր: Այդտեղ գեր են կատարում թէ բարձր քաղաքական շահերը և թէ ֆինանսական, տնտեսական, մաքսացին շահերը, որպէս նաև երկրորդական քաղաքական շահերը, մի խօսքով ամեն տեղ, ուր մի պետութեան քաղաքական ոյժը, նորա պրեսոիթը գեր է կատարում:

Այսպէս ուրեմն Թուսիացի և Ֆրանսիացի բարեկամութիւնը, եթէ չասենք դաշնակցութիւնը, տարրական պահանջից բղխած մի բարեկամութիւն է: Հետեւապէս այդ առիթով հարց դնել այդ բարեկամութեան անկեղծութեան և խելացիութեան մասին, հակադրելով Ֆրանսիացի հանրապետականութիւնը և Թուսիացի միապետականութիւնը, — այդ հարցը, ըստ մեզ, բոլորովին պարապ հարց է:

Քաղաքական դիրք պահպանելու համար հաւասարակշռութեան կոմինացիաների մէջ մոնելը ոչ նոր է և ոչ էլ երբ և իցէ կարող է հնանալ:

Այլ բան է, եթէ դորանով դաշնակցողները ստիսպւած լինեն հետեւել այնպիսի ներքին քաղաքականութեան, որը խախտէր դաշնակցող պետութիւններից իւրաքանչիւրի հիմքերը:

Այդ սակայն, այդպէս չէ:

Բայց եթէ ներկայ քաղաքական բարեկամութիւնը Թուսիացի և Ֆրանսիացի միջև սկսի այդ մոքով խորը ազգել իւրաքանչիւրի ներքին քաղաքական կեանքի վրաց լուսառորութեան հակառակ մոքով, — մենք համոզւած ենք՝ որ այդ քաղաքական բարեկամութիւնն էլ կը սկսի խախտել:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. ՕՇՈՒՄԸ ՎԵՀԱԳԻԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԿՐՏԻՀ I-Ի ՄԵՋԻ ՈՒՆԵցաւ Ա. Էջմիածնում 26-Ն ՄԵՊՄԵԺԵՐԻ, ՎԱՆՔԻ ԳԱԼԹՈՒՄ, ՊԱՆԴԱԼԱՏԱՆ Առջև Առանձին պատրաստահ բեմի վրայ, ՆԵՐԿԱՅՈՒթեամբ 8—10 հազար հոգու։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՇՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ, ՄԵՊՄԵԺԵՐԻ 15-ԻՆ ՍՊԱՋԱՆՔ հեռագիր Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանից, որ առանձին տպած նոնը ցրեցինք Թիֆլիսի և մասամբ գաւառական մեր բաժանորդներին։ Հեռագիրը այս էր.

«Խմբագրութեան «Մուրճ» ամսագրի, Էջմիածին 14-Ն ՄԵՊՄԵԺԵՐԻ, ԲԱՐԵհԱՃՈՒԹԵԱՄԲ ՎԵՀԱԳԻԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅ ՄԵՊՄԵԺԵՐ ԱՃՄԻ 26-ԻՆ Նշանակւած է Ա. Օծումն Նորին ՎԵՀԱԳԻԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՀ I ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ամենայն Հայոց Խնդրում ենք լայտարարէք ձեր ամսագրում ի գիտութիւն բոլոր բարեպաշտ և ջերմեռանդ հաւերի։ Անդամ սինողի Արիստակէս եպիսկոպոս։

ԽԹԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՎՐԱՅ ԱԼԵԼԱցան պ. Վ. ՐՈՒՐԻ պատրաստածները, ուր Խրիմեանը զուրս է բերւած երեք մեսակղիրքերում։ Համեմատապէս ամենաչափողւածն ենք գտնում այն մէկը, որ կիսապրոֆիլով է զուրս բերւած, թէս նրբութեան ու արտաքալսութեան կողմից նա չի կարող մրցել Երուսաղէմում համած այն մի պատկերի հետ, որի մասին անցեալ ամիս լիշատակեցինք, և որից Թիֆլիսում չի ծախւում, և որպէս իմացանք, լուսանկարչի ազգանունն է Գրիգորեան։ Բայց Վ. Րուրի կիսապրոֆիլով համած լուսանկարը աւելի մեծ նմանութիւն ունի Խրիմեանի հետ, քան բոլոր այն պատկերները, որոնք տարածւում են մեզանում, դոցա թւում նաև «Աղբիկը-Տարաղինը»։ Խրիմեանին, ինչպէս երեսում է, աւելի լազողուած է նկարել պրոֆիլով։ en-face պատկերներից ամենաչափողւածը մենք տեսանք Էջմիածնում, դա՝ Երևանում աշխատող լուսանկարիչ պ. Փեշտմալճեանի գործն է։

**ԴԱԶԱՐՈՍ** ԱՊԱՅԵԱՆՑԻՆ ՎԵՀԱԺԻԱՅ. Կաթողիկոսը նշանակել է ԼՅՈՒԹԱՅՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ աւագ դաստիարակ և Ռւսումնական լահճնաժողովի անդամ:

**ԵՐԵՒԱՆԻ** ԹԱՅՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՈՂ Նշանակւած է, Մեսրոպ քահանաց Մելեհանցի տեղ նոյն թեմի առաջնորդական փոխանորդը, մինչև ցնոր տնօրէնութիւն:

**ՊԱՏԳԱՄԱԻՌՈՒՅԹԻ** ԴՐՈՒԹՊՈԱՅ. Բժիշկ ուսանող պ. Արտաշէս Շինեանցը ձեռնարկել է լուսանկարների մի գրուպպա կազմել այն բոլոր պատգամաւորներից, որոնք ներկայացնել են Նորին ՎԵՀԱԺԻԱՅ ու թիւն Հայրիկին, ոկսած երաւաղեմից մինչ ԼՅՈՒԹԱՅՆԻ, այն է մինչ ո. Օծումը:

**ԿԱՐԾԽԻՔՆԵՐԻ «ՄՈՒՐՃ»-Ի ՄԱՍԻՆ:** Բաքւում հրատարակող միակ ամենուրեակ թերթը՝ ռուսաց «Ակապիլ» (Քայոյ) լրագիրը իւր 170-րդ համարում «Արաւեան» ստորագրութեամբ մի լողւած է գետեղել «Համկական նամակներ» խորագրով, ուր լողւածագիրը խոսելով «Մուրճ» ի մասին, մեր ամսագրի հետեւալ զրական արժանաւորութիւններն է շեշտում: 1) «Համակրութիւններ զեսի ամեն ինչ որ լուսաւոր է և լաւ, 2) ձգտումն ծառապել ժողովրդի շահերին, և 3) խումք աշխատակիցների, որոնք շիտակութեամբ են վերաբերում զեսի գրականութիւնը» (Симпатія ко всему свѣтлому и хорошему, стремление служить интересам народа и составъ сотрудниковъ... честно относящихся къ литератураѣ).

Խոկ «Մուրճ»-ի ամենաւաշին լատկութիւնը լողւածագիրը գտնում է մեր ամսագրի ոգու մաքրութեան մէջ (числотность), ե, ինչպէս երեսում է, Արաւեանը հիմաց է այն բանից, որ «Մուրճ»-ը, բանակուելիո՞ւ գաղափարի ու մանից դուրս չի գալիս (поземизируетъ на идейной почве).

Ցանկանում ենք մեր կողմից որ Արաւեան և նորա ընկերները այդ ոգին իրանց սեփականը դարձնեն, որով նորաաւելի համակեցի կը դառնան մեր աշքում:

**«ՄՇԱԿ»**, ԼՐԱԳՐԻ ՆՈՐ ԽՄԲԱԳԻՐԸ: «Մշակ»-ի հիմնադիր և խմբագիր պ. Գրիգոր Արծունու մահից լեռու, որպէս չափանի է, այդ լրագիրը կատակով անցաւ տիկին Մարիամ Մելիք-Աղամալիանցի ձեռքը, որի հրատարակութեամբ «Մշակ»-ի միերկու համար ները լուս տեսան անցեալ 1892 թւականի գեկտեմբերի վերջերին, ժամանակաւոր խմբագրութեամբ որ. Յովհաննես Տէր-Մարկոսիանցի. Բայց ներկայ 1893 թւականի սկզբից «Մշակ»

լրագիրը այլ ևս չհրատարակւեց՝ հաստատւած խմբագիր չունենալու պատճառավ. Այժմ, որպէս հազորդում են, «Մշակ»-ի խմբագիր հաստատւած է պ. Ալեքսանդր Քալանթար:

Պ. Ալ. Քալանթարը իւր լարձրագուն ուսումը ստացել է Ռուսաստանի Պետրովովկի կոչւած գիւղանտեսական ճեմարանում և իւր մասնագիտութեան մէջ աւելի լայտնի է իրը կաթուատնաս, որի պաշտօնով նա երկար ժամանակ ծառակել է Ռուսաստանում լայտնի կաթնատնուես Վերիչչագինի մօսու Նա առիթ է ունեցել իւր մասնագիտութեան վերաբերեալ լանձնարարութիւնով շրջել նաև Եւրոպակի մի քանի երկիրները. Փոխադրմելով Անդրկովկաս, պ. Քալանթարը մինչ օրս ծառալում էր ամառնավին արօտատեղերին վերաբերեալ պետական պաշտօնով: Աւմի բազմաթիւ թէ փոքր և թէ խոչոր զրւածքներ կաթնատնուեսութեան և անամնապահութեան մասին, որոնց մէջ նաև «Անամնապահութիւնը Անդրկովկասում» գնահատելի աշխատութիւնը ուսուերէն լեզով (տես դորա մասին պ. Յ. Սաղաթելեանի գողւածը «Մուրճ» 1891 №

Իւր մասնագիտութիւնից գուրս, սական, պ. Քալանթարը, բնական հակումով, նւիրւած է եղել հաչ զրականութեանը և մասնաւորագիս հաչ մամուլին: Դիմաւորապէս ուսանողական տարիներում թղթակցել է «Մշակ» լրագրին, իսկ ապա, երկար տարիներից լետոն «Մուրճ» ամսագրին, ոորա հիմնելու ժամանակից մինչ չորք տարի, մասնակցելով ամսագրի քննադատական-զրախօսական բաժնին և փորձելով իւր ոչիրը բելետրիստիկակի մէջ Ա. Նամալեան ծածկանունով: «Մուրճ»-ում տպւածները լրացնելով այլ պատկերներով, նա հրատարակեց պատկերների երկու հատոր—«Պատրիկեանի համակները» և «Ականքի զծեր» խորագիրներով, որոնցից առաջնի մասին մի գնահատութիւն տրւեց «Մուրճ»-ում նոյն այս տարի (1893 № 6, լողւած Պետր. Մելքոնեանցի):

Հասարամիական ասպարիգում ես պ. Քալանթարը ան-լայտ չե. արդէն երեք տարի է, որ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան նոր կազմի մէջ նա վարում է վարչութեան նախագահի պաշտօնը:

**ՀԱՅՈՅ ԹԱՏՐՈՆ:** «Մուրճ»-ի անցեալ № 7—8 համարից մեր ընթերցողները գիտն արդէն, որ Թիֆլիսի հալոց թատրոն վարելը մի քանի զրամասերեր իրանց վրաչ են վերցրել: Այժմ կարող ենք հողորդել, որ այդ անտարբենեօրներմ են՝ պ. պ. Յովհաննէս Թումիեանց, & Ստեփան Սուլխանեանց /Նիկողայոս Տէր Նիկողո-

սեանս Խմբի մէջ են տիկիններ՝ Հրաշեաց, Ալմա, Ախաշեան, Վարդուչի, Անդրեան և Պետրէնեան. պ. պ. Պետրոսեան, Արեւեան, Դաւթեան, Աբրահամեանց, Պինեմենեան, Արաքսեան և ուրիշներ:

**ԱՐՄԵՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ** վէպը, որ տպեց «Մուրճ»-ի առաջին կիսամեեակում, Նիւթ է կազմում «Հայունիք» լրագրի (առ 25 օդոսու.) մի առաջնորդողին, որ ստորագրուած է պ. Արմիար Արմիար բեանցի սկզբնատառերով: Այդ լուսածից առաջ ենք բերում հետեւեալ կտորը.

«Արմէն Գիմաքսեանը ձգտում ունեցող դիրք մըն է, որ պլատի կրնաւ ազդեցիկ ըլլալ հանրաւին բարքերու վրաց: Խրիմաստասիրութիւնն է թէ՛ զարդացած անձնաւորութիւնները պարտաւոր են աշխատել իրենց միջավարին զարդացմանն ու բառաջդիմութեանց: Հանրավին մուսաւրական օդտին սրասանց աշխատովները շատ թեթի կը զանեն կեանքի ընուը, հաճուքով կրեն զաքն Կեանքի դերագոյն պարտականութեան կատարումն մէջ կը կազմաք:

«Վեւ հերոսը Արմէն Գիմաքսեան, ու շուրջը բոլորուղները՝ Սաւ բրէդիեան, Մսերեան, Հարիզեան, տիպարներ են որք կը փակչւ սրտիդ, որոնց կեանքը խորհելու կը հարկազրէ զքիզ և աչքիդ առջեւ կը ստարպէ լընկերական պարտականութեանց հորիզոն մը ուր հաճուքով կը խորասուզվիս: Այդ դէմքերը կը տիրեցնեն ոգիդ, բայց ձնշող, տառապեցնող տիրութեան ներքն չէ որ կ'ընկճւիս, այլ այն քաղցր թուխծութիւնն է որ ուժ կուտաէ ողիին, կ'ամրապնդէ զաքն: Աւ լետով կը միխթարւս անոնց կեանքի բարեբաստութեամբը, բարեբաստութիւն որ չէ հիւսւած ոսկիի թերթով և ոչ ալ սիրոց մետաքսով, աշխատովթիւն և հանրավին պարտականութիւն կատարում, ահա ինչ որ կըցած է ազդ մեծ սրտերուն հանգիստ և բերկրամնք պատճառել:

«Զգւանք ալ հզօր միջոց մըն է յողովուրդ մը բոլոր մեր կութեամբը նկարագրած բարութեանները, Խնիաթեանները, Անքիլեանները այնպիսի գէմքեր են որ մէկ անդամէն կարելի է զգւել այն «խելացի», «եկեղեցու պաշտպան ծանրախոռն» կեղծաւորներէն որ ժողովուրդ մը մեղկացնելու, ապականելու միջնորդներ են,

«Պէտք է չուսալ թէ ալդ դիրքը Կովկասի նոր հակ սերնդին վրաէ սարսեցուցիչ տալաւրութիւն մը ընէ և կեղծաւորութեան պաշտօնական ներկացացուցիչներու աղղեցութենէն ազատէ նորերը, չորհիւ զգւանքին:

Պր. Արփիահեանի լողւածից քաղենք նաև հետեւալ կտորը՝

Ակարդացածո վեոլ մը չէր, ինծի աճապէս կը թւէր գէթ, ազ մաս մը թիֆլիսի ժամանակակից պատմութեան, կենսագրութիւն մը ապրող անձերու Ռւրեմն ազդ գիրքը պէտք է քննեն, ըսի, ուրիշներ, չեզոք քննադատներ, որոնց մտքի բառկութիւնը չողտորեն ծածկանուներու խկական դէմքերը, ուսուի և կարող ըլլան կատարեալ պաղարիւնութեամբ ուսումնասիրել «Արսէն Դիմաքսեանը» իբր հոգեբանական ու գեղարւեստական գործ միացնու:

Այս կարծիքը մեր սեփականնեմի քանի փոփոխութիւններով սական: Դա ոչ թէ Թիֆլիսի ժամանակակից պատմութեան մի մաս է, ազ առհասարակ կովկասեան հայերի ժամանակակից հուանքների պատմութեան մի մաս: Կոփեը գաղափարական ուղղութեան ընդդէմ կեղծաւորութիւն, իւր տոն բնորոշ գծերով, ինչ նա, ազ կոփեը, արտաքայտել է աչ վերջին երեսուն տարիներում,—ահա մեր կարծիքով, վէպի նիւթը: Բայց ոխալ է իւր արդ վէպը կենսագրութիւն է ապրող անձերի: Դա կենսագրութիւն չէ, բայց միան վէպի գործող անձերի մէջ կան շատ գծեր, որ վերցրած են կեանքում գործած անձերից:

ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ անուշադրութիւնը գէպի իւր հրատարակած գրքերը երբեմն ծայրակեղութեան է համում: Նորա հրատարակած վերջին գրքովի գոնէ շատ երեսները (№ 75, պ. Բալագեանի գրւածքը) ըստ երեսութիւն, սրբագրութեան երես չեն ահօնել:

† ՄԻՐԻՖԵԼ, Փրանսիական զօրքի զլիսաւոր շտաբի պետը վախճանեց: Հանգուցեալլ հշանաւոր էր ոչ միան իւր բարձր պաշտօնով ազ իւր զինւորական մեծ համբաւով առհասարակ: Նա մէկն էր ան երեք գիններալներից, որոնց վրայ ամենամեծ լուսերն էին զնւում հայրենասէրների կողմից: Սոսիէ, Միրիֆէլ և Գալիֆէ—ահա Փրանսիական զօրքի զլիսաւոր աստղերը: Մարի-Ֆրանսուա-Ժոզէֆ զը Միրիֆէլ ծնւած էր 1831 թ., 1854-ին ստացաւ սպահութեան առաջին աստիճանը, մասնակցեց իտալական, չինական և մեքսիկան արշաւանքներում, Պարիզի պաշարման ժամանակ 1870—71-ին բրիգադի հրամակող էր, 1875-ին բարձրացաւ գեներալի աստիճանին, Գամբետտավի մինիստրնախաղահութեան ժամանակ նշանակւեց զլիսաւոր շտաբի պետ, իսկ Գամբետտավի մինիստրութեան անկումից իստու նորից վե-

լադարձաւ զէպի զօրքը, մինչեւ որ ֆրէսխնէի մինխատրութեան ժամանակ 1890 թ. նա նորից նշանակւեց պետ գլխաւոր շտարի:

† ՄԱԿ-ՄԱՀՈՆ, Ֆրանսիակի մարշալ, վախճանւեց, Հանդուցիալը քաջ զինուորական էր և անաջող քաղաքական անձն: Թիերի անկումից էտու՝ նա ընտրւեց նախագահ ֆրանսիական հանրապետութեան 1873 թ., և հրաժարւեց իւր պաշտօնից 1879 ին տեղ տալով միւլ Գրնուին:

ԴԱԻԱԻԱԿԱՆ ՔՐՈՆՆԿՈՒՄ տպւծ ալ. Յ. Մուրադեանցի գեղեցիկ լողածի վրաէ դարձնում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը:

#### ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԱՅԻՐ'

- 1) ՇԻՐՎԱՆԶԱՐԵ.—Արակն Դիմաքոնանո, վէպ, արտասպած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպար. Ռուսիանցի, 1893 թ., գինն է 1 բուռլի 50 կոպէկ:
- 2) ԲԱԼԱԴԵԱՆ, Սամուէլ.—«Ջրալյներ հողի մասին» Հրատ. Թիֆլ. Հր. Ընկերութեան: Թիֆլիս, տպար, Վրաց Հրատ. Ընկ., 1893 թ., գինն է 15 կոպէկ:
- 3) ՖԱՍՄՄԱՐԻՄՆ, Կամիլլ.—Հանրամատչելի նկարագրական ատաղաքաշիութիւն, 100 նկարով: Յարմարեցրեց դասաւութեան համար Յ. Գելոն, թարգմանեց ֆրանսերէն չորրորդ տպագրութիւնից Տ. Յովհաննիսեան: Հրատարակեց Թիֆլ. Հալոց Հրատ. Ընկ.—Թիֆլիս, տպ. Մ. Ռոտիննանցի, 1893 թ. գինն է 1 ռուբլի:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՈՒՐՃ“ ԱՐՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Պ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ. Ա. Հ.

(Եշանակւած գները առաջին երեք տարիների համար անփոփոխ պահպանւելու են  
մինչև վերջը 1895 թ.)

|                             |         |           |
|-----------------------------|---------|-----------|
| «ՄՈՒՐՃ» 1889 թ.             | անկազմ. | 4 ռ. — կ. |
| «ՄՈՒՐՃ» 1890 թ.             | անկազմ. | 5 » — »   |
| «ՄՈՒՐՃ» 1891 թ. (սակաւաթիւ) | անկազմ. | 10 » — »  |
| «ՄՈՒՐՃ» 1892 թ.             | անկազմ. | 9 » — »   |

Վ. Ճ Ա Բ Բ Կ Ա Ն Խ Ի Կ

Հանագարհածախիքի համար ուղարկւում է մի-մի սուբլի  
ամեն տար այ համար:

Կազմի համար վճարւում է վերազիր 60 կռող. ամեն կիսա-  
մետի համար:

Դիմել՝ Տիֆլիսъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Tiflis, Rédaction de la Revue „Mourtch“.

Հաղարեսն Ճեմարան Արևելեան Լեզուաց, Մոսկա.

ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՌՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՎԱԶԱԽԵԼՈՒ

**ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ**

Առաջիկայ սակաւաթիւ հեղինակութիւնները և հրատարակութիւնները.

- |                                                                                                                                            |      |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|
| 1) Վարդանայ Յարձրբերգեցոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկա 1861 թ. . . . .                                                                     | 2 50 |
| 2) Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, 1861 թ. . . . .                                                                   | 3 —  |
| 3) Միհմարայ Այրիվանեցոյ պատմ. հայոց 1860. Առաջնական տարբերակ                                                                               | 1 —  |
| 4) Всеобщая История Вардана Великаго (ХIII в.), переводъ съ армянскаго съ объясненіями и приложеніями, 1861 г. Москва. . . . .             | 4 —  |
| 5) Всеобщая История Степаноса Таронскаго Асохинка по прозванию (XI в.), пер. съ армянскаго съ объясненіями и приложеніями, 1864 г. . . . . | 4 —  |
| 6) Синодальное слово Нерсеса Ламбронского (XII в.) пер. съ армянскаго, 1864 г. . . . .                                                     | 2 —  |
| 7) Шараканъ (Շարական) богослужебные каноны и пѣсни Армянской Восточной Церкви. Полный переводъ 1879 г. (Ցացել է մի քանի օրինակ). 6 —       |      |
| 8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и пер., 1881 г. 1 50                                             |      |
| 9) Очеркъ Истории Арм. Восточной Церкви, 1864 г. — 65                                                                                      |      |
| 10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864 г. . . . .                                                                        | 1 50 |
| 11) Отвѣтъ на замѣчанія г. Патканова, 1874 г. . . . .                                                                                      | — 65 |
| 12) Моисій Хоренскій и древній эпосъ армянскій (изслѣдованіе) 1881 г. . . . .                                                              | 1 —  |
| 13) Династический списокъ Хайкидовъ, изслѣд. 1884 г. — 65                                                                                  |      |
| 14) Сказание о Романѣ и Давидѣ (Борисѣ и Глѣбѣ) по Арм. Четыри-Минеямъ (пер. съ армянскаго) — 75                                           |      |

15) Сказание о Св. Фаддееве у Варфоломея апостолахъ

Арменій (пер. съ армянского) . . . . . — 75

Վրբերի գները հաշւած են ճանապարհածախսով հանդերձ:

Այս զբքերից գնել յանկացողները թող բարեհաճեն զիմել իրանց պառելիներով ձևարանի կառավարութեանը այսպիսի հացեով՝ Въ Правление Лазаревского Института восточныхъ языковъ, Москва.

## ՀՈՅՍ ՏԵՍԱԿ

Ա. Արամիանեանցի

# ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

Հին ՊԱՍՄՈՒԹԻՒՆԸ

(Զարգարւած հին եղիպտական, փիւնիկական և տառական զբութիւններով և Արևելքի հին պետութիւնների քարակղով):

281 երես, յառաջաբան եւ նիւթերի ցանկ

բարեւած է 800 օրբենով, գոյալուն լողլի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 բուրլի

Պէտք է զիմել կամ հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և կամ՝ Въ центральный книжный магазинъ. Առողջարաններին անուում է 20% զիջում:

ԼՈՅԱ ՏԵՍԱԿ

եւ

ՎԱՃԱՐԻՈՒՄ Ե

Յովհաննես Թումանյանցի

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳԻՆՆ Ե 60 ԿՈՊԵԿ

Դիլել՝ Տիֆլիս, Центральная книжная торговля, կամ հեղինակին  
Норашенская ул. № 28. կամ «Մուրճ»-ի խմբագրատանը:

ВЫШЛА И ПРОДАЕТСЯ

ИСТОРИЯ АРМЕНИИ

Моисея Хоренского

НОВЫЙ ПЕРЕВОДЪ

Н. О. Эмина

(съ примечаниями и приложениями)

Цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп.

МОЖНО ПОЛУЧАТЬ

въ Канцелярии Лазаревского Института восточныхъ языковъ. Москва.



# „ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՏԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

ԱՄԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1893 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ է

Տարեկան գիւղ է 10 ր.

Բաժանորդագրութեան համար դիմուլ՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ<sup>Ը</sup> { Տիֆլիս. Въ редакцію журнала „МУРЧЪ“. Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.}

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական՝ գրավաճառանոց:

» աղ. Յովհաննէս Թումանյանց, Սիօնի փողոց № 27:

» աղ. Յովհ. Թումաննեանցի մօտ, Հրատ. Ընկ. գրասեննեակում, Բարոնսկայա փողոց:

ԲԱԲՈՒ. — աղ. Աւետիս Սուլլասնեանց, ազենտ „Надежда“ լնկ.:

ԵՐԵՒԱՆ. — աղ. Աւետիս Ազամիրզեանց:

ԷԶՄԻԱԾԻՆ. — Արսէն աբեղայ Ղըտճեան:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — Ստեփան Վեհապետեան:

ԲԱՅՐՈՒՄ. — աղ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Ծովեանների):

ԹԱԿԻՐԻՉ. — աղ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

Ո-ՆՍՏՈՎ. և ՆՈՐ-ՆԱԽՈՒԶԵՒԱՆ. — Եղբ. Պ. և Դ. Ռուսնեաններ:

ՄՈՍԿԻԱ. — աղ. Վարդան Թումաննեանց (Чистые Пруды, д. Тупицына):

» աղ. Ստեփան Վարդաղարեան, Յոշկով ուրեալ., դ. Աձեր:

ՕԴԵՍԱ. — աղ. Միքայէլ Մուրագեանց (գրասէն. եղբ. Ծովեանների):

ՄԱՐՍԵՅ. — աղ. Սիմէօն Միքայէլեանց: Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վեհապետեան փողոց, տուն № 8